

Յ

Ե

Ղ

Ա

ՋԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Մարտավարության գործընկեր

Փ

Ո

Խ

ՈՒ

Կ Է Ր Ի Բ Ի Ս Ի

Թ

Ի

Է

Ն

Ը

Սիրելի բարեկամ Քրիստոսով,

Մեր աղօթքն է, որ այս ուսուցումի աղբիւրը օրհնութիւնն եւ քաջալերանք ըլլայ քեզի: Ազատ զգայ այս նիւթերը կիսուելու քու բարեկամներուդ, ընտանիքիդ եւ եկեղեցիիդ անդամներուն հետ: Նաեւ կրնաս այցելել FLNFree.com կայքէջը եւ ներբեռնել յաւելեալ պատճեններ եւ յաւելեալ ձրի ուսուցումներ քու լեզուովդ: Աստուած կը սիրէ քեզ եւ Ան հիանալի ծրագիր մը ունի կեանքիդ համար: Աստուծոյ Թագաւորութեան գործելաձեւը սորվիլը մեր կեանքը դէպի լաւը փոխեց, եւ վստահ ենք, որ անիկա նոյնը պիտի ընէ քեզի համար:

Քրիստոսի սիրով,

Կերի եւ Տրենտա Քիսի



Յ.Գ. Մի մոռնար այցելելու մեր ձրի ներբեռնման կայքէջը՝ FLNFree.com՝ ներբեռնելու համար յաւելեալ ձրի ուսուցումներ քու լեզուովդ:

Յ

Ե

Ղ

Ա

ԶԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Մարտավարության գործիչներ

Փ

Ո

Խ

ՈՒ

Կ Է Ր Ի Ք Ի Ս Ի

Թ

Ի

Է

Ն

Ը

Your Financial Revolution,
The Power of Strategy, Western Armenian

Copyright © 2022 by Gary Keesee
Originally published in English
Copyright © 2019 by Gary Keesee
ISBN: 978-1-945930-14-0

Gary Keesee Ministries,
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA
GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is
NOT FOR SALE

Ձեր ֆինանսական յեղափոխությունը.
մարտավարության գործությունը, արեւմտահայերէն
Copyright © 2022 Կէրի Քիսի

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով
Copyright © 2019 by Gary Keesee
ISBN: 978-1-945930-14-0

Կէրի Քիսիի ծառայութիւն
P.O. Box 779, New Albany,
OH 43054, USA

GaryKeesee.com

Այս գիրքն ԱՆՎՃԱՐ ՆՈՒԷՐ է Կէրի Քիսիի ծառայութենէն եւ ՎԱՃԱՌՔԻ
ԵՆԹԱԿԱՅ ՉԷ

«Ձեր ֆինանսական յեղափոխությունը» գրքաշարի երրորդ գիրքին մէջ Կէրի Քիսին կը բացայայտէ իր յաջողութեան էական բաղադրիչները եւ Աստուծոյ Թագաւորութեան ԿԱՐԵԻՈՐԱԳՈՅՆ գաղտնիքը. մարտավարութեան գործությունը: Ամէն մարդ կրնայ ծուկ որսալ, եթէ իմանայ, թէ ուր նետէ ուռկանը: Աստուած ունի ձեր բոլոր կարիքներուն պատասխանները, բայց դուք պէտք է հասկնաք, թէ ինչպէս հնարաւոր է լսել այդ պատասխանները եւ կիրառել կեանքին մէջ: Այս գիրքը ճիշդ այդ մասին է:

ԿԸ ՆՈՒԻՐՈՒԻ

Կը ցանկամ գիրքը նուիրել կնոջս՝ Տրենտային, քանի որ տարիներ շարունակ անոր քաջալերանքը, Աստուծոյ գործերու հանդէպ սրտացաւութիւնը, ընտանիքի եւ իմ հանդէպ մեծ սէրը ոգեւորած ու ոգեշնչած են ինծի: Միասին մենք ապացուցած ենք, որ երազանքներն իսկապէս կ'իրականան:

– Կէրի Քիսի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	7
ԳԼՈՒԽ 1. Ի՞նչ կ'ուզես, որ ընենք.	23
ԳԼՈՒԽ 2. Թագաւորութիւնը.	41
ԳԼՈՒԽ 3. Ապշած	53
ԳԼՈՒԽ 4. Հիմնական նախապայմանը. Տունէն դուրս չելլէք առանց ասոր	75
ԳԼՈՒԽ 5. Սուրբգրային ապացոյցներ.	97
ԳԼՈՒԽ 6. Արդե՞ծք բոլորը լեզուներով կ'աղօթեն	109
ԳԼՈՒԽ 7. Գանձերու սնտուկը.	125
ԳԼՈՒԽ 8. Յառաջխաղացման դժուար կէտը	147
ԳԼՈՒԽ 9. Հանդարտ, մեղմ ձայնը.	161
ԳԼՈՒԽ 10. Տեսիլքներ եւ երազներ.	179
ԳԼՈՒԽ 11. Սուրբ Հոգին կարծես իմ ղեկավարը ըլլայ.	195
ԳԼՈՒԽ 12. Ինչպէս աղօթել եւ Սուրբ Հոգիով մկրտուիլ	213

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Ձեր ֆինանսական յեղափոխությունը. մարտավարության զորութիւնը» գիրքը երրորդն է «Ֆինանսական յեղափոխություն» գրքաշարին մէջ, որոնց ընդհանուր թիւը հինգն է: Այս շարքին մէջ ներկայացուած բոլոր գիրքերը 2005 թուականին Ալպանիոյ մէջ կայացած համաժողովի ընդլայնուած տարբերակներն են: Այս համաժողովի ժամանակ էր, երբ կեանքիս ընթացքը կտրուկ փոխուեցաւ: Եթէ արդէն լսած էք այս պատմութիւնը, կրնաք ներածութիւնը շրջանցել եւ կարդալ առաջին գլուխէն, բայց եթէ չէք լսած, ուրեմն թոյլ տուէք պատմել ձեզի «կապոյտ մշուշի» մասին: Թերեւս հարցնէք, թէ ինչ է ատիկա: Բոլորովին կը հասկնամ ձեր զարմանքը: Երբ այն տեսայ, ես ալ չէի գիտեր, թէ ինչ է ատիկա, բայց Աստուծոյ զօրութիւնն այնքան զօրաւոր էր, որ հասկցայ, թէ ատիկա Աստուծմէ է: Թոյլ տուէք պատմել այդ պատմութիւնը:

Ես եւ կինս մեր ամուսնութիւնը պարտքերու մէջ սկսանք եւ ինը տարի շարունակ պարտքերու մէջ ապրեցանք: Ոչ միայն պարտքերու, այլ նաեւ դրամի եւ ֆինանսական խնդիրներու հետ կապուած խելացնորութեան հասցնող սթրեսի եւ վախի մէջ: Թէեւ երբեք մեր միտքէն չէր անցած, որ ֆինանսապէս կրնանք կործանել մեր կեանքերը, բայց ճիշդ այդպէս ալ ըրինք: Մենք սկսանք պարզ առեւտուրի վարկային քարտէն, յետոյ վիզա քարտ մը անելցաւ, ապա՝ տասը վիզա

քարտ: Երբ չէինք կարենար կատարել մեր վիզա քարտերու վճարումները, վարկային կազմակերպություններէն վարկեր կ'առնէինք քսանութէն մինչեւ երեսուներեք տոկոսադրոյքով՝ վճարումները մէկտեղելու համար: Բայց երբ դուրս կ'ելլէինք եւ կրկին կ'օգտագործէինք քարտերը, պարտքերը հետզհետէ կ'աճէին: Ի վերջոյ, վերջաւորութեան ունեցանք վարկային սահմանաչափը գերազանցած եւ չեղարկուած տասը քարտ, երեք վարկ ֆինանսական կազմակերպութեան մէջ, եւ պետական մարմիններու կողմէն հարկադիր բռնագանձման ենթակայ տասը հազարաւոր տողարներու պարտք, առաւել շատ այլ մանր-մունր պարտքեր: Մենք պարտք էինք մեր ատամնաբոյժին, քիմիական միջոցներով մաքրութեան ծառայութեանը, հազարաւոր տողարներ՝ մեր ծնողներուն, մեր երկու ինքնաշարժներու վճարումները, տան վարձավճարները... կարելի է անվերջ շարունակել: Այդ ժամանակ մեր ապրուստի գումարները կու գային քովսիսին վճարներէն, եւ այդ ճնշումը, բառիս բուն իմաստով, կը սպաննէր ինծի: Ես պարբերաբար խուճապի նոպաներ կ'ունենայի եւ հակաընկճախտային դեղեր կ'օգտագործէի, որոնք այդպէս ալ օգուտ չէին տար:

Մեր ունեցած-չունեցած ամէն ինչը փճացած էր: Երկու ինքնաշարժներու վազքն արդէն կը գերազանցէր 200.000 մղոնը: 1856 թուականին կառուցուած մեր փոքրիկ ագարակային ոճի տնակը, որը կը վարձակալէինք ամսական 300 տողարով, քարուքանդ եղած էր: Հին պատուհաններու մեծ մասը կոտրուած էր, եւ քանի որ վերանորոգելու գումար չունէինք, ճաքերը կը փակէինք կաշուն ժապաւնով: Բայց ատիկա ալ օգուտ չէր տար: Խաղողի ճիւղերը պատուհանի շրջանակի ճաքերէն ներս կը մտնէին: Կինս՝ Տրենտան, ատոնք պարզապէս կը կտրատէր, տեսքի կը բերէր, եւ կը թուէր, թէ այն մեր տան ձեւաւորման մէկ մասը կը կազմէ: Մեր

տղաներու սենեակի գորգը գտած էինք ճամբու քով գոյացած աղբակոյտէն, անոնց ներքնակաները՝ ծերանոցէն օտարուած առարկաներու կոյտէն: Կահոյքի ամէն մէկ կտորը ձեռք բերած էինք կառատուներու դիմաց կազմակերպուող անպիտան իրերու վաճառքէն, կամ ալ ինչ որ մէկու մը աղբամանին քովէն:

Կեանքը բոլորովին վարդագոյն չէ, երբ ամէն առաւօտ կ'արթննաս ու կը մտածես, թէ ինչպէս պիտի կերակրես ընտանիքդ: Ամբողջ կեանքս վախով պարուրուած էր, իսկ ուրախութիւնն ու յոյսը խորտակուած էին գոյատեւման քառսին մէջ: Տրենտան եւ ես այդպէս ապրեցանք ինը տարի: Ինը երկարատեւ տարիներ: Մէկ ամիսը տակաւին կարելի է հասկնալ, վատագոյն պարագային՝ մէկ տարի, բայց ինը տարի... այդպիսի ճնշիչ տարիներէ ետք զգացումներդ յօդս կը ցնդին, իսկ համբերութիւնդ կ'անհետանայ:

Այս ինը տարիներու ընթացքին մենք քրիստոնեաներ էինք ու հիասքանչ եկեղեցի մը կ'այցելէինք: Հոն կ'ուսուցանէին, թէ Աստուած չի կամենար, որ Իր ժողովուրդը աղքատ ըլլայ: Մենք տասանորդ կու տայինք եւ զոհաբերութիւններ կ'ընէինք, բայց մեր ֆինանսները ոչ մէկ ձեւով կ'արտացոլէին Աստուծոյ հաւատարմութիւնն ու Աստուծոյ Խօսքին մէջ ըսուածը: Ես Հին կտակարանի գիտական աստիճան ունէի, ինչպէս նաեւ մէկ տարի Աստուածաշնչեան դպրոց յաճախած էի: Գիտէի, որ բան մը սխալ էր, բայց կը շարունակէի յոյսեր փայփայել, որ ի վերջոյ, ամէն բան իր տեղը պիտի իյնայ: Բայց այդպէս ալ ոչինչ տեղի ունեցաւ: Հարկահաւաքները գրեթէ ամէն օր կը հեռաձայնէին, մինչ Տրենտան եւ ես գրեթէ ամբողջութեամբ կորսնցուցած էինք մեր յոյսը:

Միաժամանակ բժիշկները կ'ըսէին, որ շաքարախտի բոլոր նախանշանները ունիմ: Առողջութիւնս բոլորովին տկարացած էր: Գումար չկար, բոլոր վարկային քարտերը չեղարկուած

էին, տունն ալ ուտելու բան չկար: Վախն այնպէս կը կեղեքէր կեանքս, որ բառացիօրէն կը վախնայի տունէն դուրս գալէ: Կինս արդէն միտքին մէջ ծրագրած էր, թէ ինչպէս պէտք է երեխաներուն հետ հայրական տուն վերադառնայ, քանի որ կը կարծէր, թէ ամուսինը կորսնցնելու եզրին վրայ է: Բայց այս անդունդի խորքն էր, որ իմ կեանքին մէջ շրջադարձ եղաւ:

Իրաւաբան մը անընդհատ կը հեռաձայնէր ինծի, եւ ես շարունակ կը խոստանայի կատարել անոր վճարումը, քանի որ յոյս ունէի, թէ կրնամ ընել: Բայց վարձավճարը տալու համար գումարը այդպէս ալ չէր ըլլար: Այդ առտու, երբ ան հեռաձայնեց, անոր համբերութեան գաւաթը արդէն լեցուած էր: «Երեք օրուան ընթացքին գումարը պէտք է հոս բերէք, հակառակ պարագային ձեր դէմ դատական հայց կը ներկայացնեմ»: Միայն այդ պահուն հասկցայ, որ այլեւս չեմ կրնար ձեւեր թափել: Ես գումար չունէի, նոյնիսկ իմ հայրական ընտանիքն այլեւս պարտքով գումար չէր կրնար տալ ինծի: Ամբողջովին յուսահատ բարձրացայ մեր տան երկրորդ յարկի ննջարանը, ինկայ մահճակալիս վրայ եւ աղաղակեցի Աստուծոյ: Զարմացայ, Ան անմիջապէս պատասխանեց հոգիիս ճիշին: Սկիզբը Աստուած յիշեցուց Աստուածաշնչեան խօսք մը, որը շատ անգամներ լսած եւ կարդացած եմ՝ Փիլիպպեցիս 4.19.

*«Եւ իմ Աստուած ձեր բոլոր կարիքները պիտի լրացնէ՝
Իր փառաւոր հարստութեան չափով Քրիստոս Յիսուսին
մէջ»:*

«Անշուշտ, ես այդ խօսքը գիտեմ, - ըսի Տիրոջը եւ շարունակեցի, - բայց ասիկա իմ կեանքին մէջ տեղի չ'ունենար: Իմ կարօտութիւնը, իմ կարիքները չեն լրացուիր»: Տէրը պատասխանեց. «Ես քու կեանքի խառնաշփոթին

հետ ոչ մէկ գործ ունիմ: Դուն յայտնուած ես այդ քառսին մէջ, քանի որ երբեք չես հասկցած, թէ ինչպէս կը գործէ իմ Թագաւորութիւնը»: Ան շարունակեց ու քանի մը բան եւս ըսաւ, բայց ես հասկցայ ուղերձը. Ան չէր կամենար, որ իմ կեանքին մէջ պարտք ունենայի: Թէեւ Աստուծոյ ծայնը լսելէն ցնցուած էի, բայց ստիպուած էի ընդունելու, որ ես չէի գիտեր, թէ «Թագաւորութիւն» ըսելով, ինչ նկատի ունէր: Ես Աստուածաշունչի իմացութեան գիտական աստիճան ունէի, եւ ինծի կը թուէր, որ Աստուածաշունչը բաւականին լաւ գիտեմ: Բայց, ակնյայտ էր, որ սխալած եմ: Այս խօսքերը լսելէն ետք առաջինը Տրենտային քով գացի եւ ապաշխարեցի անոր առջեւ այն ամէն խառնաշփոթին համար, որուն մէջ ներքաշած էի բոլորիս: Այդ ժամանակ երկուքս ալ աղօթեցինք Աստուծոյ եւ խնդրեցինք, որ սորվեցնէ, թէ ինչպէս կը գործէ իր Թագաւորութիւնը: Նաեւ ապաշխարեցինք, որ մեր յոյսը պարտքերու վրայ դրած էինք, եւ որոշում կայացուցինք, որ այլեւս պարտքէն կախում պիտի չունենանք: Բայց, իրականութեան մէջ, թէեւ ես Աստուածաշնչեան իմացութեան գիտական աստիճան ունէի, ինծի համար «Թագաւորութիւն» առեղծուած էր այդ պահուն: Միակ բանը, որ կը յիշէի «Թագաւորութիւն» բառին վերաբերեալ այն էր, որ այն օգտագործուած էր Նոր կտակարանի Տէրունական աղօթքին մէջ:

«Քու Արքայութիւնը գայ, Քու կամքը ըլլայ՝ ինչպէս երկինքը, այնպէս ալ երկրի վրայ» (Մատթէոս 6.10):

Մենք իսկապէս չէինք հասկնար, թէ Աստուած ինչ կը փորձէ ըսել մեզի, բայց երբ սկսանք փնտռել Աստուծոյ երեսը, Ան սկսաւ սորվեցնել մեզի: Առաջին բանը, որը պէտք էր պարզէինք, այն էր, թէ ինչ է Թագաւորութիւնը, եւ թէ ինչու

Աստուած օգտագործած է այդ եզրույթը: Ինչ կը փորձէր Ան սորվեցնել մեզի: Որոշ ուսումնասիրութենէն ետք հասկցայ, որ Թագաւորութիւնը պարզապէս մեծաքանակ ժողովուրդը չէ. այն մեծաքանակ ժողովուրդ է, որ կ'ապրի կառավարութեան եւ Թագաւորութեան օրէնսդրութեան ներքոյ: Իրականութեան մէջ, Թագաւորութիւն բառը կը վերաբերի ճիշդ թագաւորի տիրակալութեանը: Թագաւորի տիրակալութիւնը կամ անոր իշխանութիւնն ու օրէնքները կառավարութեան միջոցով գործի կը դրուին իւրաքանչիւր քաղաքացիի համար: Հոս շատ կարեւոր բացայայտում մը կար ինծի համար. Աստուծոյ Թագաւորութիւնը կառավարութիւն է, իսկ կառավարութիւնն օրէնքներ ունի:

Կը հասկնամք, ես Աստուծոյն կը նայէի այնպէս, ինչպէս քրիստոնեաներէն շատերը կը նային: Ես սխալ պատկերացում ունէի, թէ Ան ինչ կրնար ընել: Կը կարծէի, որ քանի որ Ան Թագաւոր է, ուրեմն կրնայ ընել այն, ինչ որ կը ցանկայ եւ երբ ցանկայ: Գիտեմ, գիրքի այս հատուածին մէջ կրնաք ըսել, որ կը սխալիմ, բայց թոյլ տուէք շարունակել: Քանի որ ես կը հաւատայի, որ Աստուած կրնայ ընել այն, ինչ որ կը ցանկայ եւ երբ ցանկայ, չպատասխանուած աղօթքը ես կը համարէի որպէս Անոր կողմէն մերժուած խնդրանք: Աղօթքի հանդէպ այս անորոշութիւնը ինծի կը ձգէր միայն յուսալ, որ Ան պիտի պատասխանէ: Ուստի, իմ աղօթքի կեանքի հիմնական ձեւը ողորմութիւն խնդրելն ու աղերսելն էր, յուսալով, որ իմ խնդրուածքը լուրջ պիտի հնչէր Աստուծոյ ուշադրութիւնը գրաւելու համար: Բայց երբ Աստուած սկսաւ սորվեցնել, որ Իր ամբողջ Թագաւորութիւնը կառավարութիւն մըն է՝ Իր օրէնքներով, որոնք մենք կրնանք սորվիլ եւ օգտագործել, ես ոգեւորուեցայ: Ես հասկցայ, որ այն օրը, երբ ընդունած եմ Յիսուսին, ես դարձած եմ Անոր հզօր Թագաւորութեան ժառանգն ու քաղաքացին:

«Ուրեմն, այսուհետեւ այլեւս օտար եւ պանդուխտ չէք, այլ՝ Աստուծոյ ժողովուրդին հետ համաքաղաքացիներ եւ Անոր ընտանիքի անդամներ» (Եփեսացիս 2.19):

Կը յիշեմ, թէ ինչ կը մտածէի, երբ կը կարդայի այս խօսքերը: Ես օրինական իրաւունքներ ունիմ Անոր Թագաւորութեան մէջ: Ասկէ պարզ չի կրնար ըլլալ: Որպէս Միացեալ Նահանգներու քաղաքացի՝ ես պէտք չէ խնդրեմ եւ աղաչեմ, որ ինծի տան այն, ինչ որ, որպէս քաղաքացի, արդէն ինծի կը պատկանի: Պէտք չէ մարմինովս սարսուռ անցնի, որ ապացոյց ունենամ, թէ քաղաքացի եմ: Ես հոս ծնած եմ: Եւ երբ վերստին ծնայ Աստուծոյ Թագաւորութեան մէջ, դարձայ Անոր Թագաւորութեան քաղաքացին: Ատիկա կը նշանակէ, որ իւրաքանչիւր օրէնք եւ արտօնութիւն, որ գրուած է Իր Թագաւորութեան օրէնքներով, իրաւական հիմքով հասանելի է ինծի: Իմ աշխարհը կտրուկ փոխուեցաւ, երբ Աստուած սկսաւ ցոյց տալ ինծի այն: Ես եւ Տրենտան, ինչպէս քրիստոնեաներէն շատերը, չէինք հասկնար Թագաւորութիւնը եւ Թագաւորութեան օրէնքները:

Իրականութեան մէջ, երբ ինչ որ մէկը դժուարութիւններու առջեւ կը կանգնի, քրիստոնեաներու մեծ մասն այսպէս կ'ըսէ. «Աստուած թոյլ կու տայ: Աստուած ամէնէն լաւը գիտէ, ամէն բան Աստուծոյ ձեռքերուն մէջ է, կամ՝ Աստուած է տիրակալը»: Այս դիտարկումները ցոյց կու տան, որ մարդիկ կը հաւատան, թէ Աստուած զօրութիւն ունի պատասխան տալու, բայց չի կամենար, կամ ալ տակաւին չէ որոշած խառնուիլ: Աստուծոյ մասին նմանատիպ սխալ պատկերացումներու պատճառն այն է, որ անոնք չեն ճանչնար Աստուծոյ բնաւորութիւնը կամ չեն հասկնար Աստուծոյ Թագաւորութեան գործելու սկզբունքները:

Թոյլ տուէք պատկերաւոր նկարագրել, թէ ինչ նկատի

ունիմ: Եթե դրամատան մէջ մէկ միլիառ տոլար ունենայիք, կ'ըսէիք. «Ես մէկ միլիառ տոլար ունիմ»: Բայց փաստն այն է, որ ատիկա ըսելու ժամանակ մէկ միլիառ տոլարը ձեր գրպանը չէ: Փոխարէնը, դուք մէկ միլիառ տոլար ունիք ինչ որ հաստատութեան մը մէջ, եւ այդ հաստատութեան կողմէն սահմանուած որոշակի իրաւական գործընթացէն յետոյ միայն կրնաք այդ գումարն ունենալ: Աստուծոյ Թագաւորութիւնն ալ նոյնն է: Որպէս քաղաքացի եւ որպէս Աստուծոյ ընտանիքի անդամ՝ մենք ժառանգներ ենք այն ամէնուն, ինչ որ Աստուած ունի: Բայց կան օրէնքներ եւ գործընթացներ, որոնց միջոցով կրնանք ձեռք ձգել այն, ինչ որ արդէն իրաւական հիմքով մեզի կը պատկանի:

Քանի որ շատ մարդիկ չեն հասկնար Աստուծոյ Թագաւորութիւնը եւ այն գործընթացներն ու օրէնքները, որոնց միջոցով այդ Թագաւորութիւնը կը գործէ, երբ ինչ որ բան այնպէս չի պատահիր, ինչպէս Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, անոնք կ'եզրակացնեն, որ սխալը Աստուծոյ կողմէն է, եւ ոչ թէ իրենց:

Ահա թէ ինչ պարզեցի: Պատկերացնենք, որ դուք որոշած էք ցատկել Էմփայըր Սթէյթ Պիլտինկէն, առանց օդապարիկի, առանց որեւէ բանի, բայց վստահ էք, որ եթէ ձեր ձեռքերը ջանասիրաբար թափահարէք, կրնաք ապահով իջնել: Կը կարծեմ, գիտէք, թէ այդ յիմար հնարքի վերջն ինչ կ'ըլլայ: Արդիւնքը կը պատկերացնէք, քանի որ կը հասկնաք, թէ ինչ է ձգողականութեան ուժի օրէնքը: Երբ կը գիտնաք, որ ձգողականութեան ուժի օրէնքը որեւէ աշառութիւն կամ նախասիրութիւն չունի, եւ ամէն անգամ նոյն ձեւով կը գործէ, դուք յստակ կը պատկերացնէք արդիւնքը: Նոյն ձեւով ալ, երբ կը միացնէք լոյսը, կ'ականկալէք, որ լամբը պէտք է վառի, քանի որ կը հասկնաք ելեկտրականութեան օրէնքը: Երբ օդանաւով կը ճամբորդեմ, կ'ականկալեմ, որ օդանաւը կը թռչի, քանի որ կը

հասկնամ օդի ներուժի օրէնքը: Օդանաւերն ու լամբերը ամէն անգամ կ'աշխատին, որովհետեւ աստոնց գործողութիւնները հիմնուած են օրէնքներու վրայ, որոնք կարելի է սորվիլ եւ կրկնօրինակել ամէն անգամ նոյն արդիւնքն ու գործողութիւնը ստանալու համար: Աստուծոյ Թագաւորութիւնն ալ կը գործէ ճիշդ նոյն մակարդակով:

«Եւ ասիկա է այն համարձակութիւնը, որ ունինք Աստուծոյ մօտենալու ժամանակ, թէ ինչ որ Անոր կամքին պէս խնդրենք, պիտի լսէ մեզի: Եւ եթէ գիտենք, թէ պիտի լսէ մեզի, ինչ որ ալ խնդրենք, ուրեմն գիտենք, թէ պիտի առնենք այն, ինչ որ խնդրեցինք Անորմէ»:

– Ա. Յովհաննէս 5.14,15

Ասիկա է մեր վստահութիւնը: Եթէ բան մը խնդրենք Աստուծոյ կամքին համեմատ, գիտենք, որ պիտի լսէ մեզի: Եւ եթէ գիտենք, թէ պիտի լսէ մեզի, գիտենք, որ պիտի ստանանք այն, ինչ որ Անորմէ խնդրեցինք: Կը հասկնամք: Ես կրնամ համոզուած ըլլալ վերջնական արդիւնքին համար, քանի որ Թագաւորն անձամբ ստեղծած է այդ օրէնքը: Ուրեմն ճիշդ Ան ալ պիտի կանգնի սեփական օրէնքին ետեւը: Երբ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, որ Ան պիտի լսէ մեզի, հոս չի խօսուիր բառերը ականջով լսելու մասին, այլ, աւելի շուտ, ինչպէս դատաւորը կը լսէ հայցը՝ արդար վճիռ կայացնելու համար: Դատաւորը իր սեփական զգացումներով չի դատեր, այլ կ'ընէ ամէն բան, որ օրէնքը կիրարկուի ի շահ թագաւորութեան քաղաքացիներուն:

Տրենտան եւ Ես նկատեցինք, որ մեր կեանքին մէջ ուշագրաւ բաներ տեղի կ'ունենային, երբ կը կիրառէինք Թագաւորութեան օրէնքները: Երկուքուկէս տարի ետք մենք բոլորովին ազատեցանք պարտքերէն: ՄաքՏոնալտսի «Երջանիկ կերակուրը» (Happy Meal) երեք երեխաներու միջեւ

կիսելու վիճակէն հասանք այն կէտին, որ սկսանք կանխիկով վճարել նոր ինքնաշարժներու համար եւ մեր երազանքներու տունը կառուցել 4000մ² հողակտորի վրայ, որուն համար արդէն իսկ վճարած էինք: Մենք ընկերություններ հիմնեցինք, որոնք տակաւին տարիներ յետոյ հարիւր հազարաւոր տոլարներու տարեկան շահոյթ կ'ապահովեն: Յետոյ մեր քաղաքին մէջ եկեղեցի հիմնեցինք, որպէսզի մարդոց փոխանցենք այն, ինչ որ բացայայտած ենք Աստուծոյ Թագաւորութեան մասին: Եւ պարզեցինք, որ շատ ու շատ մարդիկ կը ցանկան գիտնալ, թէ ինչ բացայայտած ենք, եւ թէ ինչպէս կարելի է ապրիլ այն գեղեցիկ կեանքը, որն Աստուծոյ Թագաւորութիւնը կ'առաջարկէ: Արքայութեան բարի լուրին շնորհիւ, եկեղեցին աճեցաւ. անդամներուն թիւը բազմապատկուեցաւ:

Թէեւ գրեթէ ամէն օր Աստուծոյ Թագաւորութեան մասին կ'ուսուցանէի անոնց, որոնք կը ցանկային լսել, բայց կը փափաքէի այն փոխանցել մարդոց այնպիսի խումբի մը, որոնք այս փորձառութեան մասին երբեք չէին լսած: Ես գիտէի, որ մարդոց կեանքերուն մէջ Աստուծոյ Թագաւորութեան մասին պատկերացումները փոխելու եւ Թագաւորութեան հիմունքները փոխանցելու համար մէկ անգամուան հանդիպումները բաւական չէին ըլլար: Ինծի կը թուէր, որ մեթոտական (բարեպաշտական) եկեղեցւոյ իմ փորձառութենէն ծնած գաղափարը պէտք է որ գործէր:

Երբ երիտասարդ էի, մենք մէկ շաբթուան տեւողութեամբ արթնութեան երեկոներ կը կազմակերպէինք: Ես կ'երազէի նաեւ մէկ շաբթուան ֆինանսական արթնութեան երեկոներ կազմակերպելու մասին, եթէ կարելի է այդպէս ըսել: Կը պատկերացնէի, որ հինգ օր անընդմէջ հաւաքոյթներ կ'անցընենք: Ես երբեք Արքայութեան մասին տող առ տող չէի սորվեցուցած, եւ չէի ալ պատկերացներ, թէ ինչպէս պէտք է ատիկա գլուխ հանեմ: Բայց ինծի կը հետաքրքրէր,

թէ հինգ յաջորդական ուսուցողական այդ հաւաքոյթները ինչպիսի ազդեցութիւն պիտի ունենային լսողներուն վրայ: Ես սկսայ աղօթել այդպիսի հաւաքոյթներ անցընելու համար եւ խնդրեցի Աստուծմէ, որ այն իրագործելու հնարաւորութիւն ստեղծէ: Իմ պահանջը միայն այն էր, որ պէտք է սորվեցնէի մարդոց այնպիսի խումբի մը, որոնք ատոր մասին նախկինին չէին լսած:

Օր մը պատահաբար հանդիպեցայ իմ ընկերներէն մէկուն, որ Ալպանիոյ մէջ միսիոներ էր: Զրոյցի ընթացքին շօշափեցինք եկեղեցիին եւ ծառայութիւններուն վերաբերող տարբեր հարցեր եւ, ի վերջոյ, զրոյցն ընթացաւ այն ուղղութեամբ, ինչ որ Աստուած ցոյց տուած էր: Լարին կը պատրաստուէր աշնան Ալպանիոյ մէջ համազգային համաժողով կազմակերպել եւ ինծի ալ առաջարկեց ըլլալ քարոզիչներէն մէկը: Ես անոր չըսի հինգ յաջորդական հաւաքոյթներ ունենալու իմ ցանկութեան մասին, բայց ոգեւորուեցայ, երբ ըսաւ, որ հոն կրնամ երեք հաւաքոյթ անցընել: Ան նաեւ նշեց, որ պէտք է ես վճարէի իմ ճամբորդական ծախսերը եւ ես քանի մը այլ հովիւներու, որոնք կը փափաքէին մասնակցիլ, քանի որ Ալպանիան այդ ժամանակ շատ աղքատ էր: Ես համաձայնեցայ եւ սկսայ ծրագրաւորել իմ ճամբորդութիւնը դէպի Ալպանիա 2005 թուականի աշնանը:

Ի վերջոյ ուղեւորութեան օրը հասաւ, եւ ես այնքան ուրախ էի, որ պիտի կարենամ Աստուծոյ Թագաւորութեան մասին սորվեցնել մարդոց այնպիսի խումբի մը, որոնք տակաւին նոր կը սորվէին, թէ ինչ կը նշանակէ քրիստոնեայ ըլլալ: Երբ Ալպանիա հասայ, Լարին դիմաւորեց ինծի օդակայանը եւ ըսաւ, որ քարոզիչներէն մէկը հրաժարած է գալէ, եւ ես պէտք է հինգ հաւաքոյթ վարեմ: Կը հասկնայի, որ Սուրբ Հոգին հոգ տարած էր ատոր մասին: Ես երեք հաւաքոյթի համար նիւթեր պատրաստած էի, բայց արագ աղօթեցի եւ միւս

երկուքին համար ալ պատրաստեցի: Ինծի կը մտահոգէր այն փաստը, թէ մարդիկ ինչպէս պիտի արձագանգէին, քանի որ աղքատութիւնն ու կաշառակերութիւնը համատարած էր այդ երկրին մէջ:

Առաջին հաւաքոյթի ժամանակ անոնք քիչ մը կաշկանդուած էին, բայց երբ շարունակեցի սորվեցնել այն, ինչ որ Աստուած ինծի սորվեցուցած էր, մէջբերելով իմ ուսուցանածը փաստող պատմութիւններ, մարդիկ հետզհետէ կ'ոգեւորուէին: Արդէն չորրորդ հաւաքոյթի ժամանակ անոնք կը ծիծաղէին եւ այնքան ուրախութեամբ կ'ընդունէին խօսքը, որ ոմանք նոյնիսկ կ'աղաղակէին: Տարօրինակ էր, բայց ես զգացի, որ Աստուած կ'ըսէ, թէ հինգերորդ հաւաքոյթի ժամանակ զոհաբերութիւն հաւաքեմ: Ինչո՞ւ կ'ըսեմ «տարօրինակ», որովհետեւ հաւաքոյթին մասնակցող շատ մարդոց համար անձամբ ես վճարած էի, եւ գիտէի, որ կամ շատ քիչ գումար ունէին, կամ էլ ընդհանրապէս չունէին: Բայց ուսուցանելու ընթացքին հասկցայ, որ մարդիկ պէտք է իրենց լսածը գործի դնեն: Քիչ մը կը կաշկանդուէի ըսել Լարիին այդ մասին, սակայն, ան վճռականօրէն ըսաւ, որ ճիշդ այդպէս ալ ընեմ եւ զոհաբերութիւն հաւաքեմ: Անշուշտ, ես զոհաբերութիւնը ինծի համար չէի հաւաքեր. զոհաբերութիւնը պէտք է մնար Ալպանիոյ մէջ՝ ի շահ ալպանական եկեղեցիներուն:

Ահա հասաւ վերջին հաւաքոյթի օրը: Ես կը սորվեցնէի, թէ ինչպէս պէտք է ազատ արձակել հաւատքը՝ ընդգծելով որոշ օրէնքներ, որոնց մասին արդէն ուսուցանած էի: Ծառայութեան վերջաւորութեան, երբ զոհաբերութիւնը հաւաքեցի, ամէն բան փշրուեցաւ: Մարդիկ սկսան աղաղակել ու պարել, քանի որ Աստուծոյ օծութիւնը տարածուած էր սրահով մէկ: Առջեւը չորս մարդ կեցած էր՝ զամբիւղները իրենց ձեռքը: Անոնք հազիւ ոտքի վրայ կը մնային. կու լային ու կը ցնցուէին Աստուծոյ ներկայութենէն, երբ մարդիկ կը բերէին իրենց

գոհաբերությունները: Ես երբեք նմանատիպ հաւաքոյթ չէի տեսած, յատկապէս գումար հաւաքելու ժամանակ:

Հաւաքոյթէն դուրս ելլելէն ետք ես եւ Լարին կը խօսէինք, թէ ինչ հզօր օծութիւն էր, եւ թէ որքան զարմանալի էր մարդոց արձագանգն այդ գիշեր: Երբ տուն հասանք, Լարին անհամբեր կ'ուզէր հաշուել գումարները, քանի որ մինչ այդ երբեք երկու պայուսակ լեցուն կանխիկ գումար (որպէս գոհաբերութիւն) չէր հաւաքուած: Սովորաբար պայուսակի մէկ քառորդը կը լեցուէր կիրակնօրեայ գոհաբերութիւններու ժամանակ: Երբ ան պայուսակներու պարունակութիւնը պարպեց հիւրասենեակի սեղանին վրայ, յանկարծ սենեակը լեցուեցաւ կապոյտ մշուշով, մեզի այնպիսի օծութիւն մը պատեց, որուն նմանը երբեք չէի զգացած: Մենք գամուած էինք աթոռներուն եւ ոչինչ կրնայինք ընել: Երբ նայեցայ մեր առջեւ գտնուող սեղանին վրայ դրուած գումարներու կոյտին, ճիշդ մէջտեղը նկատեցի ամուսնական մատանի մը: Հասկցայ, որ ատիկա տուած է մարդ մը, որ գումար չէ ունեցած, բայց իր ունեցածը տուած է: Մատանին տեսնելուս պէս Տէրը խօսեցաւ.

*«Ես կը կանչեմ քեզի դէպի ազգերը սորվեցնելու
ֆինանսական օրհնութեան Իմ ուխտի մասին, եւ ուր որ
երթաս, Ես պիտի վճարեմ»:*

Ես բոլորովին ինքզինքս կորսնցուցի: Երեք օր չկրցայ քնանալ: Այդ միջադէպէն տակաւին քանի մը շաբաթ ետք իմ վրաս նոյն օծութիւնը կը զգայի: Եւ երբ ուրիշ երկրէ մը ինչ որ մէկու մը հետ կը հանդիպէի, այդ օծութիւնը կրկին կը զգացուէր: Զոհաբերութիւնը մնաց ալպանական եկեղեցիներուն, սակայն երբ արդէն տուն հասայ, Լարին հեռաձայնեց ինծի եւ ըսաւ, որ Տէրը ըսած է իրեն, որ մատանին ինծի ուղարկէ: Ես ցնցուած էի: Ոչինչ ըսած էի

Լարիին մատանին առնելու իմ ցանկության մասին, բայց ան լսած էր ատիկա Աստուծմէ եւ մատանին ուղարկած էր ինծի: Ես կ'ուզէի, որ այդ մատանին ամէն ժամանակ յիշեցնէ այն, ինչ որ Տէրն ըսած էր ինծի: Եւ այսօր ալ այն փակցուած է իմ պատին:

Երբ վերադարձայ տուն՝ Օհայօ, Լարիին հովիւ ընկերներէն մէկը, որ կը հովուէր Եուֆա նահանգի եկեղեցիներէն մէկը, լսած էր Ալպանիոյ կատարուածի մասին եւ հեռաձայնեց ինծի: Ան կը խնդրէր, որ այցելեմ իր եկեղեցին: Ան կը հովուէր հնդկացիական տարածքի մը մէջ եւ ըսաւ, որ մարդիկ հոն շատ աղքատ են: Անոր եկեղեցիին մէջ ընդամենը 60 մարդ կար, բայց անոր ըսի, որ ատիկա ինծի համար նշանակութիւն չունի, եւ ես պիտի երթամ:

Ալպանիոյ մէջ նոյն այն հինգ ուսուցողական հաւաքոյթներն անցուցի: Հոս կապոյտ մշուշ չտեսայ, բայց օծութիւնը կրկին հզօր էր:

Այս անգամ զոհաբերութիւնը իմ սեփական ծառայութեան համար էր, այդ իսկ պատճառով ես կանխիկի պայուսակը փակեցի եւ հետս Օհայօ բերի: Երբ հասայ գրասենեակ, պայուսակս յանձնեցի քարտուղարուհիիս, որ հաշուէ եւ մուտքագրէ հաշիւիս, իսկ ես գացի ճաշելու: Ճաշի ժամուն, բջիջային հեռախօսս զանգեց. քարտուղարուհիիս հեռաձայնի թիւն էր: Երբ պատասխանեցի, միւս կողմէն ոչ ոք կը խօսէր: Արդէն կը պատրաստուէի անջատել, ինծի թուեցաւ, որ ինչ որ մէկը կու լայ: «Թրէյսի», - ըսի ես: Թրէյսին պատասխանեց՝ փորձելով կառավարել զգացումները: Ան ըսաւ.

– Հովիւ, այս գումարներուն հետ Եուֆայի մէջ ինչ կատարուած է:

– Ինչ նկատի ունիս:

– Երբ բացի պայուսակը եւ պարունակութիւնը սեղանին

պարպեցի, որ հաշուեմ, յանկարծ Աստուծոյ այնպիսի օծութիւն իջաւ, որ ես ինկայ: Միւս քարտուղարուիին ալ լսեց իյնալու ձայնը եւ դուրս ելաւ սենեակէն, որ տեսնէ, թէ ինչ կը կատարուի: Աստուծոյ զօրութիւնը նոյն ձեւով իրեն ալ հարուածեց: Հովիւ, ինչ կատարուած է այս գումարներուն հետ Եւթայի մէջ:

Ես անոր պատմեցի Եւթայի մէջ կատարուածը, եւ թէ որքան հզօր օծութիւն եղած է զոհաբերութիւն հաւաքելու ժամանակ: Բայց ասկէ բացի ուրիշ բան տեղի չէր ունեցած: Անկեղծ ըսելու համար ինծի շատ հետաքրքրեց կատարուածը, քանի որ ես երբեք նման բան չէի լսած եւ չէի տեսած: Թէեւ չէի հասկնար, սակայն ակնյայտ էր, որ հաւաքոյթի օծութիւնը գումարներուն վրայ էր: Իսկապէս:

Մենք սկսանք, այսպէս ըսած, ֆինանսական յեղափոխութեան համաժողովներ անցընել երկրով մէկ, մեծ ու փոքր եկեղեցիներու մէջ, որեւէ վայրի մէջ, ուր մեզի կը լսէին: Թէեւ կապոյտ մշուշը որոշ դէպքերու մէջ կը յայտնուէր, միեւնոյնն է, օծութիւնը շատ հզօր էր: Ինչպէս Ալպանիոյ եւ Եւթայի հնդկացիական եկեղեցիներու ժամանակ էր, օծութիւնը զոհաբերութեան վրայ կ'իջնէր: Ես կը նկատէի, որ ամէն անգամ հաւաքոյթէն յետոյ, երբ զոհաբերութեան գումարները կը հաշուէին, երբ ձեռքիդ մէջ զոհաբերութենէն մետաղադրամ մը կը պահէիր, կը սկսէիր Սուրբ Հոգիի զօրութենէն ցնցուիլ: Ուրիշ հետաքրքրական բան մըն ալ նկատեցինք, որ ամէն մէկ թղթադրամը կամ չէքը կը տարբերէր: Ամէն մէկը նոյն օծութիւնը չունէր: Ես յետոյ հասկցայ, որ ատոր պատճառը մարդոց կողմէն զոհաբերութեան վրայ տարբեր չափի հաւատքի յարձակումն էր: Անհաւանակման է:

Հինգ գիրքէ բաղկացած «Ձեր ֆինանսական յեղափոխութիւնը» գրքաշարը ամփոփ կը ներկայացնէ

առաջին անգամ Ալպանիոյ մէջ կայացած հինգ հաւաքոյթները: Անշուշտ, գիրքերը քիչ մը աւելի ընդարձակ են, քան առաջին համաժողովը: Ես վստահ եմ, որ երբ իմ ու Տրենտային պէս սկսիք ուսումնասիրել Թագաւորութիւնը, դուք ալ ամէն ինչին ուրիշ ձեւով կը նայիք, ինչպէս մենք կ'ընէինք: Այս գիրքը, որ երրորդն է գրքաշարին մէջ, սկիզբը կը կոչուէր «Հարստութիւն Սուրբ Հոգիէն»: Ես կը կարծեմ, որ այս արտայայտութիւնը տակաւին այսօր ալ ճշմարիտ է: Սուրբ Հոգիէն ներշնչուած մարտավարութիւնը ձեզի բարգաւաճման կը տանի: Յոյսով եմ, որ այս գիրքին միջոցով պիտի գիտնաք, թէ ինչպէս Սուրբ Հոգին կը գործէ այս երկրային աշխարհին մէջ՝ իրականութիւն դարձնելով այդ մարտավարութիւնները:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՉ Կ'ՈՒՋԵՍ, ՈՐ ԸՆԵՆՔ

Երբ առաջին անգամ Ալպանիայէն տուն եկայ, ամէն ինչ խառնաշփոթի մէջ էր: Այն, ինչ որ Աստուած ըրած էր մեր կեանքին մէջ, միաժամանակ դասաւորելով, որ այս յայտնութիւնը հասնի տարբեր ազգերու, քիչ մը շփոթեցնող էր: Ազգեր: Երկիրներ: Երբ ես եւ Տրենտան նոր ամուսնացած էինք, ես անոր ըսի, որ երբեք պիտի չճամբորդեմ, եւ երբեք չեմ փափաքած այլ երկիրներ միսիոներութեան երթալ: Բայց, անշուշտ, Աստուած այլ ծրագիրներ ունէր: Ես պէտք է երթայի տարբեր երկիրներ, բայց ինչպէս: Իմ առեւտուրն այնքան մեծցած էր, որ տարածուած էր գրեթէ ամբողջ Միացեալ Նահանգներով, ես ունէի եկեղեցի, որը պէտք է հովուէի, ընտանիք, որուն համար պէտք է հոգ տանէի, եւ բազում պատասխանատու գործեր: Ես պարզապէս չէի տեսներ, թէ ինչպէս կրնամ երթալ այլ երկիրներ: Բայց Աստուած ծրագիր ունէր: Ծրագիր մը, որն իսկապէս ինձմէ չէր պահանջեր ճամբորդել: Ծրագիր մը, որ նոյնիսկ միտքէս չէր անցներ, ոչ ալ կը ցանկայի դիտարկել. հեռուստատեսութիւնն էր:

Ես եւ Տրենտան հեռուստատեսութենէն բացարձակապէս բան չէինք հասկնար: Այդ ժամանակ մեր եկեղեցական հաւաքոյթները նոյնիսկ չէինք ալ տեսագրեր: Բայց Աստուած մեզի ցոյց տուաւ, թէ ինչ ժամանակներ պիտի գան, եւ թէ

ինչպես պետք է վարուինք: Եւ կարծես բան մը կը ստիպէր մեզի խորամուխ ըլլալու հեռուստատեսութեան մէջ: Առաջին բանը, որ հասկցայ, այն էր, որ հեռուստատեսութիւն ունենալու համար բաւականաչափ գումարներ անհրաժեշտ են: Բոլոր հաշուարկներն ընելէն ետք պարզեցինք, որ առաջին տարուան հեռուստատեսութիւն գործարկելու համար 300.000 տոլար անհրաժեշտ է: Ինչ խօսք, կարկամած էի հեռուստատեսութեան սուղ ըլլալու գաղափարէն: Ամէնէն մեծ խնդիրն այն էր, որ եկեղեցին արդէն իսկ առաւելագոյնս կ'օգտագործէր իր ֆինանսական միջոցները, քանի որ սկսած էինք «Նաու Սենթըր» կեդրոնի ծառայութեան ուսումնական մասի շինարարութիւնը, եւ հեռուստատեսութեան համար վճարելու լրացուցիչ գումար չէր մնար: Եւ Տիրոջը ճիշդ այդպէս ալ ըսի, որ հիմա հեռուստատեսութիւնը գործարկելու համար ֆինանսներ չկան: Կը յիշեմ, Ան համաձայնեցաւ եւ ըսաւ, որ ես եւ Տրենտան պետք է վճարենք ատոր համար:

**ԵՍ ԳԻՏԵԻ, ՈՐ
ԱՍՏՈՒԱԾ ՀԱՒԱՏԱՐԻՄ
Է ԻՐ ԽՕՍՔԻՆ, ԿԸ
ԳԻՏԱԿՅԵԻ, ՈՐ ՊԷՏՔ
Է ՀԱՒԱՏՔՈՎ ՔԱՅԼ
ԸՆԵՄ ՈՒ ՎՍՏԱՀԻՄ
ԱՆՈՐ, ՈՐ ԻՄ ԸՆԵԼԻՔԸ
ՅՈՅՅ ՏԱՅ ԻՆԾԻ:**

Ըսելով, որ քիչ մը շփոթեցանք, թերագնահատած կ'ըլլամ մեր վիճակը, յատկապէս այն պատճառով, որ մենք վեց-եօթ միլիոն տոլար արժողութեամբ եկեղեցւոյ շինարարութեան ծրագրի ճիշդ մէջտեղն էինք: Հաւատացէք, «Նաու Սենթըրի» ծրագիրը ինքնին մեծ հաւատք կը պահանջէր եւ կը խլէր բոլոր

միջոցները, որ կու գային: Ես եւ Տրենտան խոստացած էինք նաեւ 250.000 տոլար նուիրաբերել նախագիծին, իսկ այդ ժամանակ ամբողջ գումարը դեռ չունէինք: Եւս 300.000 միլեւոյն տարուան մէջ, անկարելի կը թուէր:

Ես գիտեի, որ այս իրավիճակը Աստուծմէ էր, եւ Անոր խոստումը, որ ուր ալ ուղարկէ, գումարը Ինքը պիտի մատակարարէ, տակաւին կ'արձագանգէր հոգիիս մէջ: Բայց, միեւնոյն ժամանակ, ինչպէս ալ կը փորձէի թիւերը դասաւորել, անկարելի էր, որ ես ու Տրենտան կարենայինք, մնացածին աւելցած, 300.000 տոլար վճարել:

Ես գիտեի, որ Աստուած հաւատարիմ է Իր Խօսքին, կը գիտակցէի, որ պէտք է հաւատքով քայլ ընեմ ու վստահիմ Անոր, որ իմ ընելիքը ցոյց տայ ինծի: Երանի՜ թէ կարենայի ըսել, որ հարիւր տոկոսով վստահութիւն ունէի եւ այս որոշումին հետ կապուած որեւէ անհանգստութիւն չունէի: Բայց այդպէս չէր: Եկեղեցին կը ծախսէր գանձարան մուտք գործող ամէն դրուշը: Իմ անձնական գումարները կ'ուղղուէին 250.000 տոլարը վճարելուն, որ խոստացած էի, եւ իմ առեւտուրին մէջ ալ շատ բաներ կային, որ այդ տարի ֆինանսաւորում կը պահանջէին: Պարզապէս այլեւս գումար չէր մնար հեռուստատեսութեան 300.000 մեկնարկային ծախսը փակելու համար:

Տրենտան եւ ես երկու շաբաթով ծրագրած էինք հանգստանալ Հաուայեան կղզիներուն մէջ եւ վերադառնալէն անմիջապէս ետք պէտք է պայմանագիրներ ստորագրէինք հեռուստատեսութիւնը մեկնարկելու համար: Անշուշտ Հաուայեան կղզիներուն մէջ հանգիստը վայելք է, բայց դժուար է լիակատար հանգստանալ, երբ գիտես, որ վերադառնալէն ետք որոշում կայացնելու այս բեռը քեզի կը սպասէ: Դժուար էր ատիկա միտքէն հանել: Հեռուստատեսութիւնն աշխատցնելու ֆինանսական բաժինէն բացի՝ միանգամայն անպատրաստ էի հեռուստահաղորդումներուն համար: Ես կ'ամչնայի տեսախցիկի առջեւ խօսելու: Հաւաքոյթներու ժամանակ կրնայի հազարաւոր մարդոց առջեւ խօսիլ, բայց հեռուստախցիկի առջեւ խօսելու ժամանակ խուճապի կը

մատնուէի: Այս ամէնը անընդմէջ կը պտըտէր գլխուս եւ սրտիս մէջ, եւ ես կը պայքարէի այդ որոշումը կայացնելու վախի հոգիին դէմ:

Թէեւ յստակ գիտէի, որ ատիկա Տիրոջմէն լսած եմ, բայց, միեւնոյնն է, կը բախէի դրամ չըլլալու փաստին: Իմ առեւտուրը արդէն իսկ այդ տարուան համար ֆինանսապէս ծանրաբեռնուած էր, եւ ես պարզապէս չէի տեսներ, թէ ինչպէս կարելի էր ասիկա գլուխ հանել: Այո՛, ատիկա վախ էր: Այո՛, ատիկա անհաւատութիւն էր: Գիտեմ: Ես հիմա ուղղակի անկեղծ եմ: Գիտէի, որ պէտք է կառչէի Խօսքէն ու աչքերս կտրելով իմ ունեցածէն՝ նայէի մատանիին: Ան ըսած էր, որ պիտի վճարէ ատոր համար: Այս ժամանակահատուածին մէջ, զոհաբերութիւններէն մէկուն ժամանակ ոսկեղրամ մը եկաւ: Անկեղծ ըսած, մինչ այդ ես երբեք ոսկեղրամ չէի տեսած: Երբ ձեռքիս մէջ պահած էի այն, Տէրը խօսեցաւ. «Ինչպէս Պետրոսին ցոյց տուի, թէ ուր է մետաղադրամը՝ հարկերը վճարելու համար, քեզի ալ ցոյց կու տամ, թէ ուրկէ գումար գտնես հեռուստատեսութեան համար»:

Այդ ոսկեղրամը հետս Հաուայեան կղզիներ տարի: Ես կը քալէի ծովափի վրայ ու կ'աղօթէի՝ ձեռքս պահած այդ ոսկեղրամը, որը կը յիշեցնէր, թէ Աստուած արդէն հոգ տարած է հեռուստատեսութեան համար: Դէպի ծովափ տանող իմ աղօթքի զբօսանքները հիմնականին այսպէս կ'ընթանային: Որոշ ժամանակ Սուրբ Հոգիով աղօթելէն ետք, վրաս խաղաղութիւն կ'իջնէր այդ պայմանագիրը ստորագրելու համար, եւ ես ետ սենեակ կը դառնայի: Բայց ընդամէնը 10-20 մեթր բլուրն ի վեր բարձրանալէն ետք միտքս կրկին կը պոռար, որ գումարները հայթայթելու բնական ոչ մէկ ճանապարհ կար: Փաստն այն էր, որ մենք գումար չունէինք, հեռուստատեսութիւն աշխատցնել չէինք գիտեր, գործիքներ չունէինք եւ այսպէս շարունակ: Բայց հոգիիս մէջ անդադար կը

լսէի այն, ինչ որ Տէրն ըսած էր ինծի Ալպանիոյ մէջ, որ ուր ալ ուղարկէ, Ան պիտի վճարէ: Այս ամէնը տեղի կ'ունենար Մայիս ամսուն, իսկ այս գործը սկսելու համար 300.000 գումարն արդէն տարեվերջին պէտք է առկայ ըլլար, եւ ատիկա շատ անելի լարուածութիւն կը ստեղծէր:

Վախի հոգին ալ հետս կը խօսէր, անդադար կը փորձէր իմ վճռականութիւնը, թէ որքան ամուր կառչած եմ Աստուծոյ ըսածէն: «Դուն ֆինանսական ազատութիւն կը սորվեցնես, մարդիկ ինչ կ'ըսեն, երբ չկարենաս կատարել քու վճարումները»: Ես կը պտըտէի, ետ կը դառնայի ծովափ, կ'աղօթէի ու կը նորոգէի միտքս Աստուծոյ Խօսքին համեմատ, մինչեւ որ խաղաղութիւն կ'իջնէր վրաս: Առջեւ ու ետեւ կը քալէի, գրեթէ մէկ շաբաթ կը մարտնչէի միտքով ու հոգիով այս պայմանագիրին շուրջ, մինչեւ համոզուեցայ, որ ամէն բան լաւ պիտի ըլլայ, եւ վախն այլեւս պիտի չկարողանար տանջել ինծի բացասական միտքերով: Թէ՛ ես, եւ թէ Տրենտան գաղափար չունէինք՝ ուրկէ՞ պիտի գային գումարները, բայց գիտէինք, որ ատիկա Աստուծմէ լսած ենք: Ուստի, երբ տուն եկանք, ես ստորագրեցի պայմանագիրը, եւ սկսանք ուսումնասիրել, թէ ինչպէս պէտք է աշխատցնենք հեռուստատեսութիւնը:

Ինչ կը վերաբերի գումարներուն, զարմանալիօրէն, Հաուայեան կղզիներու հանգիստը ծրագրելէն քանի մը ամիս առաջ, ես հեռաձայն մը ստացայ Աթլանթա բնակող մարդէ մը: Ան կը պատմէր, որ իմ գիրքն իր ձեռքը ինկած էր եւ իրեն հաճելի էր: Այդ ժամանակ գիրքիս հրատարակիչը անձամբ ես էի, եւ բացի իմ քաղաքէն ուրիշ ոչ մէկ տեղ կը վաճառուէր: Բայց այնպէս պատահած էր, որ իմ աշխատողներէն մէկը արձակուրդի ժամանակ գացած էր Աթլանթա, օդակայանը պատահաբար հանդիպած էր այդ մարդուն, զրոյցի բռնուած էր անոր հետ ու պատմած էր, թէ ուր կ'աշխատի: Պատահաբար աշխատողիս քով իմ գիրքը եղած է եւ փոխանցած է անոր:

Այս մարդը պատմեց, որ կարդացած է գիրքը եւ թեման հետաքրքրած է իրեն, ու պարզապես ուզած է զրուցել հետո: Երկար զրուցեցինք, եւ ան պատմեց, որ ճանապարհորդող աւետարանիչ է, ու հիմնականին իր գործունեությունը կը ծաւալէ արտասահմանի մէջ: Ան հարցուց, թէ կրնանք արդեօք հանդիպիլ: Ես ըսի, որ մօտաւորապէս մէկ ամիսէն պիտի ըլլամ Աթլանթայի օդակայանը, քանի որ այդ քաղաքին մէջ հաւաքոյթ մը ունէի: Ատիկա տեղի պիտի ունենար իմ արձակուրդէն ետք: Ես համաձայնեցայ հանդիպելու: Երբ, ի վերջոյ, հանդիպումը կայացաւ, մենք հիասքանչ զրոյց ունեցանք միասին: Ես ուրախութեամբ կը լսէի հրաշքներու մասին իր բոլոր պատմութիւնները, եւ թէ ինչպիսի վտանգներու հանդիպած է ճամբորդութիւններու ընթացքին: Բայց ֆինանսներու մասին զրոյցի ժամանակ էր, որ մենք իսկապէս մտերմացանք: Ան տպաւորուած էր իմ գիրքով եւ պարտքերէն ազատելու իմ պատմութիւնով:

Մեր զրոյցի ընթացքին պատմեց, որ նոր վերադարձած է Շարլոթէն, ուր հեռուստահաղորդման հիւր եղած է, եւ իր կարծիքով ֆինանսներու մասին իմ պատմութիւնը այդ հաղորդման համար շատ հետաքրքիր կ'ըլլայ: Ան ըսաւ, որ գիրքս կը փոխանցէ անոնց եւ տեղեկութիւններ կը յայտնէ իմ մասին: Ես այս ամէնէն քիչ մը իրար անցած էի:

Երբեք այդ հեռուստահաղորդման անունը չէի լսած, բայց քանի մը շաբաթ ետք հաղորդման բեմավարէն զանգ ստացայ, որ կը հարցնէր, թէ կը փափաքէ՞ր արդեօք մասնակցիլ այդ հաղորդումին: Պահանջներէն մէկն այն էր, որ պէտք էր ունենայի ինչ որ բան մը, որը պիտի կարենային առաջարկել եթերի մէջ: Ես ըսի անոնց, որ ֆինանսական յեղափոխութեան մասին հինգ ձայներիզէ բաղկացած ուսուցողական ձայնագրութիւններու փաթեթ մը ունիմ: Ըսին, որ գերազանց է, ապա ճշդեցինք ձայներիզներու փաթեթը

տրամադրելու գինը: Ես ձայներիզներու փաթեթը մեծածախ գինով տուի անոնց, ու այնպէս ըրի, որ որոշակի շահոյթ ալ մեր ծառայութեանը մնար: Ի զարմանս ինծի, հաղորդումը բարեյաջող ընթացաւ, եւ մենք ձայնագրութիւններու հազարաւոր փաթեթներ վաճառեցինք: Միայն ատիկա արդէն հազարաւոր տղարներու եկամուտ ապահովեց մեր հեռուստատեսութեան պիտօճէին, եւ այդ ամէնը եկաւ մէկ աղբիւրէ, որուն մասին պայմանագիրը ստորագրելու պահուն ես նոյնիսկ գաղափար անգամ չունէի:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ուրիշ ցնցող բան մը: Իմ եկեղեցիէն տղամարդ մը, որ քանի մը տարի առաջ եկեղեցի եկած էր ֆինանսապէս կոտորուած վիճակի մէջ, նոյնիսկ տունէն վտարած էին իրեն, մօտեցաւ ինծի եւ ցանկութիւն յայտնեց ֆինանսաւորել հեռուստահաղորդումներու հեռարձակումը: Ան կիրառած էր այն, ինչ որ քարոզուած էր Թագաւորութեան մասին. ան այլեւս աղքատ չէր: Այդ մարդը 120.000 տոլար տրամադրեց մեր հեռուստատեսային ծառայութեանը:

Ձայնագրութիւններու փաթեթներու վաճառքէն ստացուած գումարները, իմ ընկերոջ նուիրատուութիւնը եւ այլ նուիրատուութիւններ հաշուելէն ետք հասկցանք, որ Տրենտան եւ ես, առաջին տարուան մէջ, մեր սեփական գումարներէն ընդհանրապէս պէտք չէր ներդնէինք հեռուստատեսութեան մէջ: Աստուած հաւատարիմ էր Իր Խօսքին: Ան ըսած էր, որ Ինքը կը վճարէ եւ ճիշդ այդպէս ալ ըրած էր: Շատ լաւ, հարցին կէսը լուծուած էր, բայց կար եւս խնդիր մը, որը տակաւին պէտք է լուծուէր: Ինչպէս արդէն ըսած էի, ես հեռուստատեսութենէն գաղափար չունէի:

Այդ աշնանը Տրենտան մասնակցեցաւ քրիստոնեայ կանանց մեծ համաժողովի մը, եւ անոր հրաւիրած էին ետնաբեմի կանանչ սենեակ, ուր ընդմիջումներուն բոլոր

հիւրերը կը հաւաքուէին: Ատիկա մեծ պատիւ էր Տրենտային համար, եւ ան շատ զգացուած էր: Հաւաքոյթ մը ետք, երբ նստած էր ճաշելու, անձանօթ կին մը նստած էր անոր կողքին: Ամէն մէկը իր մասին որոշակի տեղեկութիւն փոխանցելէ ետք, կինը պատահաբար հարցուցած էր. «Իսկ հեռուստատեսային հաղորդում ունի՞ք»: Քիչ մը շփոթուած Տրենտան պատասխանած է. «Ո՛չ, բայց կը մտածենք այդ ուղղութեամբ»: Եւ կինը շարունակած է. «Եթէ հաղորդում ընէք, զանգեցէ՛ք այս մարդուն, ան կրնայ օգնել Ձեզի»: Տրենտան գրի կ'առնէ հեռաձայնի թիւը եւ ել-նամակի հասցէն ու կը դնէ պայուսակին մէջ:

Համաժողովէն վերադառնալէ ետք շաբաթներ կ'անցնին, եւ Տրենտան իսկապէս կը մոռնայ պայուսակին մէջ խցկած այդ կտոր մը թուղթին մասին: Գիշեր մը, այն գտնելէն ետք, կ'որոշէ ելեկտրոնային նամակ ուղարկել այդ մարդուն, որ տեսնէ, թէ ինչ կ'ըսէ: Ան կարծես հետաքրքրուած էր եւ խնդրած էր ուղարկել իմ Ֆինանսական յեղափոխութեան ծայներիզի փաթեթը, եւ մենք ուղարկեցինք: Մօտաւորապէս մէկ շաբաթ յետոյ անոր օգնականը հեռաձայնեց եւ ըսաւ, որ այդ մարդը յստակ հետաքրքրուած է եւ կը ցանկայ հանդիպիլ մեզի կրօնական հեռուստաթերթներու ազգային համաժողովին, որ մէկ-երկու շաբաթ յետոյ պէտք է կայանար: Ըսինք, որ անպայման հոն կ'ըլլանք:

Տրենտան եւ ես գացինք համաժողովին, հանդիպումէն առաջ քիչ մը զգացուած էինք: Այդ հանդիպման համար նոր սեւ քոստիւմ գնած էի եւ իսկապէս չէի գիտեր, թէ ինչ ակնկալել: Այդ մարդը խնդրած էր, որ պանդոկի սենեակը հանդիպէինք հեռուստատեսութեան մասին խօսելու համար: Կը յիշեմ, մենք այնքան յուզուած էինք, որ նախքան պանդոկի սենեակին դուռը թակելը, մէկ-երկու անգամ առջեւ ու ետեւ քալեցինք միջանցքով, որպէսզի յուզմունքներս անցնի: Երբ ներս մտանք,

զարմացանք: Սենեակը խումբ մը մարդիկ հաւաքուած էին մեզի հետ խօսելու համար: Աթոռներով կիսաշրջան կազմած էին, եւ Տրենտային ու իմ տեղը այդ կիսաշրջանի առջեւն էր: Անոնցմէ ոեւէ մէկուն բնաւ չէինք հանդիպած, բայց բոլորն ալ շատ պաշտօնական հագուած էին:

Քիչ մը զրուցելէ ետք լիցքաթափուեցանք, բայց յետոյ սկսան հարցումներ հարցնել հեռուստատեսութիւն սկսելու մեր ցանկութեան մասին: Ես տակաւին կը յիշեմ առաջին հարցումը. «Իսկ ինչո՞ւ կը ցանկաք հեռուստատեսութիւն հիմնել»: Ես այդ ժամանակ չէի գիտեր, որ այդ սենեակին մէջ հաւաքուածները հեռուստատեսութեան ոլորտին մէջ տարբեր բնագաւառներու ղեկավար անձինք էին: Այն մարդը, որուն հետ խօսած էինք, անշուշտ, հոն էր, բայց հոն էին նաեւ այլ հեռուստաարտադրութեան, մարքեթինկի ոլորտի մարդիկ, եւ բոլորն ալ իրենց կարգին բարդ-բարդ հարցումներ կը հարցնէին: Ընդհանուր առմամբ, կը կարծեմ, որ հանդիպումը լաւ ընթացք ունեցաւ: Մենք անկեղծ էինք եւ չէինք ցանկար ինչ որ մէկու մը վրայ տպաւորութիւն ձգել: Պարզապէս կը պատմէինք մեր պատմութիւնը, թէ ինչ ըրած է Աստուած մեր կեանքին մէջ: Բոլորն ալ հաւնեցան մեր տեսիլքն ու սրտացաւութիւնը եւ ըսին, որ քանի մը շաբաթէն կը հեռաձայնեն՝ մանրամասնութիւնները քննարկելու համար:

Այսպիսով, քանի մը շաբաթէն կրկին խօսեցանք: Եւ այս անգամ բոլորս որոշեցինք առջեւ երթալ եւ հեռարձակման գործնական ծրագրաւորման հանդիպում կազմակերպել: Այդ ժամանակ մենք մտածած էինք, որ նկարահանումները կը կազմակերպենք մեր տունը, ուստի, այն տղամարդը, որուն հետ Տրենտան կապ հաստատած էր, խնդրեց, որ յաջորդ հանդիպումը կայանայ մեր տունը: Ան կը ցանկար տեսնել մեր տունը՝ հասկնալու համար յարմար է, թէ ոչ:

Ահա օրը եկաւ: Այդ մարդն արդէն մեր տունն էր, եւ մենք նստանք զրուցելու: Մինչեւ այս հանդիպումը, ես իրականութեան մէջ բոլորովին անտեղեակ էի հեռուստատեսութեան իր պատմութենէն: Այն կինը, որուն Տրենտան հանդիպած էր համաժողովին, մեզի փոխանցած էր միայն անոր հետ հաղորդակցելու տուեալները: Բայց երբ սկսանք զրուցել, ան պատմեց բոլոր այն հեռուստահաղորդումներուն մասին, որոնք ան պատրաստած էր եւ ներկայիս ալ կ'աշխատէր: Բոլորն ալ հանրայայտ անուններ էին: Ես ապշած նստած էի. «Աստուած իմ, ինչպէ՛ս այս մարդուն Լոս ԱնՃելըսէն բերած ես ամայի վայրի մէջ գտնուող մեր տունը, այն ալ՝ քարքարոտ գիւղական ճանապարհներով»: Ան համաձայնեցաւ յարմար գինով պատրաստել ամբողջական հաղորդում մը, որ պիտի ներառէր նկարահանումը, մոնթաժը եւ վերջնական արտադրանքը ներկայացնելը: Բոլորս ալ որոշեցինք, որ սկիզբի համար հաղորդումները կը նկարահանենք մեր տունը՝ հիւրասենեակին մէջ:

**«ՁԵՉՄԷ ՄԷԿԸ
ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է,
ԹՈ՛Ղ ԱՂՕԹԷ»:**

– ՅԱԿՈԲՈՍ 5.13

Ահա եկաւ նկարահանման առաջին օրը: Պէտք է խոստովանիմ, որ յուզուած եւ զգացուած էի: Ինչպէս արդէն ըսած եմ, հեռուստատեսութեան հետ երբեք որեւէ առնչութիւն

չեմ ունեցած: Չէի գիտեր, թէ ինչ կառուցուածք պէտք է ունենայ հեռուստահաղորդումը, երբեք միայն տեսախցիկի առջեւ չէի խօսած: Այս ամէնը նոր էր: Ուրախ էի, որ պէտք է ներկայացնէի Թագաւորութեան մասին իմ պատմութիւնը, բայց ինձի համար հեռուստատեսութիւնը նոր բարձունք մըն էր, որը պէտք է նուաճէի:

Նկարահանման օրը հոգեցունց բան մըն ալ տեղի ունեցաւ,

որ օրն աւելի լարուած դարձուց: Այն բեմավարը, որ եկած էր մէկ շաբաթով՝ նկարահանումները կազմակերպելու համար, գիշերուան կիսուն մեկնեցաւ: Անոր որդին ինկած էր դրացիին ինքնաշարժին տակ եւ մահացած էր: Անոր օգնականը բացատրեց տեղի ունեցածը, եւ մենք որոշեցինք, որ մինչեւ նկարահանման աւարտը ոչ մէկուն պատմենք ատոր մասին: Ինչ որ ձեռով մը ատիկա յաջողեցանք ընել: Այդ օրը երեք հաղորդում նկարահանեցինք եւ արդէն պաշտօնապէս կը հեռարձակէինք հաղորդումները: Անհաւատալի էր:

Երբ սկսանք հեռարձակումը, նոյնիսկ գաղափար չունէինք, թէ ինչպէս պէտք է վճարէինք հեռարձակման ժամանակի համար: Բայց Աստուած սկսաւ սորվեցնել մեզի, որ ոչ միայն կ'ապահովէ նկարահանման համար անհրաժեշտ 300.000 տոլարը, այլեւ հեռարձակման ժամանակի համար պահանջուող գումարը նոյնպէս: Այնքան սորվելու բան ունէինք: Գիտէք, երբեք չէինք դիտարկած, որ թերեւս մարդիկ ուզեն սերմել մեր հեռուստածառայութեան համար: Ահա թէ որքան միամիտ էինք:

Կը յիշեմ, իմ քարտուղար Թրէյսին հեռարձակումը սկսելէն ետք հեռաձայնեց ինծի գրասենեակէն: Երբ լսեցի անոր ձայնը, հասկցայ, որ ինչ որ բանէ մը ան ցնցուած էր: Ան դողդոջուն ձայնով ըսաւ.

- Հովիւ, ինչ որ մէկը, դիտելով մեր հաղորդումը, 500 տոլարի չէք ուղարկած է: Եւ երբ ատիկա առի, նոյն օծութիւնը, որ դուք բերած էիք հնդկական համայնքի եկեղեցիէն, այդ չէքին վրայ էր:

- Իսկապէս, - կմկմալով ըսի ես: - Ինչ որ մէկը մեզի գումար ուղարկած է:

Մինչեւ չէքը ստանալը երբեք միտքէս չէր անցնած, որ մարդիկ գումար կը փոխանցեն հեռարձակումին աջակցելու

համար: Բայց, Փանք Աստուծոյ, անոնք այդ օրուրնէ սկսեալ շարունակ կ'ուղարկեն: Կ'ուղարկեն աշխարհի տարբեր վայրերէն, տարբեր ժամային գօտիներէն: Ծախսերու տարեկան վճարումները հասած էին միլիոններու, բայց Աստուած միշտ կը պահէր Իր տուած խոստումը. վճարումները Ան կը կատարէր:

Այս գիրքն այն մասին է, թէ ինչպէս կրնանք լսել Սուրբ Հոգիին եւ կեանքի մէջ առաջնորդուիլ Անորմով: Մեր հեռուստատեսութեան պատմութիւնը լաւ օրինակ է, թէ ինչպէս Սուրբ Հոգին կ'առաջնորդէ մարդոց ընելու աւելի մեծ բաներ, քան երբեք երազած են: Այն, ինչ որ Աստուած ըրած է մեր կեանքին մէջ, չէր եկած միայն Անոր Թագաւորութեան գործելու սկզբունքներու իմացութենէն, այլեւ Աստուծոյ ուղղորդումները, իմաստութիւնը եւ մեզի անհրաժեշտ պատասխանները լսելու կարողութենէն: Այս պատմութիւնը երբեք տեղի չէր ունենար, եթէ չլսէինք Սուրբ Հոգիին: Կ'ըլլան ժամանակներ, երբ բոլորս ալ կը կենանք դժուար եւ անյուսալի իրավիճակներու առջեւ: Բայց Աստուած ունի պատասխան:

«Ձեզմէ մէկը նեղութեան մէջ է, թո՛ղ աղօթէ...» (Յակոբոս 5.13):

Ինչո՞ւ աղօթել: Որովհետեւ կարիք ունինք լսելու, թէ որն է պատասխանը, եւ որն է խնդիրը լուծելու ճանապարհը: Կարիք ունինք, որ Աստուած ուղղորդէ մեզի: Ինչպէս շատ անգամներ ես եւ Տրենտան ականատես եղած ենք, որ Աստուած կրնայ ընել մեր պատկերացումէն աւելին, երբ կը կենանք ինչ որ խնդիրի մը դէմ յանդիման: Ան կ'օգնէ ձեզի իւրայատուկ եւ երբեմն ալ տարօրինակ լուծումներով ու մարտավարութեամբ, որպէսզի կարենանք յաղթահարել ձեզի համար անկարելի թուացող իրավիճակները: Շատ անգամներ պատասխանը

լսելու ձեր կարողությունը կ'որոշէ, թէ որ ճանապարհով երթաք՝ յաղթանակի՞, թէ՛ ձախողման, կեանքի՞, թէ՛ մահուան: Այս գիրքին մէջ շատ պիտի խօսիմ Սուրբ Հոգիին ձայնը լսելու մասին, բայց թոյլ տուէք ուրիշ օրինակ մը բերել, թէ ինչպէս կրնայ Սուրբ Հոգին օգնել դժուարին ժամանակներուն մէջ:

Երբ մեկնարկեցինք «Նաու Սենթըր» ծրագիրը, որուն արժէքը 6.5 միլիոն տոլար էր, մեզի յաջողեցաւ ճիշդ սկիզբէն հաւաքագրել 2.5 միլիոնը կանխկով, եւ որոշ գումար ալ դրամատունէն օգտագործեցինք: Մենք ունէինք նաեւ գումարներ, որ նախագիծին համար հաւաքուած էր 18 ամսուան ընթացքին: Ատիկա հսկայական ծրագիր էր 550 հոգիէ բաղկացած եկեղեցւոյ համար: Մենք հիմքը փորեցինք 2007 թուականի աշնանը, եւ մինչեւ 2008 թուականի գարնանը ամէն բան հրաշալի կ'ընթանար: Թերեւս յիշէք 2008 թուականի ֆինանսական ճգնաժամը: Մեր շինարարութիւնը ճիշդ այդ ճգնաժամին կ'ընթանար: Ամէն ինչի գիները կտրուկ աճեցան: Պողպատեայ ամրաններու գիները 300.000 տոլարով գերազանցեցին նախկին գնառաջարկը: Ատիկա օրինակներէն մէկն էր: Ամբողջ շինարարական նախագիծը պիտոճէի սահմաններէն դուրս էր, քանի որ այդ տարի շինանիւթերու գիները աստղաբաշխական էին:

2008-ի վերջաւորութեան, ճգնաժամի խորանալուն զուգընթաց, դրամատուները թէ՛ մեր նահանգին մէջ, եւ թէ երկիրով մէկ կը սահմանափակէին վարկային գիծերը եւ կը պահանջէին վարկերու վաղաժամկետ փակում: Այս օրերուն մեր շինարարը մեր քով եկաւ ստանալու համար գումար, որը նախապէս անցած էր մեր դրամատան կողմէն առաջնային հաստատումը: Ան ալ պէտք է իր վարձակալներուն վճարէր եւ փակէր որոշ հաշիւ-ապրանքագրեր: Ատիկա գումար մըն էր, որ արդէն ան ծախսած էր: Մէկ միլիոն տոլար արժողութեամբ չէքը պէտք էր վճարէինք նախապէս հաստատուած

դրամատնային ֆինանսատրամաբ, քանի որ մեր կանխիկի պաշարներն այդ պահուն արդեն սպառած էինք: Բայց մէկ միլիոն տոլար արժողութեամբ չէքը չկար: Յնցունցանք, երբ իմացանք, որ դրամատունը չեղարկած է իր առաջարկը եւ փակած է վարկային գիծը: Կը յիշեցնեմ՝ ատիկա միայն մեր դրամատունը չէր, քաղաքի բոլոր դրամատուններն ալ այդ վիճակի մէջ էին: Այդ շաբաթ քաղաքային օրաթերթի առաջին էջին վրայ մեր դրամատունն էր: Ճիշդ այդ շաբաթ անոնք 550 աշխատակեդրոն կրճատած էին եւ ամէն գինով կը փորձէին գոյատեւել ֆինանսական ճգնաժամի հնոցին մէջ:

Առկայ խնդիրն այն էր, որ մեր շինարարը պէտք է վճարէր իր վարձակալներուն եւ վճարէր արդեն իսկ օգտագործուած շինանիւթին համար: Այս մէկ միլիոն տոլարի չէքը անոր ապագային համար անհրաժեշտ չէր: Ան արդեն իսկ ծախսած էր այդ մէկ միլիոնը: Այլ ընկերութիւններ եւ ընտանիքներ կը սպասէին, որ մենք վճարէինք մեր շինարարին, ան ալ՝ անոնց: Ինչպէս մենք, ան նոյնպէս մտածած էր, որ դրամատունը իր խոստումը կը պահէ: Ինչ կրնանք ընել: Ինչ կ'ընէք այսպիսի իրավիճակներու մէջ: Ես մէկ միլիոն չունէի եւ պատրաստուած ալ չէի եկեղեցւոյ մարդոցմէ դրամ մուրալ: Բացի ատիկա, հեռուստատեսութիւնն ալ հետզհետէ աւելի ծախսատար կը դառնար, քանի որ հաղորդումները կը հեռարձակուէին այլ հեռուստացանցերով եւս: Այժմ եթերաժամանակի վրայ ամսական կը ծախսէինք 50.000 տոլար: Մենք պէտք է ընէինք միայն այն, ինչ որ կ'ըսուի Յակոբոս 5.13-ին մէջ: Պէտք է աղօթէինք:

Այնպէս պատահեցաւ, որ այդ ընթացքին իմ առեւտուրով շահեցանք Հաուայեան կղզիներու մէկ այլ ճամբորդութիւն: Մեկնելէն քանի մը օր առաջ պարզեցի, որ դրամատունը սառեցուցած է վարկային գիծը: Օղակայանը, երբ արդեն կը պատրաստուէինք Մաուիի թռիչքին, ես դեռ ցնցուած էի:

Միտքս կ'աշխատէր միլիոն մղոն/ժամ արագութեամբ: Երբ կը քալէի օդակայանի սպասասրահով, եւ ինքս ինձ խղճալու մեծ գայթակղութիւն կար, յանկարծ լսեցի Տիրոջ ձայնը. «Բարձրացոր գաւազանդ»: Կեցայ եւ սկսայ խորհիլ, թէ ինչ կ'ըսէ Տէրը: Եւ յանկարծ հասկցայ:

Աստուած ճիշդ ասիկա ըսաւ Մովսէսին, երբ Իսրայէլը երթալու տեղ չունէր, երբ Փարաւոնի բանակը Կարմիր ծովուն քով օղակի մէջ առած էր ժողովուրդին: Աստուած Մովսէսին ըսաւ բարձրացուր գաւազանդ ծովուն վրայ: Ան ըրաւ, եւ ծովը կիսուեցաւ. Իսրայէլի ժողովուրդին համար անցնելու եւ փախչելու ճանապարհ բացուեցաւ: Մովսէսին գաւազանը կը խորհրդանշէր այն խոստումները, որ Աստուած տուած էր իրեն, ինչպէս նաեւ կը խորհրդանշէր իշխանութիւն, որ կատարէ Աստուծոյ գործերը:

Ես գիտէի, թէ Աստուած ինչ կ'ուզէր ըսել: Ես այս եկեղեցւոյ առաջնորդն էի՝ հովիւը: Այս իրավիճակէն դուրս գալու իշխանութիւնը ինծի տրուած էր: Ես պէտք է իշխանութիւնը իմ ձեռքն առնէի, կենայի եւ ճանապարհ գտնէի: Երբ հասանք Հաուայեան կղզիներ, ես կրնայի միայն աղօթել: Գիշերները չէի կրնար քնանալ: Հոգիս տակն ու վրայ կ'ըլլար: Կը հասկնայի, որ հոգիին մէջ կը գօտեմարտիմ ինծի անհրաժեշտ պատասխանը ստանալու համար: Ի վերջոյ, Տրենտան գաղափար մը յայտնեց, որը, վստահ էր, թէ Տիրոջմէն էր: Շնորհակալ եմ Աստուծոյ իմ կնոջ համար: Որքան անգամներ ան կրցած է գտնել այն ծրագիրներն ու ուղղորդումները, որոնք ինծի անհրաժեշտ եղած են տարբեր իրավիճակներու մէջ: Չեմ կրնար բացատրել, թէ որքան թանկ է ան ինծի համար, եւ թէ որքան շատ կը սիրեմ անոր: Տրենտան երբեք չի յանձնուիր:

Անոր ծրագիրը պարզ էր, բայց իմաստուն: Դրական արդիւնքի որեւէ երաշխիք չկար, բայց մենք անմիջապէս

սկսանք աշխատիլ ատոր վրայ: Ծրագիրը հետեւեալն էր. կազմել նախագիծ եւ ներկայացնել մեր շինարարի դրամատանը, եւ ոչ թէ մեր դրամատանը: Այդ նախագիծին մէջ պէտք է ներկայացնէինք, թէ ով ենք մենք, եւ ցոյց տայինք, թէ ինչու կը կարծէինք, որ այդ վարկը երկուքիս համար ալ լաւագոյն լուծումն է: Ատիկա բաւականին անհաւանական ծրագիր էր, քանի որ, ինչպէս արդէն ըսած էի, քաղաքի բոլոր դրամատուները դադրեցուցած էին վարկաւորումը: Մենք այսպէս կը կարծէինք, որ եթէ մեր շինարարին չվճարէինք, ուրեմն ան սնանկ պիտի ճանչցուէր, իսկ ատոր հետեւանքով իր դրամատան մէջ ունեցած բոլոր վարկերը վտանգի տակ կը յայտնուէին: Վստահ էինք, որ նման իրավիճակը մեծապէս կը վտանգէր անոր դրամատունը, բան մը, որ իսկապէս չէինք ուզեր: Եւ կրկին, ասիկա մեր դրամատունը չէր, եւ անոնք որեւէ առնչութիւն եւ պատմութիւն չունէին մեզի հետ:

Այսպիսով, մենք գրասենեակային պատկերակալի վրայ ներկայացուցինք տարածքի բնակչութեան թիւերը, եւ թէ որքան արագ կ'աճի այն: Մենք դրամատանը ներկայացուցինք մեր պատմութիւնը եւ ակնկալուող աճը: Տարբեր ձեւով ներկայացուցինք եկեղեցւոյ ծառայութիւններէն բացի այդ շէնքէն ակնկալուող եկամուտները, ինչպէս օրինակ, թէ որքան արագ կ'աճէին մեր հեռուստատեսային եկամուտները, եւ շատ այլ բաներ, որ կը կարծէինք անոնց համար հետաքրքրական կ'ըլլար: Կ'ուզէինք վստահեցնել անոնց, որ նոյնիսկ այս դժուարին ժամանակներուն մէջ հաւանականութիւն կար, որ մենք շահութաբեր կ'ըլլայինք: Կը ցանկայինք ցոյց տալ նաեւ, որ եթէ շինարարին չվարկաւորէին, անոնք պիտի կենային այլ կորուստներ կրելու վտանգի առջեւ, իսկ այս գործարքով մենք «կ'օգնէինք անոնց» խուսափելու ատոնցմէ: Մենք հանդիպում խնդրեցինք դրամատան փոխտնօրէնին հետ, որ միաժամանակ առեւտրավարկային վարչութեան ղեկավարն

էր: Մենք կ'աղօթէինք եւ կը քալէինք անոր գրասենեակին մէջ՝ վստահ գիտնալով, որ այս ծրագիրը Սուրբ Հոգիէն տրուած է, եւ ներկայացուցինք մեր հայցը:

Ի գարմանս մեզի, մեր նախագիծէն յետոյ այդ պաշտօնեան տեղւոյն վրայ իր քարտուղարին խնդրեց 500.000 տոլարի չէք դուրս գրել

եկեղեցւոյ անունով, որ մեզի հետ առնէինք: Ան ըսաւ, որ իր ըրածը արտասովոր բան մըն է, եւ սովորաբար այդ ձեւով չեն վարուիր: Այդ 500.000-ի համար ո՛չ ձեւաթուղթ լրացուցինք, եւ ո՛չ ալ պարտաւորութեան տակ ստորագրեցինք: Ան ըսաւ, որ մնացած 500.000-ը կը տրուի համաձայն բնականոն ընթացակարգին, բայց միեւնոյն ժամանակ վստահեցուց, որ կ'ըլլայ, քանի որ ինքն էր որոշում կայացնողը: Այդպէս ալ եղաւ: Մենք մեր շինարարին վճարեցինք մէկ միլիոն տոլարը, եւ շէնքի շինարարութիւնն աւարտեցաւ:

Դժուար է ըսել, թէ ինչպիսի զգացողութիւն համակած էր ինձի եւ Տրենտային տունդարձի մէկ ժամ տետղութեամբ ճանապարհին, երբ մեր գրպանը այդ 500.000 տոլարնոց չէքը կար: Բառերով ոչ մէկ ձեւով կրնաս նկարագրել այն, ինչ որ կը զգայինք այդ պահուն, բայց միեւնոյն ժամանակ երկիւղած էինք Սուրբ Հոգիին ներգործութենէն: Առաջին մարդը, որուն հեռաձայնեցինք, մեր շինարարն էր: Ականջներուս մէջ տակաւին կը հնչէ անոր ուրախ ձայնը, երբ յայտնեցինք բարի լուրը: «Ինչ ըրած էք: Անոնք տեղւոյն վրայ չէք տրամադրած են», - ըսաւ ան. երկուքս ալ գիտէինք, որ ատիկա Աստուծոյ գործն էր:

**ԵԹԷ ՕՐ ՄԸ ԿԸ
ՑԱՆԿԱՔ ՕԳՏՈՒԻԼ
ԱՍՏՈՒԾՈՅ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ՀԻԱՍՔԱՆՉ
ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ,
ՈՒՐԵՄՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ
Է ՍՈՐՎԻԼ ԼՍԵԼ ՍՈՒՐԲ
ՀՈԳԻՒՆ:**

Ինչպե՞ս պատահեցաւ: Սուրբ Հոգիին միջոցով: Աստուած գիտէ ձեր կարիքի պատասխանը: Եթէ օր մը կը ցանկաք օգտուիլ Աստուծոյ Թագաւորութեան հիասքանչ հնարաւորութենէն, ուրեմն անհրաժեշտ է սորվիլ լսել Սուրբ Հոգիին: Եւ այս գիրքը յատկապէս ասոր մասին է:

Սուրբ Հոգիին հետ տարբեր իրավիճակներով անցնիլն աւելի հետաքրքրական է, քան ճէյմս Պոնտի որեւէ ֆիլմ: Եւ ինչպէս ֆիլմերուն մէջ կը պատահի, գիտենք, թէ վերջաւորութեան ով կը յաղթէ՝ անկախ դժուարութեան մակարդակէն:

ԳԼՈՒԽ 2

ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Վստահ եմ, լսած կ'ըլլաք այն անհեթեթ դատական հայցերու մասին, որոնք ի վերջոյ կը մերժուին դատարանին կողմէն:

Քոլորատոյի բանտի բանտարկեալներէն մէկը 88 միլիառ տոլարի (այո՛, միլիառ) դատական հայց կը ներկայացնէ ընդդէմ Ամերիկեան ֆութպոլի ազգային լիկային: Հայցի հիմքն էր Տալլասի Քաուպոյներ (Dallas Cowboys) եւ Կրին Պէյ Փեքըրզ (Green Bay Packers) խումբերու լրացուցիչ խաղաժամի ընթացքին մրցավարներու կողմէն կայացուցած որոշումը: Դատաւորները որոշած են, որ Տէզ Դրայընի (Dez Bryant) կողմէն գնդակը բռնելը թերի եղած է: Բանտարկեալը համաձայն չէ այս ամէնուն: Ան իր հայցով կը պնդէ, որ Ամերիկեան ֆութպոլի ազգային լիկայի պաշտօնեաներն անփութօրէն գործած եւ խախտած են իրենց հաւատարմագրուած պարտականութիւնները: Իսկ ինչո՞ւ ճիշդ 88 միլիառի հայց ներկայացուցած է: Քանի որ Տէզ Դրայընի մարզաշապիկին վրայ 88՝ թիւը կայ:

Տնորք է, այնպէս չէ՞: Հասկնալի է, որ այս դատական գործին ընթացք պիտի չտրուի: Իսկ ի՞նչը կ'որոշէ, որ հայցը վաւեր է, թէ՛ ոչ: Համաձայն law.com-ի՝ կայ դատական գործի մերժման երկու հիմնական պատճառ. առաջինը՝ եթէ այն ունի իրաւական խնդիր, կամ չկայ որեւէ իրաւական հիմք, որուն վրայ կարելի

Է գործը վարել՝ համաձայն օրենքի: Ինչո՞ւ կ'անդրադառնամ օրենսդրական խնդիրներու գիրքի մը մէջ, ուր կը խօսիմ Սուրբ Հոգիին մասին: Որովհետեւ եթէ կ'ուզէք, որ Սուրբ Հոգին գործէ ձեր իրավիճակին մէջ, պէտք է յստակ իմանաք, թէ ինչ կ'ըսէ օրենքը: Աստուծոյ Թագաւորութիւնն ալ կը գործէ ճիշդ նոյն սկզբունքով: Ատիկա Թագաւորութիւն մըն է, որը կը գործէ Թագաւորութեան օրենքներու շրջանակին մէջ: Այս գրքաշարի իմ նախորդ երկու գիրքերուն մէջ՝ «Ձեր ֆինանսական յեղափոխութիւնը. համաձայնութեան զօրութիւնը» եւ «Ձեր ֆինանսական յեղափոխութիւնը. հանգիստի զօրութիւնը», կը ներկայացնեմ Աստուծոյ Թագաւորութեան գործելու հիմնական սկզբունքները՝ իրաւունքի եւ օրենքի տեսանկիւնէն: Բայց եթէ կը ցանկաք հասկնալ, թէ ինչ կ'ըսեմ Սուրբ Հոգիին մասին, լաւ կ'ըլլայ, որ քիչ մը ետ երթանք եւ փորձենք վերլոյծել հետեւեալ սկզբունքները: Սկսինք հարցումէ մը:

«Յիսուսն ըսաւ անոնց. «Մարգարէն անարգուած է միայն իր քաղաքին, իր ազգականներուն եւ իր սեփական տունին մէջ»: Եւ չկրցաւ որեւէ հրաշք գործել հոն, բայց միայն քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ եւ բժշկեց անոնց: Եւ անոնց անհաւաքութեան համար կը զարմանար»:

– Մարկոս 6.4-6

Կրնա՞ք ըսել, թէ ինչու Յիսուսը չկրցաւ բժշկել մարդոց: Կարծրացած կրօնական պատասխանը հետեւեալն է. «Աստուծոյ կամքը չէր, որ բժշկէր անոնց: Ի վերջոյ, Աստուած բոլորէն լաւ գիտէ: Եթէ ցանկար բժշկել, պիտի կարենար, այնպէս չէ՛: Նկատի ունիմ, որ Ան Աստուած է»:

Կրնա՞նք արդեօք ենթադրել, որ հոն բժշկութեան կարիք ունեցող մարդիկ կային, բայց չստացան իրենց բժշկութիւնը: Կը

կարծեմ՝ այս թեքսթին մէջ ատիկա յստակ կ'երեւի: Թէ ինչու Յիսուսը չկրցաւ բժշկել մարդոց, կարելոր հարցում է, որուն անպայման պէտք է պատասխանել: Եթէ կարդանք այս պատմութեան եզրափակիչ խօսքը, կը տեսնենք, որ Յիսուսը կ'ըսէ, որ խոչընդոտը մարդոց հաւատքի բացակայութիւնն էր: Յիսուսի դիտարկումն ու եզրայանգումը հասկնալու համար, թէ ինչու մարդիկ չբժշկուեցան, պէտք է լաւ պատկերացնենք, թէ ինչ է հաւատքը, եւ թէ ինչու այն անհրաժեշտ է այս երկրային համակարգին մէջ, որպէսզի Երկինքը օրինաւոր իրաւասութիւն ունենայ հոս:

Թոյլ տուէք ամփոփեմ այս խնդիրը: Ոչ թէ զօրութեան բացակայութիւնն էր, կամ ալ Յիսուսի կողմէն դժկամութիւն դրսեւորուած էր, այլ ասիկա իրաւասութեան խնդիր էր: Իրականութեան մէջ, Երկինքը օրինական հիմք չունէր այդ իրավիճակին մէջ հոն գտնուող մարդոցմէ շատերուն համար գործելու: Առաջ որ այս գիրքը սենեակի մը անկիւնը նետէք եւ ըսէք, որ չէք հասկնար, թէ ինչ կ'ըսեմ, թոյլ տուէք բացատրեմ:

Երբ Ադամն ու Եան երկրի վրայ դրուեցան, անոնք կատարեալ եւ ամբողջական իշխանութիւն ունէին երկրային թագաւորութեան վրայ: Կը կարծեմ հետեւեալ խօսքը յստակօրէն կը վաւերացնէ ըսածս.

«Քիչ մը վար ըրիր անոր հրեշտակներէն, փառքով եւ պատիւով պսակեցիր անոր եւ ամէն բան անոր ոտքերուն տակ դիր: Ամէն բան անոր ոտքերուն տակ դնելով՝ Աստուած ոչինչ ձգեց, որ հնազանդ չըլլայ անոր»:

– Եբրայեցիս 2.7,8

Ուշադրութիւն դարձուցէք՝ հոս կ'ըսուի, որ Ադամը փառքով եւ պատիւով պսակուեցաւ: Պսակուիլ բառը կը վկայակոչէ

իշխանության այն դիրքը, ուրկէ Ադամը կը ղեկավարէր, եւ ոչ թէ որ պարտէզին մէջ թագ կը կրէր: Բայց կրնանք ենթադրել, որ անոր շուրջը ինչ որ փայլ կամ լուսապսակ կար: Ասիկա պարզապէս միտք է: Ադամն ունէր Աստուծոյ Թագաւորութեան փառքը (Թագաւորութեան օծութիւնն ու վեհութիւնը) եւ պատիւը (իշխանութեան դիրքը): Եւ օգտագործելով այս երկու բաները՝ ան կ'իշխէր երկրի վրայ՝ Աստուծոյ Թագաւորութեան կողմէն իրեն փոխանցուած իշխանութեամբ: Սատանան, որ արդէն երկրի վրայ էր, երբ մարդը ստեղծուեցաւ, կ'ատէր մարդուն եւ կը ցանկար խլել անոր իշխանութիւնը: Իմանալով, որ դիւրաբար չի կրնար Ադամէն խլել իշխանութեան պսակը, քանի որ Ադամը կատարեալ իշխանութիւն ունէր նաեւ իր վրայ, ան պէտք է խաբէութեան ծրագիր մը յօրինէր, որպէսզի Ադամը կամաւոր վար դնէր պսակը (իշխանութիւնը):

Այսպիսով, սատանան խաբեց Եային, եւ Ադամն ալ հետեւեցաւ անոր՝ ապստամբելով Աստուծոյ դէմ: Ատոր հետեւանքով անոնք կորսնցուցին Աստուծոյ Թագաւորութեան մէջ ունեցած իրենց դիրքը: Հետեւելով սատանային՝ անոնք այժմ մտան անոր թագաւորութեան օրէնսդրութեան տակ: Թերեւս հարցնէք. «Նախեառաջ, ինչո՞ւ Աստուած թոյլ տուած էր, որ սատանան պարտէզին մէջ ըլլար»: Ան պէտք է հոն ըլլար: Թերեւս այս պատասխանը ձեզի համար խիստ զարմանալի թուի, բայց կը տեսնէք, որ ատիկա ճշմարիտ է: Միասին կարդանք Ծննդոց 2.8,9 խօսքերը.

«Եւ Տէր Աստուած արեւելքի կողմը՝ Եդէմի մէջ, պարտէզ մը տնկեց, եւ Իր ստեղծած մարդուն հոն դրաւ: Տէր Աստուած այդ հողէն ամէն տեսակ ծառ աճեցուց՝ աչքին հաճելի եւ ուտելու համար լաւ: Այգիին մէջտեղը Կեանքի ծառն էր՝ բարիի եւ չարի գիտութեան ծառը»:

Այս հատուածը կարդալով՝ թերեւս զարմանալի թուի, թէ ինչու Աստուած բարիի եւ չարի գիտութեան ծառը կը դնէ ճիշդ այգիին մէջտեղը՝ Կեանքի ծառի հարեւանութեամբ: Իրականութեան մէջ, որպէսզի Աստուծոյ համար սատանայի տարածքը գողնալը օրինաւոր ըլլայ, Աստուած մարդուն ընտրութեան հնարաւորութիւն պէտք է տար՝ ծառայելու կամ Իրեն, կամ սատանային: Աստուած չէր կրնար օրինաւոր ծելով մուտք գործել սատանայի օրէնսդրական դաշտը եւ մարդուն հոն դնէր: Որպէսզի արիկա օրինաւոր ըլլար, մարդը պէտք է ընտրութեան հնարաւորութիւն ունենար, թէ որուն կը ցանկար հնազանդիլ: Եթէ մարդն ընտրէր Աստուծոյ՝ Կեանքի ծառը, ան կ'իշխէր սատանային վրայ: Ուստի բարիի եւ չարի գիտութեան ծառը պէտք է դրուէր անմիջապէս Կեանքի ծառի կողքին:

Ահա կարելորդ դիտարկում մը եւս: Մարդն առանց ազատ կամքի չէր կրնար դրուիլ երկրի վրայ: Գիտեմ, շատ քրիստոնեաներ կ'ըսեն, որ մեզի ազատ կամք տրուած է, որպէսզի Աստուած տեսնէ, թէ ով Իրեն կը սիրէ, եւ ով չի սիրեր: Որոշակի ճշմարտութիւն կայ ատոր մէջ: Բայց առանց ընտրութեան հնարաւորութեան ատիկա անօրինական կ'ըլլար: Եթէ մարդուն ազատ կամք չտրուէր, ան չէր կրնար հոս դրուիլ: Այս գրոյցի ընթացքին տակաւին շատ բաներու մասին կարելի է խօսիլ, բայց նախորդ գիրքին մէջ արդէն իսկ խօսած եմ:

Այսպիսով, Ադամը կ'ընտրէ սատանայի խաբէութիւնը, կը կորսնցնէ Աստուծոյ Թագաւորութիւնը, եւ Ծննդոց 3.17-19-ին մէջ Աստուած հակառակ կը կենայ մարդուն:

«...Անիծեալ ըլլայ երկիրը քու պարճառով, տանջալի աշխատանքով ուրեւս անորմէ կեանքիդ բոլոր օրերու

ընթացքին: Այն քեզի համար փուշ ու տապալակ պիտի բուսցնէ, եւ դուն դաշտի բոյսերը պիտի ուրես: Քու հացը ճակտիդ քրտինքով պիտի ուրես, մինչեւ որ դէպի հողը դառնաս»:

Հոս փաստացի կը տեսնենք, որ Աստուած Ադամին կ'ըսէ, որ ան անիծած է երկիրը: Քանի որ Ադամը երկրի վրայ լիակատար իշխանութիւն ունէր, ան բացած է դուռը սատանային իշխանութեան համար եւ այդ ձեւով Աստուծոյ դուրս շարտած է: Հիմա Աստուծոյ ձեռքերը կապուած են, եւ Ադամը պէտք է իր տանջալի աշխատանքով ու քրտինքով գոյատեւէր: Բայց աննշան, փոքրիկ բան մը կար, որ սատանան մոռցած էր Եւային ըսելու, երբ կը փորձէր անոր. Աստուած արդէն իսկ սատանային դատած էր, Երկինքէն դուրս վընտած էր եւ հռչակած էր, որ անոր յաւիտենական տունը վայր մը պիտի ըլլայ, որ դժոխք կը կոչուի: Շատ կարեւոր է, որ հասկնաս ասիկա: Շատերը կ'ըսեն. «Ինչպէ՞ս կրնայ սիրող Աստուած մարդոց նետել տեղ մը, որ կը կոչուի դժոխք»: Աստուած չի նետեր: Ադամը կը նետէ: Յաջորդ Աստուածաշնչեան մէջքերումին մէջ կը տեսնենք, որ դժոխքը երբեք ալ մարդուն համար ստեղծուած չէ եղած:

«Այն ժամանակ իր ծախ կողմիններուն պիտի ըսէ. «Հեռացէ՛ք Ինձմէ, դուք, որ անիծուած էք, յաւիտենական կրակի մէջ, որ պատրաստուած է սատանային եւ անոր հրեշտակներուն համար»»:

– Մատթէոս 25.41

Երբ Ադամն ու Եւան սատանային իրաւասութեան տակ մտան, ինքնաբերաբար մտան սատանայի դատաստանին տակ: Ադամին միջոցով ամբողջ մարդկությունը սատանային իշխանութեան տակ մտաւ: Պատկերացուցէք խոշոր

եղջերաւոր անասուններու բուծումը: Երբ ձեր կովերէն մէկը հորթ կը ծնի, այդ հորթը կը կրէ ձեր ապրանքանիշի անուանումը, քանի որ այն ձեզի կը պատկանի, որովհետեւ նախիրն ամբողջութեամբ ձեզի կը պատկանի: Նոյն ձեւով ալ, Ադամէն ծնած ամբողջ մարդկութիւնը սատանային իրաւասութեան տակ մտաւ: Սթանտարտ, քարացած կրօնական հասկացողութիւնը կամ, կարելի է ըսել, հասկացողութեան բացակայութիւնը, բոլորովին սխալ է: Այն կը պնդէ, որ մարդուն ճակատագիրը, ըլլայ դժոխքը, թէ դրախտը, կախուած է մարդուն լաւ կամ վատ ըլլալէն: Փաստն այն է, որ անոնց դատաստանն արդէն իսկ կայացուած է: Անոնք դժոխք կ'երթան: Ոչ թէ այն պատճառով, որ բոլորը վատ բան ըրած են, այլ՝ քանի որ Ադամը վատ բան ըրած է: Բայց քանի որ Աստուած կը սիրէ մարդոց, Ան փրկագնման ծրագիր մը ստեղծած է եւ մշակած է Յիսուս Քրիստոսի միջոցով, որուն օգնութեամբ մարդը կրնայ խուսափիլ դատաստանէն եւ վերադառնալ Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան տակ:

«Որ փրկեց մեզ խաւարի իշխանութենէն եւ փոխադրեց մեզի Իր սիրելի Որդիին Արքայութեան մէջ» (Կողոսացիս 1.13):

Հոս հարկ է նշել, որ Աստուած սատանայի իրաւասութենէն ու դատաստանէն օրինաւոր փախուստի ծրագիր մշակած է: Բայց այս ծրագիրէն օգտուելու համար իւրաքանչիւր տղամարդ, կին եւ երեխայ պէտք է անձամբ օգտուի՝ կանչելով Յիսուսին անունը: Քրիստոնեանէր, պահ մը լսեցէք ինծի: Փողոցին ծայրը բնակող այն անուշիկ կինը կը յայտնուի դժոխքին մէջ, եթէ մինչեւ անոր մահանալը ինչ որ մէկը անոր չըսէ, որ կանչէ Յիսուսին անունը: Դժոխքին մէջ շատ լաւ մարդիկ պիտի յայտնուին: Ատիկա սատանային սուտն է, որ

մարդիկ կարծեն, թե բարի գործեր ընելով կրնան խուսափիլ դժոխքէն: Յիսուսին անունը միակ անունն է, որ տրուած է մարդուն փրկութիւն ստանալու եւ սատանային դատաստանէն փախչելու համար: Կ'ուզեմ նաեւ յստակեցնել, որ երբ Ադամն ինկաւ, ան հոգեւորապէս մահացաւ եւ Աստուծմէ կտրուեցաւ, բայց միեւնոյն ժամանակ անոր օրինաւոր դիքը այս երկրի վրայ տակաւին կը պահպանուի: Այդ իսկ պատճառով սատանան կ'օգտագործէ դեւերէն ոգեշնչուող մարդոց, իսկ Աստուած կ'օգտագործէ Հոգիով լեցուած մարդոց, որպէսզի մարդոց թագաւորութեան մէջ գործեր ըլլան: Ամփոփելու համար ըսենք, որ կը գիտակցինք, թէ դրախտ կամ դժոխք երթալը կախուած չէ մեր լաւ ու վատ ըլլալէն, այլ այն օրինաւոր յաղթանակէն, որը Յիսուսը խաչին վրայ ունեցաւ ընդդէմ սատանային: Թէեւ Յիսուսը լիիրաւ ճանապարհ հարթեց մարդուն համար, որ վերջինս դուրս ելլէ սատանային իրաւասութենէն, բայց այդ արտօնութենէն օգտուելու համար ամէն մարդ պէտք է Յիսուսին անունը կանչէ:

Գիտեմ, որ այս մասին քանի մը պարբերութիւն առաջ խօսեցանք, բայց վերադառնանք սկզբնական հարցումին. «Ինչո՞ւ Մարկոսի 6-րդ գլուխին մէջ Յիսուսը չկրցաւ բժշկել մարդոց»: Ես ըսի, որ ատիկա իրաւասութեան հարց է, եւ այդպէս ալ է: Քանի որ Ադամը սատանային յանձնեց մարդու թագաւորութեան հոգեւոր իրաւասութիւնը, Աստուած չի կրնար ներխուժել հոս, երբ կամենայ, քանի որ ատիկա անօրինական կ'ըլլայ: Բայց, կը խնդրեմ, ըսա՞ծս սխալ չընկալէք այն հարցին հետ կապուած, թէ երկիրը որուն կը պատկանի: Աստուածաշունչին մէջ յստակ կ'ըսուի, թէ երկիրն ու իր ամբողջ լիութիւնը Աստուծոյ կը պատկանի: Բայց ինչ կը վերաբերի մարդու թագաւորութեանը, Աստուած որեւէ օրինաւոր իրաւասութիւն չունի անոնց վրայ: Մենք ասոր մասին կրնանք կարդալ Ղուկաս 4.5-7-ին մէջ.

«Եւ սապանան Անոր բարձր լեռ մը հանեց եւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցոյց փուռ վայրկեանի մը մէջ: Եւ սապանան ըսաւ Անոր. «Անոնց ամբողջ իշխանութիւնն ու փառքը Քեզի կու տամ, որովհետեւ ապիկա ինծի յանձնուած է: Եւ որո՞ւ որ ուզեմ, անոր կու տամ այն: Արդ Դուն, եթէ առջեւս ինկած երկրպագութիւն ընես, այս բոլորը Քուկդ պիտի ըլլան»»:

Հոս կը տեսնենք, որ Ադամը սատանային տուած է օրինական իրաւասութիւն աշխարհի թագաւորութիւններուն վրայ: Այդ իսկ պատճառով այս աշխարհի թագաւորութեան մէջ բնակող մարդոց կեանքերուն մէջ Աստուած չի կրնար ընել այն, ինչ որ կամենայ: Բայց եթէ Աստուած գտնէ մէկու մը, որ կը հաւատայ Իրեն եւ կատարելապէս համոզուած կ'ըլլայ երկնային իշխանութեան հարցին մէջ, այդ ժամանակ Աստուած կրնայ օգտագործել Իր իշխանութիւնը այդ մարդուն միջոցով: Ճիշդ սկիզբը սատանան նոյն ձեւով մուտք գործեց երկրային թագաւորութիւն այն մէկուն՝ Ադամին միջոցով, որուն տրուած էր օրինաւոր դիրք այս երկրի վրայ: Երբ Աստուած կորսնցուց Իր մարդուն՝ Ադամին, Ան պէտք է այս երկրի վրայ ուրիշ մուտքի հնարաւորութիւն մը գտնէր, ուրիշ մարդու մը՝ Իր փրկագնման ծրագիրն իրագործելու համար: Այդ մարդուն անունը Աբրամ էր:

«Եւ Տէրն ըսաւ Աբրամին. «Գնա՛ քու երկրէն եւ քու ազգականներէն եւ քու հօր փունէն այն երկիրը, որ Ես քեզի ցոյց պիտի տամ: Ես քեզի մեծ ազգ պիտի շինեմ եւ քեզի պիտի օրհնեմ եւ քու անունը պիտի մեծցնեմ, եւ դուն օրհնեալ պիտի ըլլաս: Եւ քեզի օրհնողներուն պիտի օրհնեմ եւ քեզի անիծողներուն պիտի անիծեմ, եւ երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին»»:

– Ծննդոց 12.1-3

Աբրամը կամ Աբրահամը դարձաւ ճիշդ այն դուռը, որն Աստուած օգտագործեց այս աշխարհի թագաւորութիւնը վերադառնալու եւ մարդկութեան փրկութեան Իր ծրագիրը բերելու համար:

Աստուած Աբրահամին եւ Անոր սերունդներուն հետ ուխտ կնքեց, եւ այս օրինաւոր համաձայնութեամբ մուտքի հնարաւորութիւն ստացաւ Յիսուս Քրիստոսին այս աշխարհ բերելու համար, բայց միայն Աբրահամի սերունդին առումով: Ատոր համար ալ Յիսուսը պէտք է ըլլար Աբրահամի սերունդի հետնորդներէն մէկը, եւ ատոր համար ալ Իսրայէլին թոյլ չէր տրուեր ամուսնանալ դրացի ազգերու հետ: Ատոր համար ալ Նոր կտակարանի առաջին գլուխն ամբողջութեամբ ծագումնաբանութիւն է: Ատիկա կ'ապացուցէ, որ Յիսուսը փաստացի Աբրահամին օրինաւոր հետնորդն է, եւ ապացոյց կը հանդիսանայ սատանային համար, որ օրինաւոր է, որ Յիսուսը գայ եւ վճարէ մեղքի գինը:

Քանի որ երկրի վրայ իշխելու իրաւունքը կը պատկանի մարդուն, ուրեմն թէ՛ Աստուած, եւ թէ՛ սատանան պէտք է մարդոց օգտագործեն ինչ որ բաներ ընելու համար: Պարզ ըսած, մարդը միակ օրինաւոր մարմինն է այս երկրի վրայ: Բայց ինչպէս սատանան մուտքի հնարաւորութիւն ստացաւ Ադամին եւ Եւային միջոցով, երբ անոնք հաւատացին իր ըսածին, այդպէս ալ Աստուած պէտք է գտնէ այնպիսի մարդոց, որոնք կը հաւատան Իր ըսածին, որպէսզի այս երկրի վրայ դրսեւորելու իրաւունք ստանայ: Եթէ մարդն իր սրտին մէջ լիովին հաւատայ այն ամէնուն, ինչ որ Երկինքը կ'ըսէ, եւ ոչ թէ՛ սատանայի թագաւորութիւնը, ատիկա կը կոչուի հաւատք, եւ ատիկա օրինական իրաւասութիւն կու տայ Երկինքին՝ երկրի վրայ այդ մարդուն միջոցով գործելու եւ Աստուծոյ կամքը երկրի վրայ բերելու համար՝ այդ ձեւով պայքարելով սատանայի թագաւորութեան դէմ: Այնքան բան կայ ըսելու,

բայց այս ամենուն մասին մանրամասնօրէն խօսած եմ իմ առաջին երկու գիրքերուն մէջ:

Հիմնական բանալին հետեւեալն է. քանի որ սատանան երկրի վրայ է, ան միշտ կը պաշտպանէ իր թագաւորութիւնը եւ կը փորձէ խափանել Աստուծոյ ծրագիրները: Այդ իսկ պատճառով, Աստուած Իր ծրագիրներն ու մարտավարութիւնը այս երկրային թագաւորութեան մէջ իրականացնելու համար ծածուկ կը գործէ: Եւ երբ իմանաք, թէ ինչպէս Աստուած ծածուկ կը գործէ, դուք ձեր կեանքի յաջողութեան եւ յաղթանակներու ամենամեծ բանալին ձեռք բերած կ'ըլլաք: Ես ատիկա կը կոչեմ մարտավարութեան զօրութիւն:

ԳԼՈՒԽ 3

ԱՊՇԱԾ

Ես զանգ ստացայ մարդէ մը, որուն երբեք չէի հանդիպած: Ան ներկայացաւ եւ ըսաւ, որ իրեն ու եւս քանի մի հոգիի շատ հաճելի էր իմ «Հաւատքի որսորդութիւն» գիրքը եւ Աստուծոյ Թագաւորութեան մասին իմ դասերը: Ան հարցուց, թէ արդե՞ծք կը ցանկամ Մոնթանա երթալ եւ Ուրբաթ երեկոյեան ու Շաբաթ առաւօտեան դասաւանդել շուրջ 70 տղամարդու: Դեռ չպատասխանած՝ ան ւաւելցուց. «Շաբաթ առաւօտեան դասէն ետք կը փափաքէինք ձեզի այծքաղի որսի տանիլ, քանի որ անոնց որսի ժամանակն է»: Երկար ժամանակ չպահանջուեցաւ այդ հարցումին պատասխանելու համար: Ան ըսաւ, որ իմ տղաներն ալ հրաւիրուած են, եթէ անշուշտ կը փափաքին գալ: Ամրան ամիսներուն անոնք օգնեցին ինծի արտօնագիր ստանալու յառաջիկայ աշնան որսի համար: Տղաս՝ Թիմը, որոշեց ինծի հետ գալ, եւ ինքն ալ արտօնագիր ստացաւ:

Ինչպէս յետոյ իմացայ, անոնք «Խոստում պահողներ» խումբէն էին, եւ շատ ոգեւորուած էին որսորդական պատմութիւններէն, որոնք պատմած էի իմ դասերու ժամանակ, եւ թէ ինչպէս իմ եղնիկին հաւատքով որսացած են: Անոնք կը ցանկային ւաւելին գիտնալ, թէ ինչպէս կրցած

Եմ 30-էն-40 վայրկեանի ընթացքին որսալ իմ եղնիկին, եւ թէ ինչպէս Աստուած ինծի սորվեցուցած է յստակ ձեակերպել, թէ ինչ տեսակի կենդանի կը ցանկամ որսալ, ինչ սեռի եւ ինչ չափի: Կը հասկնամ, ինծի հետ պատահած պատմութիւնները գրեթէ անհաւատալի են, եւ եթէ իրականութեան մէջ աստոնք իմ աչքով տեսած չըլլայի, նոյնչափ հետաքրքրուած կ'ըլլայի:

Ի վերջոյ, հասաւ Մոնթանա մեկնելու շաբաթը: Թիմը եւ ես օդանաւով մեկնեցանք եւ հանդիպեցանք տղամարդոց ծառայութեան ընթացքին քանի մը առաջնորդներու՝ խումբ մը հիասքանչ տղաներու, որոնք անկեղծօրէն կը սիրէին Տիրոջը: Անոնք մեզի տարին կարմրախայտի որսի, յետոյ հրաձգարան, ուր մեզի համար հրացաններ պատրաստած էին: Ես Օհայօ մեծցած եմ եւ վարժուած չէի հեռահար հրացաններուն: Մեր նահանգի օրէնքը թոյլ կու տար եղնիկներու համար ատրճանակ գործածել, իսկ հեռաւորութիւնը գրեթէ 100 մեթրէն ալ պակաս կ'ըլլար, երբեմն ալ՝ աւելի քիչ, քան 50 մեթրը: Եւ երբ թիրախակէտը 200 մեթրի վրայ դրին, ատիկա ինծի համար անսովոր էր: Բայց քանի մը անգամ փորձելէն ետք սկսայ զարնել մետաղեայ սկաւառակին ու ըսի, որ պատրաստ եմ որսի:

Այդ երեկոյեան եւ յաջորդ առաւօտեան նոյնպէս տեղական դպրոցի դահլիճին մէջ դասաւանդեցի տղամարդոց հաւաքոյթին: Տղաները կը փափաքէին լսել Աստուծոյ Թագաւորութեան մասին, յատկապէս, թէ ինչպէս Աստուած ինծի սորվեցուցած էր Արքայութեան օրէնքները որսորդութեան միջոցով: Ճաշէն ետք անոնք ըսին. «Ուրեմն, եկէք երթանք այծքաղի որսի»: Ես երբեք այծքաղ չէի որսացած, եւ բոլորովին գաղափար չունէի, թէ ընթացակարգն ինչպիսին է: Իմ որսորդութեան փորձառութեան ժամանակ որսի կ'երթայինք երկու կամ երեք հոգիով: Իսկ այս տղաներն

իրենց հետ առին մարդոցմով լեցուն երեք-չորս ինքնաշարժ: Կը յիշեմ, այդ գիշեր Թիմն ինծի հարցուց. «Հայրիկ, այծքաղի որսէն անհանգիստ չե՞ս: Դուն անոնց պիտի սորվեցնես, թէ ինչպէս Թագաւորութիւնը կը գործէ, եւ ամէն անգամ վստահաբար կը պնդես, որ Թագաւորութեան օրէնքները միշտ կը գործեն, իսկ եթէ յանկարծ չկարենաս այծքաղ որսալ, ու բոլորը ատոր ականատեսը ըլլա՞ն»: Անոր ըսի, որ չեմ անհանգստանար: Ես եւ Տրենտան արդէն մեր սերմը ցանած էինք ու այդ այծքաղին համար համաձայնութեան եկած էինք, եւ հաստատ որսը պիտի յաջողէր:

Երբ գացած էինք դէպի այն ագարակը, ուր որսի համար թոյլտուութիւն ստացած էինք, անոնք կը բացատրէին, թէ այծքաղը Հիւսիսային Ամերիկայի ամէնէն արագավազ կենդանին է, նաեւ՝ երկրագունդի երկրորդ արագավազ կենդանին: Անկէ արագավազ միայն վագրակատուն է: Կ'ըսէին, որ անշատ ւատեսողութիւն ունի եւ պաշտպանութեան հիմնական ձեւը վազելն է: Ու եթէ յանկարծ նկատեն քեզի, մէկ ակնթարթի մէջ կը հեռանան: Ինծի տրուած էր արու այծքաղի որսի թոյլտուութիւն, իսկ Թիմին՝ էգի:

Այդ օրուան ծրագիրը հետեւեալն էր. ինքնաշարժով հասնիլ ագարակի բարձր կէտին, ապա քալել դէպի գագաթը, այնուհետեւ վերէն զննել հարթավայրը՝ փորձելով որեւէ կենդանի նշմարել: Երբ քալելով կը բարձրանայինք դէպի գագաթը, հեռուէն խումբ մը այծքաղներու նկատեցինք: Տեղանքը ուսումնասիրելէն ետք հասկցանք, որ կրնանք աւելի մօտենալ, բայց միեւնոյն ժամանակ մնալ կիրճի վարի մասը: Պէտք է գաղտագողի մօտենայինք վերջին բլրակին, յետոյ դիրքաւորուէինք բլուրի գագաթին՝ կրակելու համար, եթէ անշուշտ մինչ այդ այծքաղներն հոն ըլլային: Դիրքաւորուելէն ետք կրնայինք 200-250 մետրէն զարնել անոնց:

Թիմը եւ ես բաւականին երկար ժամանակ դանդաղ փորի վրայ կը սողայինք, մինչեւ որ հասանք բլուրի գագաթին, որ կը նայէր դէպի այն հարթավայրը, ուր նկատած էինք այծքաղներուն: Այսպէս պայմանաւորուած էինք, որ իմ կրակոցէն ետք Թիմը պէտք է զարնէր էգին: Ես դանդաղ սողացի դէպի բարձունքի ծայրը եւ զննեցի տարածքը: Բարեբախտաբար մեր ծրագիրը գործած էր, այծքաղներու փոքրիկ երամակը չէր նկատած մեզի: Ես հանեցի իմ հրացանը, ինծի համար դժուար էր ուղիղ նշան բռնել այդ հեռաւորութեան վրայ, սողալով գալէն ալ շնչառութիւնս արագացած էր: Բայց, ի վերջոյ, երբ արդէն համոզուեցայ, որ արուն իմ նշանակէտին մէջ է, ձգանք քաշեցի: Վրիպեցայ: Երամակը շփոթուեցաւ, ու ես երկրորդ կրակոցն արձակեցի: Կրկին վրիպում: Երամակն արդէն ցրուած էր, երբ երրորդ ու չորրորդ անգամ կրակեցի: Բոլորը վրիպեցան: Հինգերորդ անգամ ալ կրակեցի, բայց

միայն ձգանի շխկոցը լսուեցաւ:
Փամփուշտներս սպառած էին:

**ԱՇԽԱՐՀԸ ԿԸ
ՓԱՓԱՔԻ ՏԵՍՆԵԼ
ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԵՒ
ԱՍՏՈՒԱԾ ԱԼ ԿԸ ՍԻՐԷ
ԶԱՐՄԱՅՆԵԼ ԱՆՈՆՑ:**

Այդ իրարանցման մէջ չէի ալ նկատած, որ ամբողջ երամակը դուրս եկած էր հասանելի հեռաւորութեան սահմաններէն: Բոլորը, բացի այն արունէն, որուն

վրայ նշան բռնած էի: Այն հանդարտ կանգնած էր քանի մը մեթր այն կողմ, ուր առաջին կրակոցի ժամանակ կանգնած էր: Ես խելայեղօրէն Թիմէն առի իր հրացանը: Հիմա արդէն կանգնած կը կրակէի, եւ ահա արու այծքաղն ինկաւ: Ես թէ՛ ուրախ էի, թէ՛ հանգստացած: Արուն զարնուած էր: Շատ զարմացայ, երբ ետ նայեցայ եւ տեսայ, որ խումբ մը տղաներ կը պոռային ու կը ցնծային: Ոմանք հեռաձայնով կը նկարէին, եւ լսեցի, թէ ինչպէս մէկը կ'ըսէր. «Այո՛, ասիկա իսկապէս նման

էր «Հաւատքի որսորդութիւն» գիրքին, ընդամենը 40 վայրկեան տեւեց, եւ այդ ժամանակ արուն հանգիստ կեցած էր, ինչպէս որ գիրքին մէջ կ'ըսուէր»: Անոնք եկած էին տեսնելու, թէ ինչպէս Թագաւորութիւնը կը գործէ: Ի վերջոյ, ժամեր շարունակ սորվեցուցած էի անոնց, ու հիմա կը ցանկային տեսնել, թէ ինչպէս այն կը գործէ: Չնայած այն բանին, որ վրիպած էի, բայց, միեւնոյնն է, վերջաւորութեան զարկած էի եւ ատով իմ դասաւանդածն աւելի արժանահաւատ դարձած էր: Կէսօրին Թիմին ալ յաջողեցաւ գերազանց կրակոցով մը զարնել էգ վազող այծքաղին: Երկուքս ալ այնքան յուզուած էինք: Մոնթանան այնքան գեղեցիկ էր: Ես եւ Թիմը Թագաւորութեան ընտիր փորձառութիւն ունեցանք: Այծքաղի գլուխը կախեցի գրասենեակիս պատէն, որ յիշեցնէ ինծի Թագաւորութեան եւ Աստուծոյ հաւատարմութեան մասին:

Իսկ ինչո՞ւ այս գիրքին մէջ կը պատմեմ որսորդական այս պատմութիւնը: Քանի որ Աստուած կը ցանկայ գործել ձեր միջոցով, որպէսզի ցոյց տայ Իր Թագաւորութիւնը ձեր բոլոր ընկերներուն, դրացիներուն եւ բարեկամներուն: Բոլորը կը ցանկան տեսնել, թէ ինչպէս ասիկա կը գործէ: Աշխարհը կը փափաքի տեսնել իրականութիւնը, եւ Աստուած ալ կը սիրէ զարմացնել անոնց: Անոնց զարմացնելու համար դուք պէտք է սորվիք, թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը, եւ թէ ինչպէս Սուրբ Հոգին ցոյց կու տայ ձեզի անհրաժեշտ պատասխաններն ու հնարաւորութիւնները, որպէսզի զարմացնէք բոլորին, նոյնիսկ՝ ձեզի: Ես յետոյ պարզեցի, որ այդ տղաները, որոնք տղամարդոց ծառայութեան առաջնորդներն էին, հրաւիրած էին ինծի, որպէսզի հաւատքի կեանքին մէջ լճացած տղաներուն ցոյց տամ Աստուծոյ Թագաւորութիւնը: Իմացայ նաեւ, որ այդ օրուան իմ ուսմունքէն ետք շատերն իրենց սրտերը նուիրած էին Տիրոջը:

Տէրը կ'օգնէ, որ յաջողութեան ձեր ծրագիրները նոյնպէս կատարելութեան հասնին:

Թոյլ տուէք եւս մէկ պատմութիւն պատմել, բայց ասիկա անմիջապէս Աստուածաշունչէն է: Այն անգամ մը եւս ցոյց կու տայ, թէ ինչպէս Աստուած կը ցանկայ զարմացնել ձեզի Իր գերբնական ծրագիրներով ու մարտավարութեամբ, որը կ'ապացուցէ ձեզ շրջապատող մարդոց Աստուծոյ իրական ըլլալը եւ մարդոց հանդէպ Անոր սէրը:

«Օր մը Յիսուսը կեցած էր Գեննեսաբէթի ծովակին քով: Մինչ Անոր շուրջը մարդիկ կը հաւաքուէին Աստուծոյ Խօսքը լսելու, Ան ծովակի եզերքին երկու նաւակ տեսաւ, որոնցմէ ձկնորսները դուրս եկած էին եւ իրենց ուռկանները կը լուային: Ան մտաւ նաւակներէն մէկուն մէջ, որը Սիմոնին կը պատկանէր, եւ խնդրեց անոր քիչ մը ափէն հեռանալ: Յետոյ նստաւ եւ սկսաւ նաւակէն սորվեցնել մարդոց:

Եւ երբ խօսելէն դադրեցաւ, Սիմոնին ըսաւ. «Նաւը դէպի խորունկը տար, եւ ձեր ուռկանները նետեցէ՛ք որսի»: Եւ Սիմոնը պատրաստանեց ու ըսաւ. «Վարդապետ, ամբողջ գիշեր աշխատեցանք եւ ոչինչ բռնեցինք, բայց Քու խօսքին համար ուռկանը պիտի նետեմ»:

Երբ այդպէս ըրին, ձուկերու այնպիսի մեծ քանակութիւն բռնեցին, որ անոնց ուռկանները սկսան պատռուիլ: Անոնք նշան կ'ընէին միւս նաւուն մէջ եղող ընկերներուն, որ գան ու օգնեն իրենց. անոնք եկան, երկու նաւերը լցուցին եւ գրեթէ ընկղմելու մօտ էին:

Երբ Սիմոն Պետրոսը ասիկա տեսաւ, ինկաւ Յիսուսին ձուկերու առջեւ եւ ըսաւ. «Ինձմէ հեռու գնա, Տէր. ես մեղաւոր մարդ եմ»: Որովհետեւ ահ պատեց անոր եւ անոր հետ եղող ամէնուն ալ այն ձուկերու որսին համար,

*որ բռնեցին: Այդպէս ալ Ջերեդէոսի որդիներուն՝
Յակոբոսին ու Յովհաննէսին, որ Սիմոնի ընկերներն
էին»:*

– Ղուկաս 5.1-10

Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը ամբողջ գիշերը ձուկ որսացած էին, եւ ոչինչ ինկած էր իրենց ուռկանին մէջ: Անոնք փորձառու ձկնորսներ էին, որոնք մեծցած էին լիճի ջուրերուն վրայ եւ շատ լաւ գիտէին իրենց գործը: Բայց այս անգամ ձեռնունայն վերադարձած էին: Անշուշտ, պատմութիւնն այսքանով չ'աւարտիր: Յիսուսը կ'առնէ Պետրոսի նաւակը, որ հոնկէ քարոզէ, եւ ապա կ'ըսէ, որ ուռկանը խորունկ ջուրերու մէջ նետէ, որ ձուկ որսայ: Պետրոսը՝ քիչ մը շուարած, կ'ըսէ, որ ամբողջ գիշեր որս ըրած են, բայց որեւէ ձուկ չեն գտած, բայց քանի որ Յիսուսն էր ատիկա ըսողը, ան պատրաստ էր ուռկանը նետելու: Երբ Պետրոսը ուռկանը կը նետէ, Աստուածաշունչը կ'ըսէ, որ ան այնքան ձուկ կը բռնէ, որ ուռկանը քիչ մնայ պատռուի: Ուստի ան իր ընկերներուն օգնութեան կը կանչէ: Համաձայն Աստուածաշունչին, իր ընկերներու ուռկաններն ալ գրեթէ կը պատռուէին, եւ երկու նաւակներն ալ այնքան լեցուն էին ձուկերով, որ քիչ մնացած էր ընկղմէին: Աստուածաշունչը կ'ըսէ, որ այս փորձառու ձկնորսներն այնքան ապշած էին այդքան որսէն, որ թողեցին ձկնորսութիւնը եւ հետեւեցան Յիսուսին:

Ասիկա Սուրբ գիրքի իմ ամենասիրելի պատմութիւններէն է, քանի որ հոս յստակ կ'երեւի երկու թագաւորութիւններու տարբերութիւնը՝ խաւարի թագաւորութեան եւ Աստուծոյ Թագաւորութեան: Խաւարի թագաւորութիւնը, որը սատանայի տիրապետութեան տակ է, փճացած, աղքատիկ, ամբողջ գիշեր տանջուած եւ ոչինչ որսացած համակարգ

է եւ կ'ուղեկցուի տքնաջան աշխատանքով ու քրտինքով՝ պարզապէս գոյատեւելու համար: Ես ասիկա կ'անուանեմ աշխարհի անէծքի համակարգ, որը յայտնուեցաւ Ադամի ըմբոստութեան պատճառով, ի հակադրութիւն Աստուծոյ Թագաւորութեան փառաւոր պատկերին եւ ասկէ բխող ամէն ինչի: Մտորեցէք այս երկու ծայրայեղութիւններուն շուրջ եւ կը համոզուիք, որ Աստուած ձեզի համար պատրաստած է երկրորդ դուռը՝ Իր Թագաւորութիւնը:

Հիմա ամէն քրիստոնեայ կ'աղաղակէ ու կը ծափահարէ՝ ըսելով. «Այո՛, Աստուծոյ Թագաւորութիւնը հզօր է: Տէս, թէ որքան ձուկ բռնեցին»: Բայց շատ քիչերը կը հարցնեն, թէ ինչպէս Յիսուսը ըրաւ ասիկա: Շատերն ալ անտեղեակ են, որ իրենց տրուած է նոյն իշխանութիւնն ու կարողութիւնը՝ վայելելու Աստուծոյ մատակարարման նոյն մակարդակը, որն այդ օրը Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը վայելեցին: Այն հարցումին, թէ ինչպէս այդ օրը Յիսուսն ըրաւ այդ հրաշքը, սովորաբար կը տրուի ծեծուած բացատրութիւն, որ Յիսուսը կրցաւ ընել ասիկա, քանի որ Ան Յիսուսն էր: Բայց, սպասեցէք, մենք արդէն տեսանք, որ Մարկոսի 6-րդ գլուխին մէջ Յիսուսը չկրցաւ բժշկել բոլորին, քանի որ Երկինքը հոն որեւէ իրաւասութիւն չունէր: Իսկ ձկնորսութեան օրը կը գործէր Թագաւորութեան հոգեւոր օրէնքները, որոնք ալ նպաստեցին եւ ապահովեցին ձկան որսը:

Խնդիրը հետեւեալն է: Իմ հանդիպած քրիստոնեաներէն շատերուն միտքէն նոյնիսկ չէր անցած, որ հնարաւոր է ընել նոյնը, ինչ որ Յիսուսը ըրաւ: Իսկ եթէ միտքերնէն ալ անցած ըլլայ, գաղափար չունին, թէ ինչպէս Յիսուսը ըրաւ ասիկա: Ես ասացուածք մը կ'օգտագործեմ իմ համաժողովներուն, որ «եթէ բան մը չես կրնար սովորեցնել, ուրեմն չես կրնար ատով ապրիլ»: Նկատի ունիմ, որ եթէ չես կրնար սահմանել,

թէ ինչպէս այդ որսը տեղի ունեցաւ, դուն երբեք չես կրնար կրկնօրինակել այն: Իսկ ինչպէ՞ս այդքան շատ ծուկ բռնուեցաւ: Կրնա՞ք սահմանում մը տալ: Եթէ կը ցանկաք այդքան մեծ յաջողութիւն ունենալ, ուրեմն պէտք է պարզէք, թէ ուրկէ այդքան ծուկ յայտնուեցաւ: Բայց շատ մարդիկ կը զարմանան, երբ կը սկսիմ այդպէս խօսիլ: Իսկ ի՞նչ կ'ըսէ Յիսուսը.

«Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի. Ինծի հաւատացողը կ'ընէ այն, ինչ որ ես կ'ընեմ: Եւ ասկէ աւելի մեծ գործեր ալ կ'ընէ, քանի որ ես կ'երթամ Հօր քով»:

– Յովհաննէս 14.12

Երբ Յիսուսն ըսաւ, որ մենք կրնանք Իր գործերը գործել, քանի որ կ'երթայ Հօր քով, Ան նկատի ունէր, որ Իր մահէն եւ յարութենէն ետք Սուրբ Հոգին պէտք է իջնէր մեր վրայ: Ասիկա այն Սուրբ Հոգին է, որ Յորդանան գետին մէջ իջաւ Յիսուսին վրայ՝ թոյլ տալով, որ Ան Աստուծոյ հզօր գործերն ընէ, որոնց մասին կ'իմանանք Անոր ծառայութեան ընթացքն ուսումնասիրելով: Եւ քանի որ գիտենք, որ Մարկոսի 6-րդ գլուխին մէջ մարդոց անհաւատութիւնը խոչընդոտ հանդիսացաւ այս զօրութեանը, մինչ Ղուկասի 5-րդ գլուխին մէջ այդ զօրութեանը ոչինչ խոչընդոտեց ծուկերու առումով, մենք պէտք է սորվինք Աստուծոյ Թագաւորութեան օրէնքները, որպէսզի կարենանք հասկնալ, թէ ինչը կը խոչընդոտէ եւ ինչը կը նպաստէ որեւէ իրավիճակի մէջ Սուրբ Հոգիին ազատ հոսքին: Ուրեմն, եկէք դիտարկենք այս պատմութիւնը եւ տեսնենք, թէ ինչ կրնանք բացայայտել եւ սորվիլ Թագաւորութեան օրէնքներէն եւ սկզբունքներէն:

Եթէ դուք կարդացած էք իմ առաջին գիրքը, ուրեմն գիտէք, թէ հոգեւորին մէջ ինչ կատարուեցաւ, երբ Պետրոսն

իր նաւը տուաւ Յիսուսին, որ օգտագործէ: Պետրոսին նաւակը, եւ իրականութեան մէջ ամբողջ ձկնորսական առետուրը, փոխեց թագաւորութիւններ եւ իրաւասութիւններ: Այո՛, երբ Յիսուսն այդ նաւակը առաւ իր ծառայութեան համար, Պետրոսի նաւակն այդ ժամանակ անցաւ Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան ներքոյ: Հազիւ այն անցաւ Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան ներքոյ, Սուրբ Հոգին օրինական իրաւասութիւն ստացաւ Յիսուսին գիտութեան խօսք տալու, թէ խորունկ ջուրերուն մէջ ուր կը գտնուի ծուկերու վտառը: Այս հսկայական որսը գերբնական ծրագիրի եւ մարտավարութեան արդիւնք էր, որն այդ օրը Յիսուսի միջոցով Սուրբ Հոգին տուած էր Պետրոսին: Ես ատոր կ'անուանեմ «գաղտնի գիտելիք», եւ ատոր շնորհիւ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը տեսան իրենց կեանքի ամենամեծ որսը: Աստուածաշունչը կ'ըսէ, որ այս փորձառու ձկնորսները ապշած էին:

Ես կը հաւատամ, որ Յիսուսը կ'ուզէ, որ դուք զարմանալի կեանք ապրիք. կեանք մը, որը կը դրսեւորէ Թագաւորութիւնը, որպէսզի ձեզի շրջապատող մարդիկ, տեսնելով այն, ապշին եւ դառնան դէպի Յիսուսը: Իմ համոզումով, կրօնի դատարկ նաւակները երբեք չեն հրապուրեր եւ առաջնորդեր մարդոց դէպի Աստուած: Աստուած կը ցանկայ, որ մարդիկ տեսնեն իր Թագաւորութեան բարիքներն ու հաւատան, որ Ան բարի է եւ կը կամենայ ընդունիլ բոլորին: Եսայիան հետեւեալ մարգարէութիւնը հռչակելու ժամանակ, որը եկեղեցիին կը վերաբերի, կը խօսի ատոր մասին.

«...Անոնք (նկատի ունի մեզի) պիտի կոչուին արդարութեան բեւեկներ, որ Տէրը ցնկած է իր փառաւորութիւնը ցուցադրելու համար» (Եսայիա 61.3բ):

Ուրեմն, ինչ կը ցանկամ, որ սորվիք Ղուկասի 5-րդ գլուխի ձկնորսութեան պատմութենէն: Այս պատմութենէն շատ հոգեւոր օրէնքներ կրնաք առանձնացնել, բայց եթէ այս մէկ միտքը պահէք ձեր մէջ, այն կը փոխէ ձեր կեանքը:

Ոեւէ մարդ կրնայ ծուկ բռնել, եթէ Յիսուսը յստակ ըսէ, թէ ուր ձգէ ուռկանը: Կամ՝ ոեւէ մարդ կրնայ ծուկ որսալ, եթէ Յիսուսը ըսէ, թէ ուր են ծուկերը, եւ թէ ինչպէս բռնել:

Մարդիկ կ'ըսեն. «Լաւ բան կ'ըսես, Կէրի, բայց Յիսուսն այլեւս հոս չէ»: Այո՛, հոս չէ: Բայց Սուրբ Հոգին, Որ այդ օրը Անոր ըսաւ, թէ ուր են ծուկերը, այսօր հոս է եւ կը բնակի ձեր մէջ, եթէ դուք հաւատացեալ էք: Տեսէք, թէ ինչ ըսաւ Յիսուսն Իր աշակերտներուն, երբ կը պատրաստուէր լքել անոնց.

«Այս խօսեցայ ձեզի հետ, քանի որ տակաւին ձեր քովն եմ: Բայց Խորհրդականը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կ'ուղարկէ իմ անունով, Ան ամէն բան կը սորվեցնէ ձեզի եւ կը յիշեցնէ ամէն ինչ, որ ձեզի ըսի: Խաղաղութիւն կը ձգեմ ձեզի, Իմ խաղաղութիւնը կու տամ ձեզի: Ես այնպէս չեմ տար, ինչպէս աշխարհը կու տայ: Թող ձեր սրտերը չխռովին, եւ մի՛ վախնաք»:

– Յովհաննէս 14.25-27

Ո՞րն էր Յիսուսին խաղաղութիւնը. Սուրբ Հոգին էր, Որ կ'ըսէր Անոր, թէ ինչպէս վարուի որեւէ իրավիճակի մէջ, որուն կը բախէր: Յիսուսը Սուրբ Հոգիին Խորհրդական կ'անուանէ: Բարեկամս, այս Խորհրդականը կ'ապրի ձեր մէջ եւ երբեք ձեզի չի ձգեր: Դուք կը լսէք Անոր: Դուք պէտք է համաձայնիք, որ Աստուած հաւանաբար ունի պատասխանը որեւէ իրավիճակի համար, որուն մէջ կրնաք յայտնուիլ: Յիսուսը կ'ըսէ, որ այս Խորհրդականը կրնայ սորվեցնել կամ խորհուրդ տալ ամէն իրավիճակի մէջ: Համաձայն Սթրոնկի

**ՅԻՍՈՒՍԸ
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
Կ'ԱՆՈՒԱՆԷ:
ԲԱՐԵԿԱՄՍ, ԱՅՍ
ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ
Կ'ԱՊՐԻ ՁԵՐ ՄԷՋ
ԵՒ ԵՐԲԵՔ ՁԵՋԻ ՉԻ
ՁԳԵՐ:**

Աստուածաշունչի ընդլայնուած համաբարբառին (3875 բառ)՝ յունարէն բառը, որը կը թարգմանուի որպէս Խորհրդական, բառացիօրէն հետեւեալ իմաստն ունի. «Մէկը, որուն կը հրաւիրեն կամ յատկապէս կը կանչեն օգնութեան»: Այն ունի նաեւ հետեւեալ իմաստը. «Մէկը, որ ուրիշի մը հայցը կը ներկայացնէ դատաւորի առջեւ. դատա-

պաշտպան, օրինական օգնական կամ փաստաբան»: Ընդհանրական իմաստով այն կը նշանակէ օգնական, կամ մէկը, որ օգնութիւն կը հասցնէ:

Չեմ գիտեր՝ դուք ինչպէս, բայց ես կը ցանկամ օգտուիլ այսպիսի օգնականէ: Սուրբ Հոգին Պետրոսի պատասխանն էր, երբ անոնք ամբողջ գիշեր փորձած էին ձուկ որսալ եւ այդպէս ալ ոչինչ բռնած էին: Եւ Սուրբ Հոգին նաեւ իմ պատասխանն էր, երբ ես գաղափար չունէի, թէ ուրկէ գումար գտնէի պարտքերէն ազատելու համար: Ընտանիքիս ֆինանսական այդպիսի քառուի մէջ ձգելէն ետք, երբ ես դիմեցի Աստուծոյ՝ օգնութեան համար, Սուրբ Հոգին էր, որ օր մը երազ մը ցոյց տուաւ, որ ձգէի այն ընկերութիւնը, ուր կ'աշխատէի, եւ զերոյէն սկսէի իմ սեփական գործը:

Սուրբ Հոգին էր, Որ ըսաւ ինծի, որ նոր ընկերութեան առաքելութիւնը Աստուծոյ բարութեան մասին հռչակելն է եւ մարդոց օգնելն է, որ ազատին պարտքերէն, որը այդ ժամանակ ամենախելայեղ միտքն էր, որ երբեք լսած էի: Ես օգնեմ, որ մարդիկ պարտքերէն ազատին: Ես անձնապէս քալող օրինակ էի, թէ ինչ կարելի չէ ընել գումարներու հետ: Իմ կեանքը ֆինանսական մղձաւանջի վերածուած էր: Բայց Ան ճիշդ

ատիկա ըսաւ, որ ընեմ: Ուստի, հաւատքով ես եւ Տրենտան քայլ առինք եւ մօտաւորապէս ըսինք միեւնոյն բանը, ինչ որ Պետրոսն ըսաւ. «Տէր, ատով որեւէ բան չի փոխուիր, բայց քանի որ Դուն ես ըսողը, կ'ընեմ»: Սուրբ Հոգիի խորհուրդին հետեւելով՝ այդ նոր ընկերութիւնը հետզհետէ կ'ընդլայնէր, եւ այդ գումարներով ես ու Տրենտան կրցանք լիովին ազատիլ պարտքերէն: Այդ ընկերութիւնը մինչեւ օրս կը գործէ, եւ այժմ, 30 տարի յետոյ, այն ամէն տարի հարիւր հազարաւոր տոլարներու շահոյթ կ'ապահովէ:

Լսեցէք, ես այդքան ալ խելացի չեմ, դուք՝ նոյնպէս, բայց Աստուած տուած է ձեզի Սուրբ Հոգին, որպէսզի Անոր օգնութեամբ ձեր կարիքներու համար օգնութիւն գտնէք: Բայց ինչպէս հետագային կը սորվինք այս գիրքին մէջ, մենք մեր դերակատարումն ունինք. Սուրբ Հոգիին հետ համագործակցելով՝ մենք պէտք է իրականացնենք Աստուծոյ կամքը:

Յաւօք, մարդոց հետ ունեցած իմ փորձառութենէն գիտեմ, որ շատ քրիստոնեաներ կեանքի մէջ հանդիպած իրենց խնդիրներուն համար պատասխան չունին: Անոնք կը շարունակեն ձուկ որսալ իրենց կարողութեան սահմաններուն մէջ, եւ ամբողջ գիշեր ձուկ որսալու փորձերէն յետոյ, անընդհատ կը վերադառնան ձեռնունայն: Անոնք երբեք չեն լսած ու հասկցած, որ Սուրբ Հոգին հոն է՝ օգնելու իրենց ամէն իրավիճակին մէջ: Թէեւ քրիստոնեաներէն շատերը կ'ըսեն. «Աստուած կ'օգնէ, որ այս կամ այն բանն ընեմ», անոնք չեն հասկնար, թէ ինչպէս պէտք է Աստուած օգնէ իրենց, կամ՝ թէ ինչպէս լսեն այն պատասխանները, որոնց կարիքն ունին: Անոնցմէ շատերը չեն հասկնար, որ պէտք է համագործակցին Աստուծոյ հետ, որպէսզի ստանան իրենց կարիքի պատասխանները: Անոնք շարունակ կը սպասեն

Աստուծոյ, որ իրենց խնդիրին համար ինչ որ բան մը ընէ, մինչդեռ պատասխանն արդէն իրենց ներսն է:

Օրինակ, ֆինանսներու առնչութեամբ մարդիկ կ'ըսեն, որ Աստուած կ'օգնէ, որ իրենք բարգաւաճին: Ես կ'ըսեմ. «Հիանալի է: Իսկ Աստուած ինչպէս պէտք է գումարը հասցնէ ձեզի»: Սկիզբը կարծես կը վիրաւորուին, որ այսպիսի բան կ'ըսեմ եւ հարցականի տակ կը դնեմ անոնց հաւատքը: Բայց ես կը շարունակեմ. «Ուրկէ պէտք է յայտնուի գումարը: Աստուած ինչպէս պէտք է այն հասցնէ ձեզի»: Երբ անոնց կը նեղեմ, որ պատասխանեն, կը պարզուի, թէ պատասխանը չեն գիտեր: Բնական է, որ որոշ ժամանակ չես գիտնար, բայց, ի վերջոյ, պէտք է իմանաս պատասխանը: Դուն չես կրնար հնձել բան մը, ինչ որ չես տեսներ: Կը յիշէք, Յիսուսը շատ յստակ խօսեցաւ, երբ Պետրոսին ըսաւ, թէ ուր են ձուկերը, եւ նոյնիսկ ըսաւ, թէ ինչպէս բռնէ. «Ուռկանդ նետէ»: Ի վերջոյ, դուք պէտք է գիտնաք, թէ ուր նետէք ուռկանը, եթէ կը ցանկաք ձուկ բռնել:

Քանի որ մարդոց բնորոշ է «փոստարկղային մտածելակերպը» (ես այդպէս կը կոչեմ), երբ պարզապէս կը մտածեն, որ Աստուած բան մը կ'ընէ, անոնց ֆինանսական կեանքն այդպէս ալ 10 կամ 20 տարի կը մնայ խառնաշփոթ վիճակի մէջ՝ առանց որեւէ փոփոխութեան: Ցաւալի է: Կ'ուզէք իմանալ, թէ ինչու անոնք նոյնը կը մնան: Քանի որ անոնց երբեք չեն սորվեցուցած ձուկ որսալ Սուրբ Հոգիին մեթոտներով՝ Թագաւորութեան մեթոտներով: Անոնք չեն գիտեր, թէ Սուրբ Հոգին ինչպէս կը գործէ երկրային թագաւորութեան մէջ, եւ ինչպէս կ'օգնէ յաջողութեան հասնելու: Անոնք չեն գիտեր, թէ որն է իրենց դերը, եւ որն է Սուրբ Հոգիին դերը յաջողութեան հասնելու գործին մէջ, որուն կարիքը այդքան օրհասական էր իրենց համար:

Ատիկա նման էր այն մարդուն, որուն այսօր հանդիպեցայ ճաշի ժամուն: Ան յաղթանդամ մարդ մըն էր, մօտաւորապէս 170քկ կշիռքով: Անոր մէկ ոտքը փրոթեզաւորուած էր, եւ երկու անթացուպով կը քալէր: Ան հագիւ կը տեղաշարժէր: Իր չիզպըրկըրն ուտելէն ետք ան կտոր մըն ալ գետնանուշի կարագով քաղցրեղէն պատուիրեց: Ես ապշեցայ, երբ ան անուշ պատուիրեց: Չեմ գիտեր, թէ ինչ կը մտածէր, բայց արդէն բաւականաչափ քաղցրեղէն կերած էր, որ այդ վիճակին հասած էր: Ատիկա ակնյայտ էր ու կը սպաննէր անոր: Ան դժուարութեամբ կեցաւ եւ դանդաղ ու տանջանքով դուրս ելաւ ճաշարանէն: Ես կը տեսնեմ, որ քրիստոնեաներն այսօր ալ նոյն ձեւով կ'ապրին. անոնք կը լսեն խոստումները, բայց կը շարունակեն ուտել թոյնը, ապա կը զարմանան, թէ ինչու իրավիճակը չի փոխուիր:

Բարեկամս, դուն ունիս պատասխանը: Սուրբ Հոգին՝ անձամբ Աստուած, կը բնակի քու մէջ՝ տալու քեզի այն պատասխանը, որուն կարիքն ունիս: Մարդիկ կը հարցնեն ինձի՝ Սիւզընի՞ հետ ամուսնանան, թէ՞

Սալիի, ա՛յս գործին անցնին, թէ՞ այն, պէտք է մեկնին, թէ՞ մնան հոն, ուր կը գտնուին, իրենց բաժնեմասը վաճառեն, թէ՞ նորը գնեն: Սուրբ Հոգին, որ ձեր մէջ է, ունի այդ հարցումներուն պատասխանը: Կրկին կ'ըսեմ. այս գիրքի նպատակը ճիշդ ասիկա է. սորվիլ, թէ ինչպէս Սուրբ Հոգին կ'օգնէ, եւ ինչպէս Թագաւորութիւնը կը գործէ Սուրբ Հոգիին ձայնը լսելու հարցին մէջ: Այսպիսով, ամփոփենք:

Ուե՛ մարդ կրնայ ձուկ որսալ, եթէ Յիսուսը ըսէ, թէ ուր են ձուկերը, եւ թէ ինչպէս բռնեն. դո՛ւն ալ կրնաս:

**ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ՝
ԱՆՁԱՄԲ ԱՍՏՈՒԱԾ,
ԿԸ ԲՆԱԿԻ ՔՈՒ ՄԷՋ՝
ՏԱԼՈՒ ՔԵԶԻ ԱՅՆ
ՊԱՏԱՍԽԱՆԸ, ՈՐՈՒՆ
ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻՍ:**

Այս նամակին մէջ Քարօլը կը պատմէ, թէ ինչպէս անոր կեանքը փոխուած է.

«Անցեալ տարի այս օրը ես Սուրբ Ծննդեան նուէրներ կը գնէի իմ վարկային քարտով, եւ մինչեւ վերջին լուման կ'օգտագործէի քարտէն, քանի որ գումար չունէի աղջկաս համար նուէրներ գնելու, որ դեռ կը հաւաքար Սանթա Քլաուզին: Ես կ'ապրէի մշտական տագնապի եւ փրորութեան մէջ, եւ հովիւ Կէրիին գրեցի, որ ցանելու սկզբունքը չի գործեր, որ ալ ոչինչ տեղի կ'ունենայ: Ան համբերապարտութեամբ խնդրեց, որ սպասեմ, քանի որ հունձքի համար որոշ ժամանակ անհրաժեշտ է, եւ սովորաբար յաջորդ օրը ապիկա տեղի պիտի չունենայ:

Այսօր, մէկ տարի յետոյ, ես առձեռն գումարով նուէրներ կը գնեմ իմ ամբողջ ընտանիքի համար: Ես կը գնեմ 300 կամ 400 տոլար արժողութեամբ նուէրներ: Ես իմ ֆինանսներէն կը պատուեմ այն մարդոց, որոնք կ'օգնէին ինծի դժուար օրերուն: Անցեալ տարի ես կ'ապրէի նկուղային յարկի մը մէջ, ուր ընկերներէս մէկը թոյլ տուաւ մնալ քանի մը ամիս: Ես ո'չ ուրելիքի դրամ ունէի, ո'չ ալ վառելանիւթի: Բայց այսօր կ'ապրիմ գեղեցիկ եւ ժամանակակից բնակարանի մը մէջ, եւ իմ սառնարանը լեցուն է ուրելիքով:

3 Դեկտեմբերին աղջկաս տարեդարձն էր: Անոր տարինք Փենսիլվանիայի Հերշի պուրակ, հրաւիրեցինք իր լաւագոյն ընկերոջը, մնացինք Հերշի պանդոկի մէջ եւ ամէն ինչի համար վճարեցինք առձեռն: Ես ի վիճակի էի անոր համար 400 տոլար արժողութեամբ նուէր գնել, մինչդեռ անցեալ տարի, ինչ որ մէկն ինծի համար 30 տոլար տրամադրած էր՝ անոր տարեդարձը տօնելու համար:

Այս ամէնը չեմ կրնար առանց արցունքներու գրել: Ես այնքան շնորհակալ եմ հովիւ Կէրիին եւ անոր կնոջը՝ Տրենտային: Այս տարի իմ կեանքի լաւագոյն տարին էր: Իմ կեանքին մէջ Աստուծոյ բոլորը գործերը հրաշալի են: Ես իմ բոլոր պատմութիւններով կրնամ գիրք մը գրել: Շնորհակալութիւն, որ ինծի սորվեցուցիք, թէ ինչպէս վերապրիմ Երկինքը երկրի վրայ»:

Յաջորդ նամակը Թագաւորութեան մասին իմ լսած ամէնէն հիասքանչ պատմութիւններէն է: Այն կը գրէ Շարոնը՝ Միշիկընէն.

«Հովիւ Կէրի, այս նամակը կը գրեմ իմ եւ ամուսինիս անունով: Ես պարզապէս կը ցանկամ շնորհակալութիւն յայտնել ձեզի եւ ձեր տիկնոջը՝ մեզի համար ոգեւորութեան աղբիւր հանդիսանալու համար: Առաջին անգամ ձեր մասին լսած եմ երեք թէ չորս տարի առաջ՝ Սիւր Բոթի հաղորդումներէն մէկուն ընթացքին: Այդ ժամանակ մեզի համար սարսափելի ծանր ժամանակներ էին: 18 տարի աշխատելէն ետք ամուսինիս արձակած էին աշխատանքէն, եւ ասիկա պատահեցաւ այն ժամանակ, երբ նոր աւարտած էինք 280.000 տոլար արժողութեամբ մեր տան շինարարութիւնը: Մինչեւ կոկորդը խրուած էինք պարտքերու եւ սթրեսի մէջ:

Մենք պատուիրեցինք ձեր ծայնասկաւառակները եւ ատոնց օգնութեամբ սկսանք առջեւ երթալ: Սորվեցանք, թէ ինչպէս պարտքը անդամալոյծ կը դարձնէ եւ բացասաբար կ'անդրադառնայ առողջութեան եւ կեանքի վրայ: Մենք որեւէ ելք չէինք տեսներ: Թէեւ չէինք կրնար վճարել մեր տան համար, բայց հոնկէ դուրս ելանք միայն երկու տարի յետոյ: Արիկա իսկապէս օրհնութիւն էր:

Բայց պատմությունս կրճատելու համար ըսեմ, որ ամուսինս կրցաւ իր նախկին գործը ստանձնել չորս տարի ետք, քանի որ ան ամուր պահեց հաւաքը եւ կը հաւատար Աստուծոյ խոստումներուն, իսկ դուք եւ ձեր կինը ծայնասկաւառակներու միջոցով կ'օգնէիք մեզի: Ամուսինս վերադարձաւ նախկին աշխատանքին, եւ ապիկա տակաւին ամէնը չէր. ան ստացաւ այդ չորս տարիներու չվճարուած աշխատավարձը: Այս գործին մէջ ոեւէ փաստաբան կամ իրաւաբան չներգրաւուեցաւ: Անոր վճարուեցաւ նաեւ այդ չորս տարիներու արձակուրդային վճարները: Երբ անոր կրկին ընդունեցին աշխատանքի, նախեւառաջ ուղարկեցին արձակուրդի: Այդ չորս տարիներու աշխատավարձէն մենք կրցանք առձեռն գումարով աւելի լաւ տուն ձեռք բերել: Շնորհակալութիւն այն ամէնուն համար, որ կ'ընէք»:

Էնտրիւի նամակը՝ Միսսուրիէն.

«Երկու տարի առաջ դժուար կացութեան մը մէջ յայտնուեցայ: Իմ նախկին աշխատանքէն դժգոհ էի եւ ստանձնեցի նոր պաշտօն արտաքին վաճառքի բաժինին մէջ: Վարձահաւաքներն անընդհատ կը հեռաձայնէին, բայց ես ոչ վառելանիւթի գումար ունէի, ոչ ալ ուրելիքի: Ամսուան վերջն ալ՝ տան վարձքը վճարելու ժամանակը, այնքան արագ կը մօտենար: Բայց ես բան մը ունէի. Կերիի ծայնասկաւառակներու փաթեթ մը «Յեղափոխութիւն 2.0» շարքէն: Օր մը ծառայութեան ժամանակ կ'ուզէի ցանել իմ ֆինանսական սերմը, բայց հաշիւս մէջ միայն 23 տոլար կար, իսկ ինքնաշարժիս մէջ՝ շատ քիչ վառելանիւթ, որը հագիւ այդ շաբաթ բաւէր: Գործերս լաւ չէին: Ես Աստուծոյ ըսի, որ կ'ուզեմ ցանել, բայց գումար չունիմ: Ներսէս ձայն մը լսեցի.

«Ես (Աստուած) 23 տոկոսով անելի շատ բան կրնամ ընել, քան դուն»։ Աստուծոյ հետ պայմանաւորուեցայ, որ ես կը ցանեմ 20 տոկոս եւ կը հաւատամ, որ Ան կը փոխհատուցէ։

Այդ Հինգշաբթի ես կ'օգնէի ուրիշ մէկու մը՝ իր գործն ընելու համար։ Ես կը ցանկայի օգնել՝ գիտնալով հանդերձ, որ եթէ ինչ որ բան մըն ալ վաճառուի, արկէ ինծի ոչինչ պիտի մնայ։ Այդ օրուան աւարտին իմ ղեկավարը շնորհակալութիւն յայտնեց օգնութեան համար եւ ըսաւ, որ այդ օրուան վաճառքէն ստացուած ամբողջ հասոյթը կրնամ առնել (սովորաբար այդպէս չեն ըներ)։ Եւ գիտէ՞ք ինչ։ Այդ օրուան շահոյթը կը կազմէր 2000 տոկոս։ Իսկ մէկշաբթեայոյ, կարճ ժամանակուան մէջ, 100-ԱՊԱՏԻԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԵՑԱԼԻ։

Աստուած հաւատարիմ է. փոքր չափն ալ բաւական է, երբ Աստուած ներգրաւուած է։ Այդ օրուրնէ ես պարտաճանաչօրէն կու տամ իմ տասանորդներն ու զոհաբերութիւնները ուրախ սրտով եւ կը սպասեմ, որ արիկա բազմապատկուի։

Ասկէ քանի մը ամիս յետոյ ինծի նոր պաշտօն մը տուին, որը ճիշդ այն էր, ինչին համար սերմած էի։ Ծայրը-ծայրին հասցնելէն ետք երկու տարուան ընթացքին իմ աշխատավարձը քառապատկուեցաւ։ Ամբողջ փառքը Անոր կը պատկանի։ Ուրիշ փառաբանութեան առիթ մը եւս. իմ ինքնաշարժը այլեւս գրաւադրուած չէ դրամապանը, եւ ես կը քշեմ բոլորովին նոր եւ ամբողջութեամբ ՎՃԱՐՈՒԱԾ ինքնաշարժ»։

Ահա գոհութեան նամակ մը Քորիայէն.

Սիրելի՛ հովիւ Կէրի,

«Իմ կեանքը կորսնցուցած էր իր նպատակը: Ես ֆինանսապէս այնպիսի վիճակի մը մէջ էի, որ ինծի ոչինչ կրնայի թողարկել: Ես կ'ապրէի մարդոց կողմէն պրոուդ օգնութիւններով, իսկ երբ անոնք կը յոգնէին ինծի օգնելէն, իմ միակ յոյսը տուի մը կարկանդակ ու շիշ մը քուլա ձեռք բերելն էր: Ինծի եւ երկու երեխաներուս համար միայն ասիկա կրնայի գնել: Ո՛չ տան վարձքը կրնայի վճարել, ո՛չ ալ տնտեսական վճարները (ջուր, էլեկտրականութիւն, վառելանիւթ...): Մինչեւ հիմա կը յիշեմ, երբ առաջին անգամ դիտեցի «Հաւաքի կեանք» եկեղեցւոյ ծառայութեան ուղիղ եթերը: Ես ձեր հովիւին բացատրեցի, թէ որքան վատ իրավիճակի մէջ եմ, իսկ ան ինծի ընդամէնն ըսաւ, որ խնդրեմ Աստուծմէ ցոյց տալ, թէ ինչպէս եւ ուր պէտք է ձուկ որսալ, ինչպէս որ Պեպրոսին ցոյց տուաւ հարկ վճարելու ժամանակ: Կարճ ըսելու համար, հիմա ես ամբողջովին ճաշարան ունիմ եւ վարսավիրանոց մը, եւ այս ամէնը հովիւ Կէրիի դասերը լսելէն ետք: Ես փանք կու տամ Աստուծոյ այս ամէնուն համար»:

Ասոնք քանի մը հիասքանչ պատմութիւններ են, բայց թերեւս ըսէք. «Հիասքանչ է, Կէրի: Անշուշտ, նման բաներ կրնան տեղի ունենալ ուրիշներու հետ, բայց ոչ՝ ինծի»: Ուրեմն, ձեր պատմութիւնը տակաւին աւարտած չէ: Թոյլ տուէք հարցնել. ճիշդ հիմա, երբ նստած կը կարդաք այս գլուխը, արդե՞ծք վախով կառչած էք աթոռէն, որ յանկարծ չթռչիք-երթաք: Անշուշտ՝ ո՛չ: Ինչո՞ւ: Քանի որ կը հասկնաք ձգողականութեան ուժի երեւոյթը եւ գիտէք, որ ատիկա բոլորին համար նոյն ձեւով կը գործէ: Աստուծոյ Թագաւորութիւնն ալ նոյն ձեւով կը գործէ: Դուք կրնաք սորվիլ օրէնքները: Դուք կրնաք սորվիլ

լսել այն իւրօրինակ ռազմավարական ծրագիրները, որոնք ձեր կեանքը կը դարձնեն Աստուծոյ զօրութեան մասին պատմող պատմութիւն: Մենք արդէն արձանագրած ենք այն փաստը, որ Սուրբ Հոգիին իմաստութեամբ եւ Անոր օգնութեամբ նման պատմութիւններն իրականութիւն դարձած են: Ուրեմն, եկէք մեր ճամբորդութիւնը սկսինք՝ վերանայելով Սուրբ Հոգիի հիմունքներէն քանի մը հատը, իսկ յետոյ աւելի մանրակրկիտ կ'անդրադառնանք այն թեմային, թէ ինչպէս լսենք ու հասկնանք մեզի անհրաժեշտ ռազմավարական քայլերը:

ԳԼՈՒԽ 4

ՀԻՄՆԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ. ՏՈՒՆԷՆ

ԴՈՒՐՍ ՉԵԼԼԷՔ ԱՌԱՆՑ

ԱՍՈՐ

Եթե կ'ուզեք, որ ձեր կեանքը Սուրբ Հոգիին ծրագիրներով առաջնորդուի եւ ունենաք Սուրբ Հոգիին յաղթանակները, նախեառաջ պէտք է վերստին ծնունդ ունենաք, ապա մկրտուիք Սուրբ Հոգիով: Այո՛, ասոնք երկու տարբեր գործեր են, որ Սուրբ Հոգին կ'ընէ: Եթէ այս ամէնն անձանօթ է ձեզի, խնդիր չէ, ես կ'առաջնորդեմ: Բայց թոյլ տուէք անմիջապէս անցնիլ գործի: Յիսուսն ըսաւ, որ Սուրբ Հոգիով մկրտութիւնը շատ կարեւոր է, եւ որ առանց ատոր տունէն չհեռանանք: Ատիկա ես չեմ ըսեր, այլ՝ Յիսուսը Գործք առաքելոցի 1.4,5-ին մէջ.

«Երուսաղէմէն չհեռանաք, այլ սպասեցէ՛ք Հօր խոստացած պարգեւին, որուն մասին Ինձմէ լսեցիք: Որովհետեւ Յովհաննէսը ջուրով մկրտեց, բայց քանի մը օրէն դուք Սուրբ Հոգիով կը մկրտուիք»:

– Գործք առաքելոց 1.4բ-5

«Բայց դուք գործիքն կ'առնեք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները կ'ըլլաք Երուսաղէմի մէջ եւ ամբողջ Հրէաստանի ու Սամարիայի մէջ՝ մինչեւ երկրի ծայրերը»:

– Գործք առաքելոց 1.8

Ուշադրութիւն դարձուցէք, Յիսուսն ըսաւ. «Տունէն առանց ասոր դուրս չելլէք, ասիկա խիստ կարեւոր է»: Իրականութեան մէջ, Ան կարծես հետեւեալն ըսէր. «Դուք այս գործութեան կարիքն ունիք, որպէսզի Աստուծոյ գործերը գործէք եւ Թագաւորութեան վկաները ըլլաք»: Մինչ այսօր կան բազմաթիւ քրիստոնեաներ, որոնք տակաւին պէտք է լսեն Սուրբ Հոգիով մկրտութեան մասին: Բազմաթիւ քրիստոնեաներ կան, որոնք մեծցած են եկեղեցւոյ մէջ, բայց երբեք չեն լսած Սուրբ Հոգիով մկրտուելու անհրաժեշտութեան մասին: Անոնք մեծցած են եկեղեցւոյ մէջ, ու անոնց ըսած են, որ մկրտութիւնը մեր օրերուն համար չէ, եւ որ այդ հրաշքներու ժամանակներն անցած են:

Նմանատիպ եկեղեցիի մը մէջ ալ ես մեծցած եմ եւ երբեք չեմ լսած Սուրբ Հոգիով մկրտութեան մասին: Ես այնքան շատ ելեկտրոնային նամակներ կը ստանամ աշխարհի տարբեր ծայրերէն, որոնց հեղինակները նոյնպէս պէտք է լսեն այս հզօր ճշմարտութիւնը: Կան նամակներ, որ հարցականի տակ կը դնեն այս պարզեւի արդիականութիւնը, եւ այդ պատճառով ալ որոշեցի ժամանակ յատկացնել եւ թուղթին յանձնել Սուրբ Հոգիով մկրտուելու մասին ճշմարտութիւնը:

Կը կարծեմ, Աստուածաշունչը շատ յստակ կը խօսի այս թեմայով, եւ կ'ուզեմ, որ Աստուածաշունչն Ինքն իր մասին խօսի: Այն կը պատասխանէ ձեր բոլոր հարցումներուն: Բայց, նախեառաջ, կը ցանկամ պատմել, թէ ինչպէս պատահեցաւ, որ բացայայտեցի Սուրբ Հոգիով մկրտուելու մասին ճշմարտութիւնը:

Երբ ամէլի երիտասարդ էի, ծարաւ էի Աստուծոյ (հիմա

նոյնպէս ծարաւ եմ, թէեւ արդէն մեծցած եմ) եւ կը յաճախէի յարանուանական եկեղեցի մը: Կիրակի առաւօտները կը կատարէինք սովորական կրօնական ծիսակարգը: Թերեւս դուք ալ նման փորձառութիւն մը ունիք: Կը յիշեմ, քանի մը օրհներգ կ'երգէինք, որուն կը յաջորդէր լուսեան պահ մը: Մենք միշտ Տէրունական աղօթք կ'ընէինք, ու յետոյ հովիւր կը քարոզէր: Վերջաւորութեան նորէն աւարտական օրհներգ մը կ'երգէինք: Ապա հովիւր կ'օրհնէր մեզ: Ամէն կիրակնօրեայ հաւաքոյթ տեղի կ'ունենար նոյն ընթացակարգով:

Եկեղեցւոյ մարդիկ հիասքանչ էին, անոնք իսկապէս կը սիրէին Աստուծոյ: Բայց ես երբեք չտեսայ Աւետարանին իրական ըլլալը: Ես չտեսայ, որ մարդոց կեանքերը կտրուկ փոխուին, կամ՝ որ մարդիկ բժշկուին Աստուծոյ զօրութեամբ: Կը կարծեմ՝ կրնամ հանգիստ ըսել, որ Աստուծոյ Թագաւորութեան դրսեւորում շատ չեմ տեսած:

Այսպիսով, ես 18 տարեկան էի եւ ծարաւ էի Աստուծոյ: Այդ ժամանակ կ'աշխատէի հօրս փիցցայի խանութին մէջ: Օր մը տղայ մը եկաւ մեր փիցցայի խանութը եւ հրաւիրեց ինծի արթնութեան հաւաքոյթի: Այն մեր քաղաքի փոքրիկ բարեպաշտական, մեթոտիստական եկեղեցւոյ մը մէջ կը կազմակերպուէր, եւ քարոզիչը աւետարանիչ մըն էր, որ կ'ըսէր, թէ Յիսուսն այսօր ալ կ'ընէ այն, ինչ որ կ'ընէր Աստուածաշունչին մէջ:

Ատիկա գրաւեց իմ ուշադրութիւնը, քանի որ կ'ուզէի տեսնել ատիկա: Իմ ընկերներէն քանի մը հոգի կը յաճախէին այդ եկեղեցին, եւ ես որոշեցի մասնակցիլ այդ արթնութեան հաւաքոյթին: Թէեւ այդ գիշեր ես Սուրբ Հոգիով մկրտուելու մասին ոչինչ լսեցի, սակայն Աստուծոյ ներկայութիւնը ծառայութեան ընթացքին պարուրեց ինծի: Ընկերներս, որ այդ եկեղեցիէն էին, քաջալերեցին, որ Կիրակի օրն ալ երթամ:

Եւ այդպէս ալ ըրի: Ես սիրահարուեցայ այդ եկեղեցիին, եւ այն դարձաւ իմ նոր եկեղեցական ընտանիքը:

Արթնութեան հաւաքոյթէն քանի մը ամիս յետոյ ես հանդիպեցայ խումբ մը կանանց, որոնք եկեղեցի կու գային եւ զուգահեռ ամէն շաբաթ կը մասնակցէին Աստուածաշունչի սերտողութեան դասերու: Անոնք կը խօսէին Սուրբ Հոգիով մկրտութեան, Հոգիի պարգեւներու եւ շատ այլ բաներու շուրջ, որոնց մասին նախկինին չէի լսած: Ես այնքան կը փափաքէի լսել իրենց պատմած զօրութեան մասին, որ խնդրեցի անոնց թոյլ տալ ինծի մասնակցիլ կանանց Աստուածաշնչեան սերտողութիւններուն: Անոնց սերտողութիւններն առաւօտեան էին, եւ քանի որ ես փիցցայի խանութի մէջ գիշերները կ'աշխատէի, որոշեցի մասնակցիլ:

Երբ գացի, պարզուեցաւ, որ ես իսկապէս միակ տղան էի, այն ալ 18 տարեկան, բայց ատիկա ինծի համար բոլորովին կարեւոր չէր: Ես կը յաճախէի այդ սերտողութիւններուն, քանի որ ծարաւ էի Աստուծոյ: Ես այնքան շատ հարցումներ կը հարցնէի:

Կանայք շատ համբերատար էին իմ հանդէպ եւ Սուրբ գիրքով կ'առաջնորդէին ու իմ սեփական Աստուածաշունչին մէջ ցոյց կու տային, որ Սուրբ Հոգիով մկրտութիւնն այսօրուան համար է, եւ որ Աստուծոյ զօրութիւնն այսօր հասանելի է ճիշդ այնպէս, ինչպէս այն ժամանակ էր, երբ Յիսուսը կը քալէր այս երկրի վրայ: Լաւագոյն բանը, որ ըսին, այն էր, որ ատիկա բոլոր հաւատացեալներուն համար է եւ կը տրուի անոնց, որոնք կը խնդրեն:

Քանի մը շաբաթ յետոյ Աստուածաշնչեան սերտողութիւններուն մասնակցելէն ետք անոնք ըսին, որ համազգային ծառայութիւն մը կայ, որը կը կոչուի «Կանանց հոլ», եւ որն ալ մեր քաղաքին մէջ հաւաքոյթ պիտի

կազմակերպել: Ասիկա կազմակերպություն մըն է, որ շարունակ կը սորվեցնէ Սուրբ Հոգիով մկրտութեան մասին: Մեր եկեղեցւոյ այդ կանայք ալ կը պատրաստուէին մասնակցիլ այդ ծառայութեանը եւ ինծի ալ հրաւիրեցին: Այդ օրերուն տարբեր յարանուանութիւններէն մարդիկ կը հաւաքուէին լսելու եւ վերապրելու այդ մկրտութիւնը, որուն մասին այդ ժամանակ հիմնականին միայն հոգեգալստական եկեղեցիներուն մէջ կը խօսուէր: Շատերն այդ ժամանակները կը կոչէն «խարիզմաթիք նորոգման» ժամանակներ, երբ Սուրբ Հոգիով մկրտութեան ուսմունք կ'անցնէր բոլոր յարանուանական սահմաններով:

Երբ գացի «Կանանց հուր» հաւաքոյթին, տեսայ, որ հարիւրաւոր տիկիններ հաւաքուած էին: Որպէս տղամարդ կրկին փոքրամասնութեան մէջ էի, բայց այդ սենեակին մէջ Աստուծոյ շօշափելի ներկայութիւնը կար:

Ես հիացած կը լսէի, թէ ինչպէս մարդիկ կը պատմեն իրենց բժշկութեան մասին, եւ զարմացած կը նայէի, թէ ինչպէս ոմանք կ'իյնային, երբ կ'աղօթէին անոնց համար: Ասիկա բան մըն էր, որը երբեք նախկինին չէի տեսած: Ասիկա ինծի շատ հետաքրքրեց եւ շփոթեցուց: Գիտցայ, որ հոն մարդիկ աստիկա Հոգիի մէջ իյնալ կը կոչէին: Թէեւ բնական միջավայրի մէջ աստիկա ինծի համար քիչ մը տարօրինակ էր, այն մարդիկ, որոնք կ'անցնէին աստորմով, կարծես զուարթացած ոտքի կը կենային, եւ ակնյայտ էր, որ Աստուած հպած էր անոնց: Յետոյ այդ կանայք կը բացատրէին ինծի, որ մեր մարմինները Աստուծոյ զօրութիւնը չեն կրնար կրել եւ երբեմն կրնայ ըլլալ չդիմանան «օծութեանը»:

Անոնք ինծի ցոյց տուին, թէ Յիսուսի ծառայութեան ժամանակ երբ նմանատիպ բան տեղի ունեցաւ: Յովհաննէս 18.4բ-6-ին մէջ, երբ զինուորները եկան Յիսուսին ձերբակալելու, Ան հարցուց.

««Ո՛րուն կ'ուզէք»: Պատասխանեցին Անոր. «Յիսուս Նազովրեցիին»: Յիսուսն անոնց ըսաւ. «Ես եմ»: ... Երբ որ ըսաւ անոնց, թէ Ես եմ, անոնք ետ-ետ գացին եւ գետրին ինկան»:

Փառաբանութեան ժամանակ ինծի շրջապատող կանայք այնքան ոգեւորուած էին: Շուրջս կը լսէի, որ մարդիկ կ'աղօթէին ու Աստուծոյ այլ լեզուներով կը փառաբանէին: Այս ամէնն այնքան նոր էր ինծի համար, որ գրեթէ ամբողջ հաւաքոյթին այլայլած կեցած էի: Թէեւ հաւաքոյթի ընթացքին շատ բաներ ինծի համար տարօրինակ էին, սակայն Աստուծոյ խելայեղ եւ շօշափելի ներկայութիւնը չեմ կրնար հերքել: Ես այնքան ուրախ էի տեսնելու, որ Աւետարանն իրական է, եւ Աստուծոյ զօրութիւնը կը շարունակէ գործել երկրի վրայ՝ ինչպէս Յիսուսի օրերուն:

Հաւաքոյթի աւարտին քարոզիչը կոչ ըրաւ, թէ անոնք, որոնք կը ցանկան Սուրբ Հոգիին պարգեւը ստանալ, կրնան առջեւ գալ, որպէսզի աղօթեն իրենց համար: Այսպիսով, ես առջեւ գացի, որ կիները աղօթեն ինծի համար: Երբ անոնք կ'աղօթէին, ես զգացի, որ այլեւս չեմ կրնար դիմանալ, քանի որ Աստուծոյ ներկայութիւնն աւելի ու աւելի կը թանձրանար: Երբ տրուեցայ Անոր ներկայութեանը, զարմանալիօրէն լսեցի Սուրբ Հոգիով աղօթքս, ես բարձրաձայն անհասկնալի բառեր կ'ըսէի: Այդ գիշեր բաւականին երկար ժամանակ լեզուներով աղօթեցի: Այնքան ոգեւորուած էի, որ կը ցանկայի բոլորին պատմել հետս կատարուածը: Բայց երբ եկեղեցւոյ մէջ ընկերներու ըսի իմ փորձառութեան մասին, անոնք այդքան ալ չօգեւորուեցան: Անոնք սովորաբար կ'ըսէին, որ լեզուները սատանայէն են, կամ՝ որ ատոր ժամանակներն արդէն անցած են: Անոնք ինծի զգուշացուցին, որ այդ «սուրբ խենթերէն» հեռու մնամ:

Այդ օրերուն եկեղեցիները բաց չէին Հոգիի պարգեւներուն համար, եւ հիմնականին այս ուսմունքը կը գերիշխէր, որ հրաշքներն առաքեալներուն հետ անցած-գացած էին: Բայց ես արդէն հասկցած էի, որ Աստուծոյ զօրութիւնը բոլորովին ալ չէ անցած-գացած:

Նախքան «Կանանց հուր» կազմակերպութեան հաւաքոյթին մասնակցիլը, ինծի պատասխանատու կարգած էին այդ փոքր մեթոտական եկեղեցւոյ երիտասարդներու խումբին վրայ: Շատ բան չէր պահանջուեր. պէտք է հետեւէի, որ ամէն Կիրակի երեկոյեան երիտասարդներու հետ հաւաքոյթ կազմակերպուէր եկեղեցւոյ նկուղին մէջ: Մենք սովորաբար խաղեր կը խաղայինք, անուշեղէն կ'ուտէինք եւ Աստուածաշնչեան կարճ սերտողութիւն կ'ընէինք:

Խումբին մէջ սովորաբար 15 երեխայ կ'ըլլար, եւ «Կանանց հուր» հաւաքոյթէն յետոյ կը ցանկայի անոնց պատմել Սուրբ Հոգիով մկրտութեան մասին, որ վերապրած էի: Ես հասկցայ, որ ինչպէս ես, այնպէս ալ անոնցմէ շատերը այս երեւոյթին մասին չէին ալ լսած: Եւ վստահ էի, որ յատկապէս այդ եկեղեցւոյ մէջ կիրականօրեայ հաւաքոյթներուն ժամանակ ասոր մասին պիտի չլսեն ալ:

Նախքան առջեւ երթալը, կը կարծեմ՝ պէտք է արագ ներկայացնեմ, թէ այդ ժամանակ ինչ մտածելակերպ ունէի: Երիտասարդներուն հետ ասոր մասին խօսելու համար իմ հովիւէն թոյլտուութիւն չունէի (հիմա կը հասկնամ, որ պէտք է ունենայի): Ես անոր չէի պատմած ալ հետոս կատարուածին մասին:

Ես չէի փորձեր ապստամբիլ իմ եկեղեցւոյ դէմ եւ չէի ցանկար ալ շրջանցել իմ հովիւին: Պարզապէս խիստ ոգեւորուած էի: Այդ ժամանակ չէի ալ հասկնար, թէ այս թեմային շուրջ որքան տարակարծութիւններ կրնային ըլլալ,

եւ չէի ալ պատկերացներ, որ հովիւը կրնայ դէմ ըլլալ ատոր:

Սուրբ Հոգիով մկրտուելուն յաջորդող Կիրակի երեկոյեան ծրագրած էի հետս կատարուածը պատմել երիտասարդներուն եւ Գործք առաքելոցէն քանի մը տեղ ցոյց տալ, որոնք կը խօսէին ատոր մասին: Մենք եկեղեցւոյ նկուղին մէջ շրջանաձեւ նստած էինք յատակին, եւ ես սկսայ պատմել իմ փորձառութեան մասին, եւ քանի մը Աստուածաշնչեան խօսքեր կարդացինք, որոնք կը հաստատէին այդ վերապրումը:

Այս հաւաքոյթին եկած էր նաեւ հովիւը եւ նստած էր իմ ձախ կողմը, մինչ ես կը պատմէի իմ պատմութիւնը: Հովիւիս ներկայութենէն բոլորովին չէի կաշկանդուեր, քանի որ համոզուած էի, որ այն, ինչ որ կը պատրաստուէի պատմել, ան արդէն գիտէր:

Եւ ես անոնց պատմեցի այն հաւաքոյթի մասին, որուն մասնակցած էի, եւ այն ամէնուն մասին, որ տեսած էի: Ես շատ մանրամասներ չպատմեցի լեզուներով խօսելու մասին: Փոխարէնը, իմ ուշադրութիւնը կեդրոնացուցած էի Գործք առաքելոցի 1.9-ի վրայ, ուր կ'ըսուի, որ մենք զօրութիւն կը ստանանք, երբ Սուրբ Հոգին իջնէ մեր վրայ՝ Աստուծոյ վկաները ըլլալու համար: Հաւաքոյթի վերջաւորութեան չէի գիտեր, թէ ինչպէս աւարտեմ իմ դասը, ուստի հարցուցի երեխաներուն՝ արդե՞ծք կը ցանկան Սուրբ Հոգիով մկրտուիլ:

Այդ պահուն չէի գիտեր ինչ ընել: Բացի «Կանանց հուր» կոչուող հաւաքոյթէն ես ոչ մէկ այլ տեղ տեսած էի, թէ ինչպէս կը ծառայեն այն մարդոց, որոնք կը ցանկան Սուրբ Հոգիով մկրտուիլ: Կը կարծեմ, այդ ժամանակ ես ընդամենը երկու կամ երեք Աստուածաշնչեան Խօսք գիտէի, որ կ'առնչուէր մկրտութեանը:

Ուստի, պարզապէս ըսի. «Այժմ, եթէ կը կամենաք ստանալ Սուրբ Հոգիի ձրի պարգեւը, ձեռք բարձրացուցէք, եւ եկէք

խոնարհեցնենք մեր գլուխներն ու աղօթենք»: Ընդամենը ասիկա ըսի: Ես չձեռնադրեցի, ո՛չ ալ սորվեցուցի, թե ինչպես կրնան ստանալ Սուրբ Հոգին: Մենք խոնարհեցուցինք մեր գլուխները: Եւ, անշուշտ, որպէս «լաւ» յարանուանական քրիստոնեաներ, աղօթելու ժամանակ մեր աչքերն ալ գոցեցինք:

Երբ «ամէն» ըսի, լսեցի, որ երեխաներուն մէջ ինչ որ իրարանցում է: Աչքերս բացի եւ տեսայ, որ երեխաներէն քանի մը հոգի կու լային, ոմանք կը ցնցուէին, եւ եօթ երեխաներ ալ լեզուներով կը խօսէին: Երբ անոնք սկսան խօսիլ լեզուներով, անոնց երեսին արտասովոր փայլք նկատեցի: Անոնցմէ լոյս կը ճառագէր. ես ցնցուած էի:

Իմ հովիւը, որ մինչեւ այդ պահը ոչինչ ըսած էր, արագ թփթփացուց ուսիս եւ ըսաւ, որ կ'ուզէ անմիջապէս հետս խօսիլ: Մենք մտանք քովի սենեակը, եւ ան աչքերուս մէջ նայելով՝ ըսաւ. «Ասիկա սատանայէն է: Դուն այլեւս չես կրնար հոս երիտասարդականի աւագ ըլլալ: Մենք չենք կրնար հանդուրժել ասիկա»:

Ես մտածեցի. «Ինչպէ՞ս կրնաս ըսել, որ ասիկա սատանայէն է: Նայեցէք այս երեխաներուն: Անոնք կը փայլին»: Օծութիւնը ֆիզիքապէս կ'երեւէր անոնց վրայ: Անշուշտ, այն ժամանակ ես նոյնիսկ չէի գիտեր, թե ինչ կը նշանակէ օծութիւն բառը: Ես միայն այն գիտէի, որ անոնք կը ճառագէին: Ես անոնց չէի դպած, ո՛չ ալ սորվեցուցած էի, թե ինչ ընեն: Ինծի համար բաւականին յուսահատեցնող եւ շփոթեցնող էր, որ իմ հովիւը նման ձեւով յանդիմանեց ինծի, եւ ես չէի գիտեր ինչ ընել:

Յաջորդ Կիրակի գացի եկեղեցի, բայց փոխարէնը եկեղեցւոյ բեմին քով նստիլը, ուր եւ միշտ կը նստէի, ես նստայ ետեւը: Կը գիտակցէի, որ իմ հովիւին հետ որոշակի լարուածութիւն կայ երիտասարդական հաւաքոյթին հետ կապուած, ատոր

համար մտածեցի, որ աւելի լաւ է աչքի չիյնամ, մինչեւ հասկնամ իրավիճակը:

Ահա եկաւ կիրակնօրեայ ծառայութեան մտորման լուռ պահը: Ասիկա աղօթքի շատ ականաճալի եւ լուռ պահ մըն էր մեր եկեղեցւոյ մէջ: Բոլորը կը խոնարհեցնէին գլուխները, եւ եկեղեցւոյ մէջ ոչ մէկ ծայն կը լսուէր: Ասեղի իյնալու ծայնն ալ լսելի էր: Այդ պահուն էր, երբ զգացի ինչ որ մէկուն հայումը ուսիս: Ես շարքի վերջատրութեան նստած էի, եւ ականյայտ էր, որ մէկը կեցած էր շարքերու միջեւ եղած միջանցքի մէջ եւ կը թփթփացնէր ուսիս:

Սկիզբը վրդովեցայ, որ ինչ որ մէկն այս լուռ եւ փափաքելի աղօթքի պահուն կը քալէ: Երբ վեր նայեցայ, զարմացած տեսայ, որ թփթփացնողը այն երեխաներէն մէկն էր, որ անցեալ շաբաթ երիտասարդական հաւաքոյթին մասնակցած էր: Կը յիշէի նաեւ, որ ան այն եօթ հոգիէն մէկն էր, որ այդ գիշեր Սուրբ Հոգիով մկրտուեցաւ: Ան նայեցաւ ինծի եւ ըսաւ. «Եկնոր երթանք»: Մտածեցի. «Եկուր երթանք: Իսկ ո՞ր երթանք»:

Զարմանալիօրէն ան կը ճառագէր ճիշդ այնպէս, ինչպէս այն գիշեր, երբ ընդունեց Սուրբ Հոգիին: Հասկցայ, որ Աստուած ինչ որ բան մը կ'ընէ: Բայց վստահ չէի, որ ճիշդ պահն ու տեղն էր ինչ որ բան մը ընելու, քանի որ հովիւին հետ արդէն անախորժութեան մէջ էի: Գիտէի նաեւ, որ եկեղեցւոյ մէջ Կիրակի օրերուն չէինք կրնար ընել՝ ինչ կ'ուզէինք: Այդ ժամանակ էր, երբ ան ըսաւ. «Ես կ'ուզեմ երթալ ու մայրիկիս համար աղօթել»:

Հիմա հասկցայ, թէ ինչ կը կատարուէր: Ես կը ճանչնայի անոր մօրը: Ան փոքրամարմին, նիհար կին էր, եւ երկար ժամանակ է հիւանդ էր: Անոր ողնաշարի հինգ ողերը մաշած էին, եւ բժիշկներու միակ յոյսն այն էր, որ պէտք է ատոնք ամրակցէին: Ասիկա շատ լուրջ վիրահատութիւն էր, եւ իմ այս

ընկերը անոր միակ զաւակն էր: Անշուշտ ան կը մտատանջուէր իր մօր համար:

Սուրբ Հոգիով մկրտուելէն յետոյ ան վստահ էր, որ Յիսուսը պիտի բժշկէ իր մօրը: Եւ երբ ըսաւ, որ երթանք, ես կարծեցի, որ պիտի երթայ մօր քով, ձեռքերը դնէ անոր վրայ եւ լուռ աղօթէ: Բայց ան այդպէս չըրաւ, այլ մօտեցաւ մօրը, բարձրացուց նստարանէն եւ տարաւ եկեղեցւոյ սրահին առջեւ:

Ան նստեցուց մօրը եւ սկսաւ հնարաւորինս բարձր ձայնով աղօթել լեզուներով: Կը յիշէք, այս ամէնը տեղի կ'ունենար մտորման «լռութեան» պահուն, ուր այլեւս լռութիւն չէր: Ես ցնցուած էի: Ապա դարձաւ դէպի ինծի եւ ըսաւ. «Դ՛ուք բացատրեցէք, թէ ինչ տեղի կ'ունենայ»:

Հիմա հասկցայ, թէ ինչու ինծի իրեն հետ տարած է: Ան մտածած էր, որ եթէ ես անոր ըսած եմ Սուրբ Հոգիով մկրտութեան մասին, ուրեմն ես ալ պէտք է եկեղեցւոյ ժողովուրդին պատմեմ ատոր մասին, երբ լսէին, թէ ինչպէս ան լեզուներով կ'աղօթէ իր մօր համար:

Ահա, ես կեցած էի եկեղեցւոյ առջեւ՝ որպէս խօսնակ, եւ ան լեզուներով կ'աղօթէր մօր համար: Ես իրականութեան մէջ չէի գիտեր ինչ ըսել, յատկապէս երբ իմ հովին աչքերը վրաս յառած էր: Ես պարզապէս ըսի, որ անոր մայրը հիւանդ է, եւ ան կ'աղօթէ լեզուներով, որուն մասին գրուած է Աստուածաշունչին մէջ: Բայց գիտէք ինչ. ճիշդ այդ առաւօտ ան ակնթարթօրէն բժշկուեցաւ եկեղեցւոյ մէջ:

Ատիկա որդիին կողմէն հաւատքի դրսեւորում էր, որուն համար բոլորովին նշանակութիւն չունէր, թէ ինչ կը մտածէին իր մասին: Ան համոզուած էր, որ Սուրբ Հոգին կենդանի է եւ կրնայ բժշկել իր մօրը:

Թէեւ այդ կինն ակնթարթօրէն բժշկուեցաւ, սակայն եկեղեցին ատիկա չընդունեց: Շատերը վերջաւորութեան

մօտեցան ինձի եւ ըսին. «Դէմ չեմ, որ ան իր մօր համար աղօթէ, բայց այդ լեզուները... մենք չենք ընդունիր այդ լեզուներով աղօթքը»: Ես հարիւր տոկոսով համոզուած եմ, որ սատանան ալ կ'ատէ լեզուները, եւ յոյսով եմ, որ մինչեւ այս գիրքին աւարտը կը կարենամ օգնել ձեզի հասկնալու, թէ ինչու ան լեզուները կ'ատէ:

Թերեւս դուք մեծցած էք եկեղեցւոյ մը մէջ, ուր լեզուները եւ Սուրբ Հոգիին պարգեւները չեն կիրարկուիր: Կամ թերեւս ձեզի սորվեցուցած են, որ լեզուներն այսօրուան համար չեն, կամ ատոնց ժամանակը սպառած է: Այս հարցումներուն դժուար չէ պատասխանել: Աստուածաշունչը շատ յստակ կը խօսի այս թեմայի մասին: Ուրեմն, ուշադրութեամբ քննենք Խօսքը եւ բացայայտենք Սուրբ Հոգիով մկրտութեան ճշմարտութիւնը: Վերադառնանք այն խօսքերուն, որոնք կարդացած էինք այս գլուխին սկիզբը:

«Երուսաղէմէն չհեռանաք, այլ սպասեցէ՛ք Հօր խոստացած պարգեւին, որուն մասին Ինձմէ լսեցիք: Որովհետեւ Յովհաննէսը ջուրով մկրտեց, բայց քանի մը օրէն դուք Սուրբ Հոգիով կը մկրտուիք»:

– Գործք առաքելոց 1.4բ-5

Այս խօսքին մէջ կը տեսնենք քանի մը կարեւոր բան.

**«ԱՅՆ ԲԱՆԸ, ՈՐ ԵՍ
ԿԸ ԽՕՍԻՄ ՁԵՁԻ
ՀԵՏ, ԻՄ ԱՆՁԷՆ ՁԵՄ
ԽՕՍԻՐ, ԱՅԼ՝ ՀԱՅՐԸ
Է, ՈՐ ԿԸ ԲՆԱԿԻ ԻՄ
ՄԷՋ, ԱՆ ԿԸ ԳՈՐԾԷ
ԱՅԴ ԳՈՐԾԵՐԸ»:**

– ՅՈՎՀԱՆՆԷՍ 14.10Բ

1. Սուրբ Հոգիով մկրտութիւնը տարբեր է ջուրով մկրտութենէն:

2. Յիսուան ըսաւ, որ այն խիստ կարեւոր է: Իրականութեան մէջ, Ան հասկցուց, որ առանց ատոր ոչինչ կրնանք ընել:

Յիշեցէ՛ք, Յիսուսը դեռ նոր

աշակերտներուն ըսած էր, որ երթան եւ Աւետարանը քարոզեն բոլոր ազգերուն մէջ: Բայց առանց այս մկրտութեան անոնք չէին կրնար ներկայացնել կամ հաստատել, որ երկնային Թագաւորութիւնն իրական է: Ատոր համար ալ Ան կ'ըսէ. «Մնացէք, մինչեւ որ զօրութիւնը ստանաք»:

«Բայց դուք զօրութիւն պիտի առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ եւ ամբողջ Հրէաստանի ու Սամարիայի մէջ՝ մինչեւ երկրի ծայրերը»:

– Գործք առաքելոց 1.8

Զօրութիւն: Յունարէնով «զօրութիւն» բառի համար օգտագործուած է «տունամիս» բառը, ուրկէ ալ կը ծագի մեզի ծանօթ «տինամիթ» բառը: Այսպիսով, կը տեսնենք, որ Աստուծոյ զօրութիւնը կ'իջնէ մեր վրայ Իր գործերն ընելու համար: Յիսուսի ծառայութեան սկիզբը Ան նշած էր, որ այն զօրութիւնը կամ այն օծութիւնը, որուն ներքոյ Ան կը գործէ, կու գայ Իր Հօրմէն:

«Այն բանը, որ ես կը խօսիմ ձեզի հետ, Իմ անձէն չեմ խօսիր, այլ՝ Հայրն է, որ կը բնակի Իմ մէջ, Ան կը գործէ այդ գործերը» (Յովհաննէս 14.10բ):

«Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի. Որդին Իրմէ ոչինչ կրնայ ընել» (Յովհաննէս 5.19):

Կը տեսնէք, Յիսուսն Ինքն Աստուծոյ Հոգիին զօրութեան կարիքն ունէր: Օծութիւն բառը կը նշանակէ «արտաքուստ ծածկել»: Յիսուսն այդ օծութիւնը ստացաւ Յորդանան գետին մէջ Իր Հօրմէն, երբ Սուրբ Հոգին իջաւ Անոր վրայ աղանիի պէս:

Միայն այդ օժուրները ստանալին ետք Ան կրցաւ Թագաւորութեան գործերն ընել: Եթէ Յիսուսն ատոր կարիքն ունէր, ուրեմն մենք նոյնպէս ունինք: Այդ գործիքները վկայութիւն կը հանդիսանայ անոնց համար, որոնք չեն ճանչնար Իրեն եւ չեն գիտեր, որ Աստուած իրական է:

Աստուածաշունչը կ'ըսէ, որ դուք գործիքն կը ստանաք, երբ Սուրբ Հոգին ՁԵՐ ՎՐԱՅ ԳԱՅ, ոչ թէ՛ երբ գայ ձեր մէջ, ինչ որ վերստին ծնելու ժամանակ կը կատարուի:

Շատերը շփոթութեան մէջ կ'իյնան, երբ կը խօսինք Սուրբ Հոգիով մկրտուելու մասին, եւ կը կարծեն, թէ արդէն ստացած են Սուրբ Հոգին, երբ ընդունած են Յիսուսին: Ճշմարտութիւնն այն է, որ այդ, անոնք ստացած են Սուրբ Հոգին, երբ ընդունած են Յիսուսին: Սուրբ Հոգին կենդանացուցած է անոնց հոգիները Աստուծոյ համար եւ Աստուծոյ հետ մէկ դարձուցած է:

Մենք Աստուծոյ համար կենդանի դարձած ենք Սուրբ Հոգիի գործութեամբ, որը մեր մէջ կու գայ, երբ վերստին կը ծնինք: Բայց ուշադրութիւն դարձնենք Աստուածաշնչեան խօսքին, ուր կ'ըսուի, որ Սուրբ Հոգին կ'իջնէ Ձեր վրայ: Ասիկա շատ կարեւոր փաստ է, որուն մասին յետոյ կը խօսինք. ըլլալ վերստին ծնած եւ ըլլալ օծուած կամ մկրտուած Սուրբ Հոգիով, տարբեր են: Մենք աւելի լաւ պատկերացում կը կազմենք ասոր մասին, եթէ կարդանք Յովհաննէսի 20.21,22 խօսքերը.

«Յիսուսը դարձեալ ըսաւ անոնց. «Խաղաղութիւն ձեզի: Ինչպէս Իմ Հայրն ինծի ուղարկեց, Ես ալ ձեզի կ'ուղարկեմ»: Եւ ասիկա ըսելով՝ փչեց անոնց վրայ եւ ըսաւ. «Առէ՛ք Սուրբ Հոգին»»:

Մենք կը տեսնենք, որ հոս Յիսուսը կ'այցելէ Իր աշակերտներուն յարութենէն ետք, կ'ողջունէ անոնց, կը փչէ

անոնց վրայ եւ կ'ըսէ, որ առնեն Սուրբ Հոգին: Այս ժամանակ է, որ անոնք վերստին կը ծնին, եւ ներսը իրենց հոգիները կը կենդանանան Աստուծոյ համար: Բայց, միեւնոյն ժամանակ, անոնց կ'ըսէ, որ սպասեն Սուրբ Հոգիով մկրտութեանը, որը անոնց վրայ քիչ մը ուշ պիտի գայ:

Եթէ անոնք ընդունած էին ամբողջական Սուրբ Հոգին, երբ Յիսուսը փչած էր անոնց վրայ, ապա ինչո՞ւ Ան ըսաւ, որ Երուսաղէմի մէջ սպասէին, մինչեւ Սուրբ Հոգին առնէին՝ խոստումի համաձայն, որ պիտի իջնէ անոնց վրայ: Դարձեալ, ասոնք երկու տարբեր երեւոյթներ են եւ երկու տարբեր գործառոյթներ, բայց՝ նոյն Հոգին: Միեւնոյն ժամանակ, կ'ուզեմ նշել, որ Յիսուսը պէտք է նաեւ մկրտուէր Սուրբ Հոգիով, որ մտնէր Իր ծառայութեան մէջ եւ արդիւնաւէտ գործէր: Մինչեւ Յիսուսին Սուրբ Հոգիով մկրտուիլը որեւէ բան գրուած չէ, որ Ան գէթ մէկ հրաշք գործած է: Արդե՞ծք Ան պատանի հասակին բազմապատկած է ընթրիքի հացը: Արդե՞ծք հրաշքներ գործած է երեխայ ժամանակ: Արդե՞ծք քաղցած ժամանակ բազմացուցած է իր մանկական կերակուրը, երբ այն գրեթէ սպառած է: Անշուշտ՝ ո՛չ: Իսկ ինչո՞ւ չէ ըրած: Պարզ եւ ազնիւ պատասխանը հետեւեալն է՝ չէ կրցած:

Նախքան Յորդանան գետին մէջ Սուրբ Հոգիով մկրտուիլը որեւէ բան տեղի չէր ունեցած: Կը տեսնենք, որ Յիսուսը եկաւ որպէս մարդ: Ան չեկաւ որպէս Աստուծոյ Որդի՝ Անոր զօրութեամբ ու փառքով: Որպէս մարդ՝ Ան սահմանափակ էր նոյն չափով, որ չափով սովորական մարդը սահմանափակ է: Ան չէր կրնար բժշկել կամ հրաշքներ գործել, ինչպէս որ ես եւ դուք ինքնուրոյն չենք կրնար որեւէ հրաշք գործել:

Բայց, ի տարբերութիւն մեզի, Յիսուսի Հոգին Աստուծոյ համար մահացած չէր, երբ Ան ծնաւ որպէս մանուկ մը: Անոր Հոգին Աստուծոյ համար միշտ կենդանի էր: Ան մեզի պէս

վերստին ծնելու կարիք չունէր: Այնուամենայնիւ, թէեւ Անոր Հոգին կենդանի էր, որպէս Որդի Ան կարիք ունէր մկրտուելու Սուրբ Հոգիով՝ Իր ծառայութիւնը սկսելէն առաջ, ինչպէս եւ մենք:

«Եւ մկրտուելէն ետք Յիսուսը շուրջով դուրս ելաւ ջուրէն: Այդ պահուն Երկինքը բացուեցաւ, եւ Ան տեսաւ Աստուծոյ Հոգիին, որ վար կ'իջնէր աղանձի պէս եւ կը փայլէր Անոր վրայ: Եւ Երկինքէն ձայն մը ըսաւ. «Արիկա՛ է Իմ սիրելի Որդին, Որուն Ես հաւնեցայ»:

– Մատթէոս 3.16,17

Յիշեցէք, մենք Յիսուսին կը պատկերացնենք որպէս Արքայ՝ արքաներու, եւ Տէր՝ տէրերու, բայց Ան այդ դիրքէն չձառայեց: Հրաշքները սկսան միայն այն բանէն յետոյ, երբ Յորդանան գետին մէջ Սուրբ Հոգին իջաւ Անոր վրայ:

Ձեր ծառայութիւնը (քանի որ իւրաքանչիւր հաւատացեալ կանչուած է Յիսուսին գործերն ընելու) չի կրնար սկսիլ, եթէ չմկրտուիք Սուրբ Հոգիով: Անոր գործերն ընելու համար ձեզի Սուրբ Հոգիին զօրութիւնն անհրաժեշտ է: Եւ ձեզի անհրաժեշտ է Հոգիով աղօթելու կարողութիւնը, որպէսզի գիտնաք, թէ ինչպէս ընէք այդ գործերը: Հետագային մենք կը քննարկենք ատիկա:

Անշուշտ, դուք կրնաք խօսիլ վերստին ծնունդի վերապրումի մասին՝ պատմելով ուրիշներուն, թէ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ փրկութեան մասին: Շատ քրիստոնէաներ, որոնք մկրտուած չեն Սուրբ Հոգիով, աշխուժօրէն կը փոխանցեն ուրիշներուն Աւետարանի Բարի լուրը, բայց անոնք չունին այն զօրութիւնը, որ Յիսուսին պէս ցոյց տան Թագաւորութիւնը: Ասոր վերջաւորութեան քարոզները կը դառնան թոյլ ու անօգտակար:

Երբ Յիսուսը հանդիպեցաւ փարիսեցիներու չարախօսութեանը, որուն միջոցով կը յանդիմանէին իրենց անհաւատութիւնը, Յիսուսը մէջբերեց այն հրաշքները, որ կ'ընէր.

*«Հաւարացէ՛ք Ինծի, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրն ալ՝
Իմ մէջ: Ապա թէ ոչ, առնուազն յարկապէս գործերուն
համար հաւարացէ՛ք Ինծի...» (Յովհաննէս 14.11,12ա):*

Յիսուսը հոս կարծես կ'ըսէ, որ Թագաւորութեան գործերը վերջակէտ կը դնեն բոլոր վիճաբանութիւններուն: Հարցը լուծուած է: Հիմա, անշուշտ, ոեւէ հաւատացեալ օրինական իրաւունք ունի օգտուելու այն ամէնէն, ինչի համար Յիսուսը վճարած է, այդ կարգին նաեւ բժշկութենէն: Իրաքանչիւր հաւատացեալ կրնայ ընդունիլ Աստուծոյ որեւէ խոստում հաւատքի միջոցով (համաձայնութիւն երկինքի հետ), եւ կարիք չկայ մկրտուելու Սուրբ Հոգիով՝ աստոնք Աստուծմէ ստանալու համար:

Բայց որպէսզի այդ զօրութիւնը ձեր միջոցով հոսի դէպի ուրիշները, եւ որպէսզի ձեր մէջ առատ գործեն Սուրբ Հոգիին պարգեւները, եւ որպէսզի վայելէք ձեր ընթացքը երկնային հրաշքներու ուղեկցութեամբ՝ լեզուներով աղօթքի միջոցով, դուք պէտք է ունենաք այդ օծութեան զօրութիւնը: Թերեւս չհասկնաք, թէ ինչ նկատի ունիմ լեզուներով աղօթք ըսելով, բայց աստիկա թող չվախցնէ ձեզի: Այդ մասին ասելի ուշ կը խօսիմ:

Իմ դուստրը՝ Էմին, փառաբանութեան աւագ է մեր՝ «Հաւատքի կեանք» եկեղեցոյ մէջ, որը կը գտնուի Նոր Ալլապիոյ, Օհայօ նահանգին մէջ: Քանի մը տարի շարունակ անոր առողջական վիճակը մեզի շփոթութեան մէջ ձգած էր. անոր որովայնը կամաց-կամաց կը մեծնար ու կը ցցուէր: Թէեւ շատ բժիշկներու քով գացած էինք, ոչ ոք կրնար բացատրել պատճառը: Բոլորը կ'ըսէին, թէ իր մարմինն այդպէս ստեղծուած է:

Այս ամէնն այնքան շարունակուեցաւ, մինչեւ որ վեց ամսական յղի կնոջ տեսք ունեցաւ: Այդ ժամանակ Էմին շողանկարի (x-ray) հետազօտութիւն ըրաւ, եւ միայն այդ

Ժամանակ կրցանք տեսնել, որ անոր որովայնին մէջ հսկայական գոյացութիւն մը կայ: Շողանկարի հետազոտութեան արդիւնքները տեսնելով՝ Էմին գիտէր, թէ որն էր բժշկութեան կողմէն առաջարկուող լուծումը: Անշուշտ՝ վիրահատութիւնը: Քանի որ ան նոր ամուսնացած էր, պարզ կը գիտակցէր, որ որեւէ վիրահատութիւն, ամենայն հաւանականութեամբ, պիտի զրկէր անոր մայրանալու բերկրանքէն: Վիրահատութիւնն ընդունելի տարբերակ չէր Էմին համար: Ան ամբողջ կեանքին ընթացքին երազած էր մայր դառնալու մասին: Այդ շողանկարի հետազոտութեան վրայ նոյնիսկ մենք կը տեսնէինք, որ այդ հսկայական գոյացութիւնը տեղաշարժած էր անոր օրկանները, որուն հետեւանքով Էմին մարսողութեան եւ երկկամներու լուրջ խնդիրներ ունէր: Ան որոշեց իսկապէս լուրջ վերաբերիլ Աստուծոյ Խօսքին եւ Ժամանակ յատկացնել ուսումնասիրելու այն հատուածները, ուր Աստուածաշունչը կը սորվեցնէ բժշկութեան մասին: Այդ նոյն քանի մը շաբաթներու ընթացքին «Հաւատքի կեանք» եկեղեցւոյ մէջ ես կը սորվեցնէի բժշկութեան մասին: Այդ դասաշարի վերջաւորութեան Էմին խնդրեց աւագներուն, որ ձեռքերը դնեն եւ աղօթեն իր բժշկութեան համար՝ համաձայն Յակոբոս 5.14,15-ի, ինչպէս եւ ըրինք:

«Ձեզմէ մէկը հիւանդ է. թող եկեղեցւոյ երէցներուն կանչէ, որ անոր համար աղօթք ընեն, անոր իւղով օծեն Տիրոջ անունով: Եւ հաւաքքով մաքուցուած աղօթքը կ'ապաքինէ այն հիւանդին, եւ Տէրը ոտքի պիտի կանգնեցնէ անոր: Եւ եթէ մեղք գործած ըլլայ, կը ներուի անոր»:

– Յակոբոս 5.14,15

Էմին, կատարելապէս վստահելով Աստուծոյ Խօսքին, պահանջեց իր բժշկութիւնը, երբ մեր ձեռքերը դրինք անոր վրայ: Թէեւ բժշկութեան ֆիզիքական որեւէ դրսեւորում չեղաւ

այդ պահուն, երբ աղօթեցինք անոր համար, սակայն ան վստահ էր, որ բժշկուած է:

Երկու շաբաթ յետոյ ան սովորականի պէս գնաց քնանալու կրկին առանց որեւէ ֆիզիքական ապացոյցի, որ բժշկուած է, բայց առաւօտեան ցնցուած արթնցաւ: Ան մէկ գիշերուան մէջ կորսնցուցած էր մօտաւորապէս 6 քկ, իսկ գօտկատեղի շրջագիծը փոքրացած էր 23 սանթիմետրով: Անոր ծոմնած եւ կծկուած մէջքն էլ այժմ բոլորովին ուղղուած էր. ան ակնթարթօրէն բժշկուած էր:


ԱՌԱՋ ՅԵՏՈՅ



Այս նկարներուն մէջ կրնանք տեսնել հրաշագործ բժշկութեան ապացոյցը: Ձախ կողմի նկարը ցոյց կու տայ, թէ ինչ վիճակի մէջ ան պառկեցաւ քնանալու: Իսկ աջ կողմի նկարը ցոյց կու տայ, թէ ինչպիսին էր իր վիճակը, երբ արթնցաւ:

Շողանկարի հետազօտութեան այս նկարներէն ձախ կողմի

վրայ կը տեսնենք անոր ողնաշարը նախքան բժշկուիլը, իսկ աջ կողմը այն նկարն է, որ եղած է բժշկութենէն մէկ շաբաթ



ետք: Կը տեսնէք ինչ անհաւատալի փոփոխութիւն տեղի ունեցած է ողնաշարին մէջ:

Այդ ժամանակ եւ հիմա ալ Էմին «Հաւատքի կեանք» եկեղեցւոյ մէջ փառաբանութեան աւագն է: Կը պատկերացնէք ինչ տեղի ունեցաւ, երբ յաջորդ Կիրակի ան եկեղեցի գնաց: Մարդիկ ապշահար անոր կը նայէին: Անոնք կեցած էին նախամուտքին մէջ՝ բոլորովին ապշած, եւ կը հարցնէին. «Ինչ կատարուած է հետդ: Դուն նոր մարմին ունիս»: Այդ Կիրակի ամբողջ եկեղեցին ցնցուած էր, երբ Էմին կ'առաջնորդէր փառաբանութիւնը: Եւ Աստուծոյ Թագաւորութեան այս դրսեւորման շնորհիւ շատերն ընդունեցին Աստուծոյ, շատերն ալ բժշկուեցան:

Համաձայն էք, որ մարդիկ պէտք է տեսնեն Աստուծոյ

Թագաւորութիւնը գործնականին մէջ: Գործք 1.8-ին մէջ կը տեսնենք, որ օծութիւնը՝ Սուրբ Հոգիով մկրտուիլը, խիստ էական էր:

«Բայց դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները կ'ըլլաք Երուսաղէմի մէջ եւ ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ՝ մինչեւ երկրի ծայրերը»:

– Գործք առաքելոց 1.8

Եւ, համաձայն Յիսուսին, ատիկա խիստ կարեւոր էր Աստուծոյ Թագաւորութեան դրսեւորման համար:

«Անոնց ալ, որ հաւատացին, այս նշանները կը հետեւին. Իմ անունով դեւեր կը հանեն, նոր լեզուներով կը խօսին, օձեր կը բռնեն, եւ եթէ մահադեղ խմեն, անոնց վնաս չի տար. հիւանդներու վրայ ձեռք կը դնեն, եւ անոնք կ'առողջանան»:

– Մարկոս 16.17,18

Օձեր բռնելն ու մահադեղ խմելը կը վերաբերի սատանայի թագաւորութեանը եւ ուղիղ փոխկապակցուած է վախի հետ: Սատանայի թագաւորութիւնը պարտուած է: Յիսուսը չ'առաջարկէր, որ վտանգաւոր օձեր բռնենք կամ թոյն խմենք, այլ այս արտայայտութիւնը կ'օգտագործէ, որպէսզի ցոյց տայ, թէ ինչ զօրութիւն մեզի տրուած է թշնամիին դէմ: Մենք պէտք է վերցնենք այդ իշխանութիւնն ու Աստուծոյ զօրութիւնը եւ կիրառենք ընդդէմ սատանայի թագաւորութեան եւ մարդոց ազատ արձակենք:

Ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուսը կ'ըսէ «այս նշանները» կը հետեւին անոնց, որոնք կը հաւատան: Երբ մարդիկ տեսնեն այս Թագաւորութեան նշանները

(դրսետորումները), կը հարցնեն, թե ինչպէս ատոնք կը կատարուին: Նշանը ինչ որ բան մը կը մատնանշէ: Ինքն իրմով այն պատասխան չէ, բայց այն մատնացոյց կ'ընէ Յիսուսին. եւ Որն անձամբ պատասխան կը հանդիսանայ:

Այս բոլոր նշանները վերջ կը դնեն քննարկումներուն՝ արդեօք Յիսուսը Տէր է, թէ՞ ոչ: Ան Տէ՛ր է: Եւ երբ մարդիկ կը տեսնեն, որ Ան Տէր է, կ'ապաշխարեն եւ Աստուծոյն կը դառնան: Ատոր համար ալ ինծի եւ քեզի անհրաժեշտ է Սուրբ Հոգիով մկրտութիւնը, եւ առանց ատոր մենք, իրականութեան մէջ, արդիւնաւետ ըլլալ չենք կրնար:

Այսպիսով, երբ արդէն քիչ մը հիմքային աշխատանքներ կատարեցինք՝ թէ ինչու ձեզի անհրաժեշտ է Սուրբ Հոգիով մկրտութիւնը, եկէք ուսումնասիրենք Աստուածաշնչեան այն գրուածքները, որոնք կը խօսին այս օծութեան մասին:

ԳԼՈՒԽ 5

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ԱՊԱՑՈՅՑՆԵՐ

Սուրբ Հոգիով մկրտուելու մասին գաղափար կազմելու լաւագոյն ձեւերէն մէկը Պէնտէկոստէի օրը այն ստացողներուն ուսումնասիրելն է, որուն մասին գրուած է Գործք առաքելոց գիրքին մէջ: Ամէն խօսքն ուսումնասիրելու ժամանակ ձեր հաւատքն ու վստահութիւնը կ'աւելնայ, եւ կը համոզուիք, որ այս մկրտութիւնը նաեւ ձեզի համար է:

«Եւ երբ Պէնտէկոստէի օրը եկաւ, բոլորը միասին մէկ տեղ էին: Եւ յանկարծ Երկինքէն ձայն մը եկաւ՝ սաստիկ փշող քամիի պէս, եւ լեցուց ամբողջ տունը, ուր նստած էին: Եւ անոնք տեսան բան մը, որ կրակի լեզուներու կը նմանէր, որոնք բաժնուեցան եւ նստան անոնցմէ ամէն մէկուն վրայ: Եւ բոլորը Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար:

Եւ Երուսաղէմի մէջ կը բնակէին Աստուածավախ հրեաներ՝ Երկինքի տակի ամէն ազգերէն: Եւ երբ այս ձայնը լսեցին, բազմութիւն մը հաւաքուեցաւ՝ զարմացած, որովհետեւ ամէն մէկը կը լսէր անոնց, որ իր լեզուով կը խօսէին:

Եւ ամէնքը զարմացած իրար կ'ըսէին. «Չէ՞ որ այս բոլոր մարդիկ, որ կը խօսին, գալիլիացի են: Այդ պարագային, ինչպէս մենք ամէն մէկս մեր մայրենի լեզուն կը լսենք: Պարթեւներ եւ մարեր եւ եղամացիներ, Միջագետքի, Հրէաստանի եւ Կապադովկիայի, Պոնտոսի եւ Ասիայի, Փռիգիայի եւ Պամփիլիայի, Եգիպտոսի եւ Լիբիայի կողմերու Կիւրենէի բնակիչներ եւ նորեկ հռոմէացիներ, հրեաներ եւ նորահաւաքներ, կրեւացիներ եւ արաբներ. մենք կը լսենք, որ անոնք մեր լեզուներով Աստուծոյ մեծամեծ բաները կը խօսին»:

Եւ կը հիանային ամէնքը եւ կը զարմանային եւ իրարու կ'ըսէին. «Ասիկա ինչ կը նշանակէ»: Իսկ ոմանք ալ, անոնց ծաղրելով, կ'ըսէին՝ գինիով գինովցած են»:

– Գործք առաքելոց 2.1-13

Նախելառաց, կը ցանկամ, որ տեսնէք, թէ ինչ կ'ըսէ Աստուածաշունչը, որ բոլորը լեցուեցան Սուրբ Հոգիով: Երկրորդը՝ բոլորը խօսեցան լեզուներով: Թերեւս լսած էք, թէ մարդիկ ինչպէս կը նկարագրեն Պէնտէկոստէի օրը, եւ թէ ինչպէս կը բացատրեն այդ երեւոյթը, թէ ինչու բոլորը սկսան լեզուներով խօսիլ: Ոմանք կը պնդեն, որ ատիկա մէկ անգամուան փորձառութիւն էր եկեղեցիին համար, քանի որ հոն հաւաքուած եկեղեցին տարբեր երկիրներէ եկած էր, ուստի, լեզուներն անհրաժեշտ էին, որ Աւետարանը քարոզուէր տարբեր լեզուներ կրող մարդոց: Բայց եթէ կարդանք Աստուածաշունչը, կը տեսնենք, որ վերնատունը հաւաքուած 120 հոգին կը խօսէին Աստուծոյ հրաշալի գործերու մասին: Անոնք Աւետարան չէին քարոզեր, անոնք պարզապէս կը փառաբանէին Աստուծոյ:

««...Մենք կը լսենք, որ անոնք մեր լեզուներով Աստուծոյ մեծամեծ բաները կը խօսին (հրաշքներ կը հռչակեն)»:

*Եւ կը հիանային ամէնքը ու կը զարմանային եւ իրարու
կ'ըսէին. «Ասիկա ինչ կը նշանակէ»»:*

– Գործք առաքելոց 2.11բ-12

Մօտակայքը կեցած մարդիկ կը լսէին, թէ ինչպէս անոնք
կը փառաւորէին Աստուծոյ իրենց մայրենի լեզուով, եւ
բոլորը զարմացած ու ապշած էին: Յետոյ Պետրոսը կեցաւ
եւ փրկութեան պատգամ քարոզեց, եւ այդ օրը 3000 հոգի
աւելցաւ եկեղեցւոյ մէջ: Եթէ աշակերտները լեզուներով կը
քարոզէին, այդ պարագային Պետրոսը չէր կենար ու քարոզեր:
Բայց մինչեւ Պետրոսին քարոզելը, անոնք չէին հասկնար,
թէ իրենց լսածն ինչ կը նշանակէ: Այդ ժամանակ լեզուները
չէին օգտագործուեր Աւետարանը քարոզելու համար, հիմա
նոյնպէս չեն օգտագործուիր Աւետարանը քարոզելու համար:
Յաջորդ գլուխին մէջ կը խօսինք, թէ ինչ օգուտ կրնայ ստանալ
հաւատացեալը լեզուներով աղօթքէն, բայց այժմ կը խօսինք
տարածուած կարծիքի մը մասին, որ լսած եմ:

Դարձեալ կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել
այն փաստին վրայ, որ Աստուածաշունչը կ'ըսէ, որ
բոլորն ընդունեցին, եւ բոլորը խօսեցան լեզուներով:
Եթէ Աստուածաշունչը մեզի ճիշդ հոս ալ ձգէ, մենք կը
կասկածինք, որ լեզուներն ամբողջ եկեղեցւոյ համար է: Բայց
Աստուածաշունչն այդպէս չ'ըսեր: Փոխարէնը, կը տեսնենք,
որ այս երեւոյթը Պէնտէկոստէն յետոյ կը շարունակուի եւ կը
կրկնուի բոլոր այն անհատներուն համար, որոնք կ'ընդունին
Սուրբ Հոգիին մկրտութիւնը:

Թոյլ տուէք խօսիլ տղամարդոցմէ մէկուն մասին, որ ներկայ
էր Պէնտէկոստէի օրը: Անոր անունը Փիլիպպոս էր:

*«Իսկ ցրուածները կը պարզէին՝ Խօսքն աւելարանելով:
Եւ Փիլիպպոսն իջաւ Սամարիայի քաղաք մը եւ Քրիստոսի*

*մասին կը քարոզէր հոն: Ժողովուրդներն ալ միաբան
ականջ կը դնէին Փիլիպպոսի խօսածներուն՝ լսելով եւ
տեսնելով այն նշանները, որ կ'ընէր»:*

– Գործք առաքելոց 8.4-6

Հոս կը տեսնենք, որ Փիլիպպոսը կը ներկայացնէր
Թագաւորութիւնը, եւ մարդիկ կը լսէին: Այսօր ալ այդպէս պէտք
է ըլլայ: Երբ մարդիկ տեսնեն նշանները, երբ անոնք տեսնեն
Թագաւորութեան ապացոյցները, աւելի ուշադրութիւն պիտի
դարձնեն ձեր ըսածներուն:

*«Որովհետեւ շարերէն պիղծ հոգիներ կ'ելլէին մեծածայն
աղաղակելով, եւ շար անդամալոյծներ եւ կաղեր կը
բժշկուէին: Եւ մեծ ուրախութիւն եղաւ այդ քաղաքին մէջ...»:*

– Գործք առաքելոց 8.7-9

Ուշադրութիւն դարձնենք, որ Փիլիպպոսը կը քալէր
զօրութեան մէջ, որը նոր ստացած էր, երբ Երուսաղէմ էր:
Անոր կը հետեւէին նշաններ, քանի որ Աստուծոյ զօրութիւնը
բոլորին կ'երեւէր: Ան ստացած էր տունամիսը («զօրութիւն»
բառի յունարէն տարբերակը), այժմ ան պատրաստ էր՝ ըլլալու
Աստուծոյ Թագաւորութեան վկան:

*«Երբ Երուսաղէմի առաքեալները լսեցին, որ
Սամարիան Աստուծոյ Խօսքն ընդունած է, Պեպրոսին
եւ Յովհաննէսին ուղարկեցին անոնց քով: Երբ անոնք
ժամանեցին, աղօթեցին անոնց համար, որ Սուրբ
Հոգին առնեն, որովհետեւ անոնցմէ ոեւէ մէկուն վրայ
տակաւին Սուրբ Հոգին չէր իջած: Անոնք միայն Տէր
Յիսուսի անունով մկրտուած էին: Այն ժամանակ
Պեպրոսն ու Յովհաննէսը իրենց ձեռքերը դրին անոնց
վրայ, եւ անոնք ընդունեցին Սուրբ Հոգիին»:*

– Գործք առաքելոց 8.14-17

Երբ Երուսաղէմի առաքեալները լսեցին, որ Սամարիան ընդունած է Աստուծոյ Խօսքը, Պեպրոսին եւ Յովհաննէսին ուղարկեցին անոնց քով: Երբ անոնք ժամանեցին, աղօթեցին անոնց համար, որ Սուրբ Հոգին առնեն, որովհետեւ անոնցմէ ոեւէ մէկուն վրայ Սուրբ Հոգին տակաւին չէր իջած: Բայց Աստուածաշունչին մէջ կը տեսնենք, որ դեւերը դուրս կ'ելլէին, մարդիկ կը բժշկուէին, եւ Աստուծոյ մեծամեծ գործերը կը կատարուէին, եւ մարդիկ կը հաւատային Յիսուսին ու կը մկրտուէին ջուրով: Բայց այն կ'ըսէ նաեւ, որ Սուրբ Հոգին տակաւին անոնցմէ ոեւէ մէկուն ՎՐԱՅ ԶԷՐ ԻՋԱԾ:

Կը տեսնէք, Փիլիպպոսը փրկութիւն կը քարոզէ, եւ բոլորը կ'ընդունին աստիկա, բայց Սուրբ Հոգիով մկրտութիւնը տակաւին չէին ընդունած: Անոնք վերստին ծնած էին, բայց ուշադրութիւն դարձուցէք բառերուն. Սուրբ Հոգին տակաւին «ՌԵԻԷ ՄԷԿՈՒՆ ՎՐԱՅ ԶԷՐ ԻՋԱԾ»: Ահա հոս կրկին կը տեսնենք այն տարբերութիւնը. Սուրբ Հոգին մեր մէջ է (վերստին ծնունդ), Սուրբ Հոգին կ'իջնէ մեր վրայ եւ զօրութիւն կը ներգործէ:

Աստուածաշունչը չ'ըսեր, թէ ինչու Փիլիպպոսն ինքը չքարոզեց Սուրբ Հոգիով մկրտուելու մասին: Թերեւս ան Երուսաղէմէն դուրս ելած է անմիջապէս Սուրբ Հոգիով մկրտուելէն ետք, այդ ժամանակ չէր գիտեր, որ այն բոլորին համար է: Ինչ ալ ըլլայ պատճառը, ականյայտ է, որ մարդիկ հաւատացած էին Աւետարանին, ջուրով մկրտուած էին, եւ ուրեմն անոնք վերստին ծնած էին: Բայց ուշադրութիւն դարձուցէք, որ առաքեալներու համար որքան կարեւոր էր, որ Սամարիայի մարդիկ իրենց պէս Սուրբ Հոգիով մկրտուէին անմիջապէս:

Առաջին բանը, որ անոնց ըսին, այն չէր, թէ ինչպէս հագնին կամ չհագնին: Անոնք չըսին. «Եկէք ըսենք, թէ

ինչպես պետք է պարկեշտ հագնիլ, կամ եկեղեցական հաւաքոյթները երբ կրնան առաջնորդել»: Անոնց չէր մտահոգէր աստուածաբանական օրէնքները: Ինչը անոնց կը մտահոգէր ամէնէն աւելի. Սուրբ Հոգիով մկրտութիւնը: Ուստի անոնք գործի անցան եւ անմիջապէս ուղեւորուեցան հոն՝ այդ մարդոց պատմելու Սուրբ Հոգիով մկրտութեան մասին:

Պետրոսն ու Յովհաննէսը իրենց ձեռքերը դրին անոնց վրայ, եւ անոնք ընդունեցին Սուրբ Հոգին: Ո՛րն էր աստոր ապացոյցը: Կը կարծեմ, ինչպէս բոլորին քով, լեզուներով աղօթելն էր:

«Երբ Սիմոնը տեսաւ, որ Սուրբ Հոգին կը տրուի առաքեալներուն ձեռք դնելով, դրամ բերաւ անոնց եւ ըսաւ. «Ինծի ալ այս կարողութենէն տուէք, որ որուն վրայ որ ձեռք դնեմ, Սուրբ Հոգին ստանայ»:

Պետրոսը պատասխանեց. «Քու արծաթը քեզի հետ կորսուի, որովհետեւ դուն կարծեցիր, թէ դրամով կրնաս Աստուծոյ պարգեւը գնել: Դուն բաժին եւ մաս չունիս այս ծառայութեան մէջ, որովհետեւ քու սիրտը ուղիղ չէ Աստուծոյ առջեւ: Ապաշխարէ՛ քու այդ չարութենէն եւ Աստուծոյ աղօթէ՛: Թերեւս Ան ներէ քեզի սրտիդ մէջ այդպիսի չար խորհուրդ ունենալու համար: Որովհետեւ կը տեսնեմ քեզի, որ լեցուն ես դառնութեամբ եւ մեղքի կապանքի մէջ ես»:

Սիմոնն ալ պատասխանեց. «Դո՛ւք ինծի համար աղօթեցէք Տիրոջը, որ ձեր ըսածներէն ոչ մէկ բան հետս պատահի»»:

– Գործք առաքելոց 8.18-24

Երբ Սիմոնը տեսաւ, որ ձեռք դնելով Հոգին կը տրուի, գումար առաջարկեց առաքեալներուն՝ իրեն այդպիսի

զօրութիւն տալու համար: Պէտք է որ Սիմոնը ինչ որ բան մը, ինչ որ ապացոյց մը տեսած ըլլար, որ կը կատարուէր, երբ մարդիկ կը ստանային Սուրբ Հոգին: Ան ալ կ'ուզէր այդ զօրութիւնը:

Ճիշդ հոս չ'ըսեր, որ մարդիկ լեզուներով կը խօսէին, բայց ակնյայտ էր, որ ինչ որ ականառու բան մը տեղի ունեցած էր, որը անոնք տեսած էին իրենց աչքերով: Սիմոնը զօրաւոր բան մը տեսած էր եւ կը ցանկար, որ այդ կարողութիւնն ինքն ալ ունենայ, որ փոխանցէ ուրիշներուն: Կը կարծեմ՝ անոր ականարկները ցոյց կու տան, որ անոնք ալ բոլորին պէս մկրտուած էին եւ լեզուներով կը խօսէին: Դարձեալ կ'ուզեմ ընդգծել, թէ որքան կարեւոր էր Սուրբ Հոգիով մկրտութիւնը Երուսաղէմի եկեղեցւոյ համար. այն կենսական էր:

Երբ Պօղոսը դարձի եկաւ Դամասկոսի ճանապարհին, Անանիա անունով մարդ մը ուղարկուեցաւ Պօղոսին քով, որ անոր համար աղօթէ:

«...Անանիան ըսաւ. «Սաւուղ եղբայր, Տէրը՝ այն Յիսուսը, որ երեւցաւ քեզի ճանապարհին, ուղարկեց ինձի, որ նորէն տեսնես ու Սուրբ Հոգիով լեցուիս»»:

– Գործք առաքելոց 9.17բ

Աստուածաշունչը չ'ըսեր, որ Պօղոսը սկսաւ լեզուներով խօսիլ, երբ մկրտուեցաւ Սուրբ Հոգիով, բայց մենք գիտենք, որ ան կը խօսէր լեզուներով, եւ կը կարծեմ ան ալ մկրտուեցաւ ճիշդ այնպէս, ինչպէս ուրիշները: Դուք կրնաք հարցնել, թէ ինչու այդպէս կը կարծեմ: Պատասխանը յստակ է: Քանի որ Պօղոսն անձամբ կը գրէ Ա. Կորնթացիս 14.18-ին մէջ.

«Կը գոհանամ Աստուծմէ, որ բոլորէդ աւելի շար լեզուներով կը խօսիմ» (Ա. Կորնթացիս 14.18):

Այսպիսով, կրնանք եզրակացնել, որ Պոդոսն ալ սկսած է լեզուներով խօսիլ, երբ մկրտուած է Սուրբ Հոգիով: Երբ կը կարդանք Գործք առաքելոցի գլուխները, կը տեսնենք, որ այս մկրտութիւններն օրէօր տեղի կ'ունենային եկեղեցիին մէջ: Այն տեղի չունեցաւ միայն Պէնտէկոստէի օրը:

Հետագային Գործք առաքելոցի 10-րդ գլուխին մէջ կը կարդանք, որ Պետրոսին ուղարկեցին հեթանոսներու տունը, որ Աւետարանը քարոզէ: Կը պատկերացնէք, թէ որքան արտասովոր էր Պետրոսին համար, որ հրեայ էր, երթալ հեթանոսի մը տուն: Ան գնաց հոն միայն այն պատճառով, քանի որ Սուրբ Հոգին տեսիլքի միջոցով իրեն հոն կ'առաջնորդէր:

«Մինչ Պետրոսը տակաւին այս բաները կը խօսէր, Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ, որոնք կը լսէին Խօսքը: Պետրոսին հետ եկող թլփատուած հաւատացեալները զարմացան, որ Սուրբ Հոգիին պարգեւը կը թափէր նաեւ հեթանոսներուն վրայ: Որովհետեւ կը լսէին, որ անոնք լեզուներով կը խօսէին եւ Աստուծոյ կը փառաւորէին:

Այն ժամանակ Պետրոսն ըսաւ. «Միթէ մէկը կրնայ արգիլել այս մարդոց, որ ջուրով մկրտուին: Անոնք Սուրբ Հոգին ընդունեցին այնպէս, ինչպէս եւ մենք»: Ուստի, անոնց հրամայեց, որ Յիսուս Քրիստոսի անունով մկրտուին: Այն ժամանակ խնդրեցին Պետրոսին, որ քանի մը օր իրենց քով մնայ»:

– Գործք առաքելոց 10.44-48

Մինչ Պետրոսը Քրիստոսի Աւետարանը կը քարոզէր այս հեթանոս ընտանիքին, Սուրբ Հոգին անոնց վրայ իջաւ, որոնք կը լսէին Խօսքը: Աստուծոյ Հոգիին չես կրնար տեսնել, ուրեմն ինչպէս իմացան, որ Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ: Յետոյ գրուածքին մէջ կ'ըսուի, որ Պետրոսի հետ եկած թլփատուած

հաւատացեալները ապշած էին, որ Սուրբ Հոգիին պարգեւը թափած էր նաեւ հեթանոսներուն վրայ, որովհետեւ լսեցին, որ կը խօսէին լեզուներով եւ կը փառաւորէին Աստուծոյ:

Այսպիսով, զորն էր ապացոյցը, որ Սուրբ Հոգին հոն էր: Պետրոսը պէտք է ընդունէր այն, ինչ որ ակնյայտ էր իրեն համար, որ Աստուած ընդունած էր այս մարդոց: Այն փաստը, որ անոնք լեզուներով կը խօսէին այն պարագային, երբ Սուրբ Հոգիով մկրտուելու մասին անոնց ոչինչ ըստած էր, ճիշդ այն ապացոյցն էր, որուն կարիքը ան ունէր: Պետրոսը գիտէր, որ անոնք մկրտուած են, քանի որ ստացած էին Սուրբ Հոգին այնպէս, ինչպէս որ ինքը ստացած էր. անոնք լեզուներով կ'աղօթէին:

Այսօր կրնանք ահռելի տարբերութիւն նկատել այն ամէնուն մէջ, ինչ այսօրուան եկեղեցին կը կարեւորէր, եւ ինչ որ կը կարեւորէր Աստուածաշնչեան ժամանակներու եկեղեցին: Իմ սիրելի Աստուածաշնչեան խօսքերէն մէկը, որը յստակ կ'ըսէ, որ բոլորը պէտք է մկրտուին Սուրբ Հոգիով, եւ որը առանց որեւէ կասկածի կը հաստատէ, որ վերստին ծննունդէն անկախ ատիկա Սուրբ Հոգիի ներգործութիւնն է, գրուած է Գործք առաքելոց 19.1,2-ին մէջ:

«Մինչ Ապօղոսը Կորնթոսի մէջ էր, Պօղոսը վերին կողմերը կը պարզէր եւ եկաւ Եփեսոս: Հոն ան քանի մը աշակերտներու գտաւ եւ հարցուց. «Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, երբ հաւատացիք»: Անոնք պատասխանեցին. «Ո՛չ, մենք չենք ալ լսած, թէ Սուրբ Հոգի կայ»»:

– Գործք առաքելոց 19.1,2

Երբ Պօղոսը Եփեսոս մտաւ, ան քանի մը աշակերտներու գտաւ եւ հարցուց. «Դուք ընդունեցի՞ք Սուրբ Հոգին, երբ

հաւատացիք»: Ասիկա առաջին մտահոգությունն էր, որը Պօղոսն արտայայտեց այս հաւատացեալներուն հանդիպելուն պէս:

Պօղոսը հասկցած էր, որ վերստին ծնած ըլլալը բոլորովին կը տարբերի Սուրբ Հոգիով մկրտուած ըլլալէն՝ որուն ապացոյցը լեզուներով խօսիլն էր:

Ինչո՞ւ Պօղոսը առաջինը ճիշդ ասիկա հարցուց անոնց: Քանի որ ասիկա ճիշդ նոյն բանն էր, ինչ որ Յիսուսն ըսաւ Գործք առաքելոցի 1.4-ին մէջ: Ան իրականութեան մէջ ըսաւ. «Առանց ասոր քաղաքէն դուրս չերթա՛ք»: Ինչ ըրին Երուսաղէմի մէջ գտնուող առաքեալները, երբ իմացան որ Սամարիայի մէջ մարդիկ ընդունած էին Աստուծոյ Խօսքը: Անոնք ըսին. «Տղանէր, ճիշդ հիմա ոտքի՛ կեցէք ու գացէ՛ք հոն: Մենք պէտք է վստահ ըլլանք, որ ամէն բան ճիշդ կ'ընթանայ: Գացէ՛ք եւ այնպէս ըրէ՛ք, որ անոնք մկրտուին Սուրբ Հոգիով»: Երբ Պօղոսը կ'անցնէր Եփեսոսով, ան քանի մը աշակերտներու գտաւ, եւ առաջին բանը, որ հարցուց, հետեւեալն էր. «Ընդունեցի՞ք Սուրբ Հոգին, երբ հաւատացիք»:

**ԿԸ ԿԱՐԾԵՄ՝
ԱՍԻԿԱ ՈՐՈՇ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ
ՄԷՋ ՀԱԿԱՍԱԿԱՆ
ԹԵՄԱ Է՝ ՈՉ ԹԷ ԱՅՆ
ՊԱՏՃԱՌՈՎ, ՈՐ ԱՍՈՐ
ՄԱՍԻՆ ԳՐՈՒԱԾ ԶԷ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ
ՄԷՋ, ԱՅԼ՝ ՈՐ
ՍԱՏԱՆԱՆ Կ'ԱՏԷ ԱՅՍ
ԵՐԵՒՈՅԹԸ:**

Երբ անոնք կը պատասխանեն, որ չեն ալ լսած, որ Սուրբ Հոգի կայ, Պօղոսը կը հարցնէ, թէ ինչ մկրտութիւն ստացած են: Անոնք ալ, թէ՛ «Յովհաննէսի մկրտութիւնը»: Պօղոսը կը բացատրէ անոնց, որ Յովհաննէսի մկրտութիւնը ապաշխարութեան մկրտութիւն է, իսկ Յովհաննէսը կ'ըսէր, որ հաւատան Անոր, Որ իրմէ յետոյ

պէտք է գար: Այսինքն՝ պէտք է հաւատային Յիսուսին:

Ասիկա լսելէն յետոյ, անոնք մկրտուեցան Տէր Յիսուսի անունով (ջուրի մկրտութեամբ): Ատկէ յետոյ, երբ Պօղոսն իր ձեռքերը դրաւ անոնց վրայ, Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ եւ սկսան լեզուներով խօսիլ: Ուշադրութիւն դարձուցէք, երբ Պօղոսը հարցուց, ան կ'ենթադրէր, որ անոնք Յիսուսին կը հաւատային: Այդ իսկ պատճառով հարցուց. «Ընդունեցի՞ք Սուրբ Հոգին, երբ հաւատացիք»: Ան կը հասկնար, որ Սուրբ Հոգիով մկրտութիւնը բոլորովին կը տարբերի վերստին ծնած ըլլալէն:

Կը կարծեմ՝ ասիկա որոշ եկեղեցիներուն մէջ հակասական թեմա է՝ ոչ թէ այն պատճառով, որ ասոր մասին գրուած չէ Աստուածաշունչին մէջ, այլ՝ որ սատանան կ'ատէ այս երեւոյթը:

Եթէ ասիկա է զօրութիւնը, եթէ ասիկա է դուռը դէպի կեանքեր փոխող կարողութիւնը եւ այս զօրութեամբ աշխարհին վկայ կ'ըլլաք, ուրեմն դուք կը հակառակիք այս աշխարհի աստուծոյն, իսկ մենք գիտենք, թէ այդ հարցին մէջ որն է անոր կարծիքը: Սուրբ Հոգիով մկրտութիւնը մեզի զօրութեան պաշար կու տայ՝ Աստուծոյ զօրութիւնը, որպէսզի գործենք Յիսուսին գործերը Աստուծոյ փառաւորելու համար:

ԳԼՈՒԽ 6

ԱՐԴԵՕՔ ԲՈԼՈՐԸ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ Կ'ԱՂՕԹԵՆ

Թերեւս լսած ըլլաք, որ մարդիկ կ'ըսեն, որ իրենք լեզուներով չեն խօսիր եւ չեն հաւատար, որ բոլորը կրնան խօսիլ եւ պէտք է խօսին լեզուներով: Այնուհետեւ կը մէջքերեն Ա. Կորնթացիս 12.27-30 խօսքերը՝ իրենց կարծիքը հիմնաւորելու համար: Անոնք յատուկ կ'ընդգծեն, որ Պօղոսն անձամբ ըսած է, որ բոլորը չեն խօսիր լեզուներով: Ուրեմն, այս գրուածքն ուսումնասիրենք եւ տեսնենք՝ արդե՞ծք Պօղոսը ճիշդ ասիկա նկատի ունի:

«Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, եւ ձեզմէ իւրաքանչիւրը՝ անոր անդամները: Եկեղեցւոյ մէջ Աստուած առաջինը դրաւ առաքեալներուն, երկրորդը՝ մարգարէներուն, երրորդը՝ ուսուցիչներուն, յետոյ հրաշքներ գործողներուն, նաեւ անոնց, որոնք բժշկելու պարգեւներ ունին, որոնք կրնան օգնել ուրիշներուն, որոնք կառավարելու կարողութիւն ունին, եւ որոնք զանազան լեզուներով կը խօսին: Մի՞թէ բոլորը առաքեալներ են: Մի՞թէ բոլորը մարգարէներ են: Մի՞թէ բոլորը ուսուցիչներ են: Մի՞թէ բոլորը հրաշքներ կը գործեն: Մի՞թէ բոլորը բժշկութիւններու պարգեւներ

ունին: Միթե բոլորը լեզուներով կը խօսին: Միթե բոլորը կը թարգմանեն»:

Այս նամակին մէջ Պօղոսը Կորնթոսի եկեղեցիին կ'ըսէ, թէ ինչպէս պէտք է կարգ ու կանոն հաստատել, որպէսզի եկեղեցական հաւաքոյթներու ժամանակ հնարաւոր ըլլայ բոլորին ծառայութիւն մատուցել: Այդ ժամանակ անոնք կը փորձէին իրենց հոգեւոր պարգեւներով առջեւ երթալ իրարմէ եւ սիրուած քարոզիչներէն: Պօղոսը անոնց կը սորվեցնէ, թէ որպէս մարմին ինչպէս գործեն միաբանութեան եւ սիրոյ մէջ: Եկեք մեր ուշադրութիւնն աւելի կեդրոնացնենք Ա. Կորնթացիս 12.27,28-ի վրայ.

«Արդ, դուք Քրիստոսի մարմինն էք, եւ ձեզմէ իւրաքանչիւրը՝ անոր անդամները: Եկեղեցւոյ մէջ (խորհուրդ կու տամ ընդգծել այս բառը) Աստուած առաջինը կարգեց առաքեալներուն, երկրորդը՝ մարգարէներուն, երրորդը՝ ուսուցիչներուն, յետոյ հրաշքներ գործողներուն, նաեւ անոնց, որոնք բժշկելու պարգեւներ ունին, որոնք կրնան օգնել ուրիշներուն, որոնք կառավարելու կարողութիւն ունին, եւ որոնք զանազան լեզուներով կը խօսին»:

Պօղոսը հոս կը շարունակէ, բայց կը ցանկամ, որ կենանք, քանի որ կ'ուզեմ քիչ մը խօսիլ «եկեղեցւոյ մէջ» արտայայտութեան մասին: Ան հոս կը խօսի իրական եկեղեցական հաւաքոյթի մասին: Մենք ատիկա կրնանք կրկին ստուգել Ա. Կորնթացիս 14.18,19-ին մէջ, ուր Պօղոսը կրկին կ'օգտագործէ նոյն արտայայտութիւնը:

«Կը գոհանամ Աստուծմէ, որ բոլորէդ աւելի շաք լեզուներով կը խօսիմ: Բայց ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ կը

*կամենամ հինգ խօսք իմ միտքով խօսիլ, որ ուրիշներուն
ալ բան մը սորվեցնեմ, քան թէ բիրաւոր խօսքեր՝
լեզուներով»:*

– Ա. Կորնթացիս 14.18,19

Պօղոսը կ'ըսէ. «Կը գոհանամ Աստուծմէ, որ բոլորէդ աւելի
շարք լեզուներով կը խօսիմ, բայց եկեղեցիին մէջ...»: Կրկին
այս արտայայտութիւնը, եւ այս անգամ յստակ է, որ Պօղոսը կը
խօսի իրական եկեղեցական հաւաքոյթին եւ ոչ թէ Քրիստոսի
տիեզերական մարմինին մասին: Բոլորս ալ կը համաձայնինք,
որ Պօղոսը Քրիստոսի ամբողջական մարմինի՝ «եկեղեցւոյ»
մէկ մասն է: Անշուշտ, այդպէս է: Եւ ան կ'ըսէ, թէ ուրախ է, որ
Կորնթոսի բոլոր հաւատացեալներէն աւելի շատ լեզուներով
կը խօսի: Ասիկա կ'ըսէ, քանի որ այնտեղի եկեղեցին կը
հրճուէր լեզուներով խօսելու իր կարողութեան վրայ, եւ ամէն
կարգ խախտուած էր, ու շփոթութիւն յառաջացած էր:

Ան իրականութեան մէջ կ'ըսէ. «Հէյ, ժողովուրդ, ես բոլորէդ
աւելի շատ լեզուներով կը խօսիմ, բայց ատիկա ընելու
համար ձեւ մը կայ «եկեղեցիին մէջ», որ տեղի կ'ունենայ
կարգ ու կանոնով եւ շփոթութիւն չի յառաջացներ»: Յետոյ
կը շարունակէ, որ եկեղեցիին մէջ (հաւատացեալներու
հաւաքոյթին մէջ) աւելի լաւ է հասկացողութեամբ խօսի
(սովորական լեզուով), որպէսզի ուրիշներն ալ շինուին:

Եկեղեցական ծառայութեան ընթացքին որոշ մարդիկ
կ'օգտագործեն լեզուներու պարգելը եւ թարգմանութիւնը,
ինչպէս որ գրուած է Ա. Կորնթացիս 12-րդ գլուխին մէջ,
բայց բոլորը պէտք չէ օգտագործեն այդ պարգելը ամբողջ
մարմինին խրատելու եւ ուսուցանելու համար: Պօղոսը նոյնիսկ
սահմանաչափ կը դնէ, թէ քանի մարդ պէտք է լեզուներով
խօսի եւ թարգմանէ ծառայութեան ժամանակ, եւ ատիկա
առաւելագոյնը պէտք է երեք հոգի ըլլայ:

«Եթէ մէկը լեզուով խօսի, թող երկու կամ առաւելագոյնը երեք հոգի խօսին. մէկը միսէն յետոյ, եւ մէկը թող թարգմանէ» (Ա. Կորնթացիս 14.27):

Ուրեմն, երբ Պօղոսը կ'ըսէ, որ բոլորը լեզուներով չեն խօսիր, ան նկատի ունի «եկեղեցւոյ մէջ» կամ եկեղեցական հաւաքոյթի ժամանակ:

Դուք պէտք է հասկնաք, որ ամէն հաւատացեալ կրնայ ունենալ լեզուներով աղօթելու կարողութիւնը, բայց ամէն մէկն այդ օծութիւնը չունի, որ եկեղեցական հաւաքոյթի ժամանակ լեզուներու եւ թարգմանութեան պարգեւով առաջնորդէ: Եթէ դուք իսկապէս ունիք ծառայութեան ընթացքին այդ պարգեւով առաջնորդելու օծութիւնը, Աստուածաշունչը կ'ըսէ՝ աղօթեցէք, որ թարգմանէք ալ:

«Լեզուով խօսողը, թող աղօթէ, որ թարգմանէ ալ» (Ա. Կորնթացիս 14.13):

Կը կարծեմ, որ լեզուներով խօսող անձը լաւագոյն թեկնածուն է ծառայութեան ընթացքին այն թարգմանելու համար, քանի որ պատգամն արդէն դուրս կը յորդի անորմէ:

Իսկ ինչո՞ւ պէտք է աղօթել լեզուներով: Սատանան կ'ատէ այն հաւատացեալներուն, որոնք գիտեն աղօթել Հոգիով (լեզուներով), եւ կը ցանկամ, որ յստակ հասկնաք, թէ ինչո՞ւ:

Երբ Պօղոսը կ'ըսէ, որ ուրախ է, թէ բոլորէն շատ անլի կ'աղօթէ լեզուներով, ուրեմն ինչ որ պատճառ մը կար: Պօղոսը Ա. Կորնթացիս 14-րդ գլուխին մէջ ակնարկ մը կ'ընէ.

«Լեզուով խօսողը իր անձը կը շինէ, իսկ մարգարէացողը եկեղեցին կը շինէ» (Ա. Կորնթացիս 14.4):

Եկէք անլի խորունկ երթանք: Ինչ կը նշանակէ «շինել»: «Շինել» բառը կը նշանակէ «խրատել կամ օգուտ տալ

բարոյապէս կամ հոգեւորապէս. բարձրացնել, ոգեւորել»²:

Խոստովանինք, որ յաճախ կարիքը կ'ունենանք ուղղորդման, թէ որ կողմ երթանք, ինչպէս հասկնանք իրավիճակը, կամ՝ ինչպէս ճիշդ որոշում կայացնենք: Լեզուներով աղօթքը կրնայ օգնել ձեզի այս ամէնուն մէջ՝ ձեր անձը շինելու կամ ձեր կեանքին մէջ ուղղորդելու հարցին մէջ: Պօղոսը ասոր մասին ասելի յստակ կը խօսի Հռովմայեցիս 8.26,27-ին մէջ:

Նոյն ձեւով ալ Հոգին կ'օգնէ մեզի մեր տկարութիւններուն ժամանակ: Մենք չենք գիտեր, թէ ինչ բանի համար պիտի աղօթենք, բայց Ինքը՝ Հոգին, կը բարեխօսէ անբարբառ հառաչանքով, որը բառերը չեն կրնար արտայայտել: Եւ սրտերը Քննողը գիտէ, թէ ինչ է Հոգիին միտքը, քանի որ Հոգին կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ վայելած ձեւով:

**«ՆՈՅՆ ՁԵՒՈՎ ԱԼ
ՀՈԳԻՆ Կ'ՕԳՆԷ
ՄԵԶԻ ՄԵՐ
ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ
ԺԱՄԱՆԱԿ: ՄԵՆՔ
ՉԵՆՔ ԳԻՏԵՐ, ԹԷ ԻՆՉ
ԲԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԻՏԻ
ԱՂՈԹԵՆՔ...»:**

– ՀՈՌՎՄԱՅԵՅԻՍ 8.26Ա

Պօղոսը կ'ըսէ, որ մենք խնդիրներ ու տկարութիւններ ունինք. «Մենք չենք գիտեր, թէ ինչ բանի համար պիտի աղօթենք»: Թերեւս հարցում ծագի, թէ ինչու Պօղոսը ասոր տկարութիւն կ'անուանէ: Կարդալով Ա. Յովհաննէս 5.14,15 խօսքերը՝ կը հասկնանք.

«Եւ ասիկա է այն վստահութիւնը, որ ունինք Աստուծոյ մօտենալու համար, որ եթէ Անոր կամքին պէս ինչ որ բան մը խնդրենք, Ան կը լսէ մեզի: Եւ եթէ գիտենք, որ կը լսէ մեզի, ինչ որ ալ խնդրենք, գիտենք, որ պիտի առնենք այն, ինչ որ խնդրեցինք Անորմէ»:

Առանց Աստուծոյ կամքը գիտնալու կամ առանց վստահութիւն ունենալու, մենք չենք կրնար հաւատքով գործել (Աստուծոյ հետ համաձայնութեան մէջ ըլլալ), իսկ եթէ չենք կրնար հաւատքով գործել, ուրեմն տկար իրավիճակի մէջ ենք, քանի որ առանց հաւատքի չենք կրնար օգտուիլ Աստուծոյ շնորհքէն կամ զօրութենէն: Այսպիսով, Պօղոսը կ'ըսէ, որ եթէ չես գիտեր, թէ ինչպէս աղօթես, ուրեմն թոյլ իրավիճակի մէջ ես, որուն կրնայ օգնել լեզուներով աղօթքը: Այս գրուածքը նորէն կարդանք.

«Նոյն ձեւով ալ Հոգին կ'օգնէ մեզի մեր տկարութիւններուն ժամանակ: Մենք չենք գիտեր, թէ ինչ բանի համար պիտի աղօթենք...»:

– Հոովմայեցիս 8.26ա

Մեր տկարութիւնն այն է, որ մենք չենք գիտեր, թէ ինչպէս պէտք է աղօթել: Աստուածաշունչին մէջ գրուած չէ, թէ որուն հետ կրնաս ամուսնանալ, ուր կրնաս ապրիլ կամ որ աշխատանքին անցնիլ: Իսկ եթէ չենք գիտեր, թէ որն է Աստուծոյ կամքը տուեալ իրավիճակին մէջ, ուրեմն չենք կրնար վստահ ըլլալ ու հաւատալ, որ Աստուծոյ պիտի առնենք այն, ինչին համար, որ կ'աղօթենք: Կը կրկնեմ, ասիկա ահռելի տկարութիւն մըն է: Մենք չենք կրնար վստահութիւն ունենալ առ Աստուած, եթէ չենք գիտեր Անոր կամքը: Բայց միջոց մը կայ, որուն միջոցով կրնանք կեանքի որեւէ իրավիճակի մէջ զանազանել Աստուծոյ կամքը: Կայ ձեւ մը, որուն միջոցով կրնանք համոզուած ըլլալ, թէ որն է Աստուծոյ կամքը, որուն համեմատ ալ կրնանք գործել հաւատքով ու վստահութեամբ:

Պօղոսը ճիշդ այս բանին մասին կը խօսի: Շինել ըսելով՝ ան նկատի ունի օգտուելու հնարաւորութիւն ունենալ այդպիսի գիտելիքէ. գիտելիք, որ կու գայ Աստուծոյ Հոգիին միջոցով:

Իսկ մենք Սուրբ Հոգիէն կրնանք լսել Հոգիով աղօթքի կամ լեզուներով աղօթքի միջոցով: Եթէ հետեւինք Պօղոսի խորհուրդին, որը գրուած է Հռովմայեցիս 8.26,27 խօսքերուն մէջ, ապա կը տեսնենք հետեւեալը.

«Բայց Ինքը՝ Հոգին, կը բարեխօսէ անբարբառ հառաչանքով, որը բառերը չեն կրնար արտայայտել: Եւ սրտերը Քննողը գիտէ, թէ ինչ է Հոգիին միտքը, քանի որ Հոգին կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ վայելած ձեւով»:

Հոս Պօղոսը չ'ըսեր, որ երբ աղօթենք Հոգիով, կը հառաչենք, այլ՝ կը մէջբերէ նախորդ խօսքը.

«Գիտենք, որ բոլոր սպեղծուածները մինչեւ հիմա ծննդաբերութեան ցաւի պէս կը հառաչեն: Եւ ոչ միայն անոնք, այլ մենք ալ, որ Հոգիի առաջին պրոլոն ունինք, մենք ալ մեր անձերուն մէջ կը հառաչենք՝ որդեգրութեանը սպասելով, այսինքն՝ մեր մարմինի ազատութեանը: Որովհետեւ այս յոյսով փրկուեցանք. բայց յոյսը, որ կը տեսնուի, յոյս չէ: Ո՞վ յոյս կը տա՞ծէ բանի մը համար, որն արդէն ունի: Բայց եթէ յոյս ունինք բանի մը համար, որ դեռ չունինք, ապա համբերութեամբ կը սպասենք:

Նոյն ձեւով ալ Հոգին կ'օգնէ մեզի մեր տկարութիւններուն ժամանակ: Մենք չենք գիտեր, թէ ինչ բանի համար պիտի աղօթենք, բայց Ինքը՝ Հոգին, կը բարեխօսէ անբարբառ հառաչանքով, որը բառերը չեն կրնար արտայայտել: Եւ սրտերը Քննողը գիտէ, թէ ինչ է Հոգիին միտքը, քանի որ Հոգին կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ վայելած ձեւով»:

– Հռովմայեցիս 8.22-27

Պողոսը հոս կ'օգտագործէ հառաչել բառը, որպէս նկարագրում կամ նմանեցում այն բանին, թէ ինչ կը կատարուի մեր ներսը: Մենք կը հառաչենք ներսը՝ մեր անձերուն մէջ, ինչպէս ծննդաբերող կինը: Այսինքն, մեր ներսը կը ծնինք բան մը, որն Աստուծոյ Հոգիէն է, նոր բան մը կը ստանանք, որը երբեք նախկինին գոյութիւն չունէր, կամ կ'ըսես բան մը, որը քեզմէ չէ:

Այսպիսով, մենք ծնունդ կու տանք ինչ-որ նոր բանի մը, այն գիտութեանը, որը չէինք գիտեր: Հոգիով աղօթելու միջոցով մեր հոգիներէն ինչ որ նոր բան մը կը ծնի: Աստուածաշունչը կ'ըսէ, որ Աստուծոյ Հոգին Աստուծոյ կատարեալ կամքը կ'աղօթէ մեր հոգիներուն միջոցով որեւէ իրավիճակի մէջ: Այն կ'ըսէ, որ Աստուած Ինքը մեզի համար կ'աղօթէ մեր մարդկային հոգիին միջոցով այնպիսի հառաչանքներով, որոնք հնարաւոր չէ արտաբերել (արտասանել հասկնալի բառերով):

Այսպիսով, հոս ի՞նչ կը տեսնենք: Կը տեսնենք, որ Սուրբ Հոգին մեզի համար կը բարեխօսէ հառաչանքներով (ծնունդ կու տայ)՝ օգտագործելով ոչ արտաբերելի բառեր. բառեր (կամ լեզուներ), որոնք չենք հասկնար: Եւ Ան, որ կը քննէ մեր սրտերը, գիտէ Հոգիին միտքը, քանի որ Հոգին (Աստուծոյ Հոգին) կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ կատարեալ կամքին համեմատ: Աստուծոյ Հոգին կ'աղօթէ Աստուծոյ կատարեալ կամքը որեւէ իրավիճակի մէջ՝ քու հոգիին միջոցով, երբ դուն լեզուներով կ'աղօթես:

Այսպիսով, մենք տկար ենք, եթէ չենք գիտեր Աստուծոյ կամքը: Մենք չենք կրնար հաւատք գործածել, եթէ չենք գիտեր, թէ որն է Աստուծոյ կամքը: Պողոսը կ'ըսէ, որ եթէ մենք կ'աղօթենք Հոգիով, որեւէ իրավիճակի մէջ անձամբ Աստուծոյ Հոգին Իր կատարեալ կամքը կ'աղօթէ մեր միջոցով:

Երբ Աստուծոյ Հոգին մեր միջոցով լեզուներով կ'աղօթէ, այդ պարագային ինչպէ՛ս այն կը շինէ ու կը նորոգէ մեզի, եթէ չենք գիտեր, թէ ինչ կ'աղօթենք: Պօղոսին պատասխանը ուրիշ նամակի մը մէջ է.

«Աչք չդեսաւ եւ ականջ չլսեց եւ ոչ մէկ միտք պարկերացուց այն, ինչ որ պարտաստեց Աստուած Իրեն սիրողներուն համար: Բայց Աստուած մեզի յայտնեց այն՝ Իր Հոգիով:

Որովհետեւ Հոգին ամէն բան կը քննէ, նոյնիսկ Աստուծոյ խորին բաները: Որովհետեւ մարդոցմէ ղ՛վ գիտէ մարդուն միտքերը, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ անոր մէջ է: Այդպէս ալ Աստուծոյ միտքերը ոչ ոք գիտէ, այլ՝ միայն Աստուծոյ Հոգին: Եւ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, այլ այն Հոգին, որն Աստուծմէ է, որ հասկնանք, թէ ինչը Աստուած մեզի ձրի փութեց է: Եւ ասիկա մենք կը խօսինք, ոչ թէ մարդկային իմաստութեամբ մեզի սորվեցուցած խօսքերով, այլ Սուրբ Հոգիին սորվեցուցած խօսքերով՝ արտայայտելով հոգեւոր ճշմարտութիւնները հոգեւոր բառերով»:

– Ա. Կորնթացիս 2.9-13

Նախեւառաջ, Պօղոսը կ'ըսէ, որ այժմ մենք այնպիսի բաներէն օգտուելու հնարաւորութիւն ունինք, որուն մասին ղ՛չ լսած ենք, ղ՛չ ալ տեսած կամ մտածած ենք, ինչպէս արդէն ըսի: Այնուհետեւ ան կը շարունակէ, թէ ինչպէս այն կը գործէ.

«Որովհետեւ մարդոցմէ ղ՛վ գիտէ մարդուն միտքերը, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ անոր մէջ է: Այդպէս ալ Աստուծոյ միտքերը ոչ ոք գիտէ, այլ՝ միայն Աստուծոյ Հոգին»:

– Ա. Կորնթացիս 2.11

Նախքան Սուրբ գիրքի այս հատուածին անդրադառնալը, նախեառաջ, պէտք է ունենանք այն հիմնաւոր գիտելիքը, թէ ինչէն կազմուած ենք: Համաձայն Ա. Թեսաղոնիկեցիս 5.23-ի՝ մենք երեք մասէ բաղկացած ենք՝ հոգի, շունչ եւ մարմին:

«Եւ Ինքը՝ խաղաղութեան Աստուածը, ձեզի ամբողջութեամբ սրբացնէ: Եւ ձեր ամբողջ հոգին, շունչն ու մարմինը անարապ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալը»:

– Ա. Թեսաղոնիկեցիս 5.23

Մեր հոգին՝ Աստուծոյ մասնիկն է մեր մէջ, մեր շունչը՝ մեր միտքն է, կամքն ու զգացումները, իսկ մարմինը՝ մեր մարմինն է: Պօղոսը կ'ըսէ, որ մեր շունչն ու հոգին այնքան կապուած են, որ մեր հոգին գիտէ, թէ ինչ միտքեր ունինք:

Հակառակը նոյնպէս ճիշդ է: Մեր միտքերը կրնան միտք մը առնել մեր հոգիէն: Պօղոսը կ'ըսէ, որ Աստուծոյ Հոգին գիտէ Աստուծոյ միտքերը. մենք Աստուծոյ Հոգին ստացած ենք, որ իմանանք թէ Աստուած ինչը ձրի տուած է մեզի:

«Եւ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, այլ այն Հոգին, որն Աստուծմէ է, որ հասկնանք, թէ Աստուած ինչը ձրի տուած է մեզի: Եւ ասիկա մենք կը խօսինք, ոչ թէ մարդկային իմաստութեամբ մեզի տրվեցուցած խօսքերով, այլ Սուրբ Հոգիին տրվեցուցած խօսքերով՝ արդայայտելով հոգեւոր ճշմարտութիւններ հոգեւոր բառերով»:

– Ա. Կորնթացիս 2.12,13

Պօղոսը կը շարունակէ եւ կ'ըսէ, որ այս անձանօթ գիտութիւնը, որը մենք չէինք գիտեր, բայց մեզի յայտնուեցաւ Աստուծոյ Հոգիին միջոցով, ճիշդ այն է, ինչ որ կը խօսինք բառերով, որոնք մեզի Սուրբ Հոգին կը տրվեցնէ:

Ասոնք այն բառերը չեն, որոնք կը խօսինք մեր բնական հասկացողութեամբ կամ լեզուով, այլ հոգեւոր բառեր են, քանի որ ան ճիշդ այս սահմանումն օգտագործեց նկարագրելու համար Ա. Կորնթացիս 14.14,15-ին մէջ ըսուած լեզուներով խօսիլը:

«Քանի որ եթէ ես աղօթեմ օտար լեզուով, իմ հոգին կ'աղօթէ, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն, ինչ ընեմ. կ'աղօթեմ հոգիով, բայց կ'աղօթեմ նաեւ միտքով: Կ'երգեմ հոգիով, բայց կ'երգեմ նաեւ միտքով»:

Պօղոսը հոս կ'օգտագործէ «հոգիով աղօթել» արտայայտութիւնը, քանի որ ասիկա կը վերաբերի լեզուներով աղօթքին: Մենք կրնանք ենթադրել, որ Պօղոսը նկատի ունի ճիշդ այն նոյն լեզուներով խօսիլը, երբ կ'ըսէ, որ մենք կը խօսինք բառեր, որ Հոգին մեզի կը սորվեցնէ:

«Որովհետեւ լեզուներով խօսողը մարդոց հետ չի խօսիր, այլ՝ Աստուծոյ: Իսկապէս, անոր ոչ ոք կը հասկնայ. ան իր հոգիով խորհուրդներ կ'արտաբերէ»:

– Ա. Կորնթացիս 14.2

Հոս Պօղոսը դարձեալ կը խօսի հոգիի մը մասին, որը կարողութիւն ունի խօսելու բաներ, որ երբեք չենք տեսած, չենք լսած եւ չենք իմացած, կամ, ինչպէս Պօղոսը կ'ըսէ, «խորհուրդներ» կը խօսինք: Ուշադրութիւն դարձուցէք նաեւ, որ Պօղոսը կ'ըսէ, որ խորհուրդներ կ'ըսենք մեր հոգիով եւ ոչ թէ Աստուծոյ

**ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ
ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱՂՏՆԻ
ՁԷՆՔՆ Է: ԱՅՆ ԿՐՆԱՅ
ՆԵՐԲԵՌՆԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ
ԿԱՄՔԸ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ
ՄԷՋ՝ ԱՌԱՆՅ ՍԱՏԱՆԱՅԻ
ԻՄԱՅՈՒԹԵԱՆ:**

Հոգիով: Հնարաւոր է արդեօք, որ բան մը մտնէ մեր հոգիին մէջ, որը մենք չենք գիտեր: Այս հարցումին պատասխանը դիւրին է գտնել. Աստուծոյ Հոգիին միջոցով, Որ հիմա մէկ է մեր հոգիին հետ:

«Որովհետեւ մարդոցմէ ղ՛վ գիտէ մարդուն միտքերը, եթէ ոչ՝ մարդու հոգին, որ անոր մէջ է: Այդպէս ալ Աստուծոյ միտքերը ոչ ոք գիտէ, այլ՝ միայն Աստուծոյ Հոգին»:

– Ա. Կորնթացիս 2.11

Երբ մեր հոգին կ'ընկալէ Աստուծոյ միտքերը, մեր միտքն ալ կը սկսի ընկալել ատոնք: Այդ երեւոյթին մենք կ'անուանենք «յայտնութիւն ստանալ», «լուսաւորուիլ», կամ, ինչպէս Պօղոսը կ'ըսէ, «շինուիլ», «նորոգուիլ»: Հիմա արդէն գիտէք, թէ ինչու Պօղոսը կ'ըսէր, որ ուրախ է, որ բոլորէն շատ կ'աղօթէ. ան ամէն իրավիճակի մէջ կ'օգտուէր Աստուծոյ կամքը իմանալու հնարաւորութենէն:

Այդ իսկ պատճառով, Պօղոսը Ա.Կորնթացիս 2.15,16-ին մէջ կը գրէ.

«Բայց հոգեւոր մարդը ամէն բան կը քննէ, եւ ինքը ոչ մէկուն կողմէն կը քննուի: Որովհետեւ ղ՛վ իմացած է Տիրոջ միտքը, որ բան մը սորվեցնէ անոր: Բայց մենք Քրիստոսի միտքն ունինք»:

Մենք սահմանափակուած չենք միայն մարդկային պարզ դատողութեամբ, այլ կրնանք ամէն բանի շուրջ դատողութիւններ ընել Աստուծոյ օգնութեամբ: Ասիկա հիասքանչ նորութիւն է: Մենք ունինք այդ կարողութիւնը՝ աղօթելով Հոգիով (լեզուներով), որպէսզի կարենանք խորհուրդներ խորհիլ, բաներ, որ չենք գիտեր: Եւ այդ

գիտութեամբ կրնանք ճիշդ դատողութիւններ ընել կամ ամէն հարցի մէջ ճիշդ որոշումներ կայացնել:

Սուրբ Հոգիով մկրտութիւնը Աստուծոյ գաղտնի զէնքն է: Այն կրնայ ներբեռնել Աստուծոյ կամքը այս աշխարհի մէջ՝ առանց սատանայի իմացութեան: Ի դէպ, Հոգիով աղօթելու մասին նշուած է Եփեսացիս 6.18-ին մէջ՝ մեր հոգեւոր սպառազինութեան շարքին մէջ.

«Ամէն աղօթքով եւ խնդրածքով աղօթք ըրէք Հոգիով բոլոր հանգամանքներու մէջ»:

Հոգիով աղօթելը հնարաւորութիւն կու տայ բացայայտելու այն ռազմավարական հնարքները, որոնց միջոցով կրնանք խուսափիլ թշնամիէն, կամ իւրայատուկ ու արտասովոր գործելակերպով յառաջանանք:

Հոգիով աղօթքի կիրառական օգուտն այն է, որ մենք կրնանք կեանքին մէջ ճիշդ որոշումներ կայացնել՝ օգտուելով Քրիստոսի միտքէն: Կը կարծեմ, կը համաձայնիք, որ ասիկա շատ կարեւոր բան է: Ինծի համար այդպէս եղած է:

Որպէս օրինակ, կը յիշեմ, երբ անգամ մը պէտք է մեծ որոշում կայացնէի իմ առեւտուրին համար: Վաճառքի այն գործակալը, որ իմ ընկերութեան արտադրանքի վաճառքով զբաղող գործակալութեան ներկայացուցիչն էր, կը սպառնար դատի տալ իմ ընկերութեանը, եթէ ես կրկին չհամազործակցիի իր նոր գործակալութեան միջոցով: Ան կը ցանկար, որ շարունակէի համազործակցիլ անոր հետ, այն պարագային, երբ ան դուրս ելած էր այն գործակալութենէն, որուն հետ մշտապէս աշխատած եմ: Ինծի հաճելի կը թուէր իմ վաճառքի գործակալը, բայց կը զգայի, որ ես ատելի հաւատարիմ եմ այն ընկերութեանը, ուր ան կ'աշխատէր, քան՝ անձամբ իրեն:

Սակայն, իրականության մեջ, իր ներկայիս ընկերությունն ըսած էր, որ կրնայ բոլոր իր յաճախորդներուն տեղափոխել իր նոր ընկերություն: Ուրեմն, ես որեւէ վատ բան ըրած չէի ըլլար, եթէ անոր հետ երթայի, բայց միեւնոյն ժամանակ, լաւ չէի զգար, որ կը ստիպէին ինծի երթալու իրեն հետ: Անոր ներկայիս ընկերությունն ինծի հետ մշտապէս շատ արդար վարուած էր:

Այդ մարդը կը սպառնար դատական գործ յարուցել, քանի որ քանի մը ամիս առաջ ան տեղեկացուցած էր, որ նոր ընկերություն կը տեղափոխուի, եւ հարցուցած էր, թէ արդեօք կ'երթամ իրեն հետ: Առանց երկար-բարակ մտածելու՝ համաձայնած էի: Ան ըսաւ, որ իր հաշուարկին մէջ եղած է նաեւ իմ ընկերութիւնը, երբ ան կայացուցած է ընկերութիւնը փոխելու իր որոշումը: Բայց վերջին օրը, երբ մօտեցաւ, ինչ-որ անհանգիստ զգացողութիւն պատած էր ինծի: Ես քանի օր Հոգիով կ'աղօթէի, բայց դեռ չէի լսեր այն պատասխանը, որուն կարիքն ունէի:

Տրենտան եւ ես յաճախ մեր երեխաներուն կը տանինք զուարճանքներու պուրակ՝ Սետար Փոյնթ, որը մեր տունէն քանի մը ժամուան ճամբայ է: Իրականության մէջ, Միացեալ Նահանգներու ամենամեծ բլուրներն այս այգիին մէջն են, եւ սովորաբար, տարին մէկ-երկու անգամ կ'երթանք հոն: Ուրբաթ երեկոյ էր, իսկ Երկուշաբթի առաւօտեան արդէն պատասխան պէտք է տայի: Կը մտածէի, որ աւելի լաւ կ'ըլլայ, որ մինչեւ Երկուշաբթի առաւօտ միտքս ուրիշ բանով մը զբաղեցնեմ, եւ որոշեցի այդ երեկոյ Տրենտային հետ երթալ այդ զուարճանքներու այգին: Երբ կանգնած կը սպասէի իմ կարգին ու չէի ալ մտածեր, թէ մինչ Երկուշաբթի առաւօտ ինչ որոշում պէտք է կայացնել, ես յստակ հասկցայ, թէ ինչ պէտք է ընեմ: Ատիկա լոյսի պէս յստակ էր: Սուրբ Հոգին խօսեցաւ

հետո, եւ ես մնացի իմ մայր ընկերութեան հետ: Վաճառքի գործակալի նոր ընկերութիւնը քանի մը ամիսէն ինչ-ինչ պատճառներով փակուեցաւ:

Այսպիսով, յաջողութեան ամէնէն մեծ բանալին աղօթքն է: Յաճախ աղօթեցէք Հոգիով, որ ձեզի հետ ամէն բան լաւ ընթանայ, որ ճիշդ որոշումներ կայացնէք, ինչպէս նաեւ հասկնաք յաղթելու համար ձեզի անհրաժեշտ մարտավարութեան խորհուրդները:

«Անդադար աղօթք ըրէք» (Ա. Թեսաղոնիկեցիս 5.17):

ԳԼՈՒԽ 7

ԳԱՆՁԵՐՈՒ ՄՆՏՈՒԿԸ

Կը յիշեմ այն օրը, երբ առաջին անգամ եկեղեցւոյ մէջ հանդիպեցայ Տէնին: Ան կանգնած էր վերջին շարքի մէջ, իմ քեռիիս աղջկան՝ Ճենիֆըրին հետ: Յետոյ պարզեցի, որ անոնք կը ժամադրուէին: Բայց Տէնին դէմքի արտայայտութենէն յստակ կ'երեւէր, որ ինչ որ բան մը այնպէս չէր ընթանար: Ան կարծես անյարմարաւտութիւն կը զգար: Մեր եկեղեցին քիչ մը կը տարբերէր այն յարանուանական եկեղեցիէն, ուր ան կը յաճախէր: Սակայն, լսելով Թագաւորութեան մասին, ան խաղաղեցաւ եւ, ի վերջոյ, ամուսնացաւ քեռիիս աղջկան հետ:

Այդ ժամանակ Տէնը Կեդրոնական Օհայոյի մէջ 600 հեկտար հող կը մշակէր, եւ անոր գործերը լաւ չէին ընթանար: Իրականութեան մէջ, ան շահոյթ չէր ունենար, եւ ատիկա կը մտահոգէր անոր: Բայց շարունակ լսելով Թագաւորութեան մասին, նաեւ՝ թէ ինչպէս կրնայ Սուրբ Հոգին օգնել, օր մը կու գայ Ճենիֆըրին քով եւ կ'ըսէ. «Ես կ'ուզեմ կրկնապատկել մեր գոհաբերութիւնը»: Ճենիֆըրը կը զարմանայ, բայց, միեւնոյն ժամանակ, շատ կ'ուրախանայ: Անոնք ճիշդ այդպէս ալ կ'ընեն:

Այդ տարի ճիշդ այդ 600 հեկտարէն 128 տոկոսով աւելի շատ բերք ստացուեցաւ, քան նախորդ տարի: Բերքն այնքան առատ էր, որ անոնք կրցան կանխիկով ինքնաշարժ գնել, եւս

մէկ ագարակ, այսինքն, ւաւելի շատ հեկտար հող, ուր կրնային ցանել նաեւ յաջորդ տարի: Տէնն այնքան ոգեւորուած էր: Ան ըսաւ, որ իր հօրմէն տասը տարի կը պահանջուէր այդ նոր հողակտորը գնելու համար, իսկ ան ատոր համար կանխիկով վճարած էր: Ես հարցուցի, թէ ինչպէս ատիկա պատահեցաւ, եւ խնդրեցի, որ պատմէ այդ մասին:

Այն բանէն ետք, երբ Տէնն ու Ճենիֆըրը կ'որոշեն կրկնապատկել իրենց զոհաբերութիւնը, անոնք կ'աղօթեն եւ կը խնդրեն Աստուծմէ, որ ցոյց տայ, թէ ինչ ընեն: Տէնը կը պատմէ, որ օր մը, երբ աչքէ կ'անցընէ ամէնօրեայ փոստային թերթերը, որոնք մեծ մասամբ գիւղատնտեսներուն ուղղուած մարքեթինկային գովազդներ էին, աղբաման կը նետէ քարտ մը, ու յանկարծ մտահոգութիւն զգալով՝ ետ կ'առնէ: Այդ քարտին վրայ որեւէ արտասովոր բան չկար, գիւղատնտեսական սարքաւորումի գովազդ մըն էր, ուր ագարակատէրերուն կը հրաւիրէին հանդիպումի՝ խօսելու այդ սարքաւորումին մասին:

Տէնին արտասովոր զգացողութիւն մը կը համակէ, որ անպայման պէտք է մասնակցի այդ հաւաքոյթին: Եւ ահա, հաւաքոյթին մասնակցելէն ետք ան ձեռք կը բերէ այդ գործիքը: Այն նորոյթ էր շուկային մէջ, որուն միջոցով սերմը կը դրուէր հողին մէջ՝ սկզբնապէս նախապատրաստելով հողը: Ան կը փորձէր գիտական հիմնաւորումներով բացատրել, թէ ինչպէս այն կ'անդրադառնար բերքատուութեան վրայ, բայց խօսքի կէսէն զգաց, որ գլուխ չեմ հաներ իր բացատրութիւններէն: Բայց կարելորն այն էր, որ ինքը գլուխ կը հանէր: Տէնն ինծի ըսաւ, որ այդ ժամանակ ան Օհայոյի մէջ երկրորդ ագարակատէրն էր, որ գնած էր այդ գործիքը: Այդ փոքրիկ գործիքն ըրած էր իր գործը, եւ ահա, վերջաւորութեան ստացած էր 128 տոկոսով ւաւելի բարձր բերք: Ան ւաւելի շատ հողատարածք ձեռք բերաւ: Այսօր անոր հողատարածքները հազարաւոր հեկտարներու կը հասնին: Այժմ ան շատ

պատմություններ ունի, թե՛ ինչպէս Սուրբ Հոգին օգնած է իրեն որոշում կայացնելու, իսկ ասորի շնորհիւ այնպիսի առաջընթաց ունեցած է, որ երբեք չէր կրնար երազել:

Այսպիսով, ինչպէ՞ս Տէնը կրցաւ իր անյաջողակ գիւղատնտեսութենէն ստանալ մեծամեծ շահոյթներ: Ան հետեւեցաւ իր Խորհրդականին՝ Սուրբ Հոգիի խորհուրդներուն: Յաւալի է, երբ շատ քրիստոնեաներ, լսելով այս պատմութիւնը, նոյնիսկ գաղափար չունին, թէ աստիկա ինչպէս պատահած է: Եւ այդ էր պատճառը, որ կարելոր համարեցի գրել այս գիրքը: Լսելով այս պատմութիւնը՝ շատ քրիստոնեաներ կը գովերգեն Աստուծոյ մեծափառութիւնը, կ'ընդունին, որ Աստուած միջամտած է, բայց չեն գիտեր ինչպէս վերարտադրել աստիկա իրենց կեանքին մէջ: Կ'ըլլան քրիստոնեաներ, որոնք կը հիասթափին Աստուծմէ, եւ յաճախ կը լսեմ, որ իրենց խնդիրներուն համար կը մեղադրեն Անոր. «Ո՛ր է Աստուած»: «Չեմ գիտեր, թէ ինչու Աստուած չօգնեց ինծի»:

Յոյսով եմ՝ դուք արդէն հասկցած էք, որ Թագաւորութիւնը օրէնքներով կը գործէ, եւ ոչ թէ բարեհաճութեամբ: Աստուած չ'ընտրեր, թէ որուն օրհնէ եւ որուն չօրհնէ: Տէնը Աստուծոյ ընտրեալը չէր եւ Աստուծոյ առջեւ ձեզմէ ոչ մէկէն ասելի էր: Դուք Թագաւորութեան մէջ միեւնոյն իրաւական հիմքերը ունիք, ինչ որ Տէնն ունի: Ինչպէս ռեւէ մարդ իրաւունք ունի սերմ ցանելու եւ բերք աճեցնելու, Աստուծոյ Թագաւորութիւնն ալ կը գործէ անոնց համար, որոնք գիտեն, թէ ինչպէս պէտք է օգտագործել Թագաւորութեան օրէնքները: Դուք Աստուծոյ ընտանիքի մէկ անդամն էք, Անոր հօգի Թագաւորութեան քաղաքացին եւ կրնաք օգտուիլ Անոր ունեցածէն:

Հիմա թոյլ տուէք խօսիլ, թէ ինչու Աստուծոյ ժողովուրդէն շատերը կեանքի մէջ յաջողութիւն չունին. անոնք չեն գիտեր,

թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը, եւ թէ ինչպէս կրնան լսել Սուրբ Հոգիին:

*«Այսպէս կ'ըսէ Տէրը, քու Փրկիչը, Իսրայէլի Սուրբը.
«Ես եմ քու Տէր Աստուածը, որ քեզի կը սորվեցնէ
օգուտ քաղել, որ քեզի կ'առաջնորդէ քու երթալու
ճանապարհին մէջ»»:*

– Եսայիա 48.17

Տէնին յաջողութիւնը իր մտածած ծրագիրին արդիւնքը չէր: Տէնը կրցած էր զանազանել Սուրբ Հոգիի իւրօրինակ մարտավարութիւնը, քանի որ կիրառած էր Աստուծոյ Թագաւորութեան օրէնքները: Տէնն ու կինը ականջ դրած էին Սուրբ Հոգիին ըսածներուն, որ օգնած էր անոնց ծրագիր կազմելու: Կ'ուզեմ, որ ասիկա գրի առնէք:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԾՐԱԳԻՐ ՈՒՆԻ

Ծրագիր ունենալէն աւելի հզօր բան չկայ: Առանց ծրագրի պատկերը երազանք կը մնայ, բայց ծրագիրով երազանքը կարելի է իրագործել:

Ընտանիք մը կրնայ երազել մեծ տուն ունենալու մասին՝ շատ ննջարաններով, ընդարձակ հիւրասենեակով, ժամանակակից խոհանոցով եւ գեղեցիկ ձեւաւորումով: Բայց ատիկա միայն երազանքի պատկեր է: Այդ նկարը պէտք է գծագրել եւ կազմել մաքեթը՝ նախագիծը: Հազիւ որ շինարարը ձեռքին տակ նախագիծը ունենայ, ան կրնայ սկսիլ շինարարութիւնը: Ինչ-ինչ պատճառներով քրիստոնեաներու մեծ մասին բնորոշ է «փոստարկղային մտածելակերպը» (եւ ատիկա այդպէս կը կոչեն): Անոնք կ'աղօթեն եւ Աստուծմէ կը խնդրեն իրենց անհրաժեշտ գումարը, ինչպէս որ Տէնը կ'ընէր, ու կը սպասեն,

որ այն պիտի յայտնուի իրենց փոստարկղին մէջ, կամ կ'ակնկալեն, որ ինչ որ մէկը կու գայ եւ այդ գումարն իրենց կու տայ: Իսկ ընթացքի մասին ընդհանրապէս գաղափար չունին:

Այո՛, առաջինը պէտք է պատկերը ըլլայ: Բայց այն իրականութիւն դարձնելու համար ընթացք կայ: Ատիկա ծրագիրն է կամ մարտավարութիւնը, որուն միջոցով հնարաւոր է իրականացնել երազանքը: Թոյլ տուէք օրինակ մը բերել: Եթէ ձեզի ըսեմ, որ ձեր ֆինանսական խնդիրները շատ արագ կրնամ լուծել, եւ ըսեմ, որ թուղթ ու գրիչ պատրաստեցէք, որովհետեւ պիտի ըսեմ ձեր ընելիքները, դուք անմիջապէս թուղթ ու գրիչը պիտի առնէք եւ ուշադիր պիտի լսէք պատասխանը: Նշեմ նաեւ, որ այն մարդիկ, որոնք պիտի կարդան այս գիրքը ու պիտի հետեւին ըսածներուս, ամենայն հաւանականութեամբ, մէկ տարուան ընթացքին պիտի ազատին ֆինանսական սթրեսէն ու պարտքերէն: Կը կարծեմ, հիմա անելի ամուր բռնած էք գրիչը եւ ամբողջութեամբ կեդրոնացուցած էք ձեր ուշադրութիւնը, որ իմ ըսածներէն նոյնիսկ բան մը չկորսնցնէք, այնպէս չէ՛:

Պատասխանն իսկապէս շատ յստակ է: Պարզապէս ապահովեցէք 10 միլիոն տոլարի մաքուր շահոյթ եւ վերջ: Թերեւս զարմացած նայիք ինծի ու ծիծաղիք: Ես յետոյ ձեր ծիծաղէն պիտի հասկնամ, որ 10 միլիոն տոլարը բաւական չէ, եւ կ'աւելցնեմ՝ ըսելով. «Եթէ ատիկա բաւական չէ, ուրեմն՝ 25 միլիոն տոլար»: Եւ այս խօսքիս համար ոչ միայն պիտի ծիծաղիք, այլեւ բարձրաձայն պիտի քրքջաք: Որոշ մարդոց համար 10 միլիոն տոլարն իսկապէս կ'ազատէ պարտքերէն, բայց անոնք կը ծիծաղին, քանի որ չեն պատկերացներ, որ մէկ տարուան մէջ 10 միլիոն տոլար պիտի շահին: Իսկ 25 միլիոն տոլարի մասին խօսք ըլլալ չի կրնար, քանի որ այն այնքան հեռու է իրենց պատկերացումներէն:

Պատկերացնենք, որ ես ունիմ արտահանման ընկերութիւն,

Եւ ձեզի կ'առաջարկեմ 1000 տոլար վճարել իւրաքանչիւր գնդակը տուփին մէջ դնելու, տուփը սոսնձաժապաւէնով փակելու եւ այն փոստով առաքման նախապատրաստելու համար: Պատկերացնենք, որ դուք օրական կրնաք պատրաստել մօտաւորապէս

**ԹՈՅԼ ՏՈՒՔ ԿՐԿՆԵԼ,
ԿԸ ԿԱՐԾԵՄ ԿԱՐԻՔ
ՈՒՆԻՔ, ՈՐ ԱՆԳԱՄ
ՄԸՆ ԱԼ ԼՍԷՔ ԱՍԻԿԱ.
ԱՍՏՈՒԱԾ ԾՐԱԳԻՐ
ՈՒՆԻ ՁԵԶԻ ՀԱՄԱՐ:**

500 այդպիսի տուփ: Եւ ձեզի հետ 12 ամսուան պայմանագիր կը կնքեմ: Ես դիտաւորեալ կը չափազանցնեմ, որ աւելի շօշափելի ներկայացնեմ, բայց յոյսով եմ, որ այս ձեւով ըսածս տեղ կը հասնի:

Հիմա պատկերացնենք, որ այդ պայմանագիրն արդէն կնքուած է, եւ ես կ'ըսեմ միեւնոյն բանը, որ ըսած եմ նախկինին. ձեր ֆինանսական խնդիրներու պատասխանը յաջորդ տարուան ընթացքին 10 միլիոն տոլարի մաքուր շահոյթ ունենալն է: Ինչպիսի՞ն կ'ըլլայ ձեր արձագանգը: Հիմա այլեւս չէք ծիծաղիր: Ընդհակառակը, ուրախութեան ու հրճուանքի ճիչեր կ'արձակէք: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ պայմանագիրով 10 միլիոն տոլար աշխատիլը դիւրին կ'ըլլայ, եւ հարիւր միլիոն տոլարն ալ դիւրութեամբ կարելի է շահիլ: Իսկ ի՞նչը փոխուեցաւ: Միայն մէկ բան. հիմա դուք ծրագիր ունիք: Ինչպէս աւելի կանուխ նշած էի, ոեւէ մարդ կրնայ ձուկ բռնել, եթէ Յիսուսը ցոյց տայ, թէ ուր եւ ինչպէս այն բռնէ: Նոյնը ձեզի կը վերաբերի: Հազիւ որ ծրագիր ունենաք, որը կրնաք իրագործել, ձեր խնդիրը կը լուծուի:

«Որովհետեւ ես գիտեմ այն ծրագիրները, որ ունիմ ձեզի համար, - կ'ըսէ Տէրը, - ձեզի բարգաւաճ դարձնելու եւ ոչ թէ վնասելու ծրագիրներ, ձեզի յոյս եւ ապագայ տալու ծրագիրներ» (Երեմիա 29.11):

Թոյլ տուէք կրկնել, կը կարծեմ կարիք ունիք, որ անգամ մըն ալ լսէք ասիկա. Աստուած ծրագիր ունի Ձեզի համար:

Քանի մը ամիս առաջ առիթ ունեցայ սեմինարներէն մէկուն ժամանակ հանդիպիլ իմ գործընկերներէն մէկուն: Ծառայութեան վերջաւորութեան ան մօտեցաւ հարցումով մը, կամ աւելի ճիշդ, մէկ յայտարարութեամբ: «Այն չգործեց: Ես իմ ֆինանսական սերմը ցանեցի, ամուսինիս հետ համաձայնութեան եկայ արու եղնիկ որսալու համար, եւ չյաջողուեցաւ»: Ան պատմեց, թէ ինչպէս յատուկ եղնիկի մը՝ արու եղնիկի համար ֆինանսներով սերմ ցանած էր, որ կարենար որսալ: Ես սկսայ անոր շատ աւելի հարցումներ հարցնել, եւ ի վերջոյ հարցուցի՝ արդե՞ծք որսի օրը արու եղնիկ տեսած է: Ան պատասխանեց. «Այո՛, ճիշդ այն եղնիկի տեսակը, որուն համար սերմած էի, եկաւ ու կեցաւ իմ առջեւ՝ կրակելու համար յարմար հեռաւորութեան վրայ»:

Քիչ մը շփոթեցայ, ապա հարցուցի, թէ յետոյ ինչ պատահեցաւ: Ան իտէալական նշան կը բռնէ ու կը կրակէ, բայց ատկէ առաջ հրացանը ընկերոջը կու տայ, որ կարգաւորէ, եւ առանց ստուգելու՝ կը կրակէ ու չի դաչիր նշանակետին: Այս ամէնն ինծի համար շատ յստակ էր, բայց՝ ոչ իրեն համար:

Կը կարծեմ, շատ հաւատացեալներ նոյնանման իրավիճակի մէջ են: Ինչ-ինչ պատճառներով անոնք չեն հասկնար ընթացքը, եւ թէ որն է իրենց դերը վերջնական արդիւնքին համար: Ես անոր բացատրեցի, որ Աստուած ըրած էր Իր բաժինը, բայց ինքը՝ ոչ: Աստուած կրնայ ձեզի ծրագիրը տալ, բայց որպէսզի այդ ծրագիրն իրականութիւն դառնայ, դուք պէտք է ձեր բաժինը ընէք: Ատիկա ձեր եւ Աստուծոյ գործն է:

*«Երկինքի Արքայութիւնը նման է արտի մը մէջ
ՊԱՀՈՒԱԾ գանձի: Երբ մարդ մը գտաւ այն, նորէն*

*պահեց եւ ուրախութենէն զնաց ու ամէն ունեցածը
ծախեց եւ այդ արարը գնեց»:*

– Մատթէոս 13.44

Այս խօսքին մէջ այնքան ճշմարտութիւն կայ Թագաւորութեան մասին: Նախեւառաջ, սահմանենք, թէ ինչ է գանձը: Ըստ բառարաններու՝ գանձը որեւէ տեսակի արժէքաւոր կամ թանկարժէք ունեցուածքն է: Պարտադիր չէ, որ գանձը կտոր մը ոսկի ըլլայ: Ատիկա կրնայ ըլլալ որեւէ բան, որուն կարիքը այդ պահուն ունիք: Այսպիսով, այս խօսքին մէջ կ'ըսուի, որ Երկինքի Թագաւորութիւնը նման է գանձի, կամ, կարելի է ըսել, որ ձեր կեանքին մէջ անհրաժեշտ ամէն բան Թագաւորութեան մէջ կայ: Իսկ ի՞նչ է թագաւորութիւնը: Այս խօսքին մէջ Յիսուսը կ'ըսէ, որ այն պահուած է արտին մէջ: Կը ցանկայի՞ք գիտնալ, թէ ուր է այդ արտը: Բարի լուրն այն է, որ Յիսուսը մեզի ըսած է, թէ ուր է արտը, եւ թէ ինչպէս գտնել հոն պահուած գանձը:

Եթէ կարդանք Մարկոսի 4-րդ գլուխին մէջ սերմնացանի առակը, ապա պիտի տեսնենք, թէ ինչպէս մարդու սրտին մէջ հաւատք կը ձեւաւորուի: Հոս Յիսուսը մարդու հոգին կը նմանցնէ հողի, իսկ Աստուծոյ Խօսքը՝ հողին մէջ ցանուած սերմին: Օգտագործելով նոյն համեմատութիւնը՝ կրնամ ենթադրել, որ Մատթէոսի 13-րդ գլուխին մէջ նշուած հողը նոյն սահմանումն ունի, այսինքն, մարդու սիրտը: Թոյլ տուէք որոշ ժամանակ յատկացնել յիշեցնելու ձեզի, թէ ինչ սորվեցանք 6-րդ գլուխին մէջ. երբ վերստին կը ծնինք, մեր մարդկային հոգին մէկ կը դառնայ Աստուծոյ Հոգիին հետ, եւ այդ ձեւով կրնանք օգտուիլ Աստուծոյ միտքերէն: Ուրեմն, արտին մէջ գտնուող գանձը մեր միտքին մէջ եղածով չի սահմանափակուիր, այլ՝ այն կը ներառէ ամէն բան, ինչ որ Աստուած ունի, քանի որ մենք Անոր հետ մէկ ենք Հոգիով:

«Ինչ որ աչք չտեսաւ, եւ ականջ չստաց, եւ ոչ մէկ միտք պատկերացուց այն, ինչ որ Աստուած պատրաստեց Իրեն սիրողներուն համար: Բայց Աստուած այն յայտնեց մեզի Իր Հոգիով: Որովհետեւ Հոգին բոլոր բաները կը քննէ, նոյնիսկ Աստուծոյ խորունկ բաները: Որովհետեւ մարդոցմէ ղով գիտէ մարդուն միտքերը, եթէ ոչ մարդու հոգին, որ անոր մէջ է: Այդպէս ալ Աստուծոյ միտքերը ոչ ոք գիտէ, այլ միայն Աստուծոյ Հոգին: Եւ մենք ոչ թէ այս աշխարհի հոգին առինք, այլ այն Հոգին, որն Աստուծմէ է, որ հասկնանք, թէ Աստուած ինչը ծրի տուած է մեզի»:

– Ա. Կորնթացիս 2.9-12

Իսկ յետոյ Ա. Կորնթացիս 2.16-ն կ'աւելցնէ, որ մենք Քրիստոսի միտքն ունինք: Յիսուսը Ղուկաս 27.20,21-ին մէջ կը հաստատէ, թէ ուր է այդ գանձը.

«...Աստուծոյ Արքայութիւնը տեսանելի նշաններով պիտի չգայ... Որովհետեւ ահա Աստուծոյ Արքայութիւնը ճիշդ ծեր ներսն է»:

– Ղուկաս 17.20,21

«Չէ՞ք գիտեր, որ ձեր մարմինները Սուրբ Հոգիի տաճար են, որ ձեր մէջ է, եւ որ Աստուծմէ ընդունեցիք: Դուք ձեզի չէք պատկանիր. դուք մեծ գինով գնուեցաք: Ուստի, փառաւորեցէ՛ք Աստուծոյ ձեր մարմինով»:

– Ա. Կորնթացիս 6.19,20

Այսպիսով, թոյլ տուէք ամփոփել այն, ինչ որ կը փորձեմ բացատրել:

ՁԵՐ ՆԵՐՍԸ ԳԱՆՁ ԿԱՅ

Իսկ որքան գանձ կայ: Այդ գանձը ձեր ամենավայրի երազանքէն ալ գերազանց է: Անհամրելի ու անչափելի է այդ գանձը:

«Բայց Անոր, որ կրնայ մեր խնդրածէն ու պատկերացուցածէն անհամեմատ շատ ընել, այն զորութեան չափով, որ կը ներգործէ մեր մէջ»:

– Եփեսացիս 3.20

Ահա հոս է, որ մեզի պէտք է ուրիշ ձեւով մարզենք: Այս գանձը մեր պատկերացումէն վեր է: Իրականութեան մէջ, երբ մեզի ինչ որ բան մը անհրաժեշտ է կամ մենք օգնութեան կարիք ունինք, պատասխանը ուրիշ տեղ մը կը փնտռենք՝ ոչ

**ԲԱՐԵԿԱՄՍ,
ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆ
ԱՐԴԷՆ ԲՈԼՈՐՈՎԻՆ
ՔՈՒԿԴ Է: ԱՍՏՈՒԱԾ
ՈՐԵՒԷ ՈՒՐԻՇ ԲԱՆ
ՉԻ ԿՐՆԱՐ ԱԻԵԼՑՆԵԼ
ԱՅՆ ԱՄԷՆՈՒՆ, ԻՆՉ
ՈՐ ԱՐԴԷՆ ՏՈՒԱԾ Է:**

մեր ներսը: Բայց հիմա Սուրբ Հոգին՝ Աստուած, մեր մէջ կը բնակի եւ մեր օգնականն է: Մենք արդէն քննարկած ենք, թէ ինչպէս Հոգիով կամ լեզուներով աղօթքը կ'ուղղորդէ եւ խորհուրդներ կը բացայայտէ: Բայց շատ մարդիկ կը դժուարանան հասկնալու, թէ նման օգնութիւնը որքան արժէքաւոր կրնայ ըլլալ, կամ՝ որ

Աստուած կը ցանկայ ըլլալ անոնց պատասխանը կեանքի որեւէ իրավիճակի մէջ:

Բայց երբ դուք վերստին ծնաք, դարձաք Աստուծոյ ընտանիքի անդամ, Անոր հզօր Թագաւորութեան քաղաքացին: Ան արդէն իսկ տուած է ձեզի այն, ինչ որ Ինքն ունի: Իրականութեան մէջ, Ղուկաս 12.32-ն կ'ըսէ, որ

վախնալու կամ սարսափելու որեւէ պատճառ չկայ, քանի որ Հայրը հաճեցած է Թագաւորութիւնը ձեզի տալ: Ինչ Թագաւորութիւն: Իր Թագաւորութիւնը:

«Մի՛ վախնար, փոքրիկ հօտ, որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ, որ Արքայութիւնը ձեզի տայ» (Ղուկաս 12.32):

Բարեկամս, Թագաւորութիւնն արդէն բոլորովին քուկդ է: Աստուած որեւէ այլ բան չի կրնար ատելցնել այն ամէնուն, ինչ որ արդէն տուած է: Դուն արդէն ամբողջն ունիս: Շատերուն կը թուի, որ եթէ ներգրաւեն Աստուծոյն իրենց առօրեային մէջ, Անոր անհանգստացուցած կ'ըլլան: Բայց ասիկա անտեղեակութեան հետեւանք է: Պատկերացուցէ՛ք՝ ձեզի կ'ըսեմ, որ դուք Ամերիկայի

**ԵՍ ՅԱՃԱԽ
ԿԸ ԿՐԿՆԵՄ,
ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ
ՊԱՀՈՒԱԾ ԵՆ ՔԵԶԻ
ՀԱՄԱՐ, ԵՒ ՈՉ ԹԷ
ՔԵԶՄԷ: ՍԱՏԱՆԱՆ
Կ'ԱՊՐԻ ԽԱՒԱՐԻ ՄԷՋ,
ԵՒ ԱՆՈՐ ՅԱՅՏՆԻ
ՉԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ԾՐԱԳԻՐՆԵՐԸ:**

Միացեալ Նահանգներու քաղաքացի էք, իսկ դուք ալ ձեր կարգին կ'ըսէք. «Չեմ գիտեր: Եթէ հոս խանութ բանամ, կը վախնամ, որ ինչ որ մէկուն նեղութիւն պիտի պատճառեմ, եթէ օգտուիմ այս երկրի այն օրէնքներէն, որոնք թոյլ կու տան ինծի հոս գործ սկսիլ»: Որպէս քաղաքացի, դուք արդէն կրնաք օգտուիլ բոլոր օրէնքներէն եւ արտօնութիւններէն, որ այս երկիրը կ'առաջարկէ: Այդ ամէնը ձերն է: Մի՛ վարանիք: Օգտուեցէ՛ք բոլոր այն առաւելութիւններէն, որոնք օրինաւոր կերպով ձեզի կը պատկանին:

Ինչո՞ւ Աստուծոյ Թագաւորութիւնը կը համեմատուի գանձի հետ:

Որովհետեւ, եթէ դուք ունենաք Երկինքի գիտութիւնը, կը

գիտնաք, թե ինչպես պետք է վարուիք որեւէ իրավիճակի մէջ՝ օգտագործելով իւրօրինակ, արտասովոր եւ Աստուածատուր մարտավարութիւններ: Թոյլ տուէք ուրիշ օրինակ մը բերել ցոյց տալու համար, թէ ասիկա ինչպես կը գործէ:

Երբ Տրենտան եւ ես սկսանք սորվիլ Թագաւորութեան մասին, մեր կեանքերը կտրուկ փոխուեցան: Պարտքերէն բոլորովին ազատիլը նման էր մաքուր օդ շնչելուն, եւ կեանքը նոր բուրմունք ստացաւ: Քսաներկու հեկտար հողը կանխիկով գնելը երազանքի պէս բան մըն էր, բայց մենք ասոր վրայ կը ցանկայինք տուն կառուցել: Մենք տուն կառուցելու մասին որեւէ պատկերացում չունէինք, իրականութեան մէջ, չէինք գիտեր, թէ ուրկէ պետք է սկսինք: Բայց աղօթեցինք՝ հասկնալու համար, թէ ԻՆՉՊԷՍ այդ հողակտորի վրայ կառուցենք մեզի անհրաժեշտ տունը: Մենք բոլորովին վստահեցանք Սուրբ Հոգիին, որ օգնէ մեզի:

Յանկալով ազատիլ պարտքերէն՝ սկսանք հետազօտել տուն կառուցելու ոչ ասանդական ձեւերը: Ատոնցմէ մէկը մոտոկային տունն էր, որը կը խոստանար շքեղ տուն՝ ցած ու յարմար գիներով: Մոտոկային տունը կցորդ-տնակ չէ: Այն գործարանի մէջ պատրաստուող տարբեր հատուածներէ կառուցուող տուն է, որը կը բերեն ու կը կազմեն քու հողին վրայ: Այս տուններն ունէին փայտէ տուներու որակը, բայց գիները ցած էին, քանի որ աւելի արդիւնաւէտ շինարարական մեթոտներ կ'օգտագործուէին: Այսպիսով, դիմեցինք երկու-երեք մոտոկային տուններ կառուցող ընկերութիւններու եւ սկսանք ուսումնասիրել անոնց առաջարկած ձեւերը: Մոտոկային տունները հետազօտելէն եւ անձամբ տեսնելէն ետք, կը զգայինք, որ այս ճանապարհով պետք է երթայինք: Մենք ընտրեցինք ընկերութիւնը եւ այն մոտելը, որ կը կարծէինք, որ ամէնէն յարմարը պիտի ըլլար մեր հողակտորին համար: Միեւնոյն ժամանակահատուածին մէջ մեզի Վիրճինիա

հրաւիրեցին՝ ուսուցանելու տնային դպրոցի համագումարի շրջանակներում մէջ, եւ հոնկէ վերադառնալուն պէս պէտք է ստորագրէինք պայմանագիրը: Որոշեցինք մեզի հետ առնել նախագիծերը, որ պատահաբար որեւէ մարնամասնութիւն մոռցած չըլլանք՝ համոզուած ըլլալով, որ ասիկա ճիշդ մեր ուզած տունն է՝ նախքան պայմանագիրը ստորագրելը:

Չեմ յիշեր, թէ ինչպէս պատահեցաւ, որ մեզի հրաւիրեցին ուսուցանելու Վիրճինիայի այդ համագումարին, բայց մեզի առաջարկեցին մնալ տնային ուսուցում կատարող ընտանիքներէն մէկուն տունը: Երբ ժամանեցինք անոնց գեղեցիկ տունը եւ հանդիպեցանք մեր նոր ընկերներուն, մենք հիացած ըսինք, թէ որքան գեղեցիկ է անոնց տունը: Զրոյցի ժամանակ գիտցանք, որ այդ տունը իրենց ձեռքով կառուցած էին: Սկիզբը ես ապշեցայ. «Դուք շինարար էք», - հարցուցի անոնց: «Ո՛չ», - պատասխանեցին: Ընտանիքի հայրը տեղեկացուց, որ ինքը տեղական մեծ ընկերութեան մը մէջ հաշուապահ է: «Իսկ ինչպէ՞ս կրցաք կառուցել այս տունը», - հարցուցի ես:

Անոնք սկսան տարբեր բաներ պատմել, եւ ճիշդ զրոյցի ընթացքին ըսինք, որ մենք ալ կը պատրաստուինք տուն կառուցել եւ վերադառնալնուս պէս պէտք է պայմանագիր ստորագրենք: Անոնք ուրախացան եւ սկսան հարցումներ հարցնել մեր նոր տան վերաբերեալ: Մենք պատմեցինք անոնց Թագաւորութեան մասին, եւ թէ ինչպէս մեր կեանքը փոխուած է: Պատմեցինք, թէ ինչպէս կրցած ենք 22 հեկտար հողակտորին համար կանխիկով վճարել, եւ որքան ուրախ էինք մեր տունը կառուցելու համար:

Զրոյցի ընթացքին ըսած էինք, որ իրական նախագիծերը մեր քովն են, եւ անոնք խնդրեցին, որ ցոյց տանք: Մենք շատ ուրախ էինք, որ անոնք կրնային իրենց ներդրումն ունենալ:

Բերինք նախագիծերը եւ իրենց խոհանոցի սեղանին վրայ տարածեցինք: Քիչ մը յետոյ ընտանիքի մայրն ըսաւ. «Ո՛հ, այս տարածքը շատ փոքր է, ձեզի աւելի մեծ խոհանոց անհրաժեշտ է, իսկ դիտարկած էք, որ ձեր երեխաները պիտի մեծնան: Որպէս հովիւներ, ձեզի իսկապէս անհրաժեշտ է աւելի մեծ հիւրընկալութեան տարածք»: Կարճ ըսելու համար, անոնք ցոյց տուին, թէ ինչու պէտք չէ նման տուն կառուցել, եւ ստիպուած էինք համաձայնելու անոնց իւրաքանչիւր դիտարկումին հետ: «Իսկ ինչպէ՞ս կառուցենք աւելի մեծ տուն մեր ունեցած գումարով»: «Շատ դիւրին, - ըսին անոնք, - դժուր կառուցեցէք»: Երբ ատիկա լսեցի, հազիւ կրցայ զսպել ծիծաղս: «Ե՛ս կառուցեմ իմ սեփական տունը»: Ինչպէս արդէն նշած եմ, տուներէն գաղափար չունիմ: Բայց անոնք քաջաւերեցին մեզի՝ ըսելով, որ այդքան ալ դժուար չէ: Անոնք պատմեցին մեզի գիրքի մը մասին՝ «Խնայէ՛ 50.000 տոլար կամ աւելին՝ դառնալով քու գլխաւոր վարձակալը. *ինչպէս նախագծել, նախահաշուարկել եւ կառուցել քու երազանքի տունը*», հեղինակ՝ Ուորըն Վ. Ճեկըր:

Երբ տուն եկանք, որոշեցինք, որ մոտովային տուն կառուցելու պայմանագիրը պիտի չստորագրենք: Պատուիրեցինք այդ գիրքը եւ սկսանք կարդալ ու խորհիլ իւրաքանչիւր գլուխի շուրջ: Մենք սկսանք սովորական տուններու նախագիծեր ալ նայիլ: Վերջապէս գտանք նախագիծ մը, որը մեզի շատ հաճելի էր, եւ սկսանք այն քայլ առ քայլ գծագրել: Խորհրդակցեցանք Վիրճինիայի մեր ընկերներուն եւ քանի մը այլ մարդոց հետ, որոնք տուն կառուցած էին: Ի վերջոյ, որոշեցինք, որ մենք կրնանք: Մենք նայեցանք շինարարական նախագիծերուն եւ մենք մեզի հարցուցինք. «Ի՞նչ կրնանք ընել, որ այս տան շինարարութիւնը տեղաւորուի մեր պիւտճէին մէջ»: Անհաւանական է, բայց որոշեցի,

որ ամբողջ տան ելեկտրական լարերը ես կարգաւորեմ, թէեւ երբեք ելեկտրական լարի կապոց ձեռքս չէի բռնած: Ընկերներէն մէկը, որ ելեկտրականութենէն գլուխ կը հանէր, ըսաւ, որ դիւրին է եւ ինծի ցոյց պիտի տայ:

Քանի որ ես զբաղած էի իմ առեւտուրով, Տրենտան որոշեց ստանձնել գլխաւոր վարձակալի գործը ու պէտք է աշխատէր ենթավարձակալներու հետ: Մենք տան կմախքը կառուցելու համար պատասխանատու պաշտօնեայ վարձեցինք, իսկ մնացած գործը պէտք է մենք ընէինք: Ատոր յաջորդեցին մեր կեանքի ամենալարուած, բայց ամենաուրախ օրերը: Կարճ ըսած, մենք աւարտեցինք տան կառուցումը: Այս տան բնակելի մակերեսը կրկնակի մեծ էր առաջարկուող մոտովային տան մակերեսէն. ամուր փայտէ դռներ, փայտէ յատակ, փայտէ քանդակազարդ քիվեր, գեղեցիկ ու ժամանակակից խոհանոցային պահարաններ, ուր տեղադրեցինք չժանգոտող պողպատէ սարքաւորումներ: Վերջաւորութեան հաշուարկեցինք, որ տունը մեր ձեռքով կառուցելու շնորհիվ խնայած էինք մօտաւորապէս 200.000 տոլար:

Այսօր ես այնքան ուրախ եմ, որ Սուրբ Հոգիին խնդրեցի, որ ծրագիր տայ մեզի: Ատոր արդիւնքները միշտ ալ մեր երազանքներէն բարձր եղած են եւ կան: Մինչեւ հիմա կը զարմանամ, թէ ինչպէս Աստուած կազմակերպեց Վիրճինիայի մեր ճանապարհորդութիւնը եւ առաջնորդեց մեզի այդ զոյգին տունը, որոնք վերջերս աւարտած էին իրենց տան շինարարութիւնը: Վստահ եմ, եթէ այդպէս չըլլար, թերեւս եւ մոտովային տուն կառուցէինք: Մոտովային տունը թերեւս կը բաւարարէր մեր կարիքները որոշ ժամանակ, բայց շուտով դուրս պիտի ելլէինք աստոր սահմաններէն: Մեր տան կառուցումն ինծի համար դեռ վկայութիւն է, թէ ինչպէս Սուրբ Հոգին կրնայ օգնել քեզի ամէն իրավիճակի մէջ՝ տալով

ականկալիքների գերազանցող ծրագիր եւ ուղղորդում:

Թոյլ տուէք անգամ մըն ալ ըսել...

Աստուած ունի ՔՈՒ ծրագիրը:

Թերեւս ըսէք. «Այո՛, այս ամէնը լաւ է, բայց Մատթէոս 13.44-ն կ'ըսէ, որ ծրագիրը պահուած է»: Դուք իրաւացի էք, եւ ատիկա ալ ձեր արտօնութիւնն է: Ահա՛ թէ ինչ կ'ըսէ Յիսուսը Մատթէոս 13.10,11-ին մէջ.

«Աշակերտները մօտիկ գալով՝ ըսին Անոր. «Ինչո՞ւ անոնց հետ առականերով կը խօսիս»: Ան ալ պատասխանեց. «Որովհետեւ Երկինքի Արքայութեան գաղտնիքներու գիտութիւնը [այն բաները, որ պահուած են] ձեզի պրըուած է, եւ ոչ թէ անոնց»»:

– Մատթէոս 13.10,11

«Այս գաղտնի գիտելիքը ձեզի համար է, եւ ոչ թէ սատրանային կամ չար մարդոց, որոնք սխալ կ'օտագործեն եւ խոչընդոտ կը հանդիսանան, որ Աստուծոյ ծրագիրները չիմանաք: Աստուածաշունչը կ'ըսէ, որ սատրանան կը փոխէ իր մարտավարութիւնը, եթէ հասկնայ, թէ Աստուած ինչ կը ցանկայ ընել:

«Ո՛չ, մենք Աստուծոյ ծածուկ իմաստութեան մասին կը խօսինք, իմաստութիւն, որը պահուած է, եւ Աստուած աշխարհի սրեղծելէն առաջ սահմանած է այն մեր փառքին համար: Այս աշխարհի իշխաններէն ոչ ոք հասկցաւ այն, քանի որ եթէ հասկնային՝ փառքի Տիրոջը չէին խաչեր»:

– Ա. Կորնթացիս 2.7,8

Ես յաճախ կը կրկնեմ, որ Աստուծոյ գաղտնիքները

պահուած են քեզի համար, եւ ոչ թէ քեզմէ: Սատանան կ'ապրի խաւարի մէջ, եւ անոր յայտնի չեն Աստուծոյ ծրագիրները: Ան կրնայ միայն Աստուծոյ ըրածին վրայ ուշադրութիւն դարձնել: Բայց երբ կը գիտակցի, թէ ինչ կը կատարուի, բաւականին ուշ կ'ըլլայ: Ուստի, յաջորդ անգամ երբ քիչ մը ջղայնացած ըլլաք, քանի որ կէսգիշերը կը մօտենայ, իսկ դուք տակաւին չունիք ձեր խնդիրին պատասխանը, իմացէք, որ Աստուած երբեք չ'ուշանար: Այն, ինչ որ ձեզի համար ուշացում կը թուի, ճիշդ ատիկա ալ կը գործէ ձեր օգուտին, որ պատասխանը պահուած մնայ, մինչեւ որ գայ ատոր բացայայտման ճիշդ ժամը:

«Դարձեալ նման է Երկինքի Արքայութիւնը արդի մը մէջ ՊԱՀՈՒԱԾ գանձի: Երբ մարդ մը գտաւ այն, նորէն պահեց եւ ուրախութենէն գնաց, ամէն ունեցածը ծախեց եւ այդ արդը գնեց»:

– Մատթէոս 13.44

Մենք արդէն խօսեցանք, թէ ինչ է արտը, եւ ուր կը գտնուի այն, եւ ինչու գանձը պահուած է: Խօսեցանք նաեւ, թէ ինչպէս լսենք Աստուծոյ Թագաւորութեան այդ պահուած բաները՝ Հոգիով աղօթելով եւ Սուրբ Հոգիին ձայնը լսելով: Սակայն կայ եւս շատ կարեւոր սկզբունք մը այս ընթացքին մէջ, որ գրուած է Խօսքին մէջ, եւ որը պէտք է անպայման իմանաք: Շատերը տանուլ տուած են ընտիր եւ վեհ ծրագիրներ, եւ աւերիչ կործանում կը բերեն իրենց կեանքերուն մէջ, քանի որ չեն հետեւած այդ սկզբունքին: Թերեւս այս խօսքին մէջ նկատած էք, որ այս մարդը կը լսէ գանձի, գաղափարի, ուղղորդման եւ Աստուծոյ ծրագիրին մասին, եւ գրուած է, որ ան կրկին կը պահէ այն: ԱՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ՉԻ ԳՈՐԾԵՐ ԱՏՈՐ ՀԱՄԵՄԱՏ: Ան չի պատմեր իր բոլոր ընկերներուն ու դրացիներուն, թէ ինչ լսած է Տիրոջմէն, կամ թէ ինչ նոր եւ հիասքանչ ծրագիրներ

ունի: Առայժմ այդպես չ'ըներ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ ան ատիկա կրկին կը պահէ, կը վաճառէ իր ամբողջ ունեցածը եւ ապա կ'երթայ արտը: Եթէ աւելի յստակ ըսենք, ան չի ցանկար բացայայտել իր գանձին տեղը, քանի տակաւին ատիկա չէ դարձած իր սեփականութիւնը: Մինչեւ ասոր ձեռք բերելը, ան հոգ կը տանի ապահովութեան համար, որ ոչ ոք խլէ այն իրմէ:

Աստուածաշունչը կ'ըսէ նաեւ, որ առաջին անգամ, երբ կը գտնէ գանձը, ան իրականութեան մէջ ի վիճակի չ'ըլլար վճարել այդ գանձին համար: Ան պէտք է նախապատրաստական ընթացք մը անցնէր, որմէ ետք պիտի կարենար գնել: Այս սկզբունքը չի վերաբերիր միայն դրամին եւ ինչ որ բան մը ձեռք բերելուն: Այն կը սորվեցնէ մեզի կեանքի կարելոր սկզբունքները, եւ եթէ կը ցանկաք յաջողիլ, ուրեմն պէտք է իմանաք, թէ ինչպէս վարուիք այն ամէնուն հետ, ինչ որ Սուրբ Հոգին ցոյց կու տայ:

Աստուածաշունչը կ'ըսէ, երբ որեւէ գաղափար կամ ուղղորդում ձեզի կը տրուի, պէտք չէ անմիջապէս ասոր համեմատ գործել, քանի տակաւին չունիք ասոր տիրելու կարողութիւն: Բոլորս շատ լաւ կրնանք պատկերացնել, թէ գումարի առումով ինչպէս ատիկա կը գործէ: Եթէ բաւականաչափ գումար չունիք հողը գնելու համար, հաստատ մէկ ուրիշին չէք ըսեր, որ հողին վրայ գանձ կայ: Եթէ յանկարծ այդ լուրը տարածուի, որ հողին վրայ գանձ կայ, վստահ եղէք, ինչ որ մէկը ձեզմէ շուտ կը գնէ այն: Փոխարէնը, կ'երթաք եւ ամէն բան կ'ընէք, որ դրամը հայթայթէք ու հողը գնէք, իսկ այդ ամբողջ ժամանակ պահուած գանձին մասին ճշմարտութիւնը միայն դուք կը գիտնաք:

Այս սկզբունքը ճշմարիտ է նաեւ որեւէ ուղղորդման կամ կարգադրութեան համար, որ Աստուած կու տայ ձեզի: Շատ

անգամներ քրիստոնեաները կը շփոթեն սկիզբը վերջի հետ: Շատ անգամներ Սուրբ Հոգին ինչ որ գաղափար մը կը յայտնէ ոչ թէ այն բանին համար, որ ճիշդ այդ պահուն գործի անցնինք, այլ թոյլ կու տայ, որ պատրաստուինք, որ իրականութեան մէջ կարենանք առիթը ճիշդ օգտագործել: Որեւէ գործողութեան նախապատրաստական մասը ընթացքի ամենակարեւոր մասն է: Մարգարէի խաղերու մէջ յաղթանակը կամ պարտութիւնը կախուած է այն բանէն, թէ որքան լաւ պատրաստուած են թիմերը փորձերու ժամանակ, երբ ոչ ոք անոնց նայած է: Բայց կը համաձայնիք, որ մարզումները հաճելի բան չեն. ատոնք քեզի ուժասպառ կ'ընեն: Իսկ միւս կողմէն ալ, բոլորին հաճելի է խաղի ոգեւորութիւնը, մարդոց ամբոխները, լոյսերը եւ յաղթանակին հասնելու թրթիռը:

Աւա՛ղ, բոլոր այդ երազանքները կը վերածուին ցաւի ու դառնութեան, երբ նախապատրաստական փուլին պատշաճ ուշադրութիւն չի դարձուիր: Չեմ կրնար թուել, թէ որքան մարդու տեսած եմ, որոնք կործանած են իրենց կեանքերը, քանի որ չեն գիտցած այս սկզբունքը: Տեսած եմ մարդոց, որոնք իսկապէս կանչուած եւ օծուած եղած են Աստուծոյ կողմէն, սակայն առանց զգացմունքայնօրէն եւ ֆինանսապէս պատրաստ ըլլալու՝ եկեղեցի հիմնած են, իսկ վերջաւորութեան իրենց պատկերացուցած երազանքին հասնելու փոխարէն հասած են աղէտալի վիճակի մը: Տեսած եմ մարդոց, որոնց Աստուած առեւտրի գաղափար տուած է, եւ համոզուած ըլլալով, որ պիտի յաջողին, ձգած են իրենց մշտական աշխատանքը, եւ առանց համապատասխան ջանքի կամ նախապատրաստութեան՝ սնանկացած են: Ամէնէն տխուր պահն այս պատմութիւններուն մէջ այն է, որ մեղադրանքն Աստուծոյն բաժին կը հասնի, եւ մարդիկ ոչ միայն իրենցմէ կը հիասթափին, այլ նաեւ Աստուծմէ: Չեմ գիտեր, թէ ինչու

շատերուն կը թուի, որ յաջողութիւնը մէկ գիշերուան մէջ կու գայ: Բայց մարդոց պէտք է սորվեցնել յաջողութեան ընթացքը, որն այս պարզ խօսքին մէջ ամփոփուած է:

Մարդիկ կը մօտենան ինծի եւ կ'ըսեն. «Լսէ, հովիւ, Աստուած ըսած է, որ այս է իմ եկեղեցին»: Եւ անոնց այլեւս չեմ տեսներ: «Հովիւ, Աստուած ինծի այս հզօր առեւտուրի գաղափարը տուած է»: Իսկ յաջորդ նորութիւնն այն կ'ըլլայ, որ անոնց տունը դրուած է հարկադիր աճուրդի, իսկ ինքնաշարժը արդէն բռնագրաւուած է: Ասիկա այն Չէ, ինչ Աստուած պատրաստած է քեզի համար:

Երբ Սուրբ Հոգիէն ինչ որ գաղափար մը կը լսենք, չի նշանակեր, որ ճիշդ այդ վայրկեանին պէտք է ոտքի ելլենք ու գործենք: Շատ յաճախ Աստուած կ'առաջնորդէ, որ այդ երազանքը պահենք ու պատրաստուինք այն ձեռք բերելու համար: Սովորաբար, այս տեսիլքը յաջողութեամբ իրականացնելու համար ամէն անհրաժեշտ բան չէ, որ կ'ունենանք: Նախապատրաստութիւնը կրնայ մէկ շաբաթ տեւել, կրնայ եւ տարիներ տեւել, կախուած այն բանէն, թէ ինչ ցոյց տուած է Աստուած քեզի: Դուք պէտք է հասկնաք, որ նախապատրաստումը եւ ճիշդ ժամանակը նոյնքան կամ թերեւս ավելի կարեւոր են, քան ճիշդ գաղափարը:

Փորձառութենէս գիտեմ: Երբ 19 տարեկան էի, ինծի հրաւիրեցին Աւետարանը քարոզելու: Ես պարզ տեսիլք տեսած էի, ուր կանգնած էի՝ Աստուածաշունչը ձեռքիս, եւ Տէրը երեք անգամ ըսաւ. «Ես քեզի կը կանչեմ քարոզելու Իմ Խօսքը»: Ատիկա շատ իրական եւ հզօր վերապրում էր: Բայց Աստուած չըսաւ ինծի, որ երթամ ճիշդ այդ վայրկեանէն սկսիմ քարոզել: Ընդհակառակը, ըսաւ, որ քոլէճ ընդունուիմ: Իսկ ես, իրականութեան մէջ գրեթէ ծախողած էի աւագ

դպրոցին մէջ, ուր միջին գնահատականս 1.3 էր: Չափազանց ամչկոտ էի եւ կը փորձէի մարդոցմէ հեռու մնալ: Աւելի պարզ ըսեմ: Ես բոլորովին հասուն չէի մարդոց հովուելու համար: Ընդունուեցայ քոլէճ, եւ ատիկա դժուար էր, շատ դժուար, բայց յամառեցայ ու աւարտեցի իմ քառամեայ ուսուցումը:

Քոլէճն աւարտելէն ետք ինծի կը հետաքրքրէր՝ արդե՞ծք հիմա է քարոզելու ժամանակը: Բայց Աստուած ըսաւ, որ աշխատանքի անցնիմ տեղական ֆինանսական ընկերութեան մէջ՝ ապահովագրութիւն եւ անվտանգութեան երաշխիքներ վաճառելու համար: Թէեւ ոչ մէկ ձեռով ատիկա ինծի հետ կապ ունէր, բայց գիտէի, որ ես Աստուծոյ ծայնը կը լսեմ, եւ գացի այդ գործին: Այդ գործը քոլէճէն աւելի դժուար էր: Ես ամէն օր պէտք է հեռաձայններ ընէի եւ սորվէի յաղթահարել մարդոց հանդէպ իմ վախը: Վաճառքէն ստացուած տոկոսներով ապրիլն ալ դժուար էր, եւ անկեղծ ըսեմ, ամէն օր կ'ուզէի գործը ձգել, բայց գիտէի, որ չեմ կրնար: Ի վերջոյ, քանի մը տարի յետոյ, ես հմտացայ իմ գործին մէջ: Իրականութեան մէջ, Տրենտան եւ ես երկրի տարածքին սփռուած 5000 գրասենեակներէն առաջինը հիմնած ենք այն ընկերութեան հետ, ուր աշխատած ենք:

Այդ շրջանին էր, որ Աստուած ըսաւ, ժամանակն է եկեղեցի հիմնեմ: Այդ ժամանակ արդէն 40 տարեկան էի: 21 տարի պահանջուեցաւ, որ Աստուած նախապատրաստէ ինծի այն տեսիլքին համար, որը ցոյց տուած էր 19 տարեկանին: Երբ սկսայ հովուական գործը, հասկցայ, թէ ինչու ինծի այդքան երկար կը նախապատրաստէր: Հովութիւնը բաւականին բարդ գործ էր, քան կը պատկերացնէի: Բայց քանի որ մարզուած էի մարդոց հետ հաղորդակցելու հարցին մէջ, եւ առեւտուրին մէջ ալ սորված էի, թէ ինչպէս վարուիլ մերժումներու պարագային, ես կրցայ հաւատարիմ մնալ իմ կեանքի համար Աստուծոյ

կոչումին: Ամէն յանձնարարութիւն չէ, որ 21 տարի կը պահանջէ, բայց նախապատրաստութեան սկզբունքը նոյնն է:

Նախապատրաստութեան սկզբունքը դիտարկելու ժամանակ՝ կը սիրեմ վերաձեւակերպել Մատթէոս 13.44-ը.

«Քու մէջ գտնուող Երկինքի Արքայութիւնը քեզի կու տայ գիտութիւն կամ գաղտնի գիտութենէն օգտուելու հնարաւորութիւն, կամ կու տայ այն պահուած բաները, որոնք միայն Աստուած գիտէ: Այս գիտութիւնը հասանելի է միայն Աստուծոյ Հոգիին միջոցով: Անոր միջոցով, Որ արդէն քու մէջ է: Երբ մարդը կը գտնէ կամ կը լսէ այդ գաղտնի գիտութիւնը, որն իրեն համար գանձ է, որն իրեն համար պատասխան է, ան նորէն կը պահէ ապիկա իր սրտին եւ միտքին մէջ: Իսկ յետոյ ուրախութենէն կ'երթայ, ամբողջ ուժով կը ձգտի, ամենայն մանրամասնութեամբ կը նախապատրաստուի իրեն տրուած այն ուղղորդման կամ կարգադրութեան համեմատ՝ ամուր բռնելով իր պատասխանը»:

ԳԼՈՒԽ 8

ՅԱՌԱՋԻՄԱՂԱՅՄԱՆ ԴԺՈՒԱՐ ԿԷՏԸ

Իմ ընկերը՝ հովիւ Փիթըրը, անոր կինը՝ Պեւը, որոնք Նիւ Ջեյկանտայի հզօր եկեղեցիի մը հովիւներ են, կարճաժամկետ այցելութեամբ եկած էին Միացեալ Նահանգներ: Սուրբ Ծննդեան շրջանն էր, եւ քանի մը օր պիտի մնայինք Քոլորադո Սփրինկսի Պրոտմուր պանդոկին մէջ՝ հանգստանալու եւ վայելելու Սուրբ Ծննդեան տեսարանները: Եթէ Պրոտմուր պանդոկի մէջ չէք եղած, ըսեմ, որ ատիկա Ամերիկայի հրաշագեղ հանգստեան տուներէն մէկն է եւ կը նայի ուղիղ Քարքարոտ լեռներուն: Անոնք յայտնի են նաեւ Սուրբ Ծննդեան իրենց ձեւաւորումներով: Հովիւ Փիթըրը հեռաձայնեց եւ տեղեկացուց, որ հոն պիտի ըլլան, եւ հարցուց՝ կը փափաքէի՞նք արդեօք անոնց միանալ: Մենք շատ ոգետրուեցանք, անմիջապէս մեկնեցանք եւ երեք հրաշալի օրեր հոն անցուցինք:

Երբ հովիւ Փիթըրին հետ կ'ըլլամ, ժամանակի մեծ մասը կը խօսինք ծառայութեան մասին, քանի որ ան իմ խորհուրդի անդամներէն մէկն է, եւ այս այցին նպատակն ալ ճիշդ ատիկա էր: Երկուքս ալ կը խօսէինք յաջորդ տարուան մեր

ծրագիրներուն մասին եւ տարբեր գաղափարներ առջեւ կը բերէինք: Ի վերջոյ, հրաժեշտի պահը եկաւ, որը միշտ ալ տխուր է, քանի որ լաւ ընկերներէն բաժնուիլը դժուար է: Տրենտան եւ ես սովորաբար տարին մէկ անգամ կամ երկու տարին մէկ կ'այցելենք անոնց՝ Նիւ Ջեյանտա: Բայց այս անգամ ես արդէն այնքան զբաղած էի, եւ այցի համար իմ ծրագիրին մէջ տեղ չէր մնացած:

Այսպիսով, մենք տուն եկանք մեծ սպասումներով դիմաւորելու Ամանորը: Զարմանալի էր, բայց 9 Յունուարին ես երազ տեսայ այն մասին, որ հովիւ Փիթըրը Փետրուարին ինծի պիտի հրաւիրէ իր եկեղեցւոյ մէջ քարոզելու համար: Կը յիշեմ, որ անդադար կը մտածէի, որ խիստ անսովոր բան մըն էր, քանի որ ես անոր հետ վերջերս հանդիպած էի, եւ ինծի ոչինչ ըսած էր: Քանի մը շաբաթէն արդէն Փետրուարն էր: Երբ խոհանոցը կը պատրաստուէինք նախաճաշելու, Տրենտային ըսի, թէ Տէրն ինչ ըսած էր ինծի այդ գիշեր:

Համակարգիչս դրուած էր խոհանոցի սեղանին վրայ, եւ ես անփութօրէն բացի այն: Հոն նստած սուրճ կը խմէի եւ նկատեցի, որ հովիւ Փիթըրէն հաղորդագրութիւն մը եկած է: Երբ բացի նամակը, զարմացայ. հովիւ Փիթըրը կը հրաւիրէր ինծի քարոզելու իր տարեկան ֆինանսական համաժողովին, որը պէտք է տեղի ունենար երեք շաբաթէն: Անշուշտ զարմացայ, բայց քանի որ երազիս մէջ արդէն տեսած էի, անակնկալի չեկայ: Արագօրէն աչքի անցուցի այդ օրերու իմ օրակարգը՝ տեսնելու համար՝ կարելի է, թէ ոչ, քանի որ այդ ամիս ծրագրուած շատ ճամբորդութիւններ ունէի գրեթէ նոյն ժամանակահատուածին մէջ, որ Փիթըրը կը հրաւիրէ: Տրենտան եւ ես արդէն իսկ ծրագրած էինք թռչիլ Պուէնոս Այրըս՝ Արժանթին, ապա քանի մը օր յետոյ պէտք է Օքլենտի մէջ ըլլայինք: Միակ հնարաւոր տարբերակը Պուէնոս Այրըսէն

անմիջապես Սիտնի՝ Աստրալիա թռչիլն էր, իսկ յետոյ Օքլենտ՝ Նիւ Ջեյլանտա: Ես երբեք այդպիսի ճամբորդութիւն չէի ծրագրած, բայց քանի որ Տէրը նախապէս յայտնած էր, գիտէի, որ պէտք է երթանք:

Արժանթինի մեր ճամբորդութիւնը ընկերակցական այց էր, որուն հովանաւորը վաճառքով զբաղող այն գործակալութիւններէն մէկն էր, որուն հետ մեր ընկերութիւնը կը համագործակցի: Ատիկա լաւ ճամբորդութիւն էր եւ լաւ առիթ՝ հաղորդակցելու այն ընկերներուն հետ, որոնց սովորաբար տարին մէկ անգամ կը հանդիպիս: Այդ ժամանակ Արժանթինը բաւականին լուրջ ֆինանսական խնդիրներ ունէր, եւ քաղաքին մէջ ցոյցեր կ'ընթանային, բայց ընդհանուր առմամբ ատիկա լաւ ճամբորդութիւն էր: Ես երբեք ինչ չէի գտնուած: Սիտնիի թռիչքը բաւականին երկար էր՝ գրեթէ 16 ժամ օդին մէջ էինք: Ատիկա մեր ամենաերկար թռիչքն էր: Մենք պէտք է անցնէինք հարաւային բելեռի վրայէն, եւ ես ուրախ էի վերէն տեսնելու երկրագունդի այդ մասը:

Թռիչքի ժամանակ անդադար կը նայէի պատուհանէն, բայց վարի սառոյցէն ու ձիւնէն բացի ուրիշ բան չկար: Եւ ճիշդ այդ ժամանակ յանկարծ միտքս ինկաւ, որ մենք արժանթինական օդուղիներով կը թռչինք, որը նոյնպէս ֆինանսական խնդիրներ ունէր ֆինանսական ճգնաժամի մէջ գտնուող այդ երկրին մէջ: Յանկարծ միտքէս անցաւ, որ եթէ այս թռիչքի ընկերութիւնն իր օդանաւերուն թեքնիքական սպասարկման վրայ խնայողութիւններ ըրած ըլլայ, եւ մենք ստիպուած ըլլանք վայրէջք կատարելու աշխարհի այդ մասը, լաւ բան պիտի չըլլայ: Բայց գիտէի, որ շատ ապահով ձեռքբերու մէջ եմ, քանի որ Տէրը ինծի առաջնորդած էր մեկնելու Նիւ Ջեյլանտա:

Սիտնի ժամանելէն ետք մենք հեռաձայնեցինք հովիւ

**ՈՐՈՆՔ ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ
ՀՈԳԻՈՎ ԿԸ ՎԱՐՈՒՒՆ,
ԱՆՈՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ
ՈՐԴԻՆԵՐ ԵՆ:**

- ՀՈՎԿՄԱՅԵՑԻՍ 8.14

Փիթըրին եւ Պեւին ու ցնցուեցանք այն լուրէն, որ հովիւ Փիթըրը սրտի կաթուած ունեցած է եւ հիւանդանոցն է: Ան ընդհանրապէս ի վիճակի պիտի չըլլար քարոզելու երկու օր տեւողութեամբ այդ մեծ ֆինանսական համաժողովին եւ խնդրեց ինծի ուսուցանել ամբողջ համաժողովի ընթացքին: Հիմա հասկցայ, թէ ինչու Տէրն առաջնորդած էր ինծի Նիւ Ջեւլանտա: Ես ապշած էի, թէ ինչպէս Սուրբ Հոգին քայլ առ քայլ կ'ուղղորդէր մեզի: Ասիկա կը յիշեցնէ Հռովմայեցիս 8.14ը.

«Անոնք, որոնք Աստուծոյ Հոգիով կը վարուին, անոնք Աստուծոյ որդիներն են» (Հռովմայեցիս 8.14):

Մենք դարձեալ կը խօսինք ուղղորդող ձայնը, Սուրբ Հոգիէն տրուած գաղափարը եւ հասկացողութիւնները լսելու կարողութեան մասին: Իմ յաջորդ դասը նկարագրելու համար Աստուածաշնչեան լաւագոյն օրինակը Դանիէլի պատմութիւնն է: Այս դասը կը սորվեցնէ, թէ ինչպէս լսել Սուրբ Հոգիին, Որ կու տայ ձեր խնդիրներուն պատասխանները: Կարդանք այս պատմութիւնը՝ Դանիէլ 2.1-6:

«Եւ Նաբուգոդոնոսորի թագաւորութեան երկրորդ տարուան մէջ Նաբուգոդոնոսորը երազներ տեսաւ եւ անոր միտքը խռովեցաւ եւ չէր կրնար քնանալ: Ուստի թագաւորը հաւաքեց մոգերուն, հմայողներուն, կախարդներուն ու աստղագէտներուն, որ պատմեն իրեն, թէ ինչ երազներ տեսած է: Երբ անոնք եկան ու կանգնեցան թագաւորին առջեւ, թագաւորը անոնց

ըսաւ. «Ես երազ մը տեսայ, որ կը մտահոգէ ինծի, եւ կ'ուզեմ իմանալ, թէ ինչ կը նշանակէ այն»:

Եւ աստղագէտները թագաւորին արամեւերէնով պատասխանեցին. «Թագաւոր, յաւիտեան ապրիս: Պատմէ՛ք քու երազը քու ծառաներուն, եւ մենք կու տանք մեկնութիւնը»:

Թագաւորը պատասխանեց աստղագէտներուն. «Ես այսպէս որոշած եմ. եթէ ինծի չպատմէք իմ երազը եւ չտաք մեկնութիւնը, ես ձեզ կտոր-կտոր ընել կու տամ, եւ ձեր տրուները աղբանոց պիտի դառնան: Բայց եթէ երազը պատմէք եւ բացատրէք այն, ինծմէ պարգեւներ, նուէրներ ու մեծ պատիւ պիտի ստանաք: Ուրեմն, պատմեցէ՛ք ինծի երազը ու տուէ՛ք մեկնութիւնը»»:

– Դանիէլ 2.1-6

«Աստղագէտները պատասխանեցին թագաւորին. «Երկրի վրայ մարդ չկայ, որ կարենայ թագաւորին ուզածն ընել: Ոչ մէկ թագաւոր՝ մեծ եւ զօրաւոր ասոր պէս որեւէ բան չէ պահանջած ոեւէ մոգէ, հմայողէ եւ աստղագէտէ: Թագաւորի պահանջածը խիստ դժուար է: Եւ ոչ ոք կրնայ այն յայտնել թագաւորին, բացի աստուածներէն, իսկ անոնք ալ մարդոց մէջ չեն բնակիր»:

Ասիկա բարկացուց ու բորբոքեց թագաւորին, այնպէս որ ան հրամայեց կոտորել Բաբելոնի բոլոր իմաստուններուն: Եւ իմաստուն մարդոց սպաննելու հրամանը յայտարարուեցաւ, եւ իմաստունները կը կոտորուէին: Եւ մարդոց ուղարկեցին Դանիէլին եւ անոր ընկերներուն փնտրելու, որ սպաննեն»:

– Դանիէլ 2.10-13

«Յեպոյ Դանիէլը վերադարձաւ տուն եւ եղելութիւնը իր ընկերներուն՝ Անանիային, Միսայէլին եւ Ազարիային պատմեց: Ան խնդրեց անոնց, որ ողորմութիւն խնդրեն Երկինքի Աստուծմէն այս գաղտնիքին համար, որպէսզի ինքը եւ իր ընկերները Բաբելոնի մնացած իմաստուններուն հետ չսպաննուին: Գիշերը տեսիլքին մէջ Դանիէլին յայտնուեցաւ այդ գաղտնիքը: Եւ Դանիէլն օրհնեց Երկինքի Աստուծոյն եւ ըսաւ. «Օրհնեալ ըլլայ Աստուծոյ անունը յաւիտեանս յաւիտենից, իմաստութիւնն ու զօրութիւնը Անորն է: Ան ժամանակներն ու եղանակները փոխողն է, Ան թագաւորներ դնողն ու իջեցնողն է: Ան կու տայ իմաստութիւն՝ իմաստուններուն, եւ գիտութիւն՝ խորաթափանցներուն: Ան կը յայտնէ խոր եւ ծածուկ բաները, Ան գիտէ, թէ խաւարին մէջ ինչ կայ, եւ լոյսը Անոր հետ կը բնակի»»:

– Դանիէլ 2.17-22

Դանիէլը կեցած է կեանքի եւ մահուան ընտրութեան առջեւ՝ վտանգաւոր կէտի մը մէջ: Բայց քու յառաջխաղացման գլխաւոր բանալին ճիշդ հոս է: Աստուած այն օգտագործեց Դանիէլին առջեւ տանելու եւ ոչ թէ վար իջեցնելու համար: Սուրբ Հոգիին գաղտնի գիտութեան միջոցով Դանիէլը կրնայ Նաբուգոդոնոսոր թագաւորին յայտնել երազն ու մեկնութիւնը: Թագաւորը կ'ապշի, քանի որ յաջորդ խօսքին մէջ կը կարդանք.

««Այդ ժամանակ Նաբուգոդոնոսոր թագաւորը ինկաւ իր երեսին վրայ Դանիէլին առջեւ ու պատուեց անոր եւ ընծաներ ու անուշահոտ բաներ հրամայեց, որ մատուցեն իրեն: Թագաւորը Դանիէլին ըսաւ. «Յիրաւի, որ ձեր Աստուածն է աստուածներու Աստուածը եւ

թագաւորներու Տէրն ու գաղտնիքներ յայտնողը, որովհետեւ դուն կրցար յայտնել այս գաղտնիքը»:

Այդ ժամանակ թագաւորը բարձր դիրք տրուաւ Դանիէլին եւ շար մեծ պարգեւներ տրուաւ եւ անոր իշխան դրաւ Բաբելոնի ամբողջ գաւառին վրայ եւ բոլոր իմաստուններուն վերակացու կարգեց անոր: Եւ տակաւին աւելին, Դանիէլին խնդրանքով թագաւորը Սեդրաքին, Միսաքին եւ Աբեդնագովին նշանակեց Բաբելոնի գաւառը կառավարողներ, մինչ Դանիէլն անձամբ մնաց թագաւորական պալատին մէջ»:

– Դանիէլ 2.46-49

Ինչ եղաւ, երբ Դանիէլը կրցաւ լսել Աստուծոյ ձայնը. յառաջխաղացում եւ հարստութիւն:

Աստուածաշնչեան ուրիշ պատմութեան մը մէջ կը տեսնենք նոյն արդիւնքը: Ատիկա Յովսէփի պատմութիւնն է: Նմանատիպ իրավիճակի առջեւ ալ կանգնած էր Յովսէփը: Եւ անոր առիթ կ'ընձեռնուի մեկնելու Փարաւոնի երազը: Երազը յաջող մեկնելէ ետք, այնուհետեւ վերահաս երաշտէն Եգիպտոսի փրկութեան համար գործնական ծրագիր տալէն յետոյ, Ծննդոց 41.39,40-ին մէջ կը կարդանք Փարաւոնի պատասխանը.

«Եւ Փարաւոնն ըսաւ Յովսէփին. «Քանի որ Աստուած այս ամէնը քեզի յայտնեց, քեզի պէս խորաթափանց եւ իմաստուն չկայ: Դուն իմ տան վրայ պիտի հսկես, իմ ամբողջ ժողովուրդը քու հրամաններուն կը հնազանդի. ես միայն աթոռով քեզմէ մեծ կ'ըլլամ»»:

– Ծննդոց 41.39,40

Երկու պատմութիւններուն մէջ ալ սկիզբը

հիասթափությունը կարծես անխուսափելի ըլլար, բայց վերջապետության երկուքն ալ բարձրացան եւ մեծ ունեցուածք ձեռք բերին: Կարճ ըսելու համար, աշխարհը մեծ գումար կը վճարէ այն մարդոց, որոնք մեծ խնդիրներ կը լուծեն: Ձեր մէջ բնակող Սուրբ Հոգին կը սիրէ ձեզ մեծ խնդիրներու մէջ դնել: Մի՛ վախնաք, երբ նման բան կը պատահի, այլ փառաբանեցէ՛ք Տիրոջը, քանի որ Ան կ'օգնէ ձեզի, ինչպէս որ օգնեց Դանիէլին եւ Յովսէփին: Ես միշտ կ'ըսեմ՝ Աստուած կը ստանայ ամբողջ փառքը, իսկ ես կը ստանամ ամբողջ վճարման չէքը: Ինծի հաճելի է, թէ Դանիէլը ինչ կ'ըսէ Տիրոջ մասին. «Ան կը յայտնէ խորը եւ ծածուկ բաները, Ան գիտէ, թէ ինչ կայ խաւարին մէջ, եւ լոյսը Անոր հետ կը բնակի»: Դանիէլը կ'ըսէ, որ լոյսը կը բնակի Անոր հետ: Ինչպէս գիշերուան ամէնէն մուգ ժամուն քալելու ժամանակ, երբ լոյս կը վառես, կը տեսնես, թէ ուր կ'երթաս: Լոյսը կը յաղթէ վախին, եւ կ'իմանաս, թէ ուր ոտքդ դնես: Հետեւեալ խօսքին մէջ Պօղոսը կ'ըսէ, որ Աստուած կը խօսի եւ կ'օգնէ մեզի, երբ ինչ որ խնդրի մը մէջ ենք:

«Դուք գիտէք, որ երբ հեթանոս էիք, ձեր վրայ ինչ որ ձեռով կ'ազդէին եւ մոլորեցնելով կ'առաջնորդէին համը կուռքերու քով» (Ա. Կորնթացիս 12.2):

Պօղոսը կ'ըսէ, որ կուռքերը չեն խօսիր, իսկ Աստուած կը խօսի:

Թերեւս ձեզի հետաքրքրէ, թէ ինչու այս գլուխը անուանած եմ «Յառաջխաղացման դժուար կէտը»: Որովհետեւ դժուար կէտի մէջ է, որ քու մէջ բնակող Սուրբ Հոգին ունի պատասխանները: Դժուար կէտն է, որ կատարեալ հնարաւորութիւն կու տայ լուծումը գտնելու: Դժուար կէտը լաւագոյն դիրքն է յաջորդ յառաջխաղացման համար: Ցաւօք, շատ հաւատացեալներ կը պահուլտին դժուար

իրավիճակներէն: Շատերուն կը թուի, որ եթէ յայտնուին դժուար իրավիճակի մէջ, ուրեմն կորսնցուցած են Աստուծոյ:

Կը յիշեմ, երբ առաջին անգամ սկսանք մեր հեռուստահաղորդումները: Այդ ժամանակ ամսական վարձավճարը կը կազմէր 9.000 տոլար: Ինծի կը թուէր, որ ատիկա ահռելի գումար է, բայց յետոյ վարձավճարները հասան ամսական 20.000 տոլարի, ապա՝ 50.000 տոլարի: Օր մը, երբ բոլորս կ'աղօթէինք, Էմին՝ դուստրս, սկսաւ խօսիլ մարգարէական պարզեւով.

«Հունձքը շահի մեծ է ձեզի համար: Ես ձեզ կը քաշեմ-կը լայնցնեմ: Միայն Իմ Հոգիով կրնաք հասկնալ, թէ ինչ պիտի կատարուի: Արդե՞ծք կրնաք մէկ կողմ քաշուիլ ու թոյլ տալ, որ ես առաջնորդեմ ձեզի դժուար իրավիճակներով, որոնք վեր են ձեր հասկացողութենէն, եւ առաջնորդեմ ձեզի անկարելիի միջոցով»:

Մինչ կը պատմեմ իմ պատմութիւնը, կրնա՞ք ըսել՝ ինչպէս կը հասկնաք «ՅԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄ» երեւոյթը: Ես ուրախ եմ, որ Աստուած ինծի ընտրութեան հնարաւորութիւն տուած էր: Ան կը հարցնէր՝ արդե՞ծք պատրաստ եմ Իրեն հետ ճանապարհ անցնիլ: Ան կ'ուզէր ստանալ իմ համաձայնութիւնն ու պատրաստակամութիւնը: Համոզուած եմ, եթէ ես մերժէի, Ան պիտի երթար ուրիշ մէկու մը քով: Բայց աւելի լաւ էր, որ յառաջխաղացումը ես ունենայի, այնպէս չէ՛:

Եւ ըսի. «Այո՛, Տէ՛ր, գիտես, որ կ'ընեմ»: Քանի մը շաբաթ յետոյ «Տէյսթար» ցանցը մեզի ամէնօրեայ եթերաժամ առաջարկեց, իսկ մինչ այդ մենք շաբաթը մէկ անգամ եթեր կ'ելլէինք: Այդ առաջարկն ընդունելու պարագային մեր հեռուստատեսային վարձավճարները պիտի հասնէին ամսական 200.000 տոլարի: Բայց այդ մարգարէական խօսքի վրայ հիմնուելով

Եւ Սուրբ Հոգիին ներքին առաջնորդութեանը վստահելով՝ ես համաձայնեցայ: Բոլորը կ'ըսէին, որ քանի մը ամիսէն չեմ կրնար եթերաժամի գումարները վճարել: Եւ ճիշդ այդպէս ալ եղաւ, բայց թերեւս քիչ մը աւելի դաժան, քան կը պատկերացնէինք: Հինգ ամսուան մէջ մեր հեռուստատեթերի վարձավճարներէն 500.000 տոլար չէր վճարուած: Իրականութեան մէջ, մեր եթերաժամանակը գնողը ելեկտրոնային նամակ մը ուղարկեց, ըսելով, որ իր իրաւաբանը քիչ մը կը մտահոգուի վճարումներու ուշացման համար:

Ես սկսայ պայքարիլ Աստուծոյ հետ, քանի որ իմ հաղորդումը կը կոչուէր «Ֆինանսներու կարգաւորում»: Քիչ մը յուսալքուած էի եւ Տրենտային ըսի, որ թերեւս հեռուստատեսութեան ծախսերը քիչ մը կրճատենք: Բայց ան պատասխանեց. «Ինչ ըսաւ Աստուած: Ան ըսաւ, որ կը վճարէ ատոր համար, այնպէս չէ՞»: Քանի մը օր շարունակ ան միայն ատիկա կը կրկնէր, երբ կ'ուզէի խօսիլ ատոր մասին: Մենք կ'աղօթէինք, բայց որեւէ պատասխան չունէինք, սակայն ես Աստուծոյ խաղաղութիւնը կը զգայի: Այդ շաբաթ երազ մը տեսայ՝ դրամատնային չէքերու կապոցներ: Բայց այս երազի տարօրինակ կողմն այն էր, որ ես ոչ միայն տեսայ չէքերը, այլեւ ատոնց վրայ գրուած գումարները եւ դրամատնային չէք դուրս գրողին անունը: Երբ արթնցայ, հասկցայ, որ հեռուստատեսութեան վարձավճարները վճարուած են, եւ խաղաղեցայ: Եւ ճիշդ այդ շաբթուան հանգստեան օրերուն 500.000 տոլարն ունեցայ այնպէս, ինչպէս երազիս մէջ տեսած էի. այն գումարները եւ անունը, որ տեսած էի, նոյնութեամբ գրուած էին չէքերուն վրայ:

Կը տեսնէ՞ք, դժուար իրավիճակները վատ բան չեն: Բարեկամս, ատոնք յառաջխաղացման համար պարարտ հող են: Մարդիկ կ'ըսեն, որ կը դժուարանան անբարենպաստ

իրավիճակներուն մէջ քայլ ընելու, քանի որ կը վախճան սխալելէն: Բայց Սուրբ Հոգին կրնայ զգուշացնել ձեզի խուսափելէ հնարաւոր սխալէն, եթէ լսէք Անոր:

Կը յիշեմ, երբ քանի մը տարի առաջ անշարժ գոյքի

գործակալութիւն կ'աշխատեցնէի, յաճախորդներէն մէկը կը ցանկար իր տան գրաւադրումով վարկ ստանալ եւ այդ գումարը ներդնել ընկերութեան մը մէջ: Այդ ամէնը ինծի հաճելի չէր: Այսօրուան պէս կը յիշեմ, որ կը բարձրանայի մեր գրասենեակի աստիճաններէն, եւ գործակալներէն մէկն ըսաւ ինծի այդ մասին: Ես ըսի անոր. «Դուն կրնաս կնքել գործարքը, բայց յաճախորդը պէտք է նամակ մը ստորագրէ, ու ատիկա անպայման մտնէ վարկային փաթեթի մէջ: Այդ նամակին մէջ պէտք է ըսուի, որ մենք ներդրումային ընկերութեան մաս չենք, այլ պարզապէս կը ձեւակերպենք վարկը յաճախորդին խնդրանքով»: Յետոյ նշեցինք, որ որեւէ պատասխանատուութիւն չենք կրեր նշուած ներդրումային գործարքի առնչութեամբ, նոյնպէս եւ չենք առաջարկեր, որ յաճախորդը այդ ընկերութեան մէջ ներդրում ընէ: Եւ ի՞նչ եղաւ: Վեց ամիս յետոյ ամէն բան ծախողեցաւ: Ներդրումային ընկերութիւնը կորսնցուց յաճախորդի գումարները: Դատական գործ յարուցուեցաւ վերջինիս, ինչպէս նաեւ իմ ընկերութեան նկատմամբ: Սակայն երբ անոնց իրաւաբանը տեսաւ այդ նամակը, որը յաճախորդը ստորագրած էր մեր պնդումով, մենք հանուեցանք դատական գործէն:

Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ էր, որ այդ օրը աստիճաններուն վրայ իմ գործակալին ըսի, որ այդ նամակը

**ԴՈՒՔ ԿՐՆԱՔ
ՎՍՏԱՀԻԼ ՍՈՒՐԲ
ՀՈԳԻՒՆ, ՈՐ ՕԳՆԷ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԷ
ՁԵՋ ԲՈԼՈՐ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՆ
ՄԷՋ:**

աւարտական փաթեթին մէջ մտցնէ: Դուք կրնաք վստահիլ Սուրբ Հոգիին, որ օգնէ եւ առաջնորդէ ձեզի ամէն իրավիճակի մէջ: Ինչպէս Յիսուսը կ'ըսէ. «Մի՛ վախնաք»:

Ես այս պատմութիւնը պատմած եմ նաեւ իմ նախորդ գիրքերէն մէկուն մէջ, բայց կ'արժէ այս քննարկման ժամանակ կրկին անդրադառնալ: Օր մը, ընտանիքով կը մեկնէինք եռօրեայ հանգիստի: Բոլորն արդէն մեր փոքրիկ փոխադրակառքին մէջն էին, եւ ես գացի շարժիչը միացնելու: Յանկարծ Սուրբ Հոգին ըսաւ, որ ինքնաշարժը տեղափոխեմ: Մեր փոխադրակառքին քովը կեցած էր մեր միւս ինքնաշարժներէն մէկը: Եւ Սուրբ Հոգին ըսաւ, որ ինքնաշարժը տեղափոխեմ խոտերուն վրայ: Տարօրինակ էր: Ես կը մտածէի. «Տեսնես ինչո՞ւ Սուրբ Հոգին կ'ըսէ, որ ինքնաշարժը փողոցէն տեղափոխեմ բակ՝ խոտերուն վրայ»: Նոյնիսկ գաղափար չունէի, բայց ներգործութիւնը շատ զօրաւոր էր: Տրենտային ըսի, թէ ինչ կը պատրաստուիմ ընել: Դուրս ելայ ինքնաշարժէն, փողոցի հատուածէն այն բերի բակ՝ խոտերուն վրայ: Եւ ասորը մասին չմտածեցի մինչեւ վերադառնալը: Կիրակի երեկոյեան վերադարձանք տուն: Եւ գիտէք ինչ. ճանապարհին վրայ, ճիշդ ինքնաշարժին կեցած տեղը հսկայական ծառ մը ինկած էր, բայց խոտերուն վրայ կեցած ինքնաշարժին ոչինչ եղած էր, քանի որ ծառը ասորը չէր հասած: Եթէ ինքնաշարժը հոն կեցած ըլլար, հաստատ հողին պիտի հաւասարեցուէր:

Տրենտան եւ ես, անշուշտ, վառ եւ վատ օրինակ էինք, թէ ինչ կարելի չէ ընել ֆինանսներու հետ: Բայց մեզի ընդամէնը որոշ մարտավարութիւն եւ գաղտնի իմաստութիւն պէտք է այդ իրավիճակէն դուրս ելլելու համար: Հիմա ես պէտք է ժպտիմ, քանի որ մեր հեռուստատեսային հաղորդումը, որը կը դիտեն աշխարհով մէկ, կը կոչուի «Ֆինանսներու կարգաւորում»:

Բարեկանս, այսօր քու ճակատագիրը քու ձեռքերուն մէջ է:

*«Որոնց տկարութիւնները զօրութեան վերածուեցան,
որոնք պատերազմի մէջ զօրաւոր եղան եւ օտարներու
բանակները փախուստի մատնեցին» (Եբրայեցիս
11.34բ):*

Բարդ եւ անկարելի տեղերը բոլորովին ալ բարդ եւ
անկարելի չեն, երբ դուն պատասխանը գիտես:

ՀԱՆԴԱՐՏ, ՄԵՂՄ ՁԱՅՆԸ

Երբ կը սկսիմ սորվեցնել Սուրբ Հոգիին ծայնը լսելու մասին, կ'ըլլան մարդիկ, որոնք կ'ըսեն, որ երբեք Աստուծոյ ծայնը չեն լսած: Բայց ես միշտ կ'ըսեմ. «Դուք լսած էք Աստուծոյ ծայնը»: Եթէ ձեզի նոյնպէս կը թուի, որ երբեք Աստուծոյ ծայնը չէք լսած, ուրեմն կարդանք Գ. Թագաւորաց 19.11,12 խօսքերը:

«Եւ Տէրն ըսաւ. «Դ՛ուրս եկուր եւ կեցի՛ր լերան վրայ՝ Տիրոջ ներկայութեան մէջ, որովհետեւ Տէրը պիտի անցնի»:

Եւ մեծ ու հզօր քամի մը պատռեց լեռները եւ կտորաւորեց ապառաժները Տիրոջ առջեւ, բայց Տէրը քամիին մէջ չէր: Եւ քամիէն յետոյ երկրաշարժ եղաւ, բայց Տէրը երկրաշարժին մէջ չէր: Եւ երկրաշարժէն յետոյ կրակ եղաւ, բայց Տէրը կրակին մէջ չէր: Եւ կրակէն յետոյ մեղմ շշնջոց մը եղաւ»:

– Գ. Թագաւորաց 19.11,12

Թէեւ ես Սուրբ Հոգիին ծայնը լսած եմ ուժգնութեան տարբեր աստիճաններով, սակայն Անոր ամէնէն բնական ծայնը մեղմ շշնջոցն է: Ատիկա մեղմ ու հանդարտ ծայն մըն է: Ինչպէս արդէն ըսած եմ այս գիրքին մէջ, հիմնականին մէջ, Աստուծոյ ծայնը նման է միտքի մը, որը իրայատուկ երանգ

ունի: Ինչպես որ կրնաք ամբոխի մէջ զանազանել ձեր երեխայի ծայնը, այնպես ալ կրնաք լաւ ճանչնալ Սուրբ Հոգիին, որ երբ խօսի, անմիջապէս ճանչնաք Անոր ծայնը: Բայց այս գլուխին մէջ կը ցանկամ խօսիլ Աստուծոյ այն ծայնին մասին, որ բոլորը լսած են, բայց երբեք չեն գիտակցած:

Երբ կ'ուսանէի Օրըլ Ռոպըրթսի համալսարանին մէջ, ես քանի մը Աստուածաբանական դասընթացքներ առած էի, քանի որ իմ գիտական աստիճանը Հին կտակարանէն պէտք է ստանայի: Այնքան շատ տեղեկութիւն կար, որը նախկինին երբեք չէի սորված: Քանի որ նախակրթարանի մէջ անընդհատ դասերէն փախած էի, ես դաս ընելու սովորութիւն չունէի, ատոր հետեանքով ինծի համար սաստիկ դժուար էր դասերը հասցնել, յատկապէս քննական շաբաթներուն: Մասնաւորապէս այս դասին ես պէտք է քուրսային աշխատանք գրէի Հին կտակարանի որոշ թեմաներու մասին, որոնցմէ այսօր գրեթէ ոչինչ կը յիշեմ: Քուրսային աշխատանքներն ինծի կը սարսափեցնէին: Իրականութեան մէջ քոլէճի ուսումնառութեան առաջին տարուան մէջ ես գրեցի իմ առաջին քուրսային աշխատանքը, եւ երբ այն ետ ստացայ, վրան կարմիր թանաքով մեծ F մը դրուած էր (F-ը ամերիկեան համակարգին մէջ ամէնէն ցած գնահատականն է, որ կը համապատասխանի 2 գնահատականին) ու տակն ալ գրուած էր. «Դուն երբեք նախակրթարան յաճախած ես»: Իմ անգլերէնն ու քերականութիւնը այնքան սարսափելի էին, որ ուսուցիչս զարմացած էր, թէ ինչպէս կրցած եմ Օրըլ Ռոպըրթսի համալսարան ընդունուիլ: Ինչ որ մէկը պէտք է օգնէր ինծի անգլերէնին մէջ, որպէսզի առաջին տարին աւարտէի:

Քննական շաբաթուան լարուածութեանը զուգահեռ կը մօտենար այլ քուրսային աշխատանքի մը վերջնաժամկետը: Օ՛ր, որքան կը սարսափէի այդ աշխատանքէն: Ես պատրաստ էի նստիլ ու գրել այդ աշխատանքը, բայց ինծի երբեք չէին

սորվեցուցած, թե ինչպես պետք է քուրսային աշխատանք գրել: Ուստի, որոշ բաներ կը փնտռէի, բառերը կ'արտագրէի քիչ մը փոխելով այնպես, որ ոչ ոք գիտնայ, թե իմ աշխատանքը տարբեր աղբիւրներէն առած եմ: Սիրտս հանգիստ էր, քանի որ ըրածիս մէջ որեւէ վատ բան չէի տեսներ, որովհետեւ այն, ինչ որ կը կարդայի, յետոյ կը ձեւափոխէի իմ բառերով: Բայց խնդիրն այն էր, որ ես չէի գիտեր ինչպես գրել:

Այս անգամ ընդհանրապէս ժամանակ չունէի: Ընկերներէս մէկն ալ, որ կ'ապրէր ճիշդ իմ յարկին վրայ, ընտրած էր իմ նիւթը, միայն թէ տարբեր օրերու դասի կ'երթայինք: Ամբողջ խումբը պետք է գրէր նոյն թեմային մասին, ուստի խնդրեցի ընկերոջս ցոյց տալ, թէ ինչպէս հաւաքած է իր քուրսային աշխատանքը: Չեմ գիտեր՝ ինչու, հազիւ իր աշխատանքը ձեռքս առի, հասկցայ, որ անոր պէս լաւ չեմ կրնար գրել ու որոշեցի արտագրել: Գիտեմ, որ դուք հիմա զարմացած էք: Յիշեցէք, որ այդ ժամանակ ես մանուկ քրիստոնեայ էի: Ամբողջ իր աշխատանքը չարտագրեցի, այլ՝ կէսը: Այդ քննական շաբթուան աւարտին այդ աշխատանքը յանձնեցի դասախօսին ու հանգստացայ, որ այլեւս գրելու բան մը չունիմ: Բայց ատկէ յետոյ ինչ որ բան մը պատահեցաւ, որ ինծի արժէքաւոր դաս մը տուաւ Աստուծոյ ձայնը լսելու մասին:

Երբ այդ օրը պառկեցայ քնանալու, ոչ մէկ ձեռով քունս կու գար խիղճս այնքան բարձր կը խօսէր, որ չէի կրնար քնանալ: Հասկցայ, որ ըրածս սխալ էր, որ ես, նախ, գողութիւն ըրած էի, իսկ յետոյ ստած էի: Նաեւ առանց յարգանքի վարուած էի իմ ընկերոջ հանդէպ: Ես թշուառ վիճակի մէջ էի: Գիշերը 3:30-ին գացի ընկերոջս սենեակը եւ արթնցուցի՝ ըսելով, թէ ինչ ըրած եմ, եւ ներողութիւն խնդրեցի: Ան քնոտ աչքերով նայեցաւ ինծի եւ ըսաւ. «Գնա՛ քնացիր, Կէրի»: Ան դարձաւ ու նորէն քնացաւ:

Յաջորդ օրը մօտեցայ իմ դասախօսին եւ խոստովանեցայ ըրածս: Անշուշտ, ան ինծի պէտք է F (2) գնահատեր, բայց ժպտալով ըսաւ, որ շնորհակալ է, որ տեղեակ պահեցի իրեն: Այնուհետեւ ըսաւ, որ քանի որ դիմած եմ իրեն, ինծի B կը նշանակէ (B-ն կը համապատասխանէ է 4 գնահատականին 5 նիշերէ բաղկացած համակարգին մէջ) այդ տարուան համար: Ինչ հանգստութիւն, եւ որքան լաւ կը զգայի, քանի որ լռեցուցած էի այդ մեղադրող ձայնը: Ես ազատ էի եւ խաղաղութիւն գտած էի:

Թոյլ տուէք հարցնել. «Ինչպէ՞ս իմ ընկերը կրցաւ դառնալ ու նորէն քնանալ, երբ իմ ներսը տակնուվրայ կ'ըլլար»: Ինչո՞ւ ան ալ ինծի պէս մտատանջութեան մէջ չէր: Ինչո՞ւ ես չէի կրնար քնանալ, եւ ինչո՞ւ այդքան թշուառ էի: Ամէն անգամ, երբ կը փորձէի քնանալ, ձայն մը ինծի հետ կը խօսէր: Այն կը դատապարտէր ինծի. ատիկա իմ խիղճն էր: Խիղճ բառն այսպէս կը սահմանուի. ճիշդի եւ սխալի բնագոյային իմացութիւն: Անգլերէնի մէջ “Conscience” բառը, որ հայերէնի մէջ «գիտակցութիւն, խիղճ» բառն է, կը նշանակէ գիտնալ, ինչ որ բանէ մը գիտելիք ունենալ:

Այն կը նմանի մոմի, որուն լոյսը կը լուսաւորէ եւ կը բացայայտէ խաւարը: Այն կ'արձանագրէ իւրաքանչիւր միտք, եւ եղած որեւէ արարք: Այն կը նմանի դատարան բերուած վկայի, որ ցուցմունք կու տայ այնպիսի բաներու մասին, որոնք հիմնականին քողարկուած են: Այն կը խօսի եւ կը յիշեցնէ քեզի ընել ճիշդը եւ խուսափիլ սխալէն: Խիղճը Աստուծոյ ներքին ձայնն է իւրաքանչիւր անձի ներսը: Խիղճը մարդուն իր գործողութիւններուն համար պատասխանատուութեան կը կանչէ: Ինչպէս դատական սրահին մէջ, խիղճը իւրաքանչիւր մարդու կը հրաւիրէ Աստուծոյ առջեւ պատասխան տալու: Ինչպէս վկային կը կանչեն ցուցմունք տալու, այնպէս ալ մեր խիղճը կը խօսի մեր փոխարէն (կը պաշտպանէ մեզի) կամ կը

մեղադրել մեզի (կը դատապարտել):

«Մետիքըլ Էքսփրես» ամսագրին մէջ տպագրուած ուսումնասիրութիւն մը կը փաստէ հետեւեալը.

«Մարդու զարգացման ներկայիս տարածուած կարծիքն այն է, որ մարդ-արարածն իր կեանքը կը սկսի «բարոյապէս մաքուր վիճակէ», բայց նոր հետազոտութիւնները կը հակասեն այս տեսանկիւնին: Հետազոտողները պարզած են, որ վեց ամսական երեխան արդէն բարոյական դատողութիւն կ'ընէ: Այդ հետազոտողները կը կարծեն, որ թերեւս երբ կը ծնինք, բարոյական սկզբունքներու համակարգը (a moral code) արդէն իսկ ամուր դաջուած կ'ըլլայ մեր ուղեղին»:

**ԽԻՂԾՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ՁԱՅՆՆ Է ԱՄԷՆ
ՄԱՐԴՈՒ ՄԵՋ,
ԱՐԱՐԻՉԻՆ
ԴՐՈՇՄԸ ԵՒ ԱՆՈՐ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝
ԱՊՐԵԼՈՒ ԱՅՆ
ԿԵԱՆՔԸ, ՈՐՈՒՆ
ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՈՒԱԾ
ԵՆՔ:**

«Եւ ասով կը ճանչնանք, որ ճշմարտութեանն կը պատկանինք, որ Անոր ներկայութեան մէջ ցոյց կու տանք մեր սրտերը, երբ որ մեր սիրտը կը մեղադրէ մեզի: Որովհետեւ Աստուած մեր սրտէն աւելի մեծ է, եւ Ան ամէն բան գիտէ: Սիրելիներ, եթէ մեր սրտերը չմեղադրեն մեզի, համարձակութիւն ունինք Աստուծոյ առջեւ, եւ ինչ որ խնդրենք, կը ստանանք Անորմէ, որովհետեւ Անոր պատուիրանները կը պահենք, եւ կ'ընենք այն, ինչ որ կը հաճեցնէ Անոր»:

– Ա. Յովհաննէս 3.19-22

Խիղճն Աստուծոյ ծայնն է ամէն մարդու մէջ, Արարիչին դրոշմը եւ Անոր պայմանները՝ ապրելու այն կեանքը, որուն համար ստեղծուած ենք: Ոչ ոք կրնայ փախչիլ իր խիղճէն: Ես

միշտ զարմացած եմ, որ ինչ որ մեկը մարդ մը կը սպաննէ կամ դրամատուն կը թալանէ ու փախուստի կը դիմէ, բայց յանկարծ յետոյ անձամբ կը ներկայանայ ոստիկանութիւն: Բայց հիմա գիտեմ, որ ասկէ աւելի վատ տանջանք չկայ, երբ խիղճդ քեզ կը մեղադրէ: Երկրորդ Կորնթացիս 1.12-ին մէջ Պօղոսը կ'ըսէ, որ խիղճը կը վկայէ. այն կը խօսի:

«Հիմա մեր պարծանքը ասիկա է. մեր խիղճը կը վկայէ, որ մենք այս աշխարհին մէջ եւ յարկապէս ձեզի հետ փոխյարաբերութիւններու մէջ սրբութեամբ եւ անկեղծութեամբ վարուած ենք, որոնք Աստուծմէ են: Եւ ասիկա ըրած ենք ոչ թէ աշխարհիկ իմաստութեամբ, այլ Աստուծոյ շնորհքով»:

– Բ. Կորնթացիս 1.12

Թերեւս ըսէք. «Իսկ ի՞նչ իրաւունքով խիղճը կը խօսի: Ինչո՞ւ իր վկայութիւնը պէտք է լսուի օրէնքի հոգեւոր դատարանին մէջ»: Քանի որ ատիկա Աստուծոյ ձայնն է: Պօղոսը Հռովմայեցիներու 2.14,15-ին մէջ դարձեալ կ'ըսէ, որ խիղճը յաճախակի մեզի հետ կը խօսի:

«Իսկապէս, երբ հեթանոսները, որոնք օրէնք չունին, բնութեամբ օրէնքի գործերը կ'ընեն, անոնք իրենք իրենց համար օրէնք են, թէեւ օրէնք չունին, քանի որ ցոյց կու տան, որ օրէնքի պահանջները իրենց սրտերուն վրայ գրուած է: Անոնց խիղճն ալ կը վկայէ, իրենց միտքերն ալ կը յանդիմանեն իրենց, հիմա նոյնիսկ կը պաշտպանեն իրենց»:

– Հռովմայեցիս 2.14,15

Ամէն մէկը խիղճ ունի: Թերեւս չհամաձայնիք: Թերեւս կը ճանչնաք այնպիսի մարդոց, որոնք կարծես որեւէ զգացում

չունին: Բայց կը վստահեցնեմ, անոնք այդպիսին չեն եղած: Եթէ մարդը կը շարունակէ ընդդիմանալ իր խիղճի ծայնին, այդ ծայնն աւելի ու աւելի կը լռէ:

«Այսպիսի վարդապետութիւնները կու գան կեղծաւոր ստախոսներէն, որոնց խիղճը տաք երկաթով խանձուած է» (Ա. Տիմոթէոս 4.2):

Պօղոսը կ'ըսէ, որ այս մարդիկ իրենց խիղճը խանձած են, կամ այլեւս ի վիճակի չեն զգալու կամ լսելու իրենց խիղճի ծայնը՝ բթացնելով սրտերը այդ ծայնին նկատմամբ: Պատկերացուցէք ձեր մաշկը: Եթէ դուք այն տաք երկաթով խանձէք, այսինքն՝ այրէք, դուք ի վիճակի չէք ըլլար զգալու, մինչեւ որ նոր մաշկ ունենաք, եւ հին, չորցած վէրքը անցնի: Նոյնը կը վերաբերի գիտակցութեանը: Խիղճդ քեզի ոչինչ կ'ընէ: Այն միայն կը խօսի: Դուն կրնաս անտեսել կամ հակառակիլ ատոր: Բայց Պօղոսը կը զգուշացնէ, որ եթէ անտեսես քու խիղճի ծայնը, մեծ խնդիրներու մէջ կրնաս իյնալ կամ նաւաբեկութեան կ'ենթարկես կեանքդ:

«Տիմոթէոս, որդեակս, կը պատուիրեմ, որ քու վրայ եղած բոլոր մարգարէութիւնները պահես, եւ աստուծոյ հետեւելով՝ պատերազմիս բարի պատերազմը՝ ամուր բռնելով հաւատքը եւ բարի խղճմտանքը: Ոմանք մերժեցին ասոնք եւ իրենց կեանքերը նաւաբեկութեան ենթարկեցին»:

– Ա. Տիմոթէոս 1.18,19

Հիմնականին, այն մարդիկ, որոնք կը խստացնեն իրենց սրտերը խիղճի ծայնին նկատմամբ, կը կորսնցնեն իրենց կեանքերը ղեկավարելու կարողութիւնը: Անոնց կողմնացոյցը կը խափանուի: Անոնք չեն կողմնորոշուիր, թէ որ կողմէն

երթան: Պողոսը կ'ըսէ, որ մենք պէտք է պահենք բարի խղճմտանքը, այսինքն՝ այն խիղճը, որը մաքուր է, որպէսզի վստահ ըլլանք, որ ճիշդ ուղղութեամբ կ'երթանք: Քանի որ մենք կրնանք խստացնել մեր սրտերը եւ վնասել ճիշդն ու սխալը զանազանելու կարողութիւնը: Պողոսը կ'ըսէ, որ կարելի է հետեւիլ օրէնքին եւ ընել այն, ինչ որ ճիշդ է.

«Ատոր համար ալ պէտք է հնազանդիլ իշխանութիւններուն, ոչ միայն հնարաւոր պարիժի համար, այլ նաեւ խղճմարանքի համար» (Հռովմայեցիս 13.5):

Եթէ դուք օրէնքին անհնազանդ ըլլաք, ձեր խղճմտանքը կը մեղադրէ ձեզի: Ատոր համար ալ Պողոսը կ'ըսէ, որ հնազանդիւք օրէնքին, որ ընենք այն, ինչ որ ճիշդ է, որպէսզի մեր խիղճը նուրբ ու զգայուն մնայ եւ կարենայ գործել այնպէս, ինչպէս որ Աստուած նախատեսած է, որպէսզի այն պահպանէ մեզի վտանգէն:

Խիղճի հետ կապուած ուրիշ անմիտ թուացող պատմութիւն մը կայ, որ կը նկարագրէ այս սկզբունքը: Այս դէպքը պատահած է այն ժամանակ, երբ ես տակաւին հովիւ չէի: Այս պատմութիւնը լսելով՝ կը հասկնաք, թէ ինչու Աստուած ինծի թոյլ չէր տար հովուութիւն ընել: Այս պատմութեան գլխաւոր հերոսը իմ ինքնաշարժն էր՝ «Փեժօ 505 Քուիէ» մակնիշի, որ շատ կը սիրէի: Օր մը, երբ ինքնաշարժով կեցած էի ազդայոյսին տակ, ինչ որ մէկը հարուածեց ինքնաշարժիս ետնամասին: Բեռնախցիկը կոտրուեցաւ, ինքնաշարժին ետնամասը ծռաւ, նաեւ վնասուեցան ինքնաշարժէն տարբեր մասեր: Այդ տղուն ապահովագրութեան գործակալը մեր տունը եկաւ՝ մեր ինքնաշարժը տեսնելու եւ փոխհատուցման արժէքն ըսելու համար:

Մինչեւ շարունակելը, թէ ինչ պատահեցաւ անոր գալէն

ետք, պէտք է պատմեմ, որ այս արկածէն քանի մը օր առաջ, ինքնաշարժին խլացուցիչը ինկած էր, իսկ գործակալին գալէն քանի մը շաբաթ առաջ առաստաղամուտի շարժիչը խափանուած էր: Երբ ապահովագրական գործակալն եկաւ ինքնաշարժը զննելու, հարցուց, թէ արդե՞ծք այն ձայնախլացուցիչը, որ դրուած էր ինքնաշարժին կողքին (ես դիտաւորեալ հոն դրած էի, որ ան տեսնէր), նոյնպէս արկածին հետեւանքով փրցուած էր: Ես քիչ մը խիղճի խայթ ունենալով ըսի. «Այո՛, պարո՛ն»: Ան հարցուց՝ արդե՞ծք արեւային ապակիի շարժիչն ալ արկածի հետեւանքով չ'աշխատիր: Պատասխանս կրկին «այո» էր:

Մէջէն խիղճն կ'աղաղակէր. «Կէրի, այդ ի՞նչ կ'ընես: Դուն կը ստես»: Հիմա տեսէք, թէ ինչպէս ես ինծի խաբեցի: Ես կը ստիպէի ինծի անտեսել այդ ձայնը եւ վստահ էի, որ այն պիտի հեռանայ: Այսօր հաւատքս չի գար, որ այդ ժամանակ այդպէս կը մտածէի: Մի՞թէ ուրախալի չէ, որ այդ ժամանակ տակաւին հովութիւն չէի ըներ: Բայց Աստուած հովութիւն կ'ընէր:

Ինչ որ է, ինքնաշարժը տարին արհեստանոց եւ մէկ շաբաթ յետոյ ինծի կանչեցին այն առնելու: Երբ արհեստանոցին մէջ տեսայ ինքնաշարժը, շատ ուրախացայ: Այն կատարեալ վիճակի մէջ էր: Տուն վերադառնալու ժամանակ այնքան ուրախ էի, քանի որ ինքնաշարժը նորոգուած էր: Մէկ-երկու շաբաթ յետոյ որոշեցի ճաշել Տրենտային եւ երեխաներուն հետ: Իմ գրասենեակը, որ վարձած էի ֆինանսական ընկերութեան համար, մեր տունէն ընդամէնը հինգ քիլոմէթր հեռու էր: Ես մտայ դէպի բակ տանող փողոցը եւ կեցուցի ինքնաշարժը մեր առջեւի դրան քով, տուն մտայ եւ լաւ մը ճաշեցինք:

Երբ արդէն կ'ուզէի երթալ, դուրս ելայ տան մուտքէն եւ տեսայ, որ ինքնաշարժը հոն չէ: Շփոթեցայ: Ու՛ր էր այն: Շուրջս նայեցայ ու տեսայ այն: Մեր տունը բլուրի գագաթին

վրայ էր, իսկ ես հաւանաբար մոռցած էի քաշել ձեռքի արգելակը: Թէեւ երբեք նման բան չէի ըրած, բայց ամենայն հաւանականութեամբ այդ անգամ ըրած էի, քանի որ ինքնաշարժը ետ-ետ գլորած էր փողոցով եւ հարուածած էր ծառին: Երբ հասայ ինքնաշարժին, ապշեցայ: Բեռնախցիկը սեղմուած էր, եւ ինքնաշարժը գրեթէ նոյն չափով վնասուած էր, ինչ որ այն ժամանակ, երբ հարուածած էին: Ետնամասը կրկին ծռած էր, խլացուցիչն ինկած էր, եւ առաստաղամուտի շարժիչը կրկին չէր աշխատեր: Ինքնաշարժը ճիշդ այն վիճակի մէջ էր, ինչ որ նախքան արհեստանոց տանիլը:

Հոն կեցած յանկարծ հասկցայ, թէ ինչ կատարուած է, ու սկսայ ծիծաղիլ. Աստուած ինծի դաս կու տար, դաս մը, որ այս քարոզիչ տղան պէտք է սորվէր նախքան մարդոց առաջնորդելը: Ես այդպէս ալ չնորոգեցի այդ ինքնաշարժը եւ որպէս պահեստամաս վաճառեցի:

Պատմութիւն մըն ալ կը յիշեմ, երբ խիղճս կը պոռար, որ կենամ: Ես ատիկա կը կոչեմ հեծանիւային պատմութիւն:

Յոյսով եմ, ասիկա ինչ որ ձեւով կ'օգնէ ձեզի: Գիտեմ, երբեք չէիք մտածեր, որ ես կրնայի այդ աստիճան նուաստանալ, որ ընդունակ ըլլայի նման բաներու: Ես ուրախ եմ որ փրկուած եմ, քանի որ այնպիսի զգացողութիւն ունիմ, որ եթէ չփրկուէի, կեանքս բոլորովին այլ ընթացք պիտի ունենար:

Հեծանիւի պատմութիւնը տեղի ունեցած է այս պատմութենէն քանի մը տարի ետք: Այո՛, այդ ժամանակ նոր սկսած էի հովուել մեր նոր եկեղեցին: Շաբաթ օրը գացած էի հօրս տունը ու արդէն կ'ուզէի վերադառնալ: Ես մեր արծաթագոյն «Տոճ Քարաւանը» հետընթացով դուրս կը հանէի դէպի գլխաւոր երկկողմանի ճանապարհ: Հօրս տունը փոքրիկ բլրակի տակ էր եւ ներփակային ճանապարհի երկու կողմն ալ անոր սեփականութիւնն էր: Ինչ-ինչ պատճառով

Ես չէի նկատած բլրակէն վար իջնող հեծանիւ քշողին: Դանդաղ հետընթացով դուրս կ'ելլէի: Այդ ժամանակ ան իմ ետեւը չէր, բայց անոր հեծանիւը բլրակի թեքութեան վրայ թափ կը հաւաքէր ու ճիշդ այն ժամանակ, երբ ես արդէն կը պատրաստուէի առջեւ քշել, յանկարծ կը յայտնուի ինքնաշարժիս քով:

Ամբողջ ընթացքին ես անոր չէի տեսած, բայց յանկարծ ինքնաշարժին կողային հատուածէն ծայն լսեցի: Հայելիէն ետ նայեցայ, ինքնաշարժին ետեւը հեծանիւ քշող մըն էր՝ դեկը ձգած, երկու ձեռքով ալ մատ թափ կու տար եւ բարձր կը հայիոյէր: Ես զարմացայ ու վրդովեցայ, որ այդ հեծանիւ քշողը նոյն ձեւով կը վարուէր: Վստահ էի, որ հանգիստ կրնար դանդաղեցնել արագութիւնը, քանի որ ան բլուրէն վար կ'իջնէր ու տեսած էր, որ հետընթացով դուրս կ'ելլեմ: Եթէ շատ ցանկար, հաստատ նոյն այդ արագութեամբ կրնար շրջանցել ինծի, բայց փոխարէնը որոշած էր հասկցնել:

Ես ապշած էի, որ այդ տղային միտքէն կրնար անցնիլ վիճիլ ինքնաշարժին հետ: Մտածեցի, որ այս տաքարին երիտասարդին մէկը պէտք է դաս տայ: Ես դանդաղեցուցի իմ ընթացքը ու սպասեցի, որ ան անելի մօտենայ ինքնաշարժին, ու կտրուկ արգելակեցի: Ինչ որ բաւարարուածութիւն զգացի՝ տեսնելով, թէ ինչպէս ան խառնուած ձեռքը կը նետէ արգելակիչներուն ու կը փորձէ խուսափիլ, որ չհարուածէ ինքնաշարժիս ետնամասին: Այդ ամէնէն անելի կատղած՝ սկսաւ այնպիսի հայիոյանքներ ըսել, որ երբեք չէի լսած:

Ես դանդաղօրէն իջայ այդ ճանապարհէն եւ ինքնաշարժին ետնամասը մտցուցի ներբակային ճանապարհի մը մէջ այնպէս, որ ինքնաշարժին առջեւի մասը նայէր ճանապարհին: Այն անկիւնային դիրքէն ուղղուած էր դէպի հեծանիւ քշողը, որ կ'իջնէր իմ ուղղութեամբ: Երբ տեսաւ, որ իրեն կը սպասեմ,

Եւ իմ ինքնաշարժով ալ իրեն վրայ նշան բռնած եմ, յանկարծ լռեց: Կը կարծեմ, ի վերջոյ հասկցաւ, որ հեծանիւով է, եւ որ ինքնաշարժները հեծանիւներէն շատ աւելի մեծ են: Ես լուսամուտի ապակին իջեցուցի եւ սպասեցի, որ մօտենայ: Երբ մօտեցաւ ինծի, պոռացի անոր վրայ, որ եթէ մէկ անգամ ալ անոր տեսնեմ այդ ճանապարհին, ինքնաշարժին տակ կը նետեմ: Ոտքս անմիջապէս դրի պենզինին: Հազիւ այդ ժամանակ ինքնաշարժը 5 մեթր հեռաւորութեամբ ուղղուած էր ուղիղ հեծանիւ քշողին վրայ: Քիչ մնացած էր ինքնաշարժը հարուածէր հեծանիւին, բայց ընդամէնը վնասած էր: Այնպիսի զգացողութիւն էր, որ կարծես արդարութիւնը պաշտպանած էի: Մտածեցի. «Հաստատ լաւ դաս մը տուի ասոր», բայց ատիկա երկար չտեսց:

Հոգիիս խորքէն լսեցի Սուրբ Հոգիին ուժեղ եւ խիստ ձայնը. «Կէրի, այդ ի՞նչ կ'ընես»: Անկարելի է նկարագրել, թէ ինչպէս այս խօսքերն ազդեցին իմ վրայ: Յանկարծ հասկցայ, որ կրնայի սպաննել այդ մարդուն: Հայելիէն ետ նայեցայ. ան տակաւին հոն էր, շատ դանդաղ կը քալէր, գլուխը՝ կախ: Կամ վիրաւոր էր, կամ ալ զարմացած, որ դեռ կենդանի է: Ես շարունակեցի ճամբաս, բայց խիղճս ինծի հանգիստ չէր տար: Որպէս նոր հովիւ, կը պատկերացնէի, թէ ինչ կրնար պատահիլ: Արդէն կը պատկերացնէի, թէ ինչ պիտի գրէին թերթերը. ««Հաւատքի կեանք» եկեղեցւոյ հովիւը վրաերթի ենթարկած է հեծանիւ քշողին ճանապարհային վիճաբանութեան հետեւանքով»: Սուրբ Հոգին յիշեցուց, որ այդ համայնքին մէջ ինծի կանչած էր եկեղեցի հիմնելու ճիշդ այդպիսի մարդոց համար: Ինքս իմ արարքէն ապշած էի եւ արցունքներով ապաշխարեցի Տիրոջ առջեւ:

Այսպիսով, համաձայնեցէք, որ իրականութեան մէջ Աստուծոյ ձայնը լսած էք: Բայց պէտք է այդ խիղճի ձայնի հանդէպ միշտ զգայուն ըլլաք եւ թոյլ չտաք, որ ձեր սիրտը

բթանայ, որպէսզի միշտ լսէք Աստուծոյ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ Իսրայէլի մարդիկ խստացուցին իրենց սրտերը Աստուծոյ հանդէպ եւ այդպէս ալ չկրցան մտնել Խոստմունքի երկիր: Եբրայեցիս թուղթի հեղինակը Նոր կտակարանի հաւատացեալներուն կը զգուշացնէ, որ չհետեւինք անոնց օրինակին:

«Այսպիսով, ինչպէս Սուրբ Հոգին կ'ըսէ. «Այսօր, եթէ Անոր ծայնը լսէք, ձեր սրտերը մի՛ խստացնէք, ինչպէս ձեր ըմբոստութեան ժամանակ՝ փորձութեան օրը անապարի մէջ»»:

– Եբրայեցիս 3.7,8

Երրորդ եւ չորրորդ գլուխներուն մէջ այս զգուշացումը առնուազն երեք անգամ կը կրկնուի: Ինչհիւ ասոր մասին կը զգուշացուի: Քանի որ Աստուած կը ցանկայ օրհնել ձեզի եւ կը ցանկայ, որ դուք ունենաք այն ամէնը, ինչին համար Յիսուսը արդէն վճարած է:

Երբ կը խօսին խստասրտութեան մասին, կը յիշեմ այն ժամանակները, երբ դեռ փոքրիկ տղայ էի, ու պոնի (կարճահասակ ձի) ունէինք: Ան իմ կեանքին մէջ հանդիպած ամենանենգ, միեւնոյն ժամանակ ամենախելացի կենդանին էր: Միայն ես կրնայի անոր վրայ նստիլ, կամ, ճիշդ կ'ըլլայ ըսել, միայն ես կը համարձակէի անոր վրայ նստիլ: Կը յիշեմ, ընկերներէս մէկը կը պնդէր, որ շատ կը սիրէ ձիեր եւ կրնայ որեւէ ձիու վրայ նստիլ: Օր մը յամառեցաւ, որ

**ԱՅՍՊԻՍՈՎ, ԻՆՉՊԵՍ
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ
Կ'ԸՍԷ. «ԱՅՍՈՐ, ԵԹԷ
ԱՆՈՐ ՁԱՅՆԸ ԼՍԷՔ,
ՁԵՐ ՍՐՏԵՐԸ ՄԻ՛
ԽՍՏԱՅՆԷՔ, ԻՆՉՊԵՍ
ՁԵՐ ԸՄԲՈՍՏՈՒԹԵԱՆ
ԺԱՄԱՆԱԿ՝
ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՕՐԸ
ԱՆԱՊԱՏԻ ՄԷՋ»:**

– ԵԲՐԱՅԵՑԻՍ 3.7,8

Կ'ուզէ Թոնիին վրայ նստիլ (պոնիին այդպէս կը կանչէինք): Որոշ ժամանակ յետոյ անոր յաջողեցաւ համոզել ինծի, որ թոյլ տամ փորձէ, ու Թոնիին թամբեցի: Այդ տղուն անունը Ճեքի էր: Երբեք չեմ մոռնար, թէ ինչ պատահեցաւ, երբ ան նստաւ թամբին: Հազիւ որ Թոնիին վրայ նստաւ, ձին տեղէն թռաւ: Առանց վայրկեան մը կանգ առնելու Թոնին շարժեցաւ դէպի լճակը, որ տունէն յիսուն մետր հեռաւորութեան վրայ կը գտնուէր: Ճեքին ամբողջ ուժով կը քաշէր սանձը ու կը պոռար, որ Թոնին կենայ, բայց Թոնին ոչ մէկ ուշադրութիւն կը դարձնէր անոր: Փոխարէնը, Թոնին ամբողջ ուժով կը սլանար դէպի լճակը, ու յանկարծ գամուեցաւ տեղը ու գլուխն իջեցուց դէպի ջուրը: Անշուշտ, Ճեքին պոնիին գլխուն վրայէն պտոյտ մը գործեց եւ ինկաւ լճակը: Թոնին դարձաւ ու սկսաւ հանգիստ խոտ արածել, կարծես՝ ոչինչ պատահած էր:

Կը հասկնամք, Թոնիին սանձերն այնքան քաշուած էր, որ սանձի սայրն այլեւս չէր ցաւցներ բերանը: Անոր բերանը կարծրացած ու անզգայացած էր, ատոր համար ալ ոչ մէկ ուշադրութիւն կը դարձնէր ատոր: Որպէս ձի, Թոնին անպէտքին մէկն էր, ու բացի ինձմէ, ուրիշ ոչ մէկուն կ'ենթարկուէր: Իսկ ինչո՞ւ միայն ինծի կը լսէր: Որովհետեւ խելացի էր: Չէ՞ որ ես անոր կը կերակրէի: Հասկցած էր, որ եթէ կ'ուզէ այդ ախոռէն ելլել մաքուր օդի համար ու արածել այն կանաչ խոտը, որուն համար խելքն իրենինը չէր, ուրեմն պիտի ձգէր, որ հեծնէի: Բայց աչքս վրան պիտի պահէի: Երբ կը նստէի անոր վրայ, ու ան կը քալէր, գլուխը միշտ մէկ կողմի վրայ կը պահէր, որ աչքին ծայրէն տեսնէր ինծի: Ան կը սպասէր, որ գլուխս հակառակ կողմ թեքեմ: Այդ ժամանակ գլուխն աւելի ետ կը բերէր ու ոտքս կը կծէր: Ըսեմ, որ ձիուն խաճնելը շատ ցաւոտ է, ու ատոր համար աչքս միշտ վրան կը պահէի: Բայց ինչ կը վերաբերի օգուտ տալուն, անկէ օգուտ չկար:

Այսպիսով, եթե թոյլ տանք, որ մեր սրտերը կարծրանան, մենք Աստուծոյ համար անպիտան կը դառնանք, ինչպէս որ այդ պոնին էր: Օր մը Թոնիին երկաթեայ շղթայով կապեցինք դուրսը: Երբ հայրս դարձաւ, որ տուն երթայ, Թոնին հասաւ ու յետոյքը խածաւ: Հայրս այդ ժամանակ փրկուած չէր եւ շատ բարկացկոտ էր: Ջուրի դոյլին քով քարաղի կտոր մը կար, հայրս վերցուց ու ամբողջ ուժով շարտեց Թոնիին վրայ: Թոնիին ոչինչ պատահեցաւ: Իսկ ես այդ ամէնէն յետոյ Թոնիին կը վստահէի: Երբեք:

Այդպէս ալ մարդոց կեանքերուն մէջ է: Անոնց կը թուի, թէ ոչինչ կ'ընեն. պարզապէս չեն հնազանդիր, այս անգամ ալ իրենց խիղճին հակառակ կ'երթան՝ չհասկնալով, որ ամէն անգամ այդպէս վարուելով հիւսուածքները կը սպիանան: Օր մը անոնք կը դառնան Թոնիին պէս եւ ոչ ցաւ կը զգան, ոչ ալ խիղճի խայթ, քանի որ այլեւս չեն հնազանդիր Աստուծոյ: Ասոր լուծումը հետեւեալն է. երբ կը գիտակցիս, որ քու խիղճին հակառակ գացած ես, պէտք է ապաշխարես:

Սաղմոս 51-ը Դաւիթ թագաւորը գրած է Բերսաբէէի հետ մեղք գործելէն յետոյ: Ասիկա ապաշխարութեան սաղմոս է:

«Ողորմէ՛ ինծի, Աստուած, Քու անսպառ սիրոյ համեմատ, եւ Քու մեծ ողորմութեան համեմատ ջնջէ՛ իմ անօրէնութիւնները: Լուա՛ իմ բոլոր անարդարութիւնները եւ սրբէ՛ ինծի իմ մեղքէն: Որովհետեւ ես կը ճանչնամ իմ անօրէնութիւնները, եւ իմ մեղքն ամէն ժամանակ իմ առջեւ է: Քու դէմ, միմիայն Քեզի դէմ մեղանչեցի եւ չարը Քու աչքին առջեւ գործեցի, որ Դուն արդար ըլլաս, երբ կը խօսիս, եւ մաքուր, երբ կը դատես: Ահա ես ծնելու ժամանակ՝ անօրէն էի եւ մեղաւոր, այն ժամանակէն, որ մայրս յղացաւ ինձմով: Ահա Դուն կը սիրես, որ ճշմարտութիւն

ըլլայ ներքին մասերուն մէջ, եւ ծածուկ տեղը
իմաստութիւն կը սորվեցնես ինծի: Սրբէ՛ ինծի զոպայով,
եւ ես մաքուր կ'ըլլամ, լուա՛ ինծի, եւ ձիւնէն աւելի ճերմակ
կ'ըլլամ: Թո՛ղ տուր, որ ցնծութիւն եւ ուրախութիւն լսեմ.
թող ցնծան այն ոսկորները, որ կոտորապեցիր: Երեսդ
պահէ՛ իմ մեղքերէն եւ իմ բոլոր անօրէնութիւնները
ջնջէ: Մաքուր սիրտ ստեղծէ իմ մէջ, ո՛վ Աստուած, եւ
ուղիղ հոգի նորոգէ իմ ներսը: Մէկ կողմ մի՛ նեւեր ինծի
Քու ներկայութենէն կամ Քու Սուրբ Հոգին ինձմէ՛ մի՛
վերցնէր: Քու փրկութեան ուրախութիւնը վերականգնէ՛
ինծի համար, եւ կամեցող հոգի՛ տուր, որ ինծի պահէ»:

– Սաղմոս 51.1-12

«Որովհետեւ պատարագը Քեզ չ'ուրախացներ, այլապէս
ես կը մարուցէի, եւ ողջակէզները Քեզի հաճելի չէն:
Աստուծոյն հաճելի զոհը կոտորուած հոգին է. կոտորուած
ու զղջացող սիրտը Դուն չես անտեսեր, ո՛վ Աստուած»:

– Սաղմոս 51.16,17

Դաւիթը կ'աղաղակէ Աստուծոյ, որ մաքուր սիրտ ստեղծէ իր
մէջ, կոտորուած հոգի ու ապաշխարող սիրտ: Իրականութեան
մէջ, Դաւիթը հոն կ'ըսէ, որ կ'ուզէ սիրտ մը ունենալ, որ նորէն
կը զգայ: Բայց Դաւիթը երբեք այդ փորձանքի մէջ չէր իյնար,
եթէ լսէր իր խիղճին: Ուրեմն, յիշեցէք, եթէ անտեսեք ձեր
խիղճին ծայնը, դուք կը կարծրացնէք ձեր սիրտը, եւ յաջորդ
անգամ աւելի դիւրին կրնաք ընել նոյն բանը, յետոյ կրկին
կ'ընէք, եւ այդպէս շարունակ, մինչեւ որ ընդհանրապէս չէք
լսեր Աստուծոյ:

Խիղճը՝ Աստուծոյ ծայնը լսելու ձեւերէն մէկն է: Անշուշտ,
Սուրբ Հոգին մեզի հետ ուղիղ կը խօսի խրատներով եւ
ուղղորդումներով: Եւ ինչպէս արդէն ըսած եմ, ես լսած եմ, թէ

ինչպէս Սուրբ Հոգին կ'ուղղէ ինծի թէ բարձր եւ հրամայական ձայնով, թէ ցած եւ մեղմ ձայնով: Ան ինծի հետ խօսած է նաեւ երազներու ու տեսիլքներու միջոցով, որոնց մասին կը խօսինք յաջորդ գլուխին մէջ: Այս գլուխին մէջ սորվեցուցինք, որ եթէ կը ցանկանք լսել Աստուծոյ ձայնը, պէտք է մաքուր պահենք մեր խիղճը ամէն տեսակ մեղադրանքներէն, եւ արագ ապաշխարենք, որպէսզի այն նուրբ ու զգայուն մնայ, ու կարենանք լսել:

ՏԵՍԻԼՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

Օր մը վեր թռայ անկողինէս ու Տրենտային ըսի. «Դուն յղի ես, եւ երեխան ալ աղջիկ է»:

Մեր ընտանիքին մէջ առաջին անգամ էր, որ Աստուած երեխայի սեռը յայտնեց մեզի: Փոլին մեր չորրորդ զաւակն է: Կը կարծեմ Աստուած ատիկա յայտնած էր, որ վստահ ըլլայինք, քանի որ երբ Տրենտան Փոլիով յղի էր, վեցերորդ ամսուան մէջ մենք արկածի ենթարկուեցանք: Մենք կ'ընթանայինք երկկողմանի ճանապարհով մը՝ 80քմ/ժ արագութեամբ, եւ յանկարծ մեր առջեւ ինքնաշարժ մը յայտնուեցաւ: Չհասցուցինք արգելակել, ու հարուածեցինք անոր ինքնաշարժին: Ոչ ոք լուրջ վնասուածք ստացած էր, բայց բոլորս ալ գացինք հիւանդանոց: Տրենտան, յղի վիճակին, ամրագօտիէն կապտուկ ստացած էր եւ ստամոքսն ալ քիչ մը ցաւուցած էր: Ան կը մտահոգուէր Փոլիին համար: Բայց քանի որ Աստուած մեզի արդէն ըսած էր Փոլիին մասին, մենք խաղաղութիւն ունէինք եւ գիտէինք, որ անոր հետ ամէն բան լաւ պիտի ըլլայ, եւ այդպէս ալ եղաւ:

Կը յիշեմ դէպք մը, երբ Փոլին արդէն ամուսնացած էր ու յղի էր իր առաջին զաւակով: Տրենտան եւ ես պէտք է երկրէն դուրս ելլէինք՝ մեկնէինք գործուղման: Յաւօք, Փոլիին ծննդաբերութեան օրերը այդ գործուղման

Ժամանակահատուածի մէջ էին: Եթէ կը ճանչնաք իմ կնոջը՝ Տրենտային, ուրեմն գիտէք, որ ան ոչ մէկ պարագայի իր աղջիկներուն ծննդաբերութիւնը բաց կը ձգէր: Մենք կը մտածէինք՝ չեղարկել այդ ճամբորդութիւնը, թէ ոչ: Որոշ ժամանակ աղօթեցի, եւ Սուրբ Հոգին ըսաւ, որ վերջնաժամկետը սխալ ըսած են, եւ որ երեխան պիտի ծնի մեր վերադարձի յաջորդ օրը: Տրենտային ըսի, թէ ինչ ըսած է Տէրը երեխային ծնելու օրուան մասին, եւ մենք մեկնեցանք ճամբորդութեան: Երբ տուն հասանք, Փոլիին ցաւերը սկսան ճիշդ այն օրը, որ Տէրն ըսած էր: Այվրին՝ մեր նոր թոռնուհին, ծնաւ ճիշդ ժամանակին:

Ասոնք օրինակներ են, թէ ինչպէս Սուրբ Հոգին կը խօսի մեզի հետ կեանքի խնդիրներու մասին, երբ Սուրբ Հոգիէն բխող բառերը դուրս կու գան մեր հոգիներէն: Բայց Սուրբ Հոգին շատ այլ ձեւերով ալ կը խօսի, որոնց մասին պէտք է տեղեակ ըլլանք:

«Եւ պիտի ըլլայ ասկէ յետոյ, որ Իմ Հոգին պիտի թափեմ ամէն մարդու վրայ: Ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարէանան, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Նոյնիսկ իմ ծառաներուն վրայ՝ թէ՛ կին, թէ՛ տղամարդ, այն օրերուն պիտի թափեմ Իմ Հոգին»:

– Յովել 2.28,29

Յովել մարգարէն կ'ըսէ, որ պիտի գայ այն օրը, երբ Աստուած Իր Հոգին պիտի թափէ մարդկութեան վրայ: Մենք հիմա այդ օրերուն մէջ կ'ապրինք: Պէնտէկոստէի օրը Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ, որոնք վերնատունը կը սպասէին: Ամբոխն ալ, տեսնելով վերնատունը եղողներուն լեզուներով խօսիլը եւ Աստուծոյ փառաբանելը, կարծեց թէ գինովցած են, եւ հարցուց. «Ասիկա ի՞նչ է»: Պետրոսն ալ կեցաւ եւ դիմեց ամբոխին:

«Եւ Պեպրոսը ոտքի ելաւ այն տասնմէկի հետ, իր ձայնը բարձրացուց եւ դիմեց ամբոխին. «Ո՛վ հրեայ հայրենակիցներ եւ ամէնքդ, որ Երուսաղէմի մէջ կը բնակիք, թո՛ղ տուէք բացապրեմ ձեզի եւ ուշադիր լսեցէք, թէ ինչ կ'ըսեմ ձեզի: Այս մարդիկ գինովցած չեն, ինչպէս որ կը կարծէք: Առաւօտեան տակաւին ժամը ինն է: Այլ ասիկա այն է, ինչի մասին որ ըսած է Յովել մարգարէն»:

«Եւ պիտի ըլլայ վերջին օրերուն մէջ,- կ'ըսէ Աստուած,- որ Իմ Հոգին պիտի թափեմ ամէն մարդու վրայ: Ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարէանան, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Նոյնիսկ իմ ծառաներուն վրայ՝ թէ՛ կին, թէ՛ տղամարդ, այն օրերուն մէջ պիտի թափեմ Իմ Հոգին»»:

– Գործք առաքելոց 2.14-18

Սուրբ Հոգին յաճախ մեզի հետ կը խօսի երազներու եւ տեսիլքներու միջոցով: Չեմ գիտեր, թէ ինչու Սուրբ Հոգին երբեմն կը խօսի մեղմ ու ցած ձայնով, երբեմն ալ երազի միջոցով: Թերեւս պատճառներէն մէկն այն է, որ մենք շատ զբաղած ենք: Երբ լուռ ենք, Ան կրնայ մեր ուշադրութիւնը որսալ: Կամ, թերեւս, այնպիսի շփոթութեան կամ լարուած իրավիճակի մէջ ենք, որ մեզի համար դժուար է լսել այդ մեղմ ու ցած ձայնը: Սուրբ Հոգին պարզապէս կը ցանկայ Խօսքը տեղ հասցնել: Ի վերջոյ, մէկ նկարը հազար բառ կ'արժէ: Ինչ ալ ըլլայ պատճառը, ես շնորհակալ եմ Աստուծոյ երազներու եւ տեսիլքներու համար: Երազներն ու տեսիլքները նման են: Երկուքի պարագային ալ պատկեր կը տեսնենք, տարբերութիւնն այն է, որ տեսիլքները կը տեսնենք արթուն ժամանակ, իսկ երազները՝ քնացած ժամանակ:

Ինչ կը վերաբերի տեսիլքներուն, ես ընդամէնը մէկ-երկու տեսիլք տեսած եմ, որ կրնամ անուանել բաց տեսիլք: Ասոնք

այն տեսիլքներն են, որոն ժամանակ դուն արթուն ես եւ տեսիլքը իրականութեան պէս կը տեսնես: Իմ տեսած ամէնէն իմաստալից տեսիլքը 19 տարեկանին տեսած եմ, երբ Աստուած կանչեց քարոզելու: Մէկ ամիս կ'ըլլար, ինչ մկրտուած էի Սուրբ Հոգիով: Անշուշտ այս ամէնը բոլորովին նոր էր ինծի համար, քանի որ այն յարանուանական եկեղեցին, ուր կը յաճախէի, շատ բան չէր սորվեցներ Սուրբ Հոգիին մասին:

Բայց այդ օրը իմ տարեդարձն էր, ընկերներս հրաւիրած էին գեղեցիկ ընթրիքի: Երբ նստեցանք ընթրելու, գոհացանք ուտելիքի համար, եւ յանկարծ զգացի, որ Սուրբ Հոգին հզօր ձեռով իջաւ իմ վրայ: Կը կրկնեմ, որ այս ամէնը նոր էր ինծի համար, բայց Սուրբ Հոգիով մկրտուելու փորձառութենէն արդէն գիտէի, թէ ինչ կը զգաս, երբ Սուրբ Հոգին կ'իջնէ քու վրայ: Այդ պահուն չէի գիտեր ինչ ընել: Ուստի, ներողութիւն խնդրեցի սեղանակիցներէն եւ դուրս ելայ:

Երբ դուրս ելայ, Աստուծոյ ներկայութիւնն աւելի զօրացաւ, եւ ես բաց տեսիլք մը տեսայ, այսինքն, իրականութեան մէջ տեսայ բաներ այնպէս, ինչպէս այսօր բնական չորս կողմս կը տեսնեմ: Տեսայ, որ կեցած եմ ամպիոնի մը ետեւը, եւ կը խօսիմ սենեակի մը մէջ, ուր մօտաւորապէս 35-40 մարդ կար, բոլորը նստած էին ծալովի աթոռներու վրայ: Կրնամ ըսել, որ գիշեր էր, քանի որ պատուհաններէն այն կողմ լրիւ սեւ էր: Յետոյ ձայն մը ինծի հետ խօսեցաւ. «Ես կը կանչեմ քեզի քարոզելու Իմ Խօսքը»: Ասիկա երեք անգամ կրկնուեցաւ, յետոյ պատկերն անհետացաւ, եւ օծութիւնը հեռացաւ: Երբ տուն գացի, ընկերներս հարցուցին, թէ ինչ պատահած է, իսկ ես պատասխանեցի. «Կը կարծեմ, ես կանչուեցայ քարոզելու»:

Կը յիշեմ, այդ գիշեր տուն գացի եւ հօրս պատմեցի պատահածը: Ան ըսաւ, որ քարոզիչները շատ գումար չեն վաստկիր: Ընդամէնը այդքանը: Ան այդ ժամանակ տակաւին

քրիստոնեայ չէր, բայց փանօք Աստուծոյ, ան ընդունեց Յիսուսին, երբ 80 տարեկան էր, եւ հիմա Երկինքն է:

Կը կարծեմ, որ Սուրբ Հոգին ինծի հետ այս անգամ բաց տեսիլքով խօսեցաւ, նախեառաջ այն պատճառով, որ ես երիտասարդ էի: Ան գիտէր, որ ընտանիքին մէջ ես մեծ հալածանքի պիտի հանդիպիմ Աստուծոյ ծառայելու համար, այդ իսկ պատճառով, առջեւի իմ ճանապարհի համար ինծի խարխախ մը անհրաժեշտ էր: Եւ իրապէս, այդ տեսիլքը բոլոր տարիներու ընթացքին շարունակ խօսած է հետս:

Յաջորդ բաց տեսիլքը, որ տեսած եմ, մեր հին ագարակի տունն էր, ուր կ'ապրէինք: Մենք այդ հին, քանդուած տունը ապրած ենք մօտաւորապէս ինը տարի, հիմնականին սոսկալի աղքատութեան մէջ: Բայց հազիւ սորվեցանք, թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը, սկսանք բարգաւաճիլ եւ ամբողջութեամբ ազատեցանք պարտքերէն:

Այս ժամանակահատուածին մէջ էր, որ Աստուած իրականացուց իմ 19 տարեկանի տեսիլքը, երբ կանչեց ինծի քարոզելու: Քարոզելու կանչէն 21 տարի յետոյ միայն Աստուած ըսաւ, որ եկեղեցի հիմնեմ: Մինչ այդ ես քուէճի մէջ կը սորվէի եւ 21 տարի կ'աշխատէի ֆինանսական ոլորտին մէջ: Բայց ահա, 40 տարեկանին Աստուած կ'ըսէ, որ առջեւ երթամ եւ իմ եկեղեցին հիմնեմ:

Մենք մեր եկեղեցին սկսանք քրիստոնէական ռատիոյի սթուտիոյի նկուղին մէջ, եւ մեր առաջին հաւաքոյթը ճիշդ այն տեսիլքին պէս էր, որն Աստուած տուած էր 21 տարի առաջ: Այդ առաջին հաւաքոյթին մարդիկ նստած էին ծալովի աթոռներու վրայ, գիշեր էր: Այդ փոքրիկ բեմն ալ տեսայ:

Տրենտան եւ ես հիմնեցինք մեր եկեղեցին եւ այնքան ոգեւորուած էինք Թագաւորութեամբ, որ այլեւս կարելի չէր, թէ ուր կ'ապրէինք: Գիտէինք, որ մեր ագարակի տունէն պէտք

է դուրս ելլեինք, քանի որ ընտանիքին մէջ արդէն հինգ երեխայ կար, եւ այլեւս տունը չէինք տեղաւորուեր: Բայց մենք այնքան զբաղած էինք մեր ծաղկող առեւտուրով եւ եկեղեցիով, որ երջանիկ էինք, ու մեզի այլեւս ոչինչ կը հետաքրքրէր:

Օր մը եկեղեցիէն տուն եկայ ու նստայ հիւրասենեակի բազմոցին: Նստելուս պէս իմ շուրջը գտնուող սենեակն անհետացաւ, եւ նոյն սենեակը կը տեսնէի, ուր հազիւ նոր նստայ, բայց առանց որեւէ կահոյքի: Այն դուռը, որուն միջոցով հազիւ նոր ներս մտած էի, բացուեցաւ դէպի ճաշասենեակ, եւ այն բազմոցը, որուն վրայ նստած էի, դարձաւ դէպի դուռը: Հիւրասենեակին մէջ նստած տեղէս կրնայի տեսնել ճաշասենեակը: Ոչ միայն հիւրասենեակը լրիւ դատարկ էր, այլ նաեւ ճաշասենեակը: Տեսիլքն ընդամէնը հինգ երկվայրկեան տեւեց, եւ ասիկա տեսնելուս պէս հասկցայ, որ ագարակի տունէն երթալու ժամանակն է: Երբ տեսիլքն աւարտեցաւ, ես անմիջապէս պատմեցի Տրենտային կատարուածը եւ ըսի, որ այդ տունէն դուրս ելլելու ժամանակն է:

Կը կարծեմ՝ այս պարագային ալ Աստուած տեսիլքն օգտագործեց, որպէսզի Իր ծրագիրը պարզ ձեւով փոխանցէ մեզի: Մենք զբաղած էինք եւ շատ դիւրութեամբ կրնայինք ատիկա հետաձգել: Բայց տեսիլքը հրատապութիւն ունէր իր մէջ. «Երթալու ժամանակն է»: Միայն յետոյ հասկցանք այդ հրատապութեան պատճառը: Ինը տարիներու ընթացքին մենք կը վարձակալէինք այդ ագարակի տունը, եւ գիտէինք, որ պէտք է ձգէինք այն, հազիւ որ այդ տարածքին մէջ նախատեսուած քաղաքաշինութեան ծրագիրը գործի դրուէր, բայց ոչ ոք յստակ գիտէր, թէ ատիկա երբ տեղի պիտի ունենայ:

Կարճ ըսած, Աստուած մեզի առաջնորդեց դէպի գեղեցիկ հողակտոր մը, ուր կառուցեցինք մեր նոր տունը: Մենք կը ծրագրէինք հանգիստ կառուցել մեր տունը, քանի որ աստոր

վրայ աշխատելու ժամանակ ունեինք, թերեւս մէկ կամ երկու տարի: Բայց վեց ամիս մեր տան վրայ աշխատելէն ետք տանտիրոջմէն հեռաձայն ստացանք, որ կ'ըսէր, թէ մէկ ամսուան ընթացքին պէտք է ձգէինք այդ փոքրիկ տունը: Մենք անոր ըսինք, որ նոր տուն կը կառուցենք եւ խնդրեցինք մեզի երկու կամ երեք ամիս ժամանակ տալ: Ան համաձայնեցաւ, բայց ըսաւ, որ ատկէ յետոյ այլեւս որեւէ ընդառաջում պիտի չըլլայ:

Մենք զօրաւոր ընթացք տուինք շինարարութեանը եւ ժամանակին աւարտեցինք մեր տան կառուցումը: Եթէ Աստուած չտեղեկացնէր մեզի տեղափոխուելու մասին, մենք ստիպուած պիտի ըլլայինք քանի մը անգամ տունէ-տուն տեղափոխուելու այդ ընթացքին, եւ հաշուի առնելով մեր զբաղուածութիւնը, աստիկա խնդիր պիտի յառաջացնէր:

Անշուշտ, այն «կապոյտ մշուշը», որուն մասին պատմած էի գիրքի սկիզբը, որ կեանք փոխող իրադարձութիւն էր, նոյնպէս բաց տեսիլք էր: Ատիկա քիչ մը տարբեր էր, քանի որ ես չէի տեսներ իմ ապագայի պատկերը, այլ այդ կապոյտ մշուշի մէջ նստած՝ կը լսէի Սուրբ Հոգիին ձայնը, Որ կը կանչէր ինծի ազգերուն մէջ:

Վստահ եմ քանի մը այլ բաց տեսիլքներ տեսած եմ, բայց երազները գերակշռած են: Երբ կ'երթայի Ալպանիա, մէկ շաբաթ առաջ գալիք ճամբորդութեան վերաբերեալ երազ մը տեսայ: Այդ ժամանակ ես ընդհանրապէս չէի ճամբորդած, ու նախքան Աստուծոյ խօսիլը, ես բոլորովին հետաքրքրուած չէի ճամբորդութեամբ:

Բայց մեկնելէս մէկ շաբաթ առաջ այս երազը տեսայ: Երազին մէջ բժիշկի սենեակը պառկած էի հետազօտութեան սեղանին վրայ, եւ բուժքոյր մը ներս մտաւ ու ըսաւ, որ պէտք է արին առնէ: Ան բռնեց ձեռքս, միջնամատս վեր պահեց, որ

ծակէ: Ինձի համար ատիկա տարօրինակ էր: Բայց գիտէք, թէ երազներն ինչպիսին կ'ըլլան: Կան բաներ, որ միայն երազներուն մէջ կը տեսնես:

Այս երազին մէջ հասկցայ, որ մոլորակը լքելէն առաջ իմ բոլոր մատները պէտք է ծակեն, որ արիւն առնեն: Այս տեսարանը խօսեցաւ հետս, քանի որ Աստուածաշնչեան դպրոցին մէջ մեզի սորվեցուցած էին, որ ձեռքի օգնութեամբ կրնայինք յիշել եկեղեցւոյ հինգ պարգեւները. բթմատը՝ առաքեալն էր, ցուցամատը՝ մարգարէն, միջնամատը՝ աւետարանիչը, մատնեմատը հովիւը, եւ ճկոյթը՝ ուսուցիչը, որ կը գործէ հովիւին հետ միասին:

Այսպիսով, ես հասկցայ, թէ բուժքոյրն ինձի ինչ կ'ըսէր: Հասկցայ, որ իմ կեանքի ընթացքին, առնուազն որոշակի հատուածներուն մէջ, ես պէտք է եկեղեցւոյ բոլոր պարգեւներով ծառայեմ: Անշուշտ, ես հովիւ եմ եւ ուսուցիչ, բայց գիտեմ նաեւ, որ եկեղեցւոյ համար մարգարէական խօսք ունիմ Աստուծոյ Թագաւորութեան եւ ֆինանսներու առնչութեամբ: Յիսուսը ճիշդ ասոր համար ինձի կանչած էր, որ ըլլամ Ալպանիոյ մէջ: Երազիս մէջ բուժքոյրը իմ միջնամատը ծակեց, ու հասկցայ, որ Աստուած ինձի Ալպանիա կ'ուղարկէ որպէս աւետարանիչ՝ տանելու Աւետարանի Բարի լուրը: Հիմա ես նոր կը սկսիմ գործել եւ քայլ ընել իմ կեանքի առաքելական ծառայութեան մէջ:

Ինչ որ է, այդ երազին մէջ, երբ ան ծակեց իմ միջնամատը, իր երկու ձեռքերն իրար միացուց այնպէս, ինչպէս երեխաները կ'ընեն աղօթելու ժամանակ, նայեցաւ ինձի ու շուրթերը շարժելով, բայց առանց ձայնի, ըսաւ «աղօթէ» բառը: Ան ատիկա բարձրաձայն չըսաւ, այլ պարզապէս բերանը բաց ու խուփ ըրաւ: Մենք նման բան կ'ընենք, երբ կը գտնուինք վայրի մը մէջ, ուր կարելի չէ խօսիլ: Այդ երազէն հասկցայ, որ

Ես կ'ուղարկուիմ Ալպանիա որպէս անտարանիչ եւ պէտք է աղօթեմ այդ ճամբորդութեան համար:

Ես շատ ուրիշ երազներ տեսած եմ: Ատոնք անհնար է հաշուել կամ հոս ներկայացնել, բայց երազները Սուրբ Հոգիին ձայնն են: Ես հանդիպած եմ մարդոց, որոնք ամէն օր երազ կը տեսնեն եւ ամէն բան այնքան «հոգեւոր» է իրենց համար: Կը կարծեմ, դուք պէտք է զանազանէք երազները: Կան մարդիկ, որոնք կը ցանկան հոգեւոր երեւիլ եւ կ'ուրիշ հոգեւոր հպարտութեամբ եւ բաներ կը տեսնեն, որոնք Աստուծմէ չեն: Բայց ես այդքան ալ յաճախ երազ չեմ տեսներ: Տարուան ընթացքին չորսէն տասը երազ կը տեսնեմ, որոնք, վստահ եմ, որ Աստուծմէ են, եւ որոնք ինծի ինչ որ կարեւոր բան մը կը հաղորդեն: Անշուշտ այդ թիւը կրնայ թէ աւելի մեծ ըլլալ, թէ աւելի փոքր: Կը կարծեմ, բոլորովին էական չէ, թէ որքան երազ կը տեսնես, այլ՝ թէ ինչ կը սորվիս ատկէ:

Երազ մը տեսայ, որն իրապէս փոխեց կեանքս: Այդ երազին մէջ Աստուած ըսաւ, որ ձգեմ իմ ութ տարուան ֆինանսական ընկերութիւնը եւ հիմնեմ իմ սեփական ընկերութիւնը, որ օգնեմ մարդոց դուրս ելլելու պարտքերէն: Ատիկա հաստատ կարեւոր է:

Այնուհետեւ եղան նախազգուշացնող երազներ: Նախազգուշացնող երազ մը կը յիշեմ, որն իսկապէս տարօրինակ էր: Ատիկա պատահեցաւ այն ժամանակ, երբ ծառայութիւնը ֆինանսներու կարիք ունէր եւ ֆինանսական ճնշում կար: Երազիս մէջ տեսայ, որ պառկած եմ անկողինին մէջ ու կը փորձեմ քնանալ: Ննջարանին դուռը բաց էր, եւ թեթեւ աղմուկ մը լսեցի միջանցքին մէջ (այս ամէնը երազին մէջ կը տեսնեմ) եւ նայեցայ դէպի դուռը: Հոն փոքրիկ դու մը տեսայ, հասակը մօտաւորապէս մէկ մեթրի չափ, ան իր ետեւէն պարկ մը գումար կը տանէր: Այդ պարկը կը նմանէր Սանթա Բլաուզի

(կադանդ պապուկի) պարկին: Պարկն այնքան լեցուն էր, որ ան հազի կրնար շալկել: Ան դուրս չելաւ տունէն, այլ դարձաւ եւ բարձրացաւ երրորդ յարկ: Երբ արթնցայ եւ սկսայ խորհիլ երազին շուրջ, հասկցայ, որ Տէրը ինծի ցոյց կու տար, որ ֆինանսները կամ կը գողցուէին, կամ կը կորսուէին:

Զարմանալի էր, բայց երազին մէջ գիտէի, թէ պարկին մէջ որքան գումար կար: Կը յիշեմ, որ միտքիս մէջ 25.000 թին էր: Ես կը հասկնայի նաեւ, որ քանի որ դելը դուրս չէր ելած տունէն, այլ պարզապէս գումարը վերի յարկ բարձրացուցած էր, ուրեմն այն մարդը կամ մարդիկ, որոնք կը գողնային կամ թոյլ կու տային, որ գումարները սխալ օգտագործուէին, կը կազմէին տան մէկ մասը, եւ տուն ըսելով, գիտէի, որ ատիկա ծառայութիւնն է: Յաջորդ առաւօտեան առաջինը հեռաձայնեցի մեր գլխաւոր աւագին եւ խնդրեցի, որ ֆինանսական վարչութեան մէջ ստուգէ մեր հաշիւները. մենք բացայայտեցինք շատ ոչ տեղին եղած ծախսեր, որոնք անտեսուած էին:

Երբ այդ անկարելիոր ծախսերուն ամսական ֆինանսները գումարեցինք, ստացանք ամսական 25.000 տոլար գումար:

**ԱՍՏՈՒԱԾ ԵՐԱԶՆԵՐՈՒ
ՄԻՋՈՑՈՎ ԿՐՆԱՅ
ՔԵԶԻ ՏԱԼ ՆԱԵԻ
ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ:**

Մենք վճռեցինք, որ ոչ ոք կը գողնար, այլ անտարբերութեան պատճառով այդ գումարները կը կորսուէին: Կային նաեւ ծախսեր, որ կրնայինք կրճատել եւ գումար խնայել, բայց չէինք ըրած: Այդ

գումարը այդ ժամանակաշրջանին մէջ շատ անհրաժեշտ էր, քանի որ իրավիճակը սուղ էր:

Աստուած երազներու միջոցով կրնայ քեզի տալ նաեւ մարտավարութիւն: Անցեալ տարի՝ 2018 թուականին, յստակ երազ տեսայ, որ միայն այս խօսքերը կը լսէի. «հաւաքէ՛

նաւերը»: Գրի առի, բայց բան մը չհասկցայ: Շարունակ կը հարցնէի Տիրոջն այդ մասին, եւ բացի Տրենտայէն այլեւս մէկու մը չըսի: Յունուար ամիսն էր, եւ տղամարդոց հաւաքոյթին պիտի ներկայացնէի մէկ տարուան ընելիքները: Ատոնցմէ մէկը համազգային փոքր խումբի ծրագիրն էր, որուն մասին քանի մը տարիէ կը մտածէի, բայց զգացի, որ ճիշդ այս տարի պէտք է ընեմ: Հաւաքոյթէն յետոյ տղաներէն մէկը մօտեցաւ ինծի եւ ըսաւ, որ քիչ մը անմիտ թուացող մարդու պէս կը զգայ այն բանին համար, թէ ինչ պէտք է ըսէ, ան ըսաւ. «Տէրն ըսաւ, որ դուն նման ես Թրոյի Հեղինէին»: Ես գաղափար չունէի, թէ ինչի մասին կը խօսի, ուստի ան բացատրեց, թէ աստիկա ինչ կը նշանակէ: Խնդրեցի, որ ինծի ելեկտրոնային նամակ ուղարկէ՝ կրկնելով այն, ինչ որ ըսած էր դէմ առ դէմ: Ահա անոր նամակը.

«Սփարթայի թագաւորը՝ Մենելայոսը, հրամայեց պատրաստել 1000 նաւ եւ թրոյացիներուն ձեռքէն փրկել կնոջը՝ Հեղինէին: «Այն չքնաղ դէմքը, որ 1000 նաւ ուրքի հանեց»: Յայտնի գրական խօսքը յատկապէս կը վերաբերի Թրոյի Հեղինէին:

Չորեքշաբթի օրը, 2019 թուականի 30 Յունուարին, երբ հովիւը կը խօսէր Ապեքս տղամարդոց հաւաքոյթի ժամանակ, Տէրն ըսաւ, որ ան նման է Թրոյի Հեղինէին, երբ թագաւորը 1000 նաւ կը շարէ կորսնցուցածը փրկելու համար. փրկելու այն, ինչ որ կորսնցուցած են հաւաքի, ընտանիքի եւ ֆինանսներու մէջ»:

Տիրոջ ծառայ՝ Ահարոն

Այդ օրը ան անգամ մը եւս նամակ գրեց ինծի.

«Ես կ'ուզեմ ներկայացնել Թրոյի Հեղինէի պատմաազմական ակնարկը: Շարերուն համար

ապրիկա պատմություն է, երբ թագաւոր մը 1000 նաւով կը յարձակի թրոյացիներու ձեռքէն իր կնոջը փրկելու: Բայց զինուորական մտածելակերպով մարդուն համար ասիկա ռազմական գործողութիւն էր, որ կոչուեցաւ «Թրոյի Հեղինէի գործողութիւն»: Ամէն ռազմական լայնածաւալ գործողութեան կը տրուի անուանում մը: Օրինակ, «SEAL 6-րդ խումբի գործողութիւն» (SEAL Team Six), Ուսամա Պըն Լապէնի վրայ յարձակման գործողութիւնը կը կոչուէր «Նեփթինի նիզակ գործողութիւն»: Ես մասնակցած եմ այնպիսի գործողութիւններու, որոնք գոյնզգոյն անուններ ունէին, օրինակ «Մայք Ֆորուըրտի գործողութիւն», «Էլվիս Մարշալի գործողութիւն» կամ «Սանթա Բլաուզի գործողութիւն»:

Արոնց կը տրուի ռազմական գործողութիւններու անուններ, որպէսզի դիրին տարբերակելի ըլլան, կամ՝ որ յստակ ըլլայ, թէ ինչպիսի գործողութիւն է ապրիկա, որ կ'իրականացնէ կամ կը կատարէ այդ գործողութիւնը: Երբ Տէրն ըսաւ, որ դուք նման էք Թրոյի Հեղինէին, իմ զինուորական միտքն այսպէս վերձանեց այն. «Հովիւ Կէրին կ'իրականացնէ Թրոյի Հեղինէի գործողութիւնը. 1000 նաւերու օգնութեամբ փրկել կորսուածին, հաւաքէն ինկածին, ընտանիքը եւ ֆինանսները կորսնցնողին»:

Առաւել եւս, երբ կը լսեմ 1000 նաւ գործարկելու մասին, կը մտածեմ մարտիկներու, աջակցող անձնակազմի, դասընթացներու, լոճիսթիքի եւ արմինիստութիւնի վրայ գործընթացներու մասին, որոնք անհրաժեշտ են մէկ նաւ գործարկելու համար: Չկայ մէկը, որ ձեզմէ աւելի լաւ կարենայ ստանձնել այս ուժի հրամանատարութիւնը եւ Աստուծոյ Թագաւորութեան բանակի յառաջխաղացումը: Դուք տարիներ շարունակ

մարզած էք մեզի այս պահուն համար: Վստահ եմ՝ թե՛ իմ ընտանիքը, թե՛ Քրիստոսի մարմինի միւս անդամները ուրախ գործի կ'անցնին»:

Տիրոջ ծառայ՝ Ահարոն

Ահարոնը ծառայած է SEAL ուժերու նաւատորմին մէջ: Ծառայութեան 21 տարիներու ընթացքին մասնակցած է ինը գործողութիւններու: Անոր կտրուկ փոխակերպման հիասքանչ պատմութիւնը կը վկայէ խաչի զօրութեան մասին: Ան նոյնիսկ գաղափար չունէր, թէ Աստուած երազիս մէջ ինչ ըսած է. «հաւաքէ՛ նաւերը»: Բայց անոր «գիտութեան խօսքը» հաստատութիւն էր ինծի համար, որ ես ճիշդ լսած եմ, եւ ատիկա օգնեց ինծի, որ շարժիմ այն ճանապարհով, որն Աստուած պատրաստած էր ինծի համար: Մեր նպատակն էր՝ ամբողջ երկրով բարձրացնել 1000 փոքր խումբեր, որոնք կը տարածէին Բարի լուրը: Եթէ դուք նոյնպէս կը ցանկաք ըլլալ այդ բանակի մէկ մասը, կրնաք կապ հաստատել հետս իմ կայքին միջոցով՝ Garykeese.com:

Կը կարծեմ, կը հասկնաք, թէ ինչ կ'ուզեմ ըսել: Երազը այն հզօր ձեւերէն մէկն է, որուն միջոցով Աստուած կը խօսի իր ժողովուրդին հետ՝ տալով ուղղութիւն, մարտավարութիւն, զգուշացում եւ մխիթարութիւն:

Նախքան այս գլուխի ամարտը, կը ցանկայի խօսիլ ուրիշ ձեւի մը մասին, որն Աստուած կ'օգտագործէ ռազմավարական ուղղորդում տալու համար, եւ ատիկա մարգարէական պարգեւն է: Ահարոնը գիտութեան խօսք ստացած էր նոր նախաձեռնութեան իրագործման առնչութեամբ: Գիտութեան խօսքը նոյն գիտութեան խօսքն է: Այս գիտութիւնը կը տրուի Աստուծոյ Հոգիէն, բան մը, որ դուն անձամբ չէիր կրնար գիտնալ: Գիտութեան խօսքի մասին կը խօսուի Ա. Կորնթացիս

12-րդ գլուխին մէջ՝ որպէս Սուրբ Հոգիին ինը պարգեւներէն մէկը: Չեմ ցանկար այս գիրքին հպանցիկ խօսիլ բոլոր պարգեւներու մասին, բայց ատոնցմէ մէկուն վրայ կ'ուզեմ կենալ: Ատիկա մարգարէական խօսքն է:

**«ԱՄԷՆ ՄԵԿԸ, ՈՐ
ԿԸ ՄԱՐԳԱՐԷԱՆԱՅ,
ՄԱՐԴՈՑ ՀԵՏ ԿԸ
ԽՕՍԻ՝ ԱՆՈՆՑ
ԶՕՐԱՅՆԵԼՈՒ,
ՔԱԶԱԼԵՐԵԼՈՒ
ԵՒ ՄԽԻԹԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՐ»:**

– Ա. ԿՈՐՆԹԱՅԻՍ 14.3

Այնքան մարդու կեանք քառսի վերածուած է այս պարգեւին սխալ ընկալման պատճառով, որ անպայման կ'ուզեմ խօսիլ այս մասին: Երբ մարդիկ կը խօսին մարգարէութեան մասին, կը պատկերացնեն, որ ինչ որ մարգարէ մը կը կանչէ անոնց, ցուցամատը կը պարզէ իրենց դէմքին եւ կ'ըսէ. «Դուն պէտք է երթաս Ափրիկէ», կամ՝ «Դուն

կանչուած ես հովիւ ըլլալու համար»: Երկու արտայայտութիւններն ալ կրնան ճշմարիտ մարգարէութիւն ըլլալ, բայց նոյնպէս եւ կրնան սխալ ըլլալ: Բայց եթէ ատոնք հաստատութիւն ըլլալու համար են, կրնան ճիշդ ըլլալ: Պօղոսը կը բացատրէ, թէ որն է մարգարէութեան նպատակը:

«Ամէն մէկը, որ կը մարգարէանայ, մարդոց հետ կը խօսի՝ անոնց զօրացնելու, քաջալերելու եւ մխիթարելու համար» (Ա. Կորնթացիս 14.3):

Ահա, ինչպէս կը տեսնէք, հոս նոյնիսկ խօսք չ'երթար մարգարէութեան միջոցով ուղղութիւն գտնելու մասին, բայց շատերը մարգարէութիւն ըսելով ճիշդ ատիկա կը հասկնան: Համաձայն Պօղոսին, մարգարէութիւնը ուղղութիւնը հաստատելու եւ ոչ թէ ուղղութիւն ցոյց տալու համար է: Կը հասկնա՞ք, երբ դուք վերստին կը ծնիք, Սուրբ Հոգին ձեր ներսը կը դառնայ Մէկը, Որ կ'ըսէ, թէ ինչ պէտք է ընէք: Պէտք

չկայ, որ ինչ որ մէկը ըսէ ձեզի, թէ ինչ պէտք է ընէք Յիսուսին համար: Բայց մարգարէական խօսքը կրնայ հաստատել այն, ինչ արդէն գիտէք:

Դիտարկենք նոյն օրինակը. «Դուն պէտք է երթաս Ափրիկէ»: Ես նշեցի, որ ատիկա կրնայ ըլլալ ճշմարիտ մարգարէական խօսք, եթէ Սուրբ Հոգին արդէն իսկ ըսած է ձեզի այդ մասին, եւ այդ խօսքին միջոցով ալ կը հաստատուէ: Բայց եթէ Ափրիկէ երթալու համար դուք որեւէ մտադրութիւն չունիք եւ այդ մասին առաջին անգամ կը լսէք, ուրեմն ատիկա Նոր կտակարանի եկեղեցւոյ մարգարէական խօսքի ճիշդ օրինակ չէ:

Մարդիկ երբեմն այնպիսի անմիտ բաներ կ'ըսեն: Կան քրիստոնէաներ, որոնք կը մօտենան ինծի եւ կ'ըսեն. «Աստուած հաւաքոյթի ժամանակ ըսաւ ինծի, որ պէտք է բարգաւաճիմ»: Կարիք չկայ, որ ինչ որ մէկը խօսք ստանայ ձեզի համար ու ըսէ, որ դուք պէտք է բարգաւաճիք: Աստուածաշունչը արդէն այդպէս կ'ըսէ: Տեսած եմ, թէ ինչպէս մարդիկ ասոր-անոր կը մօտենան ու կը հարցնեն, թէ արդեօք որեւէ խօսք ունին իրենց համար: Կարիք չկայ, որ մէկը ձեզի խօսք ըսէ: Սուրբ Հոգին, որ ձեր մէջ է, կը խօսի ձեզի հետ: Այո՛, Աստուած թերեւս հաստատող խօսք ուղարկէ, որպէսզի քաջալերէ ձեզի, բայց ոչ թէ առաջնորդէ:

Ամենավառ օրինակը իմ կեանքին մէջ եղած է այն ժամանակ, երբ ես եւ Տրենտան ընկերութիւն կ'ընէինք: Ես կը պատրաստուէի Ճորճիա նահանգ երթալ՝ հանդիպելու իր ընտանիքին եւ անոր ձեռքը խնդրելու: Ճորճիայի մէջ գտնուելու ժամանակ Տրենտային հետ պէտք է իրենց եկեղեցի երթայի: Այդ ժամանակ ինծի աշխատանք առաջարկուած էր ֆինանսական ծառայութիւններու ոլորտին մէջ: Ես չէի գիտեր ինչ ընել: Տասնինը տարեկանին լսած էի Աստուծոյ կանչը, որ պէտք է քարոզեմ, եւ հազիւ նոր աւարտած էի քոլէճը՝

Հին կտակարանի ուսումնասիրության գծով: Եւ կարծես ստիպուած էի այս գործին անցնելու:

Եկեղեցւոյ կիրակնօրեայ հաւաքոյթէն յետոյ կին մը, որուն Տրենտան կը ճանչնար, իսկ ես՝ ոչ, մօտեցաւ ինծի եւ ըսաւ, որ Աստուծմէ խօսք ունի ինծի համար: Ան ըսաւ. «Դուք աշխատանքի մը առաջարկ կը դիտարկէք: Աշխատանքը կը ներառէ հետեւեալ պարտականութիւնները», - եւ ան մէկ առ մէկ թուարկեց բոլոր այն բաները, որ ես պէտք է ընէի, ապա շարունակեց. «Դուք պէտք է համաձայնիք այդ աշխատանքին: Ատիկա Տիրոջմէն է»: Ես արդէն կը զգայի, որ պէտք է անցնիմ այդ աշխատանքին, բայց միեւնոյն ժամանակ չէի հասկնար, թէ ինչու այդպէս կը զգամ: Անոր մարգարէական խօսքն ինծի հանգստութիւն եւ ոգեւորութիւն բերաւ ու հաստատեց, թէ որ ճանապարհով պէտք է երթամ. Սուրբ Հոգին կ'առաջնորդէ ձեզի եւ կ'ըլլայ ձեր Խորհրդականը:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԱՐԾԵՍ ԻՄ ՂԵԿԱՎԱՐԸ ԸԼԼԱՅ

Իմ եկեղեցիին մեջ փոքր ընտանիք մը կար, որն աշխատանքի կարիք ունէր: Անուշիկ ընտանիք մըն էր, որ միշտ պատրաստակամ էր օգնել եկեղեցւոյ զանազան գործերուն մէջ: Բայց կարծես մշտապէս ֆինանսական խնդիրներու մէջ էին: Անգամ մը, երբ ընտանիքի հայրը կորսնցուցած էր աշխատանքը, որոշեցի օգնել անոնց: Այդ ժամանակ ես իմ տունը կը կառուցէի եւ ելեկտրական լարերը անձամբ կը քաշէի: Գիտցայ, որ ան որոշ չափով կը հասկնայ ելեկտրականութենէն եւ առաջարկեցի, որ օրուան կիսուն ան աշխատի, եւ ես վճարեմ ատոր փոխարէն, քանի որ իր ընտանիքն արդէն սնունդ հայթայթելու խնդիր ունէր: Ան եկաւ եւ կատարեց յանձնարարուած գործը:

Այս ամէնուն մասին ես արդէն մոռցած էի, բայց մօտաւորապէս մէկ ամիս յետոյ այդ տղայէն հեռաձայն ստացայ: Ան ըսաւ, որ քանի մը հոգիով աղօթած են ինծի համար: Հարցուցի՝ ինչո՞ւ: Ան ըսաւ, որ եկեղեցւոյ մէջ նկատած են որոշ բաներ, որ պէտք է փոխուին: Նաեւ ըսաւ, որ 10 կէտէն բաղկացած ցանկ մը կազմած են եւ քննարկած են: Կէտերէն մէկն այն էր, որ իմ տունը շատ մեծ է: Ան հարցուց, թէ եկեղեցին

որքան կը վճարէ ինծի, որ ես կրնամ այդպիսի տան մէջ բնակիլ: Արագօրէն պատասխանեցի, որ եկեղեցին նոյնիսկ մէկ լումա չի վճարեր, եւ որ ես եկեղեցիէն աշխատավարձք չեմ ստանար: Եւ երբ ըսի ատիկա, քանի մը վայրկեան լռութիւն տիրեց, ապա ան ըսաւ. «Եկեղեցին ձեզի աշխատավարձք չի տրամադրեր»: «Ո՛հ, չի՛ տրամադրեր», - պատասխանեցի ես: Կրկին լռութիւն տիրեց, եւ ի վերջոյ ըսաւ. «Կը կարծեմ, պէտք է տրամադրէ»: Այս խօսքերով աւարտեցաւ մեր զրոյցը:

Մէկ կամ երկու շաբաթ յետոյ աչքիս թափուր աշխատանքի յայտարարութիւն մը զարկաւ, որը կարծեցի, թէ կը հետաքրքրէր այդ տղուն, ու ատոր մասին յայտնեցի անոր: Ան գնաց, դիմեց եւ անցաւ գործի: Նկատի ունեցէք, որ անոր ընտանիքին արդէն դուրս կը հանէին իրենց տունէն, քանի որ տունը պէտք է բռնագանձէին: Եւ երբ աշխատանքի ընդունուելէն մէկ շաբաթ յետոյ ան եկեղեցի եկաւ ու ըսաւ, որ դուրս ելած է աշխատանքէն, ես ապշեցայ: «Դ՞ուրս եկած ես»: «Ինչո՞ւ»: Ան ըսաւ, որ Ուրբաթ կէսօրին անոր ըսած են, որ շաբթուան գործը հասցնելու համար ան պէտք է մաքրէ յատակը: Պատճառներէն մէկը աշխատանքէն դուրս ելլելու այն եղած է, որ իր պարտականութիւններուն մէջ չէ եղած յատակը մաքրելը: Ականջներուս չէի հաւատար: Կը հասկնայի, որ այս երիտասարդը, եթէ կը ցանկայ կեանքին մէջ յաջողութեան հասնիլ, ուրեմն պէտք է լաւ դաստիարակուի: Ես միշտ կը խղճայի այդ տղուն կնոջը: Կարճ ժամանակ յետոյ անոնք հեռացան եկեղեցիէն, եւ ես այլեւս լուր չունեցայ անոնցմէ: Բայց թոյլ տուէք կռահել: Իր ամբարտաւան վերաբերմունքին եւ աշխատիլ չկամենալու պատճառով, կ'ենթադրեմ, որ իր կենսագրութեան թերթիկին մէջ աշխատանքային փորձը փաստող քանի մը նոր տողեր աւելցած են, որոշները կարճաժամկէտ բնոյթի: Անոր բարգաւաճման մակարդակը աւելի շատ նման է գոյատեւման պայքարին: Ինծի սխալ մի՛

հասկնաք: Մարդիկ կը փոխուին, եւ յոյսով եմ, որ այդ տղան ալ փոխուած է: Բայց բան մը յստակ գիտեմ, որ այն ժամանակ, երբ կը հաղորդակցէի անոր հետ, ան սխալ ուղղութեամբ կ'երթար. ան կ'անտեսէր Աստուծոյ ծայնը:

Թերեւս հարցնէք. «Աստուծոյ ո՞ր ծայնին մասին կը խօսիք»: Վստահ եմ, եթէ այդ ժամանակ անոր ալ հարցնէիք, ան ալ պիտի ըսէր. «Ի՞նչ Աստուծոյ ծայն»: Բայց ան կ'անտեսէր դաստիարակութեան եւ կեանքի նպատակին հասնելու նախապատրաստական փուլը, որ կը կոչուի «սորվիլ հնազանդիլ»: Գիտեմ, Թերեւս այս գլուխի վերնագիրը քիչ մը շփոթեցուցած է ձեզի: Ի՞նչ կապ ունի իմ ղեկավարը Սուրբ Հոգիին հետ: Այս գլուխին մէջ կը հասկնաք, որ ձեր ղեկավարը շատ լաւ կապ ունի Սուրբ Հոգիին հետ:

Կը ցանկամ մեր սերտողութիւնը սկսիլ Մատթէոս 8.5-10-ի խիստ կարեւոր թեմայէն.

«Երբ Յիսուսը մտաւ Կափառնայում, հարիրապետ մը եկաւ Անոր քով եւ օգնութիւն խնդրեց՝ ըսելով. «Տէ՛ր, իմ ծառան անդամալոյծ պառկած է տունը եւ չարաչար կը տանջուի»:

Յիսուսն ըսաւ. «Ես կու գամ եւ կը բժշկեմ անոր»:

Հարիրապետը պատասխանելով՝ ըսաւ. «Տէ՛ր, ես արժանի չեմ, որ իմ յարկին տակ մտնես, այլ միայն խօսք ըսէ, եւ իմ ծառան կը բժշկուի: Որովհետեւ ես ալ իշխանութեան տակ եղող մարդ եմ եւ իմ ձեռքի տակ ալ զինուորներ ունիմ: Մէկուն կ'ըսեմ՝ գնա՛, եւ կ'երթայ, եւ ուրիշին՝ եկո՛ւր, եւ կու գայ: Ծառայիս՝ այս բանն ըրէ՛, եւ կ'ընէ»:

Եւ երբ Յիսուսը լսեց, զարմացաւ եւ ըսաւ Իր երեւէն եկողներուն. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ այսպիսի մեծ հաւատքով մէկուն չգտայ»»:

– Մատթէոս 8.5-10

Ինչո՞ւ այս մարդն այդքան դիրքաւորւեցա՞մք հաւատաց, որ Յիսուսը կրնայ բժշկել իր ծառային: Այդ հարցումին անձամբ ինքն ալ կը պատասխանէ. *«Որովհետեւ ես ալ իշխանութեան փակ եղող մարդ եմ եւ իմ ձեռքին փակ ալ գինուորներ ունիմ: Մէկուն կ'ըսեմ՝ գնա՛, եւ կ'երթայ, եւ ուրիշին՝ եկու՛ր, եւ կու գայ: Ծառայիս՝ այս բանն ըրէ՛, եւ կ'ընէ»*: Ան գիտէր, թէ իշխանութիւնն ինչպէս կը գործէ: Ինչպէս որ ինքը մէկու մը իշխանութեան տակ էր, այնպէս ալ իր մարդիկ իր իշխանութեան տակ էին: Ան գիտէր, որ իր ղեկավարին ծայնը կայսրի ծայնի պէս կը հնչէ: Ան գիտէր նաեւ, որ իր ծայնն ալ իր ծառաներուն համար կայսրի ծայնին պէս կը հնչէ: Իշխանութիւնն այդպէս կը գործէ: Ուրեմն, քանի որ ան գիտէր, թէ իշխանութիւնն ինչպէս կը գործէ, ապա հասկցած էր, թէ ինչպէս Յիսուսը կրնար Իր իշխանութիւնն այդ իրավիճակի վրայ բանեցնէր՝ պարզապէս խօսք խօսելով: Ինքն ալ նման ձեւով կը վարուէր: Եթէ իր ծառային ինչ որ բան մը կ'ըսէր, որ պէտք է ընէ, անոնք կ'ընէին: Այդքան բան: Ահա ճշմարտութիւն մը, որ պէտք է սորվիք:

ԴՈՒ ԿՐՆԱՍ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԵՑՆԵԼ, ԵԹԷ ԻՆՔԴ ԿԸ ՀՆԱԶԱՆԴԻՍ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆԸ:

Եթէ սատանան կարենար ի սպառ վերացնէր իշխանութեան հանդէպ յարգանքը եւ բոլորին համոզէր, որ կրնան ընել՝ ինչ որ կ'ուզեն, եւ երբ կամենան, այդ ժամանակ աշխարհը փոփոխուէր եւ կ'արուէր: Եղեմի պարտեզին մէջ ան Եւային ճիշդ ատոր կը մղէր. *«Իսկապէ՛ս Աստուած ըսած է...»*: Լսեցէ՛ք, այս երկրագունդին վրայ գտնուող ոեւէ մարդ իշխանութեան կամ քանի մը իշխանութեան տակ է: Եթէ դուն գիտես, թէ որուն իշխանութեան տակ ես, ապա ատիկա կ'օգնէ քեզի հասկնալ, թէ որու պէտք է լսես եւ որու չլսես: Բայց այսօր բոլորը կ'ուզեն իշխանութիւն բանեցնել առանց ոեւէ մէկուն իշխանութեան տակ ըլլալու: Ատիկա անկարելի է:

Վերջերս կը զրուցեի գործակալի մը հետ, որ կը պատմէր, թէ ինչպէս իր աշխատողներուն կանխիկով կը վճարէ, որպէսզի խուսափի աշխատակիցներուն հարկերն ու աշխատակիցներու փոխհատուցման գումարները վճարելէն: Բայց ես արդէն գիտեմ, թէ ինչով աստիկա պիտի աւարտի: Օր մը աշխատակիցներէն մէկը խնդիր պիտի ունենայ եւ պիտի դիմէ ներկայացնելու աշխատակիցներու շահերու պաշտպանութեան կոմիտէ, եւ պիտի պարզուի, որ իր ղեկավարը երբեք որեւէ գումար չէ փոխանցած աշխատակիցներու փոխհատուցման ծրագիրին, եւ ան դատի պիտի տայ գործատուին, քանի որ օրէնքի պահանջով աշխատակիցներու փոխհատուցման գումարները պէտք է վճարուին: Նման պատմութիւն մը տեղի ունեցած է իմ եկեղեցւոյ քանի մը գործակալի հետ:

Անցեալ շաբաթ կնոջ մը հետ կը խօսէի, որ ըսաւ, որ ինքը հովիւի կարիք չունի. ինքն ու իր Սուրբ Հոգին: Իսկապէս: Աւելի լաւ է, որ երթայ ու ատոր մասին Յիսուսին հետ խօսի, որովհետեւ Ան հովիւներ նշանակած է եւ եկեղեցւոյ կարգը հաստատած է եփեսացիներուն ուղղուած նամակի 4-րդ գլուխին մէջ: Եթէ ան հնազանդէր Յիսուսին, ապա պիտի հետեւէր Յիսուսին կողմէն կարգուած իշխանութեանը: Փաստը կը մնայ փաստ, որ ան չ'ուզեր հնազանդիլ Յիսուսին եւ կը ցանկայ իր ուզածն ընել: Ամենայն հաւանականութեամբ, ատոր պատճառով օր մը ան մոլորութեան եւ խնդիրներու մէջ կը յայտնուի:

Վերջերս վաճառքով զբաղող անձնաւորութեան մը հետ կը խօսէի, որ կը ցանկար հիմնել իր սեփական առեւտրային ընկերութիւնը եւ իր յաճախորդներուն տանէր իր ընկերութիւն, թէեւ անոնք յատուկ ստորագրած էին աստիկա չընելու համար: Ինչ կը կարծէք՝ անոնք կը բարգաւաճին ատով: Ատիկա պարզապէս գողութիւն է:

Գիտեմ, թերեւս այս գլուխը ձեզի այդքան ալ հաճելի չըլլայ, որքան նախորդները, ուր կը խօսիմ գերբնական ու հիասքանչ բաներու մասին, որ Սուրբ Հոգին կ'ընէ, բայց եթէ ճիշդ չըմբռնէք այս գլուխը, դուք կը մոռնաք բոլորը, քանի որ առջեւ տանողը Աստուած է:

ԵԹԷ ԳԻՏԵՍ, ԹԷ ՈՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԵՍ, ԱՊԱ ԱՏԻԿԱ Կ'ՕԳՆԷ ՔԵԶԻ ՀԱՍԿՆԱԼՈՒ, ԹԷ ՈՐՈՒ ՊԷՏՔ Է ԼՍԵՍ ԵՒ ՈՐՈՒ ՉԼՍԵՍ:

Կը յիշեմ, անգամ մը աղօթքի ծառայութեան ժամանակ կին մը մօտեցաւ ինծի եւ արցունքն աչքերուն հարցուց, թէ ինչու երբեք չեմ դիմեր իրեն՝ աղօթքը վարելու հարցով: Ես ապշեցայ: Աղօթքը վարել-չվարելը այդքան մեծ խնդիր չէր յառաջացներ, եթէ իր դրդապատճառներն ուրիշ չըլլային. ան կը փափաքէր, որ մարդիկ տեսնէին իրեն:

Անշուշտ, ես անոր կ'ըսէի, թէ ինչու չեմ դիմեր, որ աղօթքը վարէ, եթէ ան ոեւէ մէկուն լսելու կարողութիւն ունենար: Այս կինը չէր յարգեր իր ամուսինին եւ ամէն անգամ բամբասանքի նիստերու ժամանակ անոր թերի հոգեւոր ըլլալու թեման բուռն քննարկման առարկայ կը դարձնէ: Այդ էր պատճառը, որ չէի դիմեր: Փաստն այն էր, որ ան արցունքախառն մօտեցաւ ինծի, որովհետեւ մարդիկ չէին տեսներ, թէ իր կարծիքով՝ որքան հոգեւոր կին է, ու շուտափոյթ կ'ուզէր շտկել այդ վիճակը, քանի տակաւին չէր բացայայտուած, որ ան չի յարգեր իշխանութեանը, եւ ատով իսկ վտանգաւոր կին է:

Այսպիսով, թոյլ տուէք հարցնել: Արդեօք ունի՞ք այն որակական յատկանիշները, որ երթաք հոն, ուր կ'ուզէք, կամ՝ ուր ձեր երազները կ'առաջնորդեն: Եթէ ձեր հովիւին կամ ձեր ղեկավարին հարցնեմ, թէ ինչ կարծիք ունին ձեր մասին, ինչ կը պատասխանեն. դուք չէք կրնար իշխանութիւն ձեռք բերել,

քանի տակալին հնազանդութեան քննութիւնը չէք անցած: Ասիկա Յիսուսը կ'ըսէ, ոչ թէ՝ ես:

«Այն մարդը, որուն կարելի է քիչ բան վստահիլ, անոր կարելի է շատն ալ վստահիլ: Ով որ քիչ բանի մէջ անհաւարարիմ է, շատ բանի մէջ ալ անհաւարարիմ է: Եթէ աշխարհիկ հարստութեան հետ վարուեցողութեան մէջ հաւարարիմ չես համարուած, ճշմարիտ հարստութիւնն ի՞նչ կու տայ քեզի: Եթէ ուրիշի մը ունեցուածքին հանդէպ հաւարարիմ չես եղած, քու ունեցուածքը քեզի ի՞նչ կու տայ»:

– Դուկաս 16.10-12

Արդե՞ծք կարելի է իշխանութիւն վստահիլ քեզի. ապացոյցը քու հնազանդութեան մէջ է:

Եկէք Աստուածաշունչէն պատմութիւն մը դիտարկենք, որ կրնայ քու կեանքին մէջ յաջողութեան հասնելու գրաւականը ըլլալ:

«Փղշտացիները հաւաքուեցան Իսրայէլի դէմ պատերազմ ընելու. երեք հազար կառք եւ վեց հազար ձիաւոր, եւ զինուորները ծովեզերքի աւազի չափ շատ էին: Անոնք վեր գացին եւ Բեթաւանի արեւելեան կողմը Մաքմասի մէջ բանակ տուին: Երբ իսրայէլցիները տեսան, որ օրհասական վիճակի մէջ են, եւ որ իրենց բանակը խիստ ճնշուած է, պահուրդեցան այրերու, թփուրներու, ժայռերու արանքներու, խորշերու եւ փոսերու մէջ: Որոշ եբրայեցիներ Յորդանանն անցան ու գացին դէպի Գադի ու Գաղաադի երկիրը:

Բայց Սաուլը մնաց Գաղգաղայի մէջ, եւ անոր հետ եղող ամբողջ զօրքը վախէն կը դողար: Ան Սամուէլի

որոշած ժամանակի չափ եթե օր սպասեց, բայց Սամուէլը Գաղզաղա չեկաւ, եւ ժողովուրդը Սաւուդին քովէն սկսաւ ցրուիլ: Եւ Սաւուդն ըսաւ. «Ողջակէզը եւ խաղաղութեան զօրը իմ քովս բերէք»: Եւ Սաւուդը մարտացեց ողջակէզը»:

– Ա. Թագաւորաց 13.5-9

«Եւ Սամուէլն ըսաւ Սաւուդին. «Դուն յիմարութիւն ըրիր, չպահեցիր քու Տէր Աստուծոյ պատուիրանները, որ քեզ պատուիրած է. եթէ պահէիր, Տէրը քու թագաւորութիւնը Իսրայէլի վրայ ընդմիշտ կը հաստատէր: Բայց հիմա քու թագաւորութիւնը հաստատ պիտի չմնայ: Տէրն Իր սրտի համեմատ մարդ մը գտած է եւ անոր իշխան նշանակած է իր ժողովուրդին վրայ, որովհետեւ դուն չպահեցիր Տիրոջ պատուիրանը»»:

– Ա. Թագաւորաց 13.13,14

Սաւուդը որակազրկուեցաւ, քանի որ չհնազանդեցաւ իշխանութեանը: Այսպիսով, կը տեսնենք, որ եթէ չէք կրնար հնազանդիլ իշխանութեանը, ուրեմն չէք ալ կրնար իշխանութիւն ունենալ: Կ'ուզեմ շատ կարեւոր բան մը ընդգծել: Աստուած Իր սրտի համեմատ մարդ կը փնտռէր: Իսկ ի՞նչ կը նշանակէ «Իր սրտի համեմատ»:

«Եւ անոր փոխելով՝ Դաւիթին անոնց համար թագաւոր դարձուց, որ անոր համար ալ վկայութիւն տրուաւ եւ ըսաւ. «Հեսսէի որդի Դաւիթին գտայ Իմ սրտի պէս մարդ, որ ան ընէ ամէն բան, ինչ որ կը կամենամ, որ ընէ»»:

– Գործք առաքելոց 13.22

Ինչպէ՞ս Աստուած կը նկարագրէ մէկուն, որ Իր սիրտն ունի: Ատիկա մէկն է, որ կ'ատէ այն, ինչ որ Աստուած կ'ատէ, եւ կը

սիրէ այն, ինչ որ Աստուած կը սիրէ: Մէկն է, որ կ'ընէ այն, ինչ որ Աստուած կ'ընէր, եթէ հոն ըլլար: Այլ խօսքերով, եթէ Աստուած կ'ատէ մեղքը, անոնք ալ կ'ատեն մեղքը: Եթէ Աստուած կը ցանկայ, որ բան մը ըլլայ, անոնք անմիջապէս կ'ընեն ատիկա: Մեր օրերուն մէջ մենք կը կարծենք, որ Աստուծոյ սրտի համեմատ մարդը ան է, որ ամենաշատ հոգեւոր պարգեւներն ունի: Հոգեւոր ըլլալ ըսելով կը պատկերացնենք մեղմ հոգեւոր երկրպագութեան երաժշտութիւն: Սակայն Աստուած յստակ կ'ըսէ, որ հոգեւոր երկրպագութիւնը հնազանդ ըլլալն է:

«Բայց Սամուէլը պատասխանեց. «Մի՞թէ Տէրը կը հաւնի ողջակէզներու եւ զոհերու այնպէս, ինչպէս Տիրոջ ծայնին հնազանդելուն: Հնազանդութիւնը զոհէն լաւ է, եւ ականջ դնելը՝ խոյերու ճարպէն: Որովհետեւ ապստամբութիւնը կախարդութեան մեղքի պէս, եւ անհնազանդութիւնը կռապաշտութեան պէս է: Որովհետեւ դուն Տիրոջ խօսքը մերժեցիր, Ան ալ քեզ մերժեց, որ թագաւոր չըլլաս»»:

– Ա. Թագաւորաց 15.22,23

Թոյլ տուէք կրկնել, որ Աստուծոյ ծայնը նման է ձեր ղեկավարի ծայնին: Աստուած թոյլ կու տայ, որ ձեր վրայ դրուած իշխանութիւններու հանդէպ ձեր արծագանգը քննուի այն

Ժամանակ, երբ ձեր անունը տակաւին ոչ ոք գիտէ: Շատերը չեն գիտեր, թէ այս ամէնը ինչպէս կը գործէ: Անոնք իրենց կէս դրոյքով աշխատանքը անկարելի կը համարեն, ու կը կարծեն, թէ ատիկա լուրջ բան չէ: Բայց անոնք չեն հասկնար, որ այդ ձեւով իրենց կը մարզեն հնազանդութեան մէջ, կը

**ԹՈՅԼ ՏՈՒԷՔ ԿՐԿՆԵԼ,
ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ
ՁԱՅՆԸ ՆՄԱՆ Է ՁԵՐ
ԴԵԿԱՎԱՐԻ ՁԱՅՆԻՆ:**

սորվին դատել իրենց իսկ չափանիշներով, եթե ինչ որ բան մը արժանի է հնազանդութեան եւ կը համապատասխանէ իրենց ցանկութիւններուն ու նպատակներուն: Մարդիկ չեն հասկնար, որ այն վայրկեանէն, երբ անոնք պատասխանատուութիւն կ'առնեն այդ փոքրիկ կէս դրոյքով աշխատանքն ընելու համար, անոնք կը համաձայնին աշխատիլ այնպէս, կարծես ատիկա իրենց սեփական առեւտուրն է: Շատերը աշխատանքին այդպէս չեն նայիր: Անոնք աւելի մեծ նպատակներ կը դնեն իրենց առջեւ: Ի վերջոյ, ասիկա ընդամենը կէս դրոյքով աշխատանք է որոշ լրացուցիչ գումար մը վաստկելու համար: Մեծ բան մը չէ, պարզապէս ճիշդ չէ:

Անկարելոր աշխատանք գոյութիւն չունի: Փոքր յանձնարարութիւններ գոյութիւն չունին: Դաւիթն ունէր փոքր, անկարելոր գործ. ոչխար կը պահէր: Բայց ատիկա իրեն համար անկարելոր չէր, այդ ոչխարները պահպանելու համար ան առնուազն երկու անգամ իր կեանքը վտանգի ենթարկած է: Եթէ փորձեմ այլ ձեւով ձեւակերպել, իրեն յանձնուած վստահութիւնը շատ լուրջ ընդունած էր: Թէեւ ոչ ոք գիտէր, թէ ով է ինքը, բայց Աստուած գիտէր: Եւ Աստուած գիտէր, թէ ամբողջ ժամանակ ան ինչի մէջէն կ'անցնէր:

Աստուած գիտէ, թէ ինչի մէջէն կ'անցնիս: Նոյնիսկ գիտէ, թէ ինչպիսին է քու վրայ կարգուած իշխանութեան կամ ղեկավարութեան հանդէպ քու սրտի դիրքը: Եթէ ամփոփելու ըլլամ, ապա այսպէս կ'ըսեմ. եթէ դուն չես կրնար հնազանդիլ այն մարդուն, որուն կը տեսնես, դուն չես կրնար հնազանդիլ Աստուծոյ, Որուն չես տեսներ: Կան շատ մարդիկ, որոնք կ'առաջնորդուին «բոլորը պարտական են ինծի» գաղափարով կամ զոհի մտածելակերպ ունին. անոնք ամէն պարագային մեղաւորի մը կը փնտռեն: Անոնք միշտ կ'ըսեն, որ ատիկա ղեկավարի սխալն է, ինչ որ բան մը կ'ընեն հագիւ ծայրը-ծայրին հասցնելու համար, կամ կ'աշխատին, երբ կը

պահանջեն: Անոնք սովորաբար կատարողի մտածելակերպ ունին. դուռն պետք է ըսես, թե ինչ ընեն, երբեք ինքնուրոյն չեն մտածեր: Իսրայելի զաւակներն ալ ճիշդ այդպիսին էին, անոնք տարիներու ստրկութենէն ազատելէն ետք կը շարունակէին ստրուկի պէս մտածել՝ թէեւ արդէն ազատ էին: Ճորտի նման մտածելակերպը չէր կրնար օգնել իրենց, երբ արդէն իրենց տրուած երկրին մէջ հսկաներու հանդիպեցան: Նախքան Աւետեաց երկիր մտնելը, յաջողութեան հասնելու համար Աստուած պետք է մարզէր անոնց: Աստուած պետք է մարզէ նաեւ ձեզի, մինչեւ դուք ալ մտնէք Աւետեաց երկիր: Այն երկիրը, որուն մասին կը խօսիմ, քու ապագան է: Իսկ ինչպէս մարզեց անոնց:

«Եւ քեզ խոնարհեցուց եւ սոված պահեց եւ յեղոյ մանանայով կերակրեց, որը ո՛չ դուռն կը ճանչնայիր, եւ ո՛չ քու հայրերը, որ քեզի սորվեցնէ, որ մարդը ոչ միայն հացով կ'ապրի, այլ Տիրոջ բերանէն դուրս ելած ամէն մէկ խօսքով»:

– Բ. Օրինաց 8.3

«Ան անապատին մէջ քեզի մանանա կերակրեց, բան մը, որ քու հայրերը չէին ճանչնար, որ քեզ խոնարհեցնէ, քեզ փորձէ, որպէսզի վերջաւորութեան քեզի բարիք ըլլայ»:

– Բ. Օրինաց 8.16

Աստուած խոնարհեցուց անոնց, որպէսզի կարօտութիւն քաշեն, որ օգնութեան կարիք ունենան: Անոնք պետք է սորվէին վստահիլ Աստուծոյ, ոչ թէ իրենք իրենց: Անոնց աւելի մեծ դժուարութիւն կը սպասէր, քան ուտելիք հայթայթելն էր: Առջեւը հսկաներ էին եւ պարսպապատ քաղաքներ, որոնք

դիրությունամբ կը կաշկանդէին անոնց, եթէ Աստուծոյ իրենց խնդիրէն աւելի մեծ չտեսնէին:

Երկրորդը, անոնք պէտք է սորվէին ինքնուրոյն ճիշդ որոշում կայացնել առանց ոեւէ մէկուն պարտադրանքի: Այսօր ես կը տեսնեմ, թէ ինչ սխալ կը վարուին ծնողները. անոնք կը փորձեն ուղղել երեխայի վարքը, եւ ոչ թէ սիրտը: Երեխային կ'ըսեն, որ սենեակը մաքրէ: Երեխան կը շրխկացնէ դուռը եւ կ'ընէ այն, ինչ որ ըսած են իրեն, բայց ատիկա կ'ընէ ապստամբած սրտով, այլ ոչ թէ հնազանդութեամբ: Այն ծնողները, որոնք կը ցանկան ընկերական ըլլալ իրենց երեխաներուն հետ, կու գան եւ կը տեսնեն մաքուր սենեակը ու կ'ըսեն, թէ ինչ հրաշալի գործ ըրած է: Ատիկա սխալ է: Երեխան համապատասխանած է ձեր պահանջին արտաքուստ, բայց ոչ՝ ներքուստ: Հնազանդութիւնը սրտի կարգավիճակ է: Օր մըն ալ ծնողը երեխայի կողքին չ'ըլլար, որ դրդէ ճիշդ ընտրութիւն ընելու: Երբ ծնողը կը հեռացնէ վերահսկողութիւնը, երեխան ազատ կ'ըլլայ ընելու այն, ինչ որ կը կամենայ: Այդ ժամանակ կը բացայայտուի երեխայի սրտին մէջ եղածը: Յատկապէս այս ժամանակ է, որ շատ ծնողներ կը տեղեկանան, որ իրենց երեխան խնդիր ունի եւ չի կրնար կողմնորոշուիլ: Անոնք անդադար կը կրկնեն, որ «Ճոնին այնքան անուշիկ մանուկ էր», ու զարմանք կը վերապրին երեխաներու վարքէն, երբ անոնք քոլէճ կ'ընդունուին կամ կ'որոշեն առանձին ապրիլ:

Աստուածաշունչը կ'ըսէ, որ Աստուած կը ցանկայ փորձել Իսրայէլին, որպէսզի վերջաւորութեան անոր համար բարիք ըլլայ: Մենք ճիշդ ասոր մասին կը խօսինք: Ի տարբերութիւն այն ծնողի, որ կը ցանկայ հաճոյանալ իր զաւակին, Աստուած կը մտահոգուի Իր զաւակի երկարատեւ բարեկեցութեամբ: Ան կը փոխէ սրտի փոքրիկ վերաբերմունքը, նախքան այն քրոնիկ վարքագիծ դառնայ: Ահա ճիշդ ասիկա նկատի ունէր Աստուած, երբ կ'ըսէր, որ պիտի փորձէ անոնց: Երբ

անոնց հնարաւորութիւն տրուի հնազանդելու, անոնց սրտի վերաբերմունքը կը բացայայտուի, ու Աստուած կ'ուղղէ անոնց:

Բոլորը պէտք է անցնին հնազանդութեան թեսթը: Եթէ այսօր բնութեան մէջ առկայ անապատի մէջէն չենք անցնիր, այդ պարագային Աստուած ի՞նչ մեզի փորձութեան կ'ենթարկէ: Ո՞ր կրնանք լսել Անոր ձայնը, որ հնազանդութիւն սորվինք եւ որակապէս պատրաստուինք մեր յաջորդ յառաջխաղացմանը: Յիշեցէք, թէ Աստուած Սաւուղին համար ինչ ըսաւ՝ հնազանդութիւնն աւելի լաւ է, քան զոհը: Եկեղեցւոյ մէջ երկրպագութեան արտաքին դրսեւորումները ձեր յաջորդ յառաջխաղացման նախապայմանը չեն: Կրնա՞յ Աստուած ձեզի իշխանութիւն վստահիլ: Ուրեմն ուրկէ՞ սկսիք: Ընտանիքէն:

«Որդիներ, հնազանդ եղէք ձեր ծնողներուն Տիրոջ մէջ, քանի որ ասիկա է ճիշդը: Պապուէ՛ քու հօրն ու մօրը, որն առաջին պապութիւնն է խոստովութեան, որ քեզի լաւ ըլլայ, եւ որ երկար ապրիս երկրի վրայ»:

– Եփեսացիս 6.1-3

Ինչո՞ւ ծնողներուն հնազանդիլը երկար կեանք կամ յաջողութիւն կ'ապահովէ կեանքին մէջ: Արդե՞ծք հնազանդութեան համար Աստուած ձեր անուան դիմաց նիշեր կը կուտակէ: Անշուշտ՝ ոչ, բայց եթէ սորվիք յարգել եւ պատուել ձեր ծնողներուն, ձեր վրայ կարգուած իշխանութիւններուն, այդ պարագային դուք կը պատուէք եւ կը յարգէք Աստուծոյ: Եթէ յարգէք Աստուծոյ հեղինակութիւնը ձեր կեանքին մէջ, ապա կը հնազանդիք Անոր, եւ ամէն բան լաւ կ'ընթանայ ձեզի համար: Այսպիսով, կրնամ ըսել, որ Աստուած ձեր ծնողներուն պէս կը խօսի, երբ երիտասարդ էիք եւ անոնց հոգածութեան տակ էիք:

Երկրորդ տեղը, ուր Աստուած կը մարզէ ձեզի

իշխանություններուն հնազանդելու համար, մարդկային իշխանութեան ներքոյ է: Ձեր ղեկավարը, ձեր հովիւը, ոստիկանը եւ կառավարութիւնը, այս բոլորը իշխանութեան օրինակներ են, որոնց պէտք է հնազանդիք՝ համաձայն Աստուծոյ կարգադրութեան:

Կը յիշեմ, մեր եկեղեցւոյ մէջ ընտանիք մը կար, որ անդադար կը բողոքէր եւ իրենց խնդիրներուն մասին կը խօսէր: Որպէսզի անոնց տունը չբռնագրաւէին, անոնք 10.000 տոլարի կարիք ունէին: Եկեղեցւոյ մէջ տասնեակ մարդիկ տեղեակ էին իրենց պատմութենէն: Ի վերջոյ, ընտանիք մը որոշեց օգնել անոնց եւ 10.000 տոլար տուաւ: Բայց քանի մը ամիս յետոյ անոնց յայտնուեցան նոյն իրավիճակին մէջ եւ կորսնցուցին տունը: Ես խօսած էի այս զոյգին հետ, երկուքն ալ գործազուրկ էին: Կ'առաջարկէի, որ ինչ որ գործի անցնին, մինչեւ ունենային իրենց ուզած աշխատանքը: Անոնք կրնային քաղաքի ինչ որ ճաշարանի մէջ մը աշխատիլ, բայց կ'ըսէին, որ այդպիսի աշխատանքը իրենց համար չէ: Կը կարծեմ, ականյայտ է, որ իրենց խնդիրը բնաւ ֆինանսական չէր, այլ՝ իշխանութեան եւ պատասխանատուութեան ըմբռնման բացակայութիւնն էր: Ինչ-ինչ պատճառով անոնք չէին տեսներ, որ իրենք անձնական պատասխանատուութիւն ունին կեանքի ղեկն իրենց ձեռքն առնելու եւ ամէն բան ընելու խնդիրը հարթելու համար:

Իմ ընկեր Ռիք Ռեննըրը, ինչ որ մէկուն գործի ընդունելէն առաջ կը խնդրէ, որ ցոյց տան տուեալ մարդու ինքնաշարժը, կամ առանց հրաւերի կ'երթայ այդ մարդուն տունը: Ան կը հասկնայ, որ եթէ մարդը պատասխանատուութիւն չի կրեր իր ինքնաշարժին համար, ուրեմն իրեն վստահուած գործին համար ալ չի կրեր: Եւ կարճ ժամանակ յետոյ անոր գրասենեակն ալ կը դառնայ այնպիսին, ինչպիսին իր ինքնաշարժն է:

Ես ալ իմ բաժին անապատային մարզումն անցած եմ: Եւ ուրախ եմ, որ Աստուած թոյլ չէ տուած, որ իշխանութեան հանդէպ իմ ունեցած անտարբեր վերաբերմունքն ինծի հետ տանիմ: Ան խոնարհեցուցած եւ փորձած է ինծի, որպէսզի պատրաստէ ինծի վստահուած առաջադրանքին համար:

Կը յիշեմ, երբ տակաւին ագարակի տունը կ'ապրէինք եւ ֆինանսական խիստ ծանր վիճակի մէջ էինք: Բարեբախտաբար, ինծի յաջողած էր ներդրումային գործ գլուխ բերել, որուն շնորհիւ կը կարենայի վճարել վարձերը, որոնք միշտ կ'ուշացնէի: Բայց գումարը ժամանակին չեկաւ, ու գլխուս մէջ փայլուն գաղափար մը ծնաւ, որ ուրիշ դրամատունի մէջ հաշիւ բանամ, եւ կեղծ չէք մը գրեմ իմ հիմնական դրամատան հաշիւին, յոյս ունենալով, որ յաջորդ օրը ականկալուող գումարը կը ստանամ եւ կը փակեմ նոր դրամատան մէջ բացուած հաշիւի կեղծ չէքը: Բայց գումարը երկու շաբաթ շարունակ չէր գար: Ամէն օր, մինչեւ փոխանցման տեղ հասնիլը, ես կեղծ չէք մը գրած էի իմ դրամատնային հաշիւներէն մէկուն: Եւ այսպէս, երկու շաբաթ, եւ այդ կեղծ չէքերուն գումարը հասաւ 2.000 տոլարի, քանի որ նաեւ սնունդ կը գնէի: Այդ ժամանակահատուածին մէջ գումարը կ'աւելնար ու կ'աւելնար:

Այս ամէնը աւարտեցաւ, երբ օր մը դրամատան կառավարիչը հեռաձայնեց ինծի վաղ առաւօտեան եւ առաջին բառերը, որ դուրս ելան անոր բերանէն, հետեւեալն էին. «Գիտեմ, թէ ինչ կ'ընէք, եւ ես կը փակեմ ձեր հաշիւը: Դուք պէտք է փակէք ձեր հաշիւի պարտքը եւ այս դրամատան մէջ այլեւս հաշիւ չբանաք»: Բռնուեցայ: Ամենավատն այս իրավիճակին մէջ այն էր, որ իմ չէքերու վրայ Աստուածաշնչեան խօսքեր գրուած էին, եւ ես վկայած էի դրամատան կառավարիչին, թէ ինչ հրաշալի է Աստուած: Փա՛ռք Աստուծոյ, այդ օրը գումարային փոխանցումը տեղ հասաւ, եւ կրցայ երթալ դրամատուն եւ փակել պարտքը: Բայց ես պէտք է տեսնէի այդ դրամատան

կառավարիչին, ապաշխարէի անոր առջեւ եւ խնդրէի, որ Աստուծոյ չմեղադրէր այս ամէնուն համար, քանի որ ամէն բան իմ մեղաւորութեան եւ յիմարութեան պատճառով էր:

Յաջորդ իրադարձութիւնը տեղի ունեցած էր իմ առեւտուրի առաջին տարիներուն, երբ ինծի կը մարզէր կազմակերպութեան տարածաշրջանային փոխնախագահը: Երբ ան կը ստուգէր իմ վաճառքներէն մէկը, նկատեց, որ ձեւաթուղթերէն մէկը մոռցած էի տալ յաճախորդին, որպէսզի ստորագրէ: Ան ըսաւ. «Խնդիր չկայ, պարզապէս պահէ լոյսի ներքոյ, եւ օրստորագրութիւն չկայ, արտատպէ: Ի վերջոյ, անոնք կ'ուզեն այս ապրանքը եւ մնացած բոլոր տեղերը ստորագրած են»: Ես ճիշդ այդպէս ալ ըրի: Մէկ ամիս յետոյ իմ յաճախորդի փաստաբանէն հեռաձայն ստացայ: Ան կ'ըսէր, որ ինծի դատի կու տայ իր ստորագրութիւնը դրամատան մէջ ելքային հրամանագրի տակ կեղծելու համար: Ան ինձմէ կը պահանջէր 100.000 տոլար: Գումարի չափն իջեցուցին մինչեւ 5.000 տոլարի, քանի որ իմ տարածաշրջանային փոխնախագահն այս ամէնուն մէջ իր պատասխանատուութեան մասն ունէր, եւ անոր աշխատանքէն հեռացուցին:

Ասիկա ինծի համար դաս եղաւ: Իմ նոր գործակալներէն մէկը պէտք է ապահովագրութեան քննութիւն յանձնէր, բայց ուսումնական նիւթերը ձեռք բերելու գումարը չունէր: Ես պատճենահանեցի իմ նիւթերէն, որ օգտագործէ: Իսկ ան ձգեց ատիկա քննական սենեակին մէջ: Վերջաւորութեան, ուրիշ իրաւաբանէ մը հեռաձայն ստացայ, որ հեղինակային իրաւունքները խախտելու համար ինծի դատի տուած էր: Այդ օրերուն հարկային գրասենեակի ճանապարհը ջուրի ճամբայ դարձած էր: Միշտ գործ ունէի ժամկետանց հարկային մուրհակներու եւ տուգանքներու հետ: Աստուած կը սորվեցնէր պատասխանատու ըլլալ. Ան կը դաստիարակէր ինծի: Ան գիտէր, որ օր մը ձեռքս միլիոնաւոր տոլարներ

պիտի յայտնուին, եւ թոյլ չէր տար, որ ատոնք կորսնցնէի: Շնորհակալութիւն Աստուծոյ այդ ամէնուն համար:

Ես պէտք է սորվէի, որ Աստուած ինծի կ'առաջնորդէր, բայց Ան միայն իմ աշխատանքը չէր դիտարկեր: Ան նոյնպէս կը ստուգէր իմ ազնուութեան ամրութիւնը: Ատիկա է պատճառը, որ կ'ըսեմ, թէ Աստուած քու ղեկավարին պէս կը խօսի: Քու ղեկավարը Աստուծոյ ձեռքերուն մէջ գործիք մըն է, որ կը մարզէ քեզի յաջորդ առաջադրանքին համար, որ հնազանդ ըլլաս իրեն: Կրնամ յանձնել այդ քննութիւնը:

«Ո՛չ արեւելքէն, եւ ո՛չ արեւմուտքէն, եւ ո՛չ ալ անապատէն ոչ ոք կրնայ մարդուն բարձրացնել: Բայց Աստուած է դադարաւորը. մէկուն կը խոնարհեցնէ եւ միւսին կը բարձրացնէ»:

– Սաղմոս 75.6,7

«Ոչ մէկ խրատ խրատելու պահուն հաճելի չէ, այլ ցաւալի է: Բայց յետոյ արով վարժուածներու համար այն արդարութիւն եւ խաղաղութիւն կը վճարէ»:

– Եբրայեցիս 12.11

«Ծառանէր, հնազանդ եղէք ձեր երկրաւոր տէրերուն յարգանքով ու վախով եւ ձեր սրտի միամտութեամբ, ինչպէս Քրիստոսին կը հնազանդէիք: Ոչ թէ անոնց բարեհաճութիւնը շահելու համար հնազանդեցէք, երբ անոնց աչքը ձեր վրայ է, այլ ինչպէս Քրիստոսի ծառաներ, որ Աստուծոյ կամքը սրտանց կ'ընեն: Ամբողջ սրտով ծառայեցէք, իբրեւ թէ Տիրոջը կը ծառայէք, եւ ոչ թէ մարդոց՝ իմանալով, որ Աստուած վարձատրուից կ'ըլլայ ամէն մէկուն ամէն ըրած բարիքի համար, թէ՛ ծառայ ըլլայ, եւ թէ՛ ազատ: Եւ դուք, տէրեր, նոյն ձեռով

*վարուեցէք ձեր ծառաներուն հետ: Անոնց մի՛ սպառնաք՝
գիտնալով, որ Ան, Որ ձեր եւ անոնց Տէրն է, Երկինքն է
եւ Անոր առջեւ երեսպաշտութիւն չկայ»:*

– Եփեսացիս 6.5-9

Հնազանդութիւն՝ յարգանքով եւ վախով: Քու ղեկավարի նկատմամբ նման վերաբերմունք պէտք է ունենաս: Պօղոսը սահմանած է, որ ղեկավարին հնազանդիլը հաւասարագոր է Աստուծոյ կամքն ընելուն: Մի՞թէ զարմացաք: Ես զարմացած էի:

Ուրեմն, հրու ձայնին նման է Աստուծոյ ձայնը: Քու ղեկավարին:

ԱՍԻԿԱ ՔՆՆՈՒԹԻՒՆ Է:

Աւարտելով այս սերտողութիւնը՝ յոյսով եմ, որ այն ոգետրեց եւ քաջալերեց ձեզի: Սուրբ Հոգին իսկապէս կեանքի հրաշալի Գործընկեր է: Մէկը, որ խոստացած է, որ երբեք ձեզի չի ձգեր ու չի լքեր: Ինծի համար մեծ պատիւ էր փոխանցել ձեզի այս անգնահատելի ճշմարտութիւնները:

– Կէրի Քիսի

Պարտքերէն ազատելու եւ ապահով ներդրում կատարելու վերաբերեալ աւելի շատ տեղեկութիւն ստանալու համար կրնաք հեռաձայնել իմ ընկերութիւն՝ Ֆորուլըրտ Ֆայնենշըլ Կրուփ (Forward Financial Group) 1-(800)-815-0818 հեռաձայնի թիւին:

Աստուծոյ Թագաւորութեան մասին աւելի շատ տեղեկութիւն ստանալու համար այցելեցէ՛ք FaithLifeNow.com կայքը:

«Հաւատքի կեանք» եկեղեցւոյ մասին աւելին գիտնալու համար այցելեցէ՛ք FaithLifeChurch.org կայքը:

ԻՆՉՊԷՍ ԱՂՕԹԵԼ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԻԼ

Աստուծմէ ամէն բան կը ստանանք հաւատքով՝ հաւատալով այն բանին, ինչ որ Աստուած ըսած է մեզի: Նոյնը կը վերաբերի այս պարգեւը Աստուծմէ ստանալուն: Նախքան այս պարգեւն ընդունելու համար աղօթելը, անպայման կարդացէք այն Աստուածաշնչեան խօսքերը, որոնք նշուած էին այս գիրքին մէջ, որ վստահ ըլլաք, որ ատիկա է Աստուծոյ կամքը ձեզի համար, եւ որ ձեր հարցումները պատասխանուած ըլլան: Երբ վստահ ըլլաք, որ Սուրբ Հոգիով մկրտութիւնը ձեզի համար է, այս աղօթքն ըրէք.

**«Հայր, կը խնդրեմ մ, Քու հօր Հոգիով մկրտէ ինծի:
Ես կ'ընդունիմ այն ՀԻՄԱ, համաձայն Քու Խօսքին,
որը կարողութիւն կու տայ ինծի աղօթելու Հոգիով:
Ես ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով եւ Քու
փառքի համար: Ամէն»:**

Դուք ոչ թէ արտասովոր վերապրում կամ յատուկ զգացողութիւն կը փնտռէք, այլ ամուր կեցած էք Աստուծոյ Խօսքին վրայ եւ կը հաւատաք, որ երբ կ'աղօթէք, կը ստանաք: Խնդրելէն եւ ստանալէն յետոյ սկսէք փառաւորել Աստուծոյ եւ շնորհակալութիւն յայտնեցէք՝ Իր Հոգիով ձեզի օծելու համար, ինչպէս որ խոստացած էր:

Երբ կ'աղօթէք, պարզապէս վստահ եղէք՝ գիտակցելով, որ երբ կը խնդրէք, կը ստանաք: Պարգեւը ստանալու դրսեւորուած ապացոյցը կարելի է: Ձեր ապացոյցը Աստուծոյ Խօսքն է:

«Աղօթքի մէջ ինչ ալ, որ խնդրէք, հաւատացէ՛ք, որ առած էք, եւ այն ձերը կ'ըլլայ» (Մարկոս 11.24բ):

Աղօթելու ժամանակ երկրպագեցէ՛ք Տիրոջը, որ Աստուծոյ Հոգին ազատ դրսեւորէ Իրեն ձեր աղօթքի լեզուին մէջ: Աստուած պիտի չշարժէ ձեր շուրթերը: Դժուար պէտք է բանաք այն, որ լեզուներով աղօթէք: Ոմանք աղօթելու ժամանակ որովայնին մէջ ինչ որ թրթիռ կամ պրկուածութիւն կը զգան, կամ կը զգան Աստուծոյ Հոգին:

Շարունակեցէ՛ք աղօթել եւ տրուեցէ՛ք Աստուծոյ Հոգիին: Դուք կը զգաք, թէ ինչպէս տարբեր ծայներ կամ վանկեր դուրս կու գան ձեր հոգիէն: Պէտք է հաւատքով տրուիք այդ ծայներուն: Այդպէս ընելով Աստուծոյ Հոգիին հոսքն ու յորդանքը կը զօրանայ:

Եթէ ինչ որ պատճառով անմիջապէս չէք խօսիր լեզուներով, մի՛ անհանգստանաք. դուք ստացած էք այն հաւատքով, պարզապէս շարունակեցէ՛ք գոհանալ Աստուծմէ Իր օծութեան համար: Տեսած եմ, թէ ինչպէս մարդիկ մկրտուած են Սուրբ Հոգիով, բայց Հոգիով սկսած են աղօթել ճամբան, կամ ալ յաջորդ առաւօտեան լոգանք ընդունելու ժամանակ, կամ քանի մը օր յետոյ խոտը հնձելու ժամանակ: Կարելորդ հաւատքով ընդունիլն է, եւ ոչ թէ զգացումներով:

Հոգիով աղօթելը թող դառնայ ձեր առօրեայի մէկ մասը եւ հզօր հաւատքի կեանք զարգացուցէք: Աստուած կը խօսի ձեզի հետ եւ կ'առաջնորդէ գտնելու տարբեր խնդիրներու պատասխաններ: Վստահ եմ, որ ժամանակ կը յատկացնէք աղօթքին եւ կը վայելէք Աստուծոյ Արքայութեան բոլոր բարիքները, որոնք արդէն ձեզի կը պատկանին:

ՆՇՈՒՄՆԵՐ

Ճեյըրտ Տուպլին, «Բանտարկուած երկրպագուն, որ 88 միլիառի դատական հայց ներկայացուցած է ընդդէմ Ֆութպոլի ազգային լիկայի Փեքըրներու հետ խաղի ընթացքին՝ Տէզ Պրայընի բռնած գնդակը չհաշուելու համար»: <https://www.cbssports.com/nfl/news/jailed-fan-suing-nfl-for-88-billion-over-dez-bryant-non-catch-vs-packers/>.

<http://www.dictionary.reference.com/browse/Edified?s=t>.

Լին Էտտլըրտս, «Հոգեբանները կ'ըսեն, որ երեխաներն արդէն վեց ամսականէն կը տարբերեն ճիշդը սխալէն»: Մայիսի 10, 2010թ. <https://medicalxpress.com/news/2010-05-psychologists-babies-wrong-months.html>.

Կէրի Քիսիի
«Ձեր ֆինանսական յեղափոխութիւնը»
գրքաշարի գիրքերը

Համաձայնութեան զօրութիւնը
Հանգիստի զօրութիւնը
Մատակարարման զօրութիւնը
Առատաձեռնութեան զօրութիւնը

Այցելե՛ք **FLNFree.com** կայքէջը՝
ներբեռնելու համար
յաւելեալ ձրի ուսուցումներ
քու լեզուովդ:



Կը փափաքիս ունենալ յաւելեալ ՁՐԻ ուսուցումներու
աղբիւրներ քու լեզուովդ: Այցելե՛ք **FLNFree.com** կայքէջը:

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Մարտավարութեան զօրութիւնը

Կեանքի մէջ բազմաթիւ կարեւոր որոշումներ կան:

Ինչպէ՞ս կարելի է գիտնալ, թէ որ տունը կ'արժէ գնել, որուն հետ ամուսնանալ կամ ինչ գործի անցնիլ:

Եթէ կ'ուզէք յաջողակ ըլլալ, ատոր համար անհրաժեշտ է մարտավարութիւն ունենալ: Բայց ինչպէ՞ս կրնաք մարտավարութիւն մշակել, եթէ բոլոր հարցումներուն պատասխանը չունիք:

Աստուծոյ գաղտնիքները պահուած են ձեզի համար, եւ ոչ թէ ձեզմէ:
Աստուած կը ցանկայ, որ դուք ունենաք բոլոր յուզող (ձեզի վերաբերող, մտահոգող, հետաքրքրող) հարցումներուն պատասխանը, եւ ատոր համար ալ ձեզի գաղտնի զէնք մը տուած է:

«Ձեր ֆինանսական յեղափոխութիւնը» գրքաշարի երրորդ գիրքին մէջ Կերի Քիսին կը բացայայտէ իր յաջողության էական բաղադրիչները եւ Աստուծոյ Թագաւորութեան ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ գաղտնիքը. մարտավարութեան զօրութիւնը: Ամէն մարդ կրնայ ծուկ որսալ, եթէ գիտնայ, թէ ուր նետէ ուռկանը: Աստուած ունի ձեր բոլոր կարիքներուն պատասխանները, բայց դուք պետք է հասկնաք, թէ ինչպէս կարելի է լսել այդ պատասխանները եւ կիրառել կեանքի մէջ: Այս գիրքը ճիշդ այդ մասին է:

Միացէ՛ք Կերիին եւ միասին մեկնինք ճշմարտութիւններ բացայայտող ճամբորդութեան՝ պարզելով, թէ ինչպէս կրնանք կեանքի մէջ կիրառել «Մարտավարութեան զօրութիւնը»:



Կերի Քիսին հեղինակ է, բարոգիչ, գործարար, ֆինանսական մասնագետ եւ հովիւ: Անոր ձգտումն է օգնել մարդոց յաղթելու կեանքի մէջ, յատկապէս հաւատքի, ընտանիքի եւ ֆինանսներու բնագաւառներուն մէջ: Կերին եւ կիսը՝ Տրենտան, ստեղծած են քանի մը յաջողակ ձեռնարկութիւններ: Անոնք «Հաւատքի կեանք՝ հիմա» ծառայութեան հիմնադիրներն են, որը կը թողարկէ երկու հեռուստատեսային հաղորդում՝ «Ֆինանսներու կարգաւորում» եւ «Տրենտա» անուանումներով, կ'առաջնորդէ համաժողովներ աշխարհով մէկ եւ կը տրամադրէ գործնական նիւթեր: Քիսիները կը հովուեն նաեւ «Հաւատքի կեանք» եկեղեցին, որ կը գտնուի Օհայո Նահանգի Քոլումպոս քաղաքի մօտակայքը:

GKM GARY KEESEE
MINISTRIES

garykeesee.com